


# ՂՐԱՄԱՆԻ

1993  
Ա.Բ.Գ.



Ծ

ՏԱՐԵ



# ԵԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՅ  
Ա. ԵԶՄԻԱԾԻՆԻ

Յանուար - փետրվար - մարտ

1993



ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՔԱԽ ԵԿ ՍՐԱԼԵՎՆԱԳՈՅՆ ԵԱԹՈՂԻԿՈՄԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

18208-ԱԵ

71-95

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՀՀԱՅԻ

ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի  
Ս. ԾՆՍԴԵԱՆ ՔԱՐՈՉԸ ԽՕՍՈՒԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ  
ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ  
(6 Յունիար 1993-ին)

Սիրեցեալ ժողովորդ մեր,

Աստուածային անհմանալի տնօրինութեամբ, 1992 տարին Բասար իր աւարտին: Բացուեց առաօտք Նոր Տարույն, աւետումովը Փրկչին մեր Ցիսոսի Քրիստոսի Ծննդեան:

«Խորհուրդ մեծ և սրանցելի», որ կրկնում է ամա երկու Բազար տարին շարունակ, ամէն Նոր Տարի մեզ բոլորին բերելով պատգամը, որ նաև մենք՝ ապրող Մահկանացուներս, կոչուած ենք Վերանորդութելու ժամանակի հոլովոյթով, պայծառակերպութելու փրկչագործ Աւետարանի լոյսով, մեր կեանքի նոր ճանապարհի վրայ, մեր ձեռաց բարի ու արդար իրագործում-ներով:

Ցիսոսի ծնունդը իրողութիւն է և հրաշք: Հրաշքը այն է, ինչ սպասում էին երկնքից՝ արդարութեան և ազատութեան ծարակի խոնարի ամբոխները մարդկանց, երկու Բազար և աւելի տարիներ շարունակ:

Ցիշենք մարգարեական խօսքերը Մարիամ Աստուածածին, ուղղեալ Եղիսաբեթին, ի մասին իր որդույն Ցիսոսին, որ պէտք է ծնունդ՝ «Արար զօրութիւն բազկաւ իրով, ցրուեաց զամբարտաւան մտօք սրտից իրեանց, բակեաց զհօրս յաթոռոց և բարձրացոյց զխնարհն, զքաղցեալս լցուց բարութեամբ և զմեծամեծս արձակեաց ունայն»: (Ղոկ. Ա. 51—53):

Սոյն մարգարեութիւնը մնացել է մշտապէս այժմէական, բայց մանաւանդ մեր օրերին, երբ աշխարհը համայն, քրիստոնեայ Արևմուտքը յատկապէս, տագնապած է որոնումներով ու Վերիվայրումներով, թէ իր հոգեւոր և թէ իր ընկերային բարոյական կեանքում: Կան կանչագուշակող հոռեւեսն քրիստոնեայ մտածողներ, որոնք ազդարարաւմ են նոյնիսկ մարտամուտը Արևմուտքի: Մտածողներ որոնք՝ փառանելու քրիստոնեական տաճարները համարում են այլևս խօսք չասող լուս բարեր, զորիկ ոգեշնչող հոգեւոր ուժականութիւնից, ինչպէս հոռոմեական կայսրութեան անկման ժամանակներում, երբ ամրոխները այլևս չին հաւատում իրենց հոյաշէն հեթանոսական տաճարներին ու շաստածներին: Նրանք ծարաւը ունեին մի պարզ ճշմարտութեան, մի նոր խօսքի, մի նոր Աւետարանի:

Այն, թում է, թէ մեր օրերին էլ հոգեւոր յոգնած են մարդիկ, տառապում են ոգու սովից: Թում է, թէ Քրիստոսի Աւետարանը բացակայ է իրական կեանքից: Ո՞վ իմանայ, գոյցէ Արևելքը դառնայ Աւետարաքը Քրիստոսի

ճշմարիտ խօսքի: Գուցէ այժմէական դառնայ հիմ տեսիլքը, թէ՝ լուսը ծագելու է Արևելքից:

Այս խոներով, այս մտորումներով, Մենք ողջունում ենք Նոր Տարին և Քրիստոսի Սուրբ Ծննդին, որոնց վրայ աւելանում են մեր Եկեղեցու և ազգի ծանր մտահոգութիւններն ու տագնապալի իրավիճակները:

Համբանքով այսօր փոքր մնացած մեր ժողովուրդը, իր Մայր Հայունիքում և իր պատմական հարազար Արցախում, իր կեանքի ու ճակատագրի արդի պայմաններում, ապրում է ներոսարար մերօրեայ աշխարհի տագնապը՝ «հզօրներին իրենց գահերից տապալելու» և «խոնարիներին ու քաղեալներին բարձրացնելու» յանդուզն երազանքով, իր արեան իսկ գնով:

Արցախի ցալը լոկ մեր ազգի ցալը չէ, այլ աշխարհի ցալը, որի դէմ մաքսում է մեր ազգը, գրեթէ՝ մէն մենակ: Խճչան էլ ծանր ճնշեն մեր վրայ երկիրներն ու սպառնալիքները, չենք կարող չհիանալ Արցախի պատմաբարիների սիրանքով, նրանց՝ սահման չունեցող զոհաբերութեան ոգով, մահուամբ մահը յաղթելու քրիստոնէական ժայռացած հաւատքով:

Հայ ժողովուրդը, իր փոթորկայոյզ պատմութեան գուցէ ամենաճնամամյին պահն է ապրում, պահը՝ ամէն գնով ազատ ապրելու վսեմ փորձութեան:

Մարդ լինելը ողբերգութիւն է: Իսկ հայ լինելը կրկնակի ողբերգութիւն: Հայը ապրում է մարդկային ճակատագիրը, մարդկային ողբերգութիւնը, այն՝ կրկնակի տառապանքով, կարող ենք սաեւ՝ կրկնակի ներոսական խնճութեամբ: Նա համոզուած է, որ երբեմն առանց «խնճութեան» ոչ մի խուզալ չի կարելի իրագործուել: Ֆիշենք, որ առաջին քրիստոնէաները, հզօր հոռմէական կայսրութեան տարածքի վրայ «խնճեթեի» էին նկատում:

Մեր օրենի Արցախեան «խնճութիւն» պատնախանն է հայորդների, Հիւ Կոտակարանի մեծ մարզարէ Եսայու բոցաշոնչ մարտահրաւիրի՝ Լո՛յծ զկնճիոն անիրաւութեան, քակեա՝ զիարդախութիւն բռնութեան վաճառաց քոց, արձակեա՝ զնեղեալս բողոքեամբ և զամենայն մուրհակ անիրաւութեան պատառեա» (Եսայի ԾԲ-6):

Եւ ահա այսպէս, մի Նոր Տարի ևս իր դոմերն է քացում աշխարհի ու մեր ազգի առաջ: Բոլոր հայերս ի Հայաստան և ի սփիս աշխարհի, յամատ լաւատեսութեամբ սպասում ենք, որ յարժանակի արդարութեան ու ճշմարտութեան մեր աղաղակը, և խաղաղութեան ձայնը ազատ ու քարձը հինչի հայրենի երկնքի տակ:

Այս սպասումներով օրինում ենք 1993 Փրկչական թուականի առաօսոր և Մանուկ Յիսոսի Սուրբ Ծննդին ու աղօթում, որ նա իր միշտ յաղթող Անեստարանով մնայ «լոյսը աշխարհի»: Մնայ հաև առաջմորդող լոյսը մեր մարտնչող ժողովողի կեանքի հորիզոնի վրայ:

Միրեցեան ո հաւատար զաւակներ մեր, «վաս աշորիկ առէք զապառագինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիշիք ի դիմի հարկանեկ չարին յաւորն չարութեան: Եւ իբրև զամենայն ինչ կատարիցէք. հաստատուն կացէք, գտեղի՝ կալչիք, պնդեալ զմէոս ձեր ճշմարտութեամբ և զգեցեալ զգրահսն արդարութեան» (Եփես. Զ. 13—15): Ամէն:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ, ձեք և մեզ մեծ աւետիս: Ամէն:

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱԺԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՍԴՅԱՆ  
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ  
ՊԱՏՐԻԱՐք ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ  
ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ  
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎԱՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿԱԾ  
ՈՂԶՈՒՅՆԻ ՀԵՇԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն  
ՀԱՎՃԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱ.ՊԻՆ (Հռոմ),  
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն  
ԳԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),  
Մուկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն  
ԱԼԵՔՍԵՅ Բ.ԻՆ (Մուկվա),  
Ալեքսանդրիայի և համայն Ա.Փրիկայի Հույն Ռողափառ Եկեղեցու Պապ  
Պատրիարք, Նորին Սրբություն ՊԱՐԹԵՆԻՈՍ Գ.ԻՆ (Կամիրե),  
Երուսաղեմի Ռողափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն  
ԳԻՈՒՌՈՌՈՍԻՆ (Երուսաղեմ),  
Ղպտի Ռողափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն  
Ա.ՄԲՈ. ՇԵՆՈՒԻԴԱ Գ.ԻՆ (Կամիրե),  
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն  
Ա.ԲԲՈ. ՄԵՐԿՈՐԻՈՍԻՆ (Ադխո Սբերա),  
Հնդկաստանի և Արևելքի Մալաքար Եկեղեցու Կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱ.ՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄՍ. ՄԱ.ԹՏԵՈՍ Ս.ԻՆ (Քոթայան),  
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն  
ԻԼԻՍ. Բ.ԻՆ (Թքիլիսի),  
Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն  
ԹԵՇԿՏԻՍԻՆ (Բուխարեստ),  
Բուղդար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն  
ՄԱ.Ք.ՍԻՄԻՆ (Սոֆիա),  
Անտիոքի Աստրի Ռողափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն  
ԻԳՆԱՏԻՈՆ ԶԱ.Ք.Ք.Ս. Ա. ԻՎ.Ա.ՍԻՆ (Դամակու),  
Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին  
Սրբություն ՄԱ.Ք.ՍԻՄՈՍ Ե ՀԱ.Ք.ԻՄԻՆ (Դամակու),  
Անտիոքի Աստրի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն  
ԻԳՆԱՏԻՈՆ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ.ԻՆ (Բեյրութ),

Անտիոքի և համայն Արենելքի Հոյն Օթօղորու Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԿԳՆՍՏԻՈՍ Գ-ԻՆ (Դամակոս), Քենթրերի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերանորհություն ԶՈՐԶ ԿԱՐԵՅԻՆ (Լոնդոն), Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք), Սերբիայի և համայն Հարավալավիայի Պատրիարք, Նորին Սրբություն ԳԵՐՄԱՆԻՆ (Բենգրադ), Վարչապայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարչապա), Պրահայի և համայն Չեխովալովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՊՈՐՈՅԵՅԻՆ (Պրահա), Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ԽՐԻՍՏՈՍՈՄՈՍԻՆ (Սիկոնիա), Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն ՄՍՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ (Բքերքե), Նորին Ամենապատվություն կարդինալ ՈՂՈՓ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Վատիկան), Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն Պողոս. ՀԵՐՄԱՆ ԳՐՈԵՐԻՆ (Վիեննա), Քրիստոնեական Միության Քարտողարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ. Գ. Մ. ՎԻԼԵԲՐԱՆԴԻՆ (Վատիկան), Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՏԻԺԵԻՆ (Փարիզ), Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ԱԼԲԵՐ ԳԵԿՈՒՐՏԵՐԻՆ (Լիոն), Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԷՒԻԿ ՄԵՍՏԵՐՍԻՆ (Ռիգա), Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԼԱՅԻՆ (Տալլին), Ֆրանչիսկան միաբանության կուսառդ ԿԱՐՈԼ ԶԵԿԿԻՏԵԼԼԻԻՆ (Երուսաղեմ), Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ, Նորին Սրբազնություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրահա), Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար ՀՈՎԱԿԻՆ (Ժնև), Միհթարյան ովասի ընդհանուր քարտուղար Հայր ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ (Վենետիկ), Միհթարյան ովասի աբբահայր, Գերապայծառ Հայր ՊՈՂՈՍ Վարդապետ ԳՈՒՅՆՅՅԱՆԻՆ (Վիեննա),

### Զերդ Սրբություն,

Այս սուրբ օրերին, երբ մեր Տիրոջ և Փրկչի Ծննդյան շնորհները իշխում են երկնքից երկիր՝ մեր օրերի աշխարհի վրա, Մենք ի սրտէ աղոթում ենք, որ բոլոր ազգերն ու մարդիկ բացեն իրենց հոգիները այն սիրո լուսի և խաղաղության առաջ, որ առատորեն իշխում է նրանց վրա Աստուծո ողորմածությամբ։ Թող այդ լուսը թափանցի ամենուր, ցրի խավարք, խափանի շարք և կործանի պատերազմների և ընդհարումների զենքերը։

**Ս. Ծննդյան բարի ավետիսով մեր սիրած լեցուն ուրախությամբ և հովանով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Զերդ Սրբությանն ենք բերում քաջառողջության և երջանկության Մեր լավագուն մայթանքները և հոգեպես միացած Զեզ հետ ոգեկոչում ենք Բերդենեմի հրեշտակների պատգամը. «Փառք ի բարձուն Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:**

**Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստո՝**

### Վ.Ա.ԶԳԵՆ Ա.


**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին

\* \* \*

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափոխ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշակառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրությունների, ստացվել են քոյլ Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված շերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քոյլ Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի շերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՃԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ  
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ  
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈՂՈՐ  
ԱՌԱԶՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Նոր Տարվո լուսաբացը վերստին բերում է Հայոց հուսացյալ աշխարհին՝  
մեծ ավետիսք Փրկչին մեր Հիսուսի Սուրբ Ծննդյան և երկնային պատգամը  
հրեշտակաց՝ «յերկիր խաղաղութիւն, ի ճարդիկ հաճորթիւն»:

Սույն Աստվածառաք ավետիսով ողջունում ենք Զեզ սրտանց և մաղթում  
Զերդ Սրբության երկնատուր ամեն բարիք ու արևշատ բազում տարիներ՝  
շարունակելու Զեր նվիրական առաքելությունն ի պայծառություն Զեր սուրբ  
Աթոռին և Զեր եկեղեցյաց:

Սուաբում ենք նաև Մեր հայրական սերն ու օրինությունը Զեր բարե-  
պաշտ ժողովուրդյան և սուրբ Աթոռիդ ոխտապահ միաբանության, աղոթքով  
սրտարուխ, որ բոլորը ձեռք-ձեռքի տված համերաշխ գործակցությամբ շնչ  
և պայծառ պահպանն Զեր աղոթքի Տուները և միշտ բարձր պահեն սուրբ  
անոնը մեր Առաքելական Մայր եկեղեցու:

«Քրիստո ծնաւ և յայտնեցա, ձեզ և մեզ մեծ աւետիս». ամէն:

**ՎԱԶԳԵՆ Ա.**  
**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻՍՐՈՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ**  
**ԱՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին

\* \* \*

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առջիկ Ամենայն Հայոց Վեճա-  
փառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաշերմ և հարգալից զգաց-  
մունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ  
մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և  
ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակու-  
թային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանա-  
զան կազմակերպություններից, հայ և օստար պաշտոնական անձնավորու-  
թյուններից:

Հանուն Հայոց Հայրապետի շերմ շնորհակալություն ենք հայտնում  
ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ,  
ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻԾԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻԶԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՇԱԳՐԵՐ ԱՄՍՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ  
ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ  
ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

#### Երևան

Հարգարժան Տիար Նախագահ,

Դիմավորում ենք Նոր տարին և Սուրբ Ծննդան տոները, մեր հայացքը դեպի երկինք, աղոթքով սրտեանդ, որ բարին Աստված մնա Զեզ օգնական և զորավիգ Զեր հայրենանվեր առաքելության ճամապարհին, մեր օրերի դժվարին ու տագնապալի պայմաններում: Աղոթքում ենք Զեզ մշտանորոգ եռանդ ու լավատեսության ոգի:

Ողջ լերուք զորացյալ Սուրբ Հոգով:

Հայրապետական օրինությամբ՝

#### ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

\* \* \*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՎԱՐՉԱՊԵՏ  
ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

#### Երևան

Հարգարժան Տիար Վարչապետ,

Նոր տարվա սեմին և Սուրբ Ծննդյան ավետիսով թերում ենք Զեզ և Զեր գործակիցներին Մեր մալթանքը՝ կայուն առողջություն և հայրենաշեն աշխա-

տանքի անսպառ եռանդ, հաղթահարելու համար մեր ժողովրդի առաջ այս օրերին ծառացող ծանր դժվարությունները:

Նոր տարին թող իր նես բերի լրումը մեր ազգային արդար իշխանի՝ խաղաղությամբ ու բարօրությամբ:

Զեզ արևատություն և օրինություն:

### ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԻՍՈՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

\* \* \*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ  
ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԴ ՆԱԽԱԳԱՀ  
ԼՅՈՒԴՎԻԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

### Երևան

Հարգարժան Տիար Խաչատրյան,

Նոր տարվա շեմին Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսով բերում ենք Զեզ Մեր ամենաբարի մաղթահերթերը Զեր արևատության և Զեր հայրենաներ գործոց հաջողության համար՝ այն հավատով, որ մերօրյա տագնապալի կացությունները շտուվ կվերանան, և մեր ժողովուրդը կգտնի իր կյանքի խաղաղությունը՝ իր արդար իշխանի կենսագործմամբ:

Հայրապետական օրինությամբ՝

### ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԻՍՈՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

\* \* \*

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻՍՈՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

### Ա. Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ընորհավորում եմ Զեզ Ամանորի և Սուրբ Ծննդյան առթիվ: Մաղթում եմ, որ Նոր Տարում թեթևանան մեր ժողովուրդի հոգսերն ու հաղթահարվեն դժվարությունները:

Թող նոր՝ 1993 թվականը մեր երկրի համար լինի խաղաղ, լուսավոր ու երշանիկ տարի:

Հարգանքով՝

### ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

\* \* \*

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ**

**Ս. Էջմիածին**

Վեհափառ Տեր,

Ընդունեք իմ ջերմ բարեմաղթությունները Սուրբ Ծննդյան և Ամանորի առթիվ:

Օգտվելով առիթից, կամենում եմ գոհունակությամբ նշել Զեր հայանապատ, համախմբող գործունեությունը և, ցանկանալով Զեզ քաջառողջություն, նույն հայտնել, որ այդ գործունեությունը 1993-ին կլինի ավելի արդյունավետ և բեղմնավոր:

Թող 1993 թվականը խաղաղության և բարօրության տարի լինի Հայաստանի, հայ ժողովրդի, ողջ աշխարհի համար:

Ամենայն բարիք Զեզ, ուժ և կորով:

Խորին հարգաճքով՝

**ԽՈՍՔՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Երևան

\* \* \*

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ**

**Ս. Էջմիածին**

Սիրելի Վեհափառ Տեր,

ՀՀ Կառավարության և Կրոնի գործերի պետական խորհրդի անունից ջերմորեն շնորհավորում ենք Զերդ Սուրբ Օծության Ամանորը և Սուրբ Ծընծնյան տոնը:

Մեր ազգի համար այս ծանր օրերին Զերդ Սուրբ Օծության ազգաշեն գործունեությունը արդեն իսկ հոգեկան մսիթարության և լավատեսության լիցքն են տալիս մեր ողջ ժողովրդին: Մենք վստահ ենք, որ այս ծանր փորձություններից էլ պիտի կարողանանք պատվով և արժանապատվությամբ դուրս գալ՝ ուղենիշ ունենալով մեր ազգային գերագույն շահերը, առաջնորդվելով պատմական պահին արժանի իմաստությամբ և եռանդով: Վստահ ենք, որ այս ճանապարհին Հայ Սուպերեական Եկեղեցին Զերդ Սուրբ Օծության իմաստուն առաջնորդությամբ իր արժանի ներդրումը կունենա:

Սիրելի Վեհափառ Տեր, ցանկանում ենք Զերդ Սուրբ Օծությանը առողջություն, երկար տարիների կյանք, անսասան վճռականություն որդեգրած գործունեության մեջ, ի փառ մեր հրաշալի ազգի, ի փառ Հայ Սուպերեական Սուրբ Եկեղեցու, ի փառ մեր Տեր Յիսուս Քրիստոսի:

Լավագույն ցանկություններով և

ամենախոնարի որդինական սիրով՝

**ԼՅՈՒԴՎԿԻԳ ԽԱՅԱՏՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԵՆԹԵՐ  
ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՃՈՐՈՒ ՆԱԽԱԳԱՎԱՀ**

Երևան

## ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1992 թվականի դեկտեմբերի 31-ը է: Եկա մի քանի ժամ, և կակսի նոր տարին՝ նոր տեսիլքներով ու նոր հավատով: Ամսալասիկ այս հույսով է, որ, հետևելով գեղեցիկ ավանդությանը, Ամենայն Հայոց Հայրապետի համագանությամբ, հավաքված Մայր Աթոռի տոնական զարդարված սեղանատանը, Մայրապանիքի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, հրաժեշտ տալու անցնող տարվան և լավագույն տրամադրություններով ու նոր տեսիլքով, նոր ծրագրերով և նոր իրագործումներով դիմավորելու նոր տարին:

Արդարն այս հույսով ու լավատեսաթյամբ էլ ճերկաները միաբերան արտասանում են Տերունական աղոթքը: Այս նորին Սրբությունն օրհնում է բարիքներով լի տոնական սեղանը:

Հնչում են Հայաստանի Հանրապետության օրհներգը և հոգևոր ճեմարանի քաղերգը, որից հետո Դ լարանի սան Անդրանիկ Ժամկոչյանը կարդում է մի հատված Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» գրքից: Այնուհետև հանդիսավոր երեկոյի բացման ու շնորհավորանիքի խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ գերշ. Տ. Անանիա Նապ. Արաբաջանը.

**«Վեհափառ Տեր,**

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, սիրելի սաներ և ճերկաներ: Եկա մի քանի ժամ, և երկրագունդը կրողորի, կամքողջացնի իր տարեկան պտուղը:

Ժողովորդներ ու ազգեր, մեծ հույսերով ու ակնկալիքներով կապանն վաղվա օրվան ու Հրաշամանուկ Հիսուսի գալիք, պայծառ Ծնունդին:

Աշխարհի շատ երկրներում, փոքրիկներ ու մեծեր կունենան առատ լոյս, շերմություն ու խինդ: Մինչ մեր Աշխարհում, հայոց հողում, մեր մանկները լորջ ու մեծավարի, մոմի ու լամպի աղոտ լոյսի տակ, կփորձեն զանազան նոր տարվա տոնածանի խաղաքիքների խամրող գույներն ու սառչող ձնոքերով շշափել հրանց: Իրենց էությամբ ու ճնշությամբ տարբեր նոր տարիներ կլինեն դրանք:

Զարմանալի կանխատեսությամբ հունա-հոռմենական աշխարհի մեջ մտածողները հնում կարողացել են տեսնել Կերպարներ, որոնք այսօր ել չեն կորցրել իրենց այժմենականությունն ու ժամանակի հետ խոտղ խոր իմաստը:

Խմ մտքի առջև հիմա արդարադատության աստվածութիւն կերպարն է:

Որքան այժմեական է այն այսօր: Կամավոր կորացած մի արդարություն, որի ձեռքում կշեռըն է իր ափսեներով: Նժարի մի կողմում (ծանր կողմ) լցված են ոսկի ու նապիթ, երկաթյա զենքեր, իշխանություն ու փառք, իսկ նյութ կողմում ճնշված ու հալածված, փոքր ազգերի բռնաբարված պատիվն ու ազգային անկախությունը, ազատության վեև գաղափարը: Եվ ցալվածն այն է, որ կինը ոչինչ չի կարող փոխել այդ կշեռքի վրա, քանի որ նրա ձեռքերն զբաղված են ու աշքերը փակ:

Այսօր էլ կամավոր այդ կույր արդարությունը չի կարողանում կամ չի ուզում տեսնել, որ մեր փոքրիկ, բայց ազատատենչ ժողովուրդը չի ցանկանում ստրուկի նման հանդորժող լինել նենք ու բիրու հարևանի դղորմելի խաղերին ու ունագություններին, այլ տղամարդու պես պարզ ու բաց ճակատվ, եկել է կովի հանուն ազատության, հանուն սերունդների հետագա գոյատևման երաշխիքի պահուման:

Այդ ազատատենչ պայքարի լավագոյն վկաներն այսօր մեր քաջարի Սրցանն է, մեր հայրենիքի սահմանամերձ գոտիները:

**Վեհափառ Հայր,**

Ծիծու է, որ մեր աշխարհն այսօր գտնվում է տնտեսական ու քաղաքական ծանր վիճակում: Շատ բաներ չկան: Վաղվա ապագան նույնպես աղոյն է: Բաց այսօր առավել բան երբեմ, մեր հոգիները սպառազեն են ու խարս զանազգեասու: Մենք պատրաստ ենք գալիք հոգեսոր պատերազմներին:

Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս և որպես անձնավորություն, թող թույլ տրվի ճիշտն ասեմ, որ Նոր բնավորության մի լավ գիծ ևս ունեք: Դա Ձեր լավատեսությունն է: Տարիների ընթացքում մենք ճկատել ենք, թե ինչպես է այդ լավատեսությունը հաղթում ամեն մի նեղության, վշտի, վտանգի դեպքում:

Մենք սիրել ենք այդ լավատեսությունը և սովորել մեր մեջ նույնպես կրել նրա մի մասնիկը:

Եվ այսօր էլ, Նոր տարվա առ շեմին, մենք՝ Հայաստանյաց Եկեղեցու համեստ սպասավորներս, ոգերոված Զեղանով, Զեր անձով ու գործունեությամբ, լավատեսությամբ սպասում ենք գալիքին:

**Հայաստանն ստեղծված չէ ձմուն համար: Այն գարունքի ու ծաղկի երկիր է: Թող որենուն շուտ գա այդ գարունը, մեր ժողովուրդի վաղվա գարունը:**

**Վեհափառ Տեր,**

Թող տվեր հանուն հոգեսոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության, որոնց մեկ մասն այսօր, հայտնի պայմանների բերումով, բացակա է, ջերմորեն շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին ու մալթել Ձեզ երկար ու քաշառող տարիներ՝ ի պայծառություն մեր Ս. Եկեղեցու և ի միհթարություն մեր հավատացյալ ժողովուրդի:

Ամանորի մեր շերմ շնորհավորանքները նույնպես այստեղ գտնվող մեր բոլոր միաբան եղբայրներին, քահանա հայրերին, հյուրերին և ուսանողությանը: Մայուս ենք նրանց հոգու արիություն, համբերություն և երջանկություն Նոր՝ 1993 տարում:

**Ընորհավոր Նոր տարի:**

Տեսուչ Սրբազն նոր խոսքից հետո հոգեսոր ճեմարանի սահերը երգում են Ս. Ներսես Ընորհավոր «Այսօր երկնայինք» և «Այսօր ցնծան» շարականները: Ասպա Ե լարանի սան Վազգեն Գալստյանը արտասանում է

Ներսես Վահականի «Նոր տարի» բանաստեղծությունը: Այնունեւու ճեմարանի երգչախումբը երգում է «Ով Հայոց աշխարհ» և «Դարձալ փայլեց» երգերը: Հոգեւոր ճեմարանի Դ լսարանի սան Հովհաննես Մարտիրոսյանը սրտասանում է Ավետիք Խահակյանի «Հեջ չան հայրենիք» բանաստեղծությունը:

Հանուն ուսանողության Վեհափառ Հայրապետին ու Անրկաներին ուղղված շնորհավորական խոսքով հանդես է գալիս Զ լսարանի սան Վարուժան Միքայելը: Տերտիկյանը.

«Վեհափառ Տեր, Գերաշնորհ սրբազն հայրեր, Հոգեւնորին և արժանապատիկ հայրեր, բարեշնորին սարկավագ եղբայրներ, սիրելի ուսանողներ և Անրկաներ:

Անցնող ժամանակի հետ ծնունդ առնող և առաջացող իրականություններն են սկզբավորում ու արժենորում պատմությունը: Եվ ժամանակի հավերժական շարժման մեջ յուրաքանչյուր մարդ իր խղճի թելադրանքով ու Սատուծ արդար դատաստանի երկյուղը սրտում փորձում է խորհրդածել, ապրել ու ներշնչվել, ոգևորվել ու միմիթարվել իր հետևում թղած ժամանակի հաջողություններով ու ձեռքբերումներով: Ցնծությամբ է լցվում մեր հոգին և բազմապատկվում մեր ուրախությունը, երբ տեսնում ենք, որ մեր մեջ այն մեկ հատիկ սերմբ դարձել է բազմարդյուն ու դիզված գանձ՝ երկնային կյանքի համար: Եվ այդմաս է, որ մեր սրտի խորքերից կարծես լսելի է իհուս Սատուծն ձայնը. «Կեցցես բարի և հավատարիմ ծառայ» և վերջապես հոգեկան միմիթարանքի այդ պահի վստահություն է ներշնչում մեզ, որ նրանց հետ լինենք, «ոյք արտասուօք ցանեցին և ցնծութեամբ հնձեցին», մենք էլ՝ երշանկահիշատակ Խորեն Մորդադելյան նահատակ հայրապետի խորերվ։ «Պարզերես կարող ենք կանգնել Սատուծո, Եկեղեցու, ազգի ու պատմության դատաստանի առաջ»:

Վեհափառ Տեր, հանուն Հոգեւոր Շեմարանի ուսանողության նոյն տվեք շնորհավորել Զերդ Սրբության Նոր տարին և հուրախություն Զեզ հավատացնել, Զեր շուրջ համախմբված կանք հավատքով, սիրով ու հայրենասիրությամբ լցված մի խոնմք երիտասարդներ, որոնք լսվ են գիտակցում հոգեւորականի բարձր կոչումը, որոնց համար ամեն բանից առավել ու գերադասելի է Սատուծն ու ազգին խոնարհաբար ծառայելը, որոնց մեջ հավատու հոգին է խոսում, ան հոգին, որ պայօք հայրության մեջ ամենուրեք է՝ թե Հայաստանում և թե մաքանող Արցախի ներուսական բարձութերում:

Վեհափառ Տեր, Զեր հայրապետական մտահոգություններն ու սեփական հոտը պաշտպանող ճշմարիտ հովվի Զեր վաճական կեցվածքը ընդդեմ օտարամուս աղանդերի և Զեր հայրենասիրական ձեռնարկները, որոնք արժանի ընդունելություն գտան բովանդակ հայության կողմից, բազում դժվարություններն ու ծով կարիքները հայթահարելու Զեր հայրենանվեր իդար մեզ համար դարձավ գերագույն նպատակ ապագայի մեր առաքելության համար:

Անցնող ոսումնական տարին կարևոր մեկ տարի Եղավ Հոգեւոր Շեմարանի ուսանողության համար, մենք վկաները դարձանք հոգսաշատ ու փորձություններով իր կյանք հաղթահարող, անկուտրում կամք ունեցող մի ժողովրդի, վերջին շորս տարիների ընթացքում: ականատեսներն եղանք հայոց աղեկոնդումներին: Հավատացեք. տեսնել և ապրել այսքան դժվարությունները, բաշաբար և պատվական արժանապատվությամբ տանող այս

դովիրի հոգեկան կորուլն ու լավատեսությունը՝ այսօրվա ժեմարանցին չի կարող շխորհել՝ թե ինչպես կարելի է հոգելոր գործի կամ ֆիդայի շինել այշտպանելոր համար իր հոտի նվիրական սրբությունները:

Փառք ու պատիվ մեր միաբանակից եղբայրներին ու հոգենոր հայրերին, հավատավոր ու բողոքանվեր բազ հովիվներին, որ իրենց ուսերին առած մեր Տիրոջ ծանր, բայց բաղցը լուծը բորբոքեցին ու անշեշ պահեցին մեր մեջ քրիստոնեական լոյս հավատքը, եկեղեցափրությունն ու եղբայրափրությունը:

Փառք շնորհակալ գործի անխոնց նվիրյալներին՝ Հոգենոր Շեմարանի մեր սիրելի դասախոսներին, որ բարի սերմնացանները դարձան մեր հոգիների, որ սեր ու նվիրում եկարգեցին մեզ գիտության հանդեպ:

Վեհափառ Տեր, թոյլ տվեք հանուն ուսանողության կրկին անգամ շնորհավորել Ձերդ Սրբության Նոր տարին և մաղթել երկար տարիների քաջառողջ կանք, թող որ 1993 թվականը մեր բազմաշարժար հայրենիքի ու ժողովրդի համար լոյսի ու խաղաղության տարի լինի, բազմաթիվ անգամներ հայրական Ձեր հոգին հուզած դժվարությունները ու կնճոտ հարցերը չքանան «Ո սահմանաց մերոց և ի բնակութենելու մերմ»:

Այնուհետև Շեմարանի սահերի կատարմամբ հնչում է Մ. Եկմալյանի «Տեր կեցն դու զիազ» երգը և «Լուս գիշեր» Ծննդյան մեղեդին: Ապա Ե լարանի սան Եղիա Օհանյանն արտասանում է Դանիել Վարուժանի «Նսպասարդյան» բանաստեղծությունը: Ավանդական «Կաղանդչեքեր»-ից ու «Վիճակահանություն»-ից հետո, եկեղեցաներին իր օրհնության ու շնորհավորանքի խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը.

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՀԱՆԴԵՍԻՆ

Ամեն տարի ինձ համար միշտ հաճույք է ձեզ հետ միասին մեր համեստ սեղանների շորջ լինել՝ դիմավորելու համար Նոր տարին: Այս տարի, ահավասիկ, կրկին միասին ենք, ավարտվում է 1992 թվականը և շուտով պիտի ողջունենք լուսաբացը հաջորդ տարվան: Եվ նման առիթներով ես միշտ գոհունակությամբ հաստատել եմ, թե այս երեկոյի ծրագիրները ընդհանրապես բավական հաջող կերպով են կատարվել անցյալ տարիներին: Իսկ այս տարի, իմ տպավորությունն այն է, որ բացառիկ հաջող ստացվեց. Ա' երգեցողությունները, երաժշտական մասը, արտասանությունները լավ ընտրված են, դա շատ կարևոր է:

Խոսքերը բացառիկ լավ էին, ինձ համար հույժ գնահատելի: Շատ հավանեցի մեր սրբազնությունը խոսք՝ լուրջ մտածված և գեղեցիկ արտահայտված:

Շատ գնահատեցի նաև մեր ուսանողների անունից արտասանված խոսքը, որ մեր սարկավագը խոսեց: Պետք է քեզ շնորհավորեմ ես: Եվ գիտեք ինձ համար, որ իբրև Հայրապետ արդեն 37 տարի է նման առիթներով ես լուս եմ ուսանողության անունից արտասանված խոսքերը, այդ շարքում մեր այսօրվա սարկավագի խոսքը բացառիկ տեղ պիտի գրավի իմ գիտակցության մեջ՝ ամեն տեսակետով արդիական մեր օրերին համար յատախան: Ես նույնիսկ այսպիսի առիթներով, թոյլ տվեք ասելու, հպարտանում եմ: Հպարտա-

նում եմ, որ մեր հոգևոր ճեմարանի ուսանողների շարքում այսպիսի խոսք կարող են հորինել մեր երիտասարդ սարկավագները, սա նշանակում է, որ մեր հոգևոր ճեմարանը իր հոգևոր գործունեության, առաքելության ուղղի համապարփի վրա է գտնվում և կարողանում է ներշնչել այդպիսի ներշնչացանով մեր պատահիներին և մեր սաներին: Կմնա, որ հավատարիմ մնար բոլորդ այն ներշնչաներին, մանավանդ վերջավորության կոչին, մաղթանընթե, որ ողջեց մեզ, մի տեսակ ոխտ էր, խոստվանություն էր՝ հավատարիմ մնալու մեր հավատքին, հավատարիմ մնալու մեր Եկեղեցուն: Եվ գեղեցիկ համադասությամբ արտահայտեց այն միտքը, որ մենք՝ բոլոր երիտասարդներս նվիրում և կարգապահությամբ շրջապատճենք Վեհափառ Հայրապետին: Ծառ գոն եմ, որ այսպիսի խոսք լսեցի այս երեկո:

Երբեմն պատահում են անկարգություններ, որոնք չեն ներդաշնակում Վեհափառ Հայրապետի շուրջ համախմբվելու, հավատարիմ մնալու գեղեցիկ գաղափարին: Մեր ուժը, սիրելի երիտասարդներ, կարգապահության մեջ է, միասնության մեջ է և հարգանքի, հարգանքի դեպի Ամենայն Հայոց Հայրապետը: Ամենայն Հայոց Հայրապետը խորհրդանշիցն է՝ իմ անձից անկախ: Այս իրողությունը, ճշմարտությունը երբեմն ոմանք չեն հասկանում, մեծամտանում են, հովեր են առնում, անկարգություններ են երբեմն տեղի ունենում մեր Եկեղեցու ծոցուն: Անշուշտ դրանք բացառություններ են. ես չեմ վախենում այդպիսի երևույթներից, բայց համենայնեաւս քանի մեր երիտասարդ ուսանողը այդ ուժգին կերպով ընդգծեց, ես հոգվեցի և գնահատեցի այդ մտածումը, որ ես ընդունում եմ իրեն մի տեսակ ոխտ և կոչ ողջված հատկապես ձեզ բոլորիդ երիտասարդներ:

Այն պահին, երբ այս ներքին կարգապահությունը խախտվի մեր մեջ, մեր Եկեղեցին կտկարանա, իսկ մեր հիմնական նպատակը մեր Եկեղեցին ամրացնելն է: Մեկ սիրո, մեկ հոգի, մեկ զանգված, մեկ բունքը, եթե կուզեք: Ահա այս ոգիով է, որ Հիսուս ստեղծեց Եկեղեցու խորհուրդը և այդ հիմքերի վրա է, որ Եկեղեցիները կարող են գոյատնել, ծաղկել և իրենց առաքելությունը ամբողջապես իրագործել:

Ռումինական ժողովրդական բանահյուսության մեջ մի ավանդություն կա, որ ինչ-որ մի ժամանակ, ինչ-որ մի տեղ նոր տարվա լուսաբացին մարդիկ գնում էին իրենց գյուղի ջրհորի մոտ և նայում էին այդ ջրհորի, այդ կախարդական ջրհորի մեջ և այդ առավոտ, տարին մի անգամ ջրհորի մեջ նայելով տեսնում էին, թե ինչ դեպքեր պիտի կատարվեն տարվա ընթացքին: Եվ տեսնում էին երբեմն լավ իրադարձություններ՝ բարի, բարեկը, իսկ երբեմն ընդհակառակը՝ տխոր, դժբախտ և տագնապալի անցուղարձիք, Ըստ այդ հերթակին, երբ մեկը կտեսներ իր տագնապալի վատ ճակատագիրը, որ սպասում էր իրեն այդ տարվա ընթացքին, անձնապան պիտի լիներ, որպեսզի այդ տառապանքները չկրի:

Համենայնեաւս սա մի հերթակ է, բայց ինչ-որ կարծես մի բան ասում է մեզ բոլորիս, որովհետև բոլոր մենք այս պահին, թեն այդ կախարդական ջրհորը չկա մեր առջև, բայց համենայնեաւս կանգ ենք առնում և, ոգենք թե չուզենք, բնական կերպով մտածում ենք, թե ինչ պիտի պատահի հառաջիկա տարվա 365 օրերի ընթացքում: Սա մի խորհուրդ է, անձանթ բոլորիս և բոլորին որովհետև եթե մենք անդրադառնաք այդ վերջին տարիների անցուղարձներին համար Խորհրդային Միության սահմաններից մերս, սահմաններից դուրս, Արևելյան Եվրոպայում տեղի ունեցան համաշխարհին երևույթներ՝ և դրական և բացասական, մանավանդ արյունահեղ ընդ-

հարումներ, որոնք տեղի են ունենալ համաշխարհային մակարդակի վրա մեր երկրագունդի բազմաթիվ վայրերում: Հենց վերջերս, երեկ կարդում էի, Սովորում տասնյակ հազարավոր մարդկանց քաղցից և հիվանդություններից մահանում են: Այս վերջին չորս-հինգ տարիների դեպքերը և իրադարձությունների առիթով մենք մտահոգ ենք և մտածում ենք, արդյոք այս 1993 թվականը ինչ պիտի լինի, ինչ ճակատագիր պիտի ունենանք մենք, մահավանդ մեր ժողովորոր, մեր հայրենիքը, մեր Արքանք:

**Ահա այսպիսի հոգեբանական մի պահ ապրում ենք մենք այսօր, կարծեք թե այդ կախարդական ջրհորի առջև գտնվեինք:**

Մենք պետք է մոտենանք մեր նոր կյանքին և դիմավորենք քաջությամբ և համարձակությամբ 1993 թ. քրիստոնեական հույսով և քրիստոնեական հավատորվ, որ այն, ինչ որ արդար է, պետք է անպայման հաղջանակի: Ավետարանը մեզ պատգամում է, թե ով ամուր հավատք ունի, կարող է նոյնիսկ լուսները շրջել:

**Այս համոզումով իմ կարծիքով պետք է հավաքված լինենք բոլորս դիմագրավելու համար ճակատագրի փորձությունները քաջությամբ և լավատեսությամբ և դրանք հաղթահարելու կամեցողությամբ:** Այն պայքարը, որ մղում է մեր ժողովուրդը ընդունելով բոլոր տեսակ չարիքների և բռնությունների՝ ազատ և անկախ ապրելու իդեալով ոգեշնչված, մենք պետք է համոզված լինենք, որ ինչքան էլ ծանր լինեն մեր կյանքի պայմանները, ինչքան էլ դժվարություններ մեր շորք գույխ բարձրացնեն, համենայնդեպս դրանք պետք է դիմագրավել և հաղթահարել: Այդ ճանապարհը մեր ներքին հավատքն է, ինքնավտակությունն է, չարիքն հարվածելու կամեցողությունը և ուժը, հաղթանակի համար, միայն այսօր չէ, որ տեղի է ունենալ Մանավանդ վերջին հազար և քանի հարյուր տարիների ընթացքում մեր հայ ժողովուրդը բազում անգամներ նման կացությունների առջև է գտնվել, նույնիսկ ավելի վատաշար, քան հինգ: Մեր պատմիքներն ինչեր են արձանագրել մեր ձեռագիրների վերջին էջերին իրենց տեսած արհավիրքների, գրկանքների, փոթորկությունների և համատակությունների մասին:

**Այնպես որ մենք փախեցող ժողովուրդ պետք չէ լինենք այսօրվա դժվարություններից:**

Ահա այս համոզումով, այս լավատեսությամբ է, որ պիտի ապրենք, ավելի լավ պիտի ապրենք և պիտի հաղթական դուրս գանք այս դժվարություններից և պիտի դիմավորներ խաղաղության հավահանգիստ, եթե մեր երկիրը վերագունդ իր անդորրը:

Ահա այս ոգեշնչումով, այս լավատեսական գգացումներով ես կուգեի վերջացնել իմ խոսքը, աղոյելով, որ Աստված, Քարին Աստված, Ողորմած Աստված իր հայացը դարձնի դեմք մեր Մայր Հայաստանը, մեր քրիստոնյան ժողովուրդը, մեր ճակատակող ժողովուրդը և բամա վերջապես հուսուն և լուսուն դուները և մենք իրեն ժողովուրդը կարողանանք շարունակել մեր գոյությունը, մեր առարկությունը՝ հանուն Քրիստոսի և հանուն ազատության ամեն:

Ամանորյա գեղեցիկ հանդիսության ավարտին, բոլոր ներկաները միաւնա երգում են «Հայութեական հաղթություն»: Այս Վեհափառ Հայութեաի «Պահպահիչ»-ով որ խմբովին երգիչած, «Հայր մեր»-ով իր ավարտին է հանուն Տարեմուտի համեմար:


Կեսգիշերին Մայր տաճարի զանգերի խորհրդավոր ղողանջները ազդարութ են նին տարվա ավարտը և նոր՝ 1993-րդ տարվա գալուստը:

Հաջորդ օրը, հունվարի 1-ին, Մայր տաճարի Ավագ և խորանի վրա և պատարագ է մատուցում գերշ. Տ. Անանիա եպս. Արքաջյանը և հավոր պատշաճի քարոզ խոսում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ և պատարագի կատարվում է Հայրապետական մալթանք: Մայ եկեղեցական թափորով Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, որտեղ Մայրավանքի միաբանությունն ու ուսանողությունը շնորհավորում են Հայոց Հայրապետի նոր տարին:





**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱ.  
(20—23 հունվար 1993 թ.)**

**Ժամանում. 20 հունվար, չորեքշաբթի**

20 հունվարի, ժամը 15-ին, իր շքախմբով Մոսկվա ժամանեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վագգեն Ա. Հայրապետը՝ ուղևորությամբ Տ. Պարգևնեափսկուու Մարտիրոսյանի, Տ. Վագգեն արեղա Միրզախանյանի, պրն. Լյուդվիգ Խաչատրյանի և նոր Նախիջնանի ու Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Տիրան եափսկուու Կյուրեղյանի:

Մոսկվայի «Շերեմետևոն-1» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին և ողջովին ու բարիգալստյան խորքը ասացին նոր Նախիջնանի և Ռուսաստանի հայոց թեմի Թեմական Խորհրդի անդամներն ու առենապետը, թեմի հոգևոր դասը և Հայաստանի Հանրապետության մշտական Աերլայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ուղևորվեց Մոսկվայի «Մետրոպոլի» հյուրանոց:

Նույն օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական հանդիպում ունեցավ Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Զերնոմիրովին հետ: Հանդիպմանը Աերլա էին գերշ. Տ. Տիրան եափսկու Կյուրեղյանը, Թեմական Խորհրդի անդամ պրն. Աերժ Զիլավյանը, առենապետ պրն. Կամն Ռոդույանը և պրն. Ֆելիքս Մամիկոնյանը: Հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը Ռուսաստանի վարչապետին հանգամանալից կերպով Աերլայացուց Հայաստանի տղիալ-տնտեսական ծանր դրույթունը և խնդրեց Ռուսաստանի կառավարությունը տնտեսական օգնություն ցույց տալ Հայաստանին:

Վարչապետ Զերնոմիրովին իր խորք մեջ նշեց, որ ինքը ծանոթ է Հայաստանի բարդ կացործանը և իր պատրաստակամությունը հայտնեց ամեն հարցով օճանդակելու Հայաստանին:

Խոսվեց նաև ճանապարհների շրջափակման մասին: Ռուսաստանի կառավարության դեկանարը հայտնեց, որ նոր ճանապարհներ են որոնվում դեպի Հայաստան առարվող քեռների համար:

Երեկոյան ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը պրճ. Սերժ Զիլավյանի ստանձնատանը հանդիպում ունեցավ Մովկիս քաղաքի քաղաքապետ Յորի Լումբովի և Մովկիսի համայնքի քաղաքապետ Գալիթի Պոպովի հետ: Հանդիպումը տեղի ունեցավ շատ ջերմ և մտերմիկ մթնոլորտում: Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը կրկին անդրադարձավ Հայաստանի տընտեսական ծանր իրավիճակին:

Քաղաքապետ Լումբովը պատրաստակամություն հայտնեց Հայաստանին օգնելու այլորով, կարսովիկով և այլ սպառամթերքներով: Սակայն նա ևս նշեց, որ ամբողջական օգնությանը խոչընդոտում է ճանապարհների շրջափակումը:

Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև Մովկիսում հայկական նոր եկեղեցի կառուցելու հարցը: Յորի Լումբովը իր համաձայնությունը տվեց եկեղեցու կառուցման համար նոր տրամադրել Մովկիս քաղաքի կենտրոնական մասում:

Հանդիպմանը ներկա էին նաև գերշ. Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրելյանը, գերշ. Տ. Պարզե եպիսկոպոս Մարտիրոսյանը և պրճ. Սերժ Զիլավյանը:

## 21 հունվար, հինգշաբթի

Սուալույան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը Կրեմլում պաշտոնական հանդիպում ունեցավ Ռուսաստանի փոխնախագահ Ալեքսանդր Ռուսկովի հետ:

Հանդիպմանը մասնակցում էին Նոր Նախագահը և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրելյանը, Արցախի թեմի առաջնորդ գերշ. Տ. Պարզե եպիսկոպոս Մարտիրոսյանը, Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդական փոխնախորդ Տ. Եղիշի վրդ. Պետրոսյանը, պրճ. Սերժ Զիլավյանը, Կամս Ռուսականը և Ֆելիքս Մամիկոնյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի ներկա քարդ ու դժվարին կացությունները: Հայոց Հայրապետը իր խոսքում ի մասնավորի կանգ առավ Արցախան խնդրի խաղաղ կարգավորման և արցախահականության արդար իրավունքների հարցին:

Փոխնախագահն այս հարցերում մեղադրեց Զավակին ԽՍՀՄ պրեզիդենտ Միխայիլ Գորբաչովին և, դիմելով Վեհափառ Հայրապետին, ասաց, որ նման իրավիճակում խաղաղաբարարական մեծ դեր կարող են ունենալ Եկեղեցին և հոգևորականությունը: Նա ասաց, որ պահն է, եթե Ռուս Եկեղեցին էլ իր ձայնը պետք է միացնի Հայ Եկեղեցուն, որպեսզի միասնական ուժերով ելք որոնեն՝ դուրս գալու տիրող իրավիճակից:

Իր խոսք մեջ Նոր Նախագահը և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրելյանը անդրադարձավ Հյուսիսային Կովկասի հայության կացությանը և տիրող հայահայկական տրամադրություններին: Փոխնախագահը հայտարարեց, որ ինքն անձամբ կգրադի այդ հարցով և պաշտոնական քարձը մակարդակով կընի իրավիճակիը:

Սույն օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը Սուրբ Դանիելով վաճրում հանդիպում ունեցավ Ռուս Պրավուլավ Եկեղեցու Պատրիարք Ալեքսի Բ-ի հետ:

Հանդիպման ջերմ մթնոլորտում եղբարական սիրո խորենով իրար դիմեցին երկու հովվապետները: Հանդիպման ընթացքում երկու Եկեղեցիների պետքը կարևոր մի հայտարարություն ասորագրեցին:





<ԱՆԴՐԱԽԱՍ ՄԵՐԺ ԶԻԼԱՎԵՏԻ ԱՆՎԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՆԻ

1740p <http://tinyurl.com/yd7qzv4t>



ԱՐՄԵՆԻԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ Ե ԽՈՎՈՅ ԿՈՎՈՎՈՅ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ





ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐԿՆՈՒԹՅԱՆ ՄՐԲԱՏԱԾ  
ԿՈԽԴԱԿ Է ՀԱՆՉՆՈՒՄ ՑԻԱՐ ՍԵՐԺ ԶԻԼԱՎՅԱՆԻՆ ՆՐԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՎ  
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» ՇՔԱՆՇԱՆՈՎ



ՄԱՅՐ ԱԹԵՈՒԻ ԲԱՐԵՐԱՄ ՏԻՄ ՄԵՐԺ ԶԻԼԱՎԵՍԻ ՀԱՅԻ ՏԱԿ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ,  
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ Բ-Ի  
ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մուկիվայս եղբայրական ողջագորումներով, մենք՝ երկու հնագույն բրիտանեական Եկեղեցիների՝ Հայ Սուբեկական Եկեղեցու և Ռուս Օքտոպոքս Եկեղեցու գահակալմերու, ցանկանուն ենք մեր խոսքը ողջել մեր հավատացյալ հոտի՛ համայն մերձափորաց և հետավորաց:

Հայաստանի և Ռուսաստանի պատմությանը հայտնի են դարաշրջաններ, երբ մեր ժողովուրդները ապրում էին կամ տարբեր պետություններում, կամ մեկ երկրի կազմի մեջ: Սակայն մենք վկայում ենք, որ բոլոր դարերի ընթացքում մեր երկու Եկեղեցիները և նրանց ժողովուրդները ամրացված են եղել իրար բազում եղբայրական կապերով, ի Քրիստոս Հիսուս:

Մեր պատմական ընդհանուրությունը, որի օգտակարությունը հաստափած է կյանքի փորձով, վեր է որևէ բաժանումից ենթերված նոր իրականությամբ: Ազկայի նոր սահմանների, պետական կառավարման ձևերի և արտաքին տարբեր հանգամանքների դասավորումից, երկու Եկեղեցիների գավակների միջև հոգևոր, մշակութային և այլ կայերն ու փոխադարձ գործակցությունը կապահպանվեն և կրածմապատկվեն:

Մենք հաստատակամ ենք բոլոր քրիստոնյաների հոգևոր միասնականության և մեկ Աստուծո հավատացող բոլոր մարդկանց միջև բարի հարաբերությունների ամրապնդմանը: Այս կապակցությամբ մենք հաստիկ կերպով ձգուում ենք քրիստոնյա-մուսուլմանական հարաբերությունների միջև հիմնել և հաստատուն պահել պարզ ու փոխադարձ հարգանքի ոգին:

Մեզ խորապես վշտացնում է Լեռնային Ղարաբաղում շարունակվող եղբայրասպան պատերազմը: Մենք կոչ ենք ամուս բոլոր նրանց, ովքեր ենթափակած են այս ընդհարուման մեջ, անհապաղ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները, որպեսզի բարդ խնդիրները լուծվեն արդարացիորեն և խաղաղ կերպով, երկխոսության ու համաձայնության հասնելու ձգտությունը: Մենք նաև խնդրում ենք համաշխարհային հանրությանը՝ օգնելու Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմանը և ձգտելու ամեն կերպ թեթևացնել բախման զոհերի տառապանքները:

Մեր Եկեղեցիների բոլոր զավակներին, աշխարհի բոլոր մարդկանց հողում ենք խաղաղության, բարօրության և հաշողության մաղթանքներ՝ ամեն մի բարի գործում:

«Եր ինքն Տէր խաղաղութեան՝ տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ» (Բ Թես. 3, 16):

### ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

### ԱԼԵՔՍԻ Բ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ  
ՌՈՒՍԻՈՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Ապա տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում, իսկ վերջում Օստանկինոյի հեռուստաբներության թղթակիցների հետ կայացալ ասուլիս:

Երեկոյան ժամը 16-ին Մուկվայի «Մետրոպոլ» հյուրանոցի կենտրոնական պահում Վեհափառ Հայրապետի պատվին պրն. Սերժ Զիլավյանը մեծ ընդունելություն և ճաշկերություն տվեց:

Սույն ընդունելությանը մասնակցում էին Համայն Ռուսիի Պատրիարք Ալեքսի Բ-ն իր շքախմբով, Մուկվայում գտնվող քաղմաթիվ երկրների դեսպաններ և դիվանագետներ, Մուկվայի հայ համայնքի ներկայացուցիչներ՝ մտավորականներ, գիտականներ, արվեստագետներ: Մասնակցում էին նաև ուսումնականներ, քաղաքական գործիչներ, Ռուսաստանի խորհրդարանի և Մուկվայի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝ ավելի քան 900 հոգի:

Ընդունելության ժամանակ ողջույնի և օրինության խորով ներկաներին դիմեց Հայոց Հայրապետը.

#### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՃԱԾԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

**Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս երկրի վրա գտնված իր վերջին օրերին հայունեց, որ իր գնալուց հետո պիտի ուղարկի միխթարիչ Ս. Հոգում: Հիսուս օրեր հետո, ինչպես գիտեք, Վերնատան մեջ տեղի ունեցավ այդ հրաշալի դեպքը, որ կոչում ենք Հոգեգալուս: Եկավ Ս. Հոգին աշխարհի վրա և մարդկանց մեջ, հատկապես առաքյալների: Եվ Ս. Հոգին առաքյալների և հաշորդող սերունդների միջոցով բոլոր ազգերի, մանավանդ եկեղեցիների վրա տարածվեց և շարունակեց գործել մինչև այսօր: Եվ մենք՝ հոգևորականներս միխթարված ենք և հավատում ենք, որ գոնե երբեմն մենք՝ մարդկան արժանի ենք համարվում, երկնքի կողմից Ս. Հոգին այցելում է մեզ և գործում: Ես համարում եմ այսօրվա այս պահը այդպիսի սուրբ պահ, երբ իսկապես բոլորս ներշնչված ենք Ս. Հոգու:**

Այս գգացմունքներով նախ ես ողջունում եմ այստեղ ներկայությունը մեր սիրեցյալ հոգերոր եղբոր՝ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի: Ողջունում եմ այստեղ գտնվող Ռուսաստանի Քեղերացիայի պետությանց կամ քաղաքյին իշխանությանց բոլոր ներկայացուցիչներին: Ողջունում եմ տարբեր երկրների դեսպաններին կամ նրանց ներկայացուցիչներին: Ողջունում եմ քաղմաթիվ մտավորականներին հայ համ ուսու, որոնք գտնվում են այս հարկի տակ: Վերջապես թույլ տվեր իմ ողջույնը բաշխել ձեզ բոլորիդ, իմ սիրելի տիկիններ և պարունակը, որ գտնվում եք այստեղ:

**Աստուծ օրինությամբ ես առաջին սպասավորն եմ Հայ Առաքելական Եկեղեցու, 37 տարիներից ի վեր, իմ պատմական Արոռու ունենալով Հայաստանի մեջ՝ Ս. Էջմիածնում: Ս. Էջմիածնի, որ կենտրոնն է համայն հայ հավատացյալ ժողովրդի և Հայ Եկեղեցու, ոչ միայն Հայաստանի, այլ նաև ամրող աշխարհի: Ինչպես գիտեք երկի Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Հարավային ու Հյուսիսային Ամերիկաներում Հայ Եկեղեցին տարածված է իր ժողովրդով՝ մոտ երկու միլիոն հավատացյալներով: Եվ քրիստոնեական հավատքի լուսով նրանք կապահծ են Մայր Արոռ Ս. Էջմիածնի հետ, որ աշխարհը հնագույն եկեղեցական կենտրոններից մեկն է հանդիսանում Պարսկական պարտիայի համար: Եվ այդ դարերից մինչև այսօր, հայ ժողովրդը, հակառակ տեսակ-տեսակ փորձությունների և դժվարությունների, մնաց հավա-**

տարիմ Քրիստոսի Լույս Ավետարանին և միշտ քարոզեց սեր ու խաղաղություն ժողովորդների միջև և մարդկանց միջև:

Սայդ ոգով է շարունակում առաջնորդվել Հայ Առաքելական Եկեղեցին և այսօր նաև ձեր ծառան՝ Հայոց Պատրիարքը: Դարերի ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցին տևապես եղբայրական սիրո հարաբերությունների մեջ է եղել բոլոր քրիստոնյա եկեղեցիների հետ: Հայ Եկեղեցին ընդհանրապես եղել է լայնախոհ և ազատամիտ և այդ եղբայրական սիրո հարաբերությունները պահպանել է ոչ միայն քրիստոնյա, այլ նաև ոչ քրիստոնյա, հատկապես մահմեդական ժողովորդների հետ: Ինչ վերաբերում է հատկապես մահմեդական կրոնքին կամ հարաբերություններին, պետք է ասենք, որ դրանք պատմության ընթացքին զարգացած են և Կովկասում և Մերձավոր Արևելքում արաբական և մուսուլմանական տարրեր երկրներում:

Իհարկէ Հայ Առաքելական Եկեղեցո՞ւ բոյը Եկեղեցիների հետ հարաբերության ճանապարհին առավել մոտիկություն, եղբայրություն, գործակցություն զարգացել է Մուս Պրավոլավ Եկեղեցու հետ: Այս պատմական գործընթացը զարգացել է հատկապես վերջին երեք հարյուր տարիների ընթացքում, և ես երջանիկ եմ, որ այդ պահնդությունը պահպանվում է մինչև մեր օրերը և իրականացվում է մեր Մուս Պրավոլավ Եկեղեցու եղբայրական հարաբերությունների միջոցով: Իմ այս անգամվա այցելությունն ունի այս իմաստը, առավել ամրապնդել մեր եղբայրական սիրո հարաբերությունները Մուս Պրավոլավ մեծ Եկեղեցու հետ:

Ես այսօր շատ երջանիկ եմ, որ Ս. Դանիելով վամբում մենք առանձին հանդիպում ունեցանք Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքի հետ՝ ջերմ խոսակցության մթնողորտի մեջ և վերջում ստորագրեցինք համատեղ մի հայտարարություն՝ ողղոված մեր ժողովորդներին:

Ես այս երկու օրերի ընթացքում շատ գործ եմ, որ պատեհությունն ունեցա հանդիպելու նաև Մուսաստանի Ֆեղերացիայի քարձաստիճան ղեկավարների հետ, հատկապես փոխնախագահի և վարչապետի հետ, ապա նաև Մուկվայի քաղաքապետի հետ: Այս առիթով ես պարտը զգացի, իբրև Հայ Եկեղեցու գլուխ, իմ երախտագիտությունը հայտնել Մուսաստանի Ֆեղերացիայի Հայաստանին մատուցած բոլոր օգնությունների համար:

Ինչպես գիտեք, Հայաստանը ավելի քան երկու տարի է, քավական ծանր վիճակի մեջ է գտնվում ձեզ ծանութ Լեռնային Ղարաբաղի դժբախտությունների հետևանքով: Այն սարսափելի երկրաշարժը, որ Հայաստանում տեղի ունեցավ չորս տարի առաջ, երբ ավելի քան 30 հազար հայեր զոհվեցին և ավելի քան հինգ հազար հայություն և գաղղականություն տակավին չունեն իրենց սեփական բնակարանները: Սա հետևանքն է այն շրջափակման, որին ենթակա է այսօր Հայաստանը: Եվ մենք շնորհակալ ենք բոլոր այն օգնությունների համար, որ ստանում ենք Մուսաստանից և եղբայրական նախկին խորհրդային հանրապետություններից, և արտասահմանյան տարրեր երկրներից, Եվրոպայից և Ամերիկայից:

Հույս ունենք և հավաստում ենք, որ այս ժմվարությունները կարծ կտնեն և կհասնենք խաղաղության ափին: Հատկապես աղոթող ենք իբրև հոգևորականներ, որ դարաբաղյան խնդիրը լուծվի խաղաղ բանակցություններով և փոխադարձ հասկացողությամբ:

Սորբեշանի հետ մենք պատմական դրացի ժողովորդներ ենք և որևէ իմաստ չունի, որ երկու կողմից մեր ժողովորդների զավակները զոհեն իրենց կյանքը և արյունը: Ես կուգեի այս առիթով հայտնել ձեզ, որ Եկեղեցիների

Համաշխարհապետին Խորհրդի նախաձեռնությամբ, և իրեն հայոց Կարողիկոս Ժնևում մի քանի օրից պիտի հանդիպեմ Աղքարեցանի Ծելս ով իպամի հետ: Ես հուզ ունեմ, որ մեր հանդիպումները և միատեղ աղոթքները ինչ որ չափով պիտի նպաստեն, որպեսզի արդար և խաղաղ մի լոծում գտնի դարաբանական ողբերգական հարցը:

Այսօր ես ուզում եմ անդրադառնալ մի պահ Ազերսկի Բ Պատրիարքի հետ մեր հանդիպումին: Մենք քննարկեցինք նաև մեր Եկեղեցիների ապագա գործակցության հարցը: Ես շատ ուրախ եղա, որ Նորին Սրբությունը պատրաստակամություն հայտնեց ապագային անձամբ այցելել Ս. Էջմիածին Հայաստան: Մենք սիրով և բաց սրտով սպասում ենք անհամբեր և կարոտով նորա ժամանումին Հայաստան և Ս. Էջմիածին: Ես կարծում եմ, որ մեր երկու Եկեղեցիների սերտ հարաբերություննը և համատեղ գործակցությունը ապագային կարևոր չափով իրենց նպաստը կը երեն ուսւ և հայ ժողովորդների դարավոր բարեկամության շարունակությանը:

Պատմությունը երեք չի մոռացվի և ինչ պայմաններ էլ, որ ստեղծվեն, բարեկամության այդ հանապարհը կշարունակվի:

Ծշմարիս է, որ վերջին երկու-երեք տարիներում Հայաստանում իրադարձությունների և Անդրբն հուզումների առիթով խոսվեց, որ իր հայ ժողովորդի մեջ հակառական տրամադրություններ կան: Իրականությունն այն է սակայն, որ հայ ժողովորդը վերապահումներ և դժգոհություններ ուներ, բայց ոչ ուսւ ժողովրդից, այլ վերապահություններ և դժգոհություններ ուներ վարչակամայական ուժիմի հանդեպ, աթեհատական գաղափարախոսության հանդեպ, որից դժգոհ էր և ինքը ուսւ ժողովորդը կարծեմ: Բայց ահա այդ շիրությունը հիմա վերացված է և հանապարհը լայն բացված, որպեսզի ազատ Հայաստանը վերականգնի և պիտի հիմնական կերպով շարունակի իր եղբայրական բարեկամությունը և գործակցությունը Ռուսաստանի Ֆեղերացիայի և ուսւ ժողովրդի հետ:

Ահավասիկ այն մի քանի մտածումները և խոները, որ ուզեցի ձեզ հետ բաժանել այսօր: Ես կուզեի նաև այս առիթով իմ գնահատանքը հայտնել Մուկվայի հայ համայնքին, թեմական խորհրդին և առաջնորդին՝ իրենց ժրաշան գործունեության համար, որպեսզի նորից վերականգնվի և առավել ամուր հիմքերի վրա կազմակերպվի Հայ Եկեղեցին ամբողջ Ռուսաստանի ֆեղերացիայի տարածքի վրա: Հատկապես իմ գոհունակությունը կուզեմ հաղորդել թեմակալ առաջնորդին՝ Տիրան սրբազնին, թեմական խորհրդի անդամներին, որոնք կազմակերպեցին իմ այցելության ծրագիրը Մուկվայում: Հատկապես իմ գնահատանքը պիտի հայտնեմ թեմական խորհրդի անդամ պրա. Սերժ Զիլավյանին, որ կազմակերպին է մեր հանդիպումն այստեղ Մետրոպոլիտ: Պրա. Զիլավյան մի սրանչելի անձնավորություն է թե իրեն քրիստոնաց, թե իրեն հայ մարդ, թե իրեն քաղաքացի Ռուսաստանի ֆեղերացիայի և իրեն նվիրատու բարերար Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Երբ երկու շաբաթ առաջ ինքը գտնվում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ես իրեն պարօնաւորեցի Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով: Այսօր ես հետո բերել եմ համապատասխան շքանշանի կոճեակը, որը ուզում եմ հանձնել իրեն այս պահուն: Մեր Եկեղեցին կարևոր աղոթքների մեջ մի արտահայտ: Ահավասիկ պրա. Զիլավյան այդպիսի Եկեղեցի շինու աձնավորություն է,

Ես կուզեի խոսք ասել թեմակալ առաջնորդ Տ. Ֆիրան եպիսկոպոսին, որ ղեկավարն է անշուշտ ամբողջ այս եկեղեցական կազմակերպության Խուսաստանում: Բացատիկ եռանդով մոտ 20 տարի է, աշխատում է այստեղ, լավագույն եղբայրական հարաբերություններ է պահում Խոս Պրավուալավ Եկեղեցու հետ: Նա միշտ որդիական ակնածանքով մոտենում է Խուսաց Պատրիարքի ձևոքը համբուրելու համար: Եվ գնահատելով իր այս եկեղեցաշն գործունեությունը այս կուսակով շնորհում եմ իրեն արքեպիսկոպության տիտղոսը: Ուրեմն հետ այսու Խուսաստանի հայոց թեմի առաջնորդը ոչ թե Ֆիրան եպիսկոպոսն է, այլ Ֆիրան արքեպիսկոպոսը: Եվ որովհետև լայն ասպարեզ է բացվում այս նոր պայմաններում եկեղեցական կանքի գարգացման, ես նպատակահարմար եմ գտնում և երև նորին Սրբությունն էլ իր հավանությունը տա, որ Ֆիրան սրբազնին ճշանակեմ նաև Հայրապետական Պատվիրակ Խոս Պրավրալավ Եկեղեցու մոտ:

Մաղթում եմ ձեզ բոլորի բաշառողջություն, արևշատություն և Աստոծ օրինությունը ձեր բոլոր բարի, ազնիվ և արդար գործերի առաքելության համար. ամեն:

Ապա խոսք առավ Խուսաց Պատրիարք Ալեքսի Բ-ը և ջերմ խոսքեր ողիեց Վեհափառ Հայրապետին, Հայ Եկեղեցուն ու ժողովրդին:

### ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

Հարգարձան տիարք և տիկնայք.

Մրանց շնորհակալություն եմ հայտնում Հայ Առաքելական Եկեղեցու Մրազան Հովկապետին՝ բարի խոսների համար, որ ասվեցին Խոս Առղափառ Եկեղեցու հասցեին, մեր երկու Եկեղեցիների ավանդական հարաբերությունների մասին:

Այս օրը պատմական մեկ էջ է դառնում մեր երկու Եկեղեցիների հարաբերություններում: Այսօր մենք վերլուծեցինք այն բոլոր ավանդական, Եղբայրական առնչությունները, որոնք գոյություն են ունեցել, ունեն և ըստ մեր ընդհանուր համոզվածության պիտի գոյություն ունենան մեր երկու Եկեղեցիների միջև հետազոտմ են:

Դեռևս ԺԹ դարում Ներսես Շնորհալի Կարողիկոսը հիշատակել է Խոս Եկեղեցին: ԺԹ դարից արդեն գոյություն են ունեցել կապեր՝ Հայ և Խոս Եկեղեցիների միջև: Եվ այս դժվարին ժամանակներում, որ մենք ապրում ենք, մեր հանդիպումը կայացալ շնորհիլ Խոսաստանի և Նոր Նախիջևանի թեմակալ առաջնորդի, հնարավորություն տվեց Եղբայրական հաղորդակցության և կոչ՝ ուղյալ հետափորներին, մերձավորներին, մեր Եկեղեցու հավատացյալներին, բաղադրիչներին, մեր պետություններին՝ պահպանելու մշակութային և հոգևոր արժեքներն ու կապեր, որոնք գոյություն են ունեցել այս երկու Երկրների միջև:

Ես սրանց շնորհավորում եմ Ֆիրան Մրազան Հորբ՝ արքեպիսկոպոսի պատվագոր կոչում ստանալու և Խոս Եկեղեցուն կից Հայ Եկեղեցու մշտական ներկայացուցիչ ճշանակվելու առքիվ: Ճամոզված եմ, որ դա կիֆնի կարևոր մի ժայռ, ամուր, Եղբայրական հարաբերություններում մեր երկու Եկեղեցիների միջև, որոնք պետք է խորացնել, զարգացնել՝ անտեսելով ճախիկնում եղած ամեն տեսակի տարածայնությունները, հակամարտություններն ու անհանդուրժությունները:

Սեր Ս. Եկեղեցիները եղբայրական հաւաքեռություններով օրինակ պես է հանդիսանան և ոգևորեն հավատացյալ մողովրդին՝ հոգեոր և մշակութային համագործակցության և փոխըմբռնման այն համակարգում, որ միավորում է մեզ:

Զերդ Մրություն.

Հնորհակալություն Զեզ Զեր աշխատանի համար, որ կատարվեցին Ռուսաստանի և նոր Խախիչևանի քեմ կատարած այցի ընթացքում, որը հնարավորություն տվեց մեզ անձնապես շփվելու որպես երկու Եկեղեցիների հովվապեսեր՝ այս շենք ու անկրկնելի բնդունելության պահին:

Կարծում եմ, որ սա կիմնի բնդիսանուու ներդրում եղբայրության և բարեկամության ամրապնդման և փոխըմբռնման գործում, ոչ միայն հայ և ռուս, այլև հայութին ԽՍՀՄ ազգերի միջև:

Այսուղ ներկա են բազմարիվ դիվանագետներ և կարծում եմ փոխըմբռնումը և համագործակցումը շուառվ կատարածվեն աշխարհի շատ երկրներում:

Հնորհակալություն այս հաղորդակցության համար, շնորհակալություն այս հանդիպման համար և շնորհակալություն Զերդ Մրությանը՝ Տիրան արքեպիսկոպոսին Ռուս Եկեղեցում մշտական ներկայացուցիչ Եղանակվելու համար, որը կիմնի կենդանի կապ մեր երկու Եկեղեցիների միջև:

Այնուհետև Սմոլենսկի և Կալինինգրադի միտրոպոլիտ Կիրիլը ընթերցեց երկու հովվապետների հայտարարությունը:

Ընդունելությունն ունեցավ նաև իր գեղարվեստական հայտագիրը:

## 22 Բոնվար, որբար

Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը Մուկվայի քաղաքացի բաղադրապետի հրամանով քաղաքապետարանում պաշտոնական հանդիպում ունեցալ Մուկվայի քաղաքական Յուրի Լուժկովի հետ։ Հանդիպմանը ներկա էին գերշ. Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանը, գերշ. Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը, Տ. Եղիշիկ Վորդ, Պետրոսյանը, Արճ. Արք. Լյուդվիգ Խաչատրյանը և Սերժ Զիլավյանը։ Հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը խորքով դիմեց քաղաքապետին։

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Ես Հայաստանում գտնվում եմ իբրև Կաթողիկոս 37 տարիներից ի վեր, ըստրվեցի և եկա Ռումինիայից։ Ես ոումինացի հայ եմ, այնուեղ ծնված, այնուեղ մեծացած և այս 37 տարիների իմ պատրիարքական կանոնում, այսօրվա իմ հանդիպումը բացառիկ իրադարձություն է, որ ինձ ընդունում է Մուկվա մեծ քաղաքի քաղաքապետը։ Աս մեծ պատիվ է, ոչ միայն ինձ համար, այլ նաև տարածում է ողջ Հայ Առաքելական Եկեղեցու և ողջ հայ ժողովությունի վրա։ Հայ ժողովուրդը շորջ 4 միլիոն ապրում է Հայաստանում, 2 միլիոն և մի քիչ ավելի նախկին Սովորական Միության հանրապետություններում՝ մեծապ մասամբ Ռուսաստանի ֆեդերացիայում, Վրաստանում։ Եվ Վերջապես արտասահմանի սիցուրք Եվրոպա, Ամերիկա և Մերձավոր

Արևելք, որտեղ էի մոտավորապես երկու միջին հայ է ապրում: Մեծագոյն արտասահմանի մեր զաղութք Միացյալ Նահանգների մեջ է, որ մեկ միջին հայ կա: Եկեղեցական-կրոնական տեսակետից սփյուռքահայ հայությունը հոգևոր իմաստով կապված է Ս. Էջմիածնի հետ: Խնչակն գիտեր, Ս. Էջմիածնին հիմնաված է Դ. դարու սկզբին, տեսական պատմական կենտրոնն է հայ քրիստոնյաների: Այնպես որ թույլ տվեք ողջ հայ ժողովրդի և Եկեղեցու անոնով իմ գոհունակությունը հատնել այս առիթով: Մեծ գնահատանքով լսեցի ձեր խոսքերը, ձեր մտածումները, ձեր խոհերը և ապագայի նկատմամբ ունեցած երազանքները: Հատկապես թույլ տվեք գնահատել ձեր սպասումները և գնահատումները կրոնի և Եկեղեցու վերաբերյալ, հոգեւոր կյանքի վերաբերյալ:

Անշուշտ խորհրդային ուժիմի շրջանում Եկեղեցիները սահմանափակ գործունեության դաշտ ունեն: Հիմա լիրիկ փոխված է վիճակը և նաև Եկեղեցական իմաստով լայն գործունեության հանապարհ է բացվել, որն իմ կարծիքով, անշուշտ կրոնական հոգևոր հշանակություն ունի, ինչպես նաև ընկերային բարոյական, նույնիսկ որոշ չափով քաղաքական հշանակություն: Հայ Եկեղեցին պատրաստ է այդ պարտականությունն իր ուսերի վրա վերցնելու: Եվ այդ գործում մեզ նեցուկ են կանգնել մեր հայ հավատացյալ ժողովրդը և Եկեղեցական կենտրոնները արտասահմանում: Պետք է ասեմ հաստատ կերպով, որ Արևմտութիւն մեջ ապրող երկու միջինն հայերը բացառիկ կարևորությամբ հետևում են նախկին Խորհրդային Միության երկրների հակատագրին: Անշուշտ ըրանք առաջին հերթին մտահոգված են Հայաստանի կացությամբ, որ ինչպես գիտեք, շատ ծանր վիճակի մեջ է այսօր՝ ջեռուցում չկա, լույս չկա, բավարար սննդամթերք չկա, հատկապես բլոկադայի հետեւ վանքով: Բայց այդ բոլոր դժվարությունները հայ ժողովրդը տանում է այն նույնով, որ կանցնեն այս օրերը և հետզինուն ավելի կայտն կացություն կատեղծվի, և տարբեր տեսակի հարցերը կլոնվեն խաղաղությամբ: Եվ մեր ժողովրդը հավատում է, որ Թուսատանի Փեղերացիայի հետզինուն բարգավաճումը երաշխիք է Հայաստանում վիճակի կայունության:

Ես կուզեի շնորհակալություն հայունել նաև Ձեր որոշումի համար, որ Մուկվացու ուզում եք տրամադրել որոշ հողամաս, որ պետք է կառուցվի հայոց նոր Եկեղեցին: Ձեր այս որոշումը հույսի մեկ ավետիս է ոչ միայն Մուկվայի հայության, այլ նաև Հայաստանի և ողջ հայության համար: Եվ այս առիթով կուզեի Ձեր ուշադրությանը հանձնել, որ Թուսատանի Հայ Սկեղեցու կազմակերպության գործում կարիւր է անշուշտ Մուկվայի եկեղեցու կառուցումը, ինչպես նաև Հայ և Թուս Պավոլավ Եկեղեցու հարաբերության առումով:

Մենք երեկ Ալեքսի Պատրիարքի հետ հանդիպումի ժամանակ միասին որոշեցինք, որ Հայ Առարեկան Եկեղեցին, Ս. Էջմիածնին իր մնացուն ներկայացուցիչը ունենա Թուս Պավոլավ Եկեղեցու մտու այդ ներկայացուցիչը կիմի Թուսատանի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Տիրան արքեպիսո. Կյուրեղյանը: Եվ այդ հանգամանքով անշուշտ Տ. Տիրան արքեպիսունուոր որպես ներկայացուցիչ կարիք կրնենա Մուկվայում մի փորդիկ շների, որը կարդանա իր ներկայացուցչությունը հաստատեր: Թերեւ հնարավորություն լինի մտ ապագայում այդ հարցն էլ լուծել, որի համար մենք շնորհակալ կիմնենք:

Մեր հնարաբերությունները Թուս Պավոլավ Եկեղեցու հետ միշտ սրանչելի են եղել դարեր շարունակ: Պետք է ասել նաև խորհրդային շրջանին: Ես թանկագին հիշատակներ ունեմ Ալեքսի Ս. Պատրիարքից, որ բացառիկ անձ

հավորություն մըն էր, հետո Պիծն Պատրիարքի և ապա հիմա Ալեքսի Բ ննտ: Հատկապես վերջին երկու-երեք հարյուր տարիների ընթացքում, Հայ Եկեղեցին և Ս. Էջմիածնին նոյնիսկ քաղաքական կարևոր դեր կատարած է հայ-ռուս հարաբերությունների գարգաղման ճանապարհին: Այս, պատությունը հայտնի է մեզ և մեր ոռու պրավուպավ Եղբայրներին: Մեզ համար Ռուս Պրավուլավ Եկեղեցին ներկայացնում է հավիտենական ոռու ժողովուրդը, նաև հայ Զոսիմայի և Ալյոշ Կարամազովի ոռու ժողովուրդը:

Մենք երջանիկ ենք, որ այս նոր շրջանին, Հայաստանի անկախության շրջանին մեր Եկեղեցական բարեկամությունն ու հարաբերությունները պիտի գարգանան ավելի մեծ թափով:

Դուք ակնարկեցիք հայ ժողովրդի Աերկա դժվարությունների մասին այս շրջանին: Իրապես շատ դժվար է Հայաստանի և հայ ժողովրդի դրույցները: Մենք երախտապարտ ենք, որ դուք հասկանում եք այդ իրականությունը: Մենք նոյն այդ դրական տպավորությունն ստացանք մեր հախագահի՝ Անն Տեր-Պետրոսյանի այցելության առիթով Սոսկվա, որ վերադարձավ լավատես զգացումներով: Չոգաղիպարար իմ այցելությունը հաջորդեց դրան: Ես անցուած Հայաստանի պետությունը չեմ ներկայացնում, բայց որպահանում եմ հաստատելով այս քարի գարգացումը մեր անկախ հանրապետության և Ռուսաստանի Ֆելեքտացիայի միջև: Ես երախտապարտ եմ նաև, որ իմ այցելության առիթով պատիվ ունեցա հանդիպելու նաև Ռուսաստանի ֆելեքտացիայի փոխնախագահ Ռուցելոյի և նորընտիր վարչապետ Շերնոմիրդինի հետ և ամեն տեղ հանդիպեցի նոյն բարյացակամ վերաբերմունքին:

Սհամ այս մտածումներն ու զգացումները, որ ես ունեմ այս պահին՝ մեր այս հանդիպման առիթով: Ընորհակալություն եմ հայտնում Ձեզ և մաղուս եմ Ձեզ քաջառողջություն և նորանոր հաջողություններ, որով պիտի կարողանար մեծ Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվան հասցնել իր փառավոր բարձունքին:

Հանդիպման լնթացքում քաղաքաբետը պաշտոնապես հայտնեց Հայաստանին օգնելու իր պատրաստակամությունը և Մոսկվայում հայկական նոր Եկեղեցի կառուցելու համար հողի հատկացումը.

### ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՅՈՒՐԻ ԼՈՒԺԿՈՎԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Ես որպահ եմ ողջունելու Ձեզ Մոսկվայի այս հնագույն դահլիճում և ասելու, որ մոսկվացիները ճանաչում են Ձեզ ոչ միայն Հայ Եկեղեցու հովվապետի, այլ նաև որպես միջազգային հասարակական և մշակութային գործիչ վերաբերում են ձեզ մեծագույն հարգանքով:

Համոզված եմ, որ հիմա Մոսկվացիները մեզ հետ միասին ուրախանում են Ձեր այցելության առթիվ: Մեզ մոտ Մոսկվայում, ապրում են մեծ թվով հայեր և մենք մեծ հարգանքով ենք վերաբերվում մեր քաղաքացիներին՝ մոսկվաբնակ հայերին, որոնք աշխատում և ստեղծագործում են մեզ հետ մեր քաղաքում: Իրանք մտքի մարդիկ են, տաղանդավոր, որոնցից շատերը ավելացրել են Մոսկվայի, Ռուսաստանի փառքը, այստեղ ստեղծագործում են մկարիչներ, դերասաններ, գիտնականներ, հասարակական գործիչներ և մենք հապատակում ենք նրանցով՝ մոսկվաբնակ հայազգի տաղանդներով,

որոնց գործունեությունը իր ուրույն տեղն ունի Մոսկվայի մշակութային-գիտական ոլորտում:

Վերջին ժամանակներու կապիված հասարակական, տնտեսական գործութացների մեջ, որոնք տեղի են ունենում Ռուսաստանում, Մոսկվայում, ի հայտ են գալիս նոր անհատներ, բիզնեսմեններ, բանկիրներ, կոմերչաններ, որոնք իրենց ներդրումն են ունենում այդ գործի ընդհանուր բարեկարգման մեջ: Ես կարող եմ ասել, որ այսօր շատ կարեր է հոգևոր վերազարդումը: Մեր հասարակության հոգևոր վիճակը այսօր համարյա կորած է հախվիճում Կոմկուը իր վրա էք վերցրել հասարակության հոգևոր վիճակի պարտավորությունը և մենք այսօր քաղում ենք այդ պատասխանառության պտուղերը՝ փլուզված հոգևոր աշխարհ, ինքնասիրության, և հատկապես ազգային ինքնասիրության կորուսը և կենցաղավարության և շատ որիշ արժանիքների ունահարում: Այսօր ես հոգևոր վերազարդումը հնարավորությունը կապում եմ կրոնի հետ: Դա ոչ միայն ուղղափառությունն է, որը մեծագույն տեղ է գրավում Մոսկվայի կրոնական համայնքներում, այլ նաև մյուս կրոններն ու կրոնական համայնքները, իսկ այդպիսիք Մոսկվայում գրանցված են 27-ը: Այդ 27 տարրեր կրոնական կազմակերպությունները պետք է աջակցոյն ստանան Մոսկվայի քսանքային իշխանություններից: Բայց և այնպես մենք հասկանում ենք, որ առաջնահերթությունը պետք է տրվի ուղղափառությանը, մյուս կրոնների ձկառնամբ և առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում նրան: Ուղղափառությունը շատ մոտ է նաև Հայ Սուարելական Եկեղեցուն և այս երկու Եկեղեցների հարազատությունը մեզ համար ստեղծում է լավատեսական և ամոր կապերի հնարավորություններ: Կապեր Զեր դեկապարած Եկեղեցու և Զերդ Սրբության հետ:

Զերդ Սրբություն: Հանուն մեր երկու Եկեղեցների եղբայրական կապերի ամրապնդման, և հանուն միացյալ ուժերով հոգևոր զարթունքի խթանելու և երկրի վրա խաղաղություն ստեղծելու՝ Մոսկվայի քաղխորհուրդը որոշել է Հայ Սուարելական Եկեղեցուն Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմին Մոսկվա քաղաքում հողատարածք հատկացնել մի շքեղ և մեծ Եկեղեցի կառուցելու համար: Համոզված եմ, որ այդ Եկեղեցին կիմի երկու Եկեղեցների և ժողովրդների դարավոր բարեկամության և մեկ գրավականը:

Ուրախ եմ, Զերդ Սրբություն, որ Տիրան արքեպիսկոպոս սրբազն հորը Եշանակել եք մշտական ներկայացուցիչը Զեր Եկեղեցու, դրանով էլ մեզ հնարավորություն տվել նրա միջոցով մշտական հաղորդակից լինելու Զեզ ու Զեր դեկապարած Եկեղեցու և ազգի հետ:

Ժամը 13-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Հայաստանի Հանրապետության ներկայացուցչություն, որտեղ հանդիպում ունեցավ Սերժ Զհլավյանի անվան գիմնազիայի սաների և նրանց ուսուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև նիմնատիր պրն. Սերժ Զհլավյանը, տնօրեն պրն. Էդվարդ Զհլավյանը, Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչներ և սաների ծնողներ:

Հայոց Հայրապետը Ս. Էջմիածնից քերպած իր օրինությունը բաշխեց ներկաներին, բարձր գնահատեց հայ համայնքի գործունեությունը՝ մանաւանդ հայաստանական և մեկ կրթօջախ հիմնելու առնչությամբ:

ՎԵՀԱՓՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՒՏՔԸ «ՍԵՐԺ ԶԻԼԱՎՅԱՆ»  
ԳԻՄԱՍՉԻՍՅՈՒՄ

Ինձ համար այս պահը չափազանց հոգիշ է և նշանակալիք: Սկզբից ես չէի նախատեսում այս հանդիպումը: Ինչպես գիտեք այս անգամ ես եկա Մոսկվա մեր թեմակալ առաջնորդի և պրն. Սերժ Զիլավյանի հրավերով՝ մեր Եկեղեցու հարցերով և պաշտոնական այցելությունների համար, որոնք տեղի ունեցան շատ լավ պայմաններում: Բայց այսօր պատեղ բացահիկ պահ եմ ապրում այս Հայկական ներկայացուցչության հարկի տակ և ձեր ներկայությամբ, որ հավաքված եք իրեն սաները «Սերժ Զիլավյան» գիմնազիայի: Նրա անվանք հիմնված այս հաստատությունը հանդիսանում է «Լազարյան» նեմարանի շարունակությունը մեր օրերին: Ես նախ և առաջ կուզեի իմ ողջունը և օրինակունքը բերել պրն. Զիլավյանին՝ հիմնադիրին այս հաստատության, տօքունին պրն. Եղվարդ Զիլավյանին և ուսուցչական կազմին, բոլոր հոգորերին, որոնք պատեղ են գտնվում, պաշտոններության և մեր սիրելի սաներին: Կրկին անգամ Աստուծո օրինությունը բոլորի Սմենայն Հայոց Մայր Սրոռ Ս. Էջմիածնից:

Սիրելի երեխանենք, դուք գիտեք, թե ես ով եմ, արդեն ձեր արտասահմությունները ցուց տվեցին: Դուք գիտեք, թե ինչ է նշանակում Ս. Էջմիածին, որ համայն հայ ժողովրդի, համայն հայ հավատացյալների հոգենոր կենտրոնն է՝ Այսատանի հայերի, և Մուսասատանի հայերի, և ամբողջ աշխարհի:

Հայությունն այսօր իր տվով երևի մոտենում է տասը միլիոնի, որից մոտ չորս միլիոնը բնակվում են մեր Մայր Հայրենիքում, այսօր հոչակված մեր անկախ հայկական պետության երկնքի տակ: Ծորչ երկու միլիոն և զույգ ավելին բոլոր հայսկին Խորհրդային Միության հանրապետություններում, իսկ նրանց մեծ մասը բնակվում է Մուսասատանի Ֆեղերացիայում, Վրաստանում և այլ հանրապետություններում, և ավելի քան երկու միլիոն ցրված են ամբողջ աշխարհում Մերձավոր Արևելքում, Եվրոպայում և Ամերիկաներում, մեծ մասը Հյուսիսային Ամերիկայում Միացյալ Նահանգներ և Կանադա, ավելի քան մեկ միլիոն: Ահա այս համայն աշխարհի հայության հոգենոր կենտրոնը հանդիսանում է Մայր Սրոռ Ս. Էջմիածինը աշխարհի ամենահնագույն բրիտոններական սրբառեդիներից մեկը՝ հիմնված Գ դարու սկզբին:

Մեզ համար, մեր հայ ազգի համար մեծ հսկարտությունն է, որ աշխարհի վրա առաջին ժողովուրդը, որ պաշտոնապես ընդունեց բրիտոններությունը իրեն ազգային կրոն, մեր ժողովուրդն է: Եվ առաջին թագավորը, որ բրիտոննա մկրտվեց, Հայոց Տրդաւ թագավորը եղավ 301—303 թթ.: Ծորչ տասը տարի հետո է, որ Հռոմեական թագավորության կայսը, Կոստանդիանոս թագավորը, հոչակեց բրիտոններությունը ազատ կրոն Հռոմեական կայսրության տարածքի վրա, բայց ոչ պաշտոնական կրոն և ինը՝ Կոստանդիանոս կայսը չմկրտվեց անմիջապես, այլ հազիվ մի 10—12 տարի հետո ինքն էլ անձնապես իր ընտանիքով մկրտվեց բրիտոննա:

Ահա պատմական այս իրողությունը մեր փոքրիկ ազգի համար հսկարտության առիթ է ոչ միայն մեզ համար, այլ համայն բրիտոննա աշխարհի համար: Բոլոր բրիտոնները ընդունում են այս իրողությունը և հարգում են մեր Եկեղեցին:

Ահամասիկ աստվածային օրինությունը ևս բերում եմ ձեզ բոլորի Մայր Սրոռ Ս. Էջմիածնից: Այսօրվա ազգային նոր կյանքի՝ ազատագրված Հա-

յաստանի, անկախ Հայաստանի պայմաններում լայն գործունեության հորիզոն է բացվել նաև Հայաստանյաց Եկեղեցու առջև իրքն դաստիարակ, մայր դաստիարակը մեր ժողովրդին, իրքն ազգային հնագույն կրոնական հաստատությունը հայ ազգի, և իրքն պատմության ընթացքին բոլոր հայկական ազգային հարազատ իշեալներին: Հայաստանյաց Եկեղեցին միակ հայկական ազգային Եկեղեցին է հայ ժողովրդի համար: Եվ ևս երշանիկ եմ, որ նաև ձեր գիմնազիայի հարկի տակ դուք պիտի մեծանար, զարգանար իրքն Հայաստանյաց Եկեղեցվու հավատացյաներ, իրքն բրիտոնյաներ և դառնար ապագային հայ ազգի պարծանք զավակները լինի Հայաստանում, լինի Ռուսաստանում կամ այլ տեղ աշխարհի վրա: Ամեն տեղ, որտեղ հայկական վարժարան կա ստեղծված, Հայ Եկեղեցու կողքին եղել է հայկականության խարիսխը, վեմը, որի վրա հենվում է մեր ազգային գոյուրդունը, մասնավանդ Սփյուռքի պայմաններում:

Մեր Եկեղեցին եղացրական բարի հարաբերությունների մեջ է աշխարհի բոլոր Եկեղեցիների հետ: Դուք երևի արդեն գիտեք, որ Ժնև քաղաքում՝ Շվեյցարիայում, գտնվում է աշխարհի բոլոր Եկեղեցիների կենտրոնը: Մի տեսակ մանրանկարը եթե ուզեր Միացյալ Ազգերի Կազմակերպության: Այնպէս, ինչպես քաղաքական մակարդակի վրա աշխարհի բոլոր երկրների ներկայացուցիչները կազմում են Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, այնպէս էլ կրոնական մակարդակի վրա աշխարհի բոլոր քրիստոնյա Եկեղեցիները համախմբված և միավորված են իրենց ներկայացուցիչներով Ժնև քաղաքում և այդ կենտրոնը կոչվում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ: Այդ կենտրոնին մաս է կազմում նաև Հայ Առաքելական Եկեղեցին ավելի քան 30 տարիներից ի վեր: Այդ Եկեղեցական կազմակերպությունը հիմնվեց պատերազմից հետո: Մեր Եկեղեցին կարևոր դիրք ունի աշխատելու: Կենտրոնական վարչության մեջ այնտեղ երկու ներկայացուցիչները ունենք մենք մշտական: Ամբողջ բրիտոնյա աշխարհը հանաչում է մեզ, ճանաչում է, թե ովքեր են հայերը և ինչ արժեք ունի Հայաստանյաց Եկեղեցին:

Մեճը սիրալիք եղացրական հարաբերությունները ունենք մեր պատմական բոլոր մեծ Եկեղեցիների հետ: Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու հետ, Օրթոդոքս Եկեղեցիների հետ, Անգլիական Եկեղեցու հետ և էլի որիշ քաջարիկ այլ Եկեղեցիների հետ: Անշուշտ նաև Ռուս Պրավոլավ Եկեղեցու հետ: Ռուս Պրավոլավ Եկեղեցու հետ մեր հարաբերությունները նաև նաև կարևոր ունենք մեր հարաբերությունները նաև նաև կարևոր ունենք մեր Եղանակությունը ունեն այն հիմքի վրա, որ մի քանի դարերից ի վեր այդ եղացրական հարաբերությունները բարվոր զարգանամ են մեր Եկեղեցիների միջև, և դա իր բարեկար ազդեցությունն ունեցել է ոչ միայն զուտ կրոնական մակարդակի վրա, ոչ միայն Եկեղեցական տեսակետից, այլ նաև մշակութային, ազգային և նույնին քաղաքական:

Ես կարծում եմ, որ պասօն երբ խորհրդային իշխանության շրջանը վերջ գտավ և ազգային հանրապետություններն իրենց ամենախորջանը նվաճեցին, այդ թվում նաև Հայաստան՝ մեր Մայր Հայքնիքը, հորիզոնը առավել լայն բացվեց մեր երկու Եկեղեցիների գործակցության համար այս ամենախորջան պայմաններում: Իմ կարծիքով հշմարիտ բարեկամություն կարող է զարգանալ ժողովրդայների միջև, եթե երկուսն էլ անկախ պետություններ են: Եվ ան այդ իրավիճակը հաստատված է հիմա, և մեր երկրների անկախության պայմաններում, իրքն հավասարը հավասարի պետությունները Ռուսաստանի Հանրապետության հետ, նաև մեր Եկեղեցիները պատմության մեջ մեր ժողովրդակցության պատմության մեջ նոր էջ պիտի բանան: Եվ իմ

այս անօամփա այցելությունը Մոռկա հան այդպիսի բնորդ ստացավ: Ես երեկ առիթն ունեցա հանդիպելու նորին Սրբություն Ալեքսի Բ. Պատրիարքի ներև և այդ հարցերի շորջ կարծիքների փոխանակում ունեցանք, որոնք լրիվ համընկում են: Ստորագրեցինք մի համատեղ հայտարարություն մեր երկու Եկեղեցների հետագա առավել գործակցության համար: Մի հայտարարություն, որտեղ ցանկություն հայտնեցինք և մաղթանք, որ դարարայան ողբերգական հարցը շուտով լուծվի խաղաղ և արդար սկզբունքների հիման վրա:

Ահա թե ինչպես պատմությունը շարունակվում է նոյն հանապարհով: Մեր երկու Եկեղեցները իրենց նպատակն են ուզու բերել մեր ժողովրդի՝ հայ ժողովրդի ազգային արդար իդաերի հանապարհին: Ահավասիկ մտորումներ, որոնք մեզ ոգեսրում են այս առիթով և ոգեցի ձեզ բաշխել, ձեզ ծանոթացնել այս բոլորի մասին: Եվ իմ խոսք վերջացնում եմ կրկին իմ օրինությունը բերելով մեր այս գիմնազիայի հիմնադրին և երա բարերարին՝ պրե. Մերժ Զիլավյանին, դասախոսական կազմին, պաշտոննության և մանավանդ ձեզ սիրելի երեխաներ: Աստված ձեզ պահի պահպահի քաշողող: Ուրիշ առիթություն, եթե ես Մոռկա գտնվեմ, կուզենայի ձեզ հանդիպել, գոյզ ապագային նոր կառուցված շենքի մեջ և իմ օրինությունը բերելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

«Օրինեալ եղերութ ի շնորհաց Ս. Հոգուն այժմ և միշտ և յախտեան յախտենից, ամեն»:

Նոյն օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի Թեմական Խորհրդի անդամների նետ:

## 23 հունվար, շաբաթ

Սուավության ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը պրե. Մերժ Զիլավյանի առանձնատանը Ալեքսի Բ. Պատրիարքի պատվին ընդունելություն և ճաշկերություն տվեց: Ծաշի ժամանակ տեղի ունեցան ճառերի փոխանակում:

Պարոն Մերժ Զիլավյանը, ստանալով երկու Եկեղեցների նովվապետերի համաձայնությունը, փափագ հայտնեց Մոռկայի որուսական եկեղեցներից մեկում ստեղծել Հայ և Ռուս Եկեղեցների բարեգործական միություն:

Կայացավ նաև հանդիպում Օստամիկինոյի նեռուստաընկերության թղթակիցների նետ:

Նոյն օրը, ժամը 14-ին, Մոռկայի հայկական Սուրբ Հայրություն եկեղեցում Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ հայ հավատացյալների նետ և իր օրինությունը բաշխեց նրանց: Կատարվեց նաև Երեկոյան ժամերգություն:

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը «Շերեմետե-1» օդանավակայանում հարցազրուց ունեցավ կենտրոնական հեռուստանության թղթակիցների նետ և լուսաբանց իր հովվապետական այցելությունը ի Մոռկա: Ապա, հրաժեշտ տարով ամենին, վերադարձավ Հայաստան:

## ՀԱՐՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի Թեմական Խորհրդի հրամագիրը 1993 թուականի Յունուարի 20—23 օրերին պաշտօնական այցով Մոսկովյան էր գտնուում Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց թեմի տարածքում, Աերառեալ Հիւսիսային Կովկասն ու Միջին Ասիան, պայօք բնակուում են աւելի քան մեկ ու կես միլիոն հայեր:

Այս առթի Նորին Սրբութեանը, որպէս նրա շքախմբի անդամներ, ուղեկցում էին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև Եպիսկոպոս Մարտիրոսեանը, Հայաստանի Հանրապետութեան կրօնական խորհրդի նախագահ պրն. Լիովիդ Խաչատրյանը և Տ. Վազգէն արքուայ Միրզախանեանը՝ իբրև գաւազանակիր:

Յունուարի 20-ին, չորեքշաբթի օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը Ռուսաստանի Նախարարների խորհրդի շնորհած պաշտօնական հանդիպում ունեցաւ Ռուսաստանի Հայոց Հայրապետը Վիկոնտ Շերնոմիրդինի հետ:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 20-ին, Հայոց Հայրապետը Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի Թեմական Խորհրդի անդամ և ազգային քարերար պրն. Ալեք Զիլաւեանի առանձնատանը շնորհ մթնոլորտում տեսակցութիւն ունեցաւ Մոսկով քաղաքի քաղաքագլուխ պրն. Եուրի Լումկովի հետ: Տեսակցութեանը ներկայ էր նաև Մոսկովյայ նախկին քաղաքագլուխ պրն. Գայրի Պոպովի:

Յունուարի 21-ին, Բինգշաբթի օրը, առաօտեան ժամը 11-ին, Նորին Սրբութեանը և նրա շքախմբի անդամներին Կրեմլում ընդունեց Ռուսաստանի Փոխնախագահ Ալեքսանդր Ռուցեկոր: Ընդունելութեան ընթացքում շօշափեցին Աերկայումն հայ ժողովրդին լուզող մի շարք կենական հարցեր, ներառեալ Լեռնային Ղարաբաղի արդար ու խաղաղ լուծման հարցը:

Նոյն օրը, ժամը 13-ին, պատասխանելով Ռուս Օրթոդոքս Եկեղեցու պետ Նորին Սրբութիւն Ալեքսի Բ. Պատրիարքի Եղբայրական հրակերին, Հայոց Հայրապետը հանդիպում ունեցաւ նրա հետ Մոսկովյայ Ս. Դանիլով Պատրիարքանիստ վաճրում: Յաւարտ հանդիպման, որը տեղի ունեցաւ Եղբայրական միրայիր մթնոլորտում, երկու Եկեղեցիների Հովուակետերը ասորագրեցին համատեղ մի յայտարարութիւն:

Աւելի ոչ, յևսմիջօրէի ժամը 16-ին, Մովկուայի «Մետրոպոլ» հիմքանցի դահլիճում արն. Սերժ Զիլաւեանը Նորին Սրբութեան պատուին տուեց ճնխ ճաշկերոյթ, որին ներկա էին Մովկուայի և Համայն Ռուսիոյ Ալեքսի Բ Պատրիարքը իր շքախմբով, Մովկուայում հաստարմագրուած բազմաթի երկրների դեսպաններ, դիականագիտներ, Մովկուայի հայ համայնքի ներկայացուցիչներ, ոուս մտարականներ, արուեստագիտներ՝ ընդամենը շորջ 900 հոգի:

Ընդունելութեան ընթացքում ողջոյնի և օրինութեան խօսքով հանդէս եկան Հայոց Հայրապետը և Ալեքսի Բ Պատրիարքը:

Յունուարի 22-ին, որբաթ օրը, առաօտեան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Մովկուայի քաղաքագլուխ հրաւերով քաղաքապետարանում պաշտօնական հանդիպում ունեցաւ քաղաքագլուխ Եուրի Լումկովի հետ: Այս առթի Վեհափառին ընկերակցում էին նրա շքախմբի անդամները: Զրոյից ընթացքում, որն անցաւ չերմ, սրտագին մժնուրուում, քաղաքագլուխը խոտացաւ յատոկ հողամաս տրամադրելու Մովկուա քաղաքի կենտրոնում հայկական մի եկեղեցի կառուցելու համար:

Նոյն օրը, ժամը 13-ին, Հայոց Հայրապետը այցելեց Մովկուայում Հայստանի Հանրապետութեան ներկայացուցչութիւն, որտեղ հանդիպում ունեցաւ նորարար հայկական գիմնազիայի ուսուցչական կազմի և ասների հետ:

Յունուարի 23-ին, շաբաթ օրը, առաօտեան ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը Ալեքսի Բ Պատրիարքի պատուին ճաշկերոյթ տուեց արն. Սերժ Զիլաւեանի առանձնատանը: Այս առթի նաև տեղի ունեցաւ Նորին Սրբութեան հանդիպումը Օստամելինովի հեռուստաընկերութեան թղթակիցների հետ:


Նոյն օրը, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Մովկուայի հայոց Ս. Յարութիւն եկեղեցի ու հանդիպում ունեցաւ մովկուայաբնակ հայ հայտացեալների հետ և իր օրինութիւնը բաշխեց նրանց:


Ժամը 16-ին Հայոց Հայրապետը Մովկուայից վերադարձաւ Մայր Աթոռ Ա. Էջմիածին:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

Ա. Էջմիածին,

29 Յունուար 1993 թ.





## ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԱԲԵՐ

1993 թ. փետրվարի 6—8 օրերին Ծվեյցարիայի Մոնթըլո քաղաքում, հայաձեռնությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի, տեղի ունեցավ Ամենայն Հայոց Հայութեան Վազգեն Ա Կաթողիկոսի և Կովկասի մոտուլմանների խորհրդի գլխավոր և Սուրբեաչանի հոգևոր պետ Շեյխ ող Խալամ Փաշազադեի միջև։ Սրդեն մի քանի տարի է Եջև-ը ու ԵԵԿ-ը մտահոգություն են ցուցաբերում Ղարաբաղյան հարցի և տարածաշրջանում պատերազմական գործողությունների բորբոքման առջիվ և մշտական շփումների մեջ են հակամարտ կողմերի հետ՝ որոնելու հարցի խաղաղ կարգավորման երկուառեր ընդունելի մի ելք։ Այս խաղաղասիրական առաքելությամբ էլ կազմակերպեց երկու կրոնապետերի հանդիպումը Շնունչ՝ հաստատելու համար ամենակարևոր գաղափարը, որ ադրբեանա-հայկական ընդհարումները չունեն կրոնական բնույթ, թեն հայտնի է, որ ադրբեանական քարոզական մերենան հաճախ է օգտագործում հարցի արդյունի բնութագրումը՝ ապահովելու համար մոտուլման աշխարհի համակրանքն ու աջակցությունը։ Այս խաստով կազմակերպիչների խաղաղասիրական ջանքերը պասկվացին հաջողությամբ, որովհետև ստորագրվեց համատեղ մի քանաձն, որտեղ ևս մեկ անգամ (առաջին անգամ 1988 թ. Ռուստվում) ընդգծվեց այն կարևոր հաստատումը, որ Ղարաբաղյան հիմնահարցը չունի կրոնական ենթակող։ Փաստը մեզ համար ավելի քան կարևոր է այն առումով, որ աշխարհի քաղմամիլիոն մոտուլմաններ Սովորեանի մոտուլման կրոնապետի բերանից լսեցին այն հաստատումը, և այն այլև չի կարող քաղաքական շահարկման առարկա դատնալ։ Հանդիպումը կազմակերպված է բարձրագույն մակարդակով, մասնավանդ, որ կողմերի բանակցությունների պատասխանատվությունը իրենց քարձը ներկայությամբ իրենց վրա վերցրին Եջև-ի նորընտիր գլխավոր քարտուղար դուկտ. Կոմրադ Ռայգերն ու ԵԵԿ-ի ընդհանուր քարտուղար Ժան Ֆիշերը։ Հանդիպման երկորորդ կարևոր ար-

դյունքը պետք է համարել այն համաձայնությունը, որով որոշվեց ԵՀԽ-ի և Դատայի Խալամական Կոնֆերանսի շրջանակներում ատեղծել մարդասիրական օգնության ֆոնդ երկու կողմերի տառապայմաններին օգնելու առանց կրոնի և դավանանքի խորականության: Վերջապես գնահատելի պետք է համարել կողմերի պատրաստակամություն՝ շարժնակելու երկխոսություն՝ հակամարտ կողմերի խաղաղասիրական շանքերին աշակելու համար: Ամենայն Հայոց Հայրապետը ևս մեկ անգամ ամենայն վճռակամությամբ հայտարարեց աշխարհին, որ հայ ժողովուրդը ուազմատենչ Ակոսումները չունի և միշտ պատրաստ է մասնակցելու հիմնահարցի խաղաղ կարգավորման բոլոր գործընթացներին:

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Նախ ես ոգում եմ գոհություն տալ Աստուծո, որ այսպիսի սրանելի պատեհություն ատեղծվեց, որ Աղքածանի Շեխս ով Իպամի և իր պատվիրակության հետ հանդիպենք այստեղ, բարեկամական գգացումներով և մեր կրոնական հավատքով՝ դեպի խաղաղության և արդարության մեր Աստվածք:

Իմ շնորհակալվությունն եմ ոգում հայտնել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական վարչության, հատկապես նորընտիր քարտուղար պրն. Կոնքադ Ռազմերին և Եվլուպական Եկեղեցիների Համագումարի ընդհանուր քարտուղար պրն. Ժան Ֆիշերին, որոնք գիտեն, որ մի քանի տարիներից ի վեր մտահոգված էին Անդրկովկասի շրջանում ղղծքախտ իրադարձություններով: Ես կուգեի ողջունել նաև մեր հին բարեկամ Շեխս ով Իպամին, որին ես վաղուց ճանաչում եմ և միշտ գգացել եմ նրա հարգալիք վերաբերության դեպի իմ անձը: Մենք հանդիպեցին 1988 թվականին Խոստովում, Սումգայիթի ողբերգություննից հետո, երբ ժողովին մասնակցեցին քրիստոնյա և մուսուլման Կովկասի բոլոր կրոնապետերը, նաև Վրաստանի Կաթողիկոսը: Ակնտեղ քննարկվեցին հարցերը և ընդհանուր խաղաղության և համերաշխատության մեկ փաստաթուղթ ստորագրեցինք: Բացի այդ, Շեխս ով Իպամի և ես ցանկություն ունեցանք, որ նաև հետագայում հանդիպումներ ունենանք անձնապես՝ մեր նպաստը քերելու համար Անդրկովկասի խաղաղության գործին: Բայց այդ հետագա հանդիպումները տեղի չունեցան. ո՞չ Շեխս ով Իպամի մեղքով և ո՞չ էլ իմ մեղքով: Որովհետև այդ ժողովից հետո պրն. Խարչևը Մոսկվայից, որ կրոնական խորհրդի նախագահն էր այն ժամանակ, ինքը ասաց ինձ, որ այդպիսի հանդիպում ինքը կնախաձեռնի: Բայց չկատարեց այս խոստումը. ձգձգեց, հետո դեպքերը ավելի վատ ընթացք ստացան և այդպիսով խափանվեց այդ գործը: Երանի՝ թե մեր հանդիպումները շարունակվեին և գուցե այստեղ չինը հասնի: Այժմ, երեք-չորս տարի հետո, շատ ծանր վիճակի մեջ լինելով, ինչպես դոր է վկայեցիք, կացությունը անշուշտ խալապես ողբերգական է. մեծ դժբախտություն է մեր երկու ժողովուրդների համար. և՝ Հայաստանի համար, և՝ Պարաբաղիների համար, և՝ Աղքածանի համար: Հարյուրավոր աղքածանցի և հայ երիտասարդներ իրենց կանքը գործում են. անհաշվելի կորուստներ, բանդումներ Պարաբաղում, Հայաստանի սահմանաներձ շրջաններում, որոկաղ և այն, և այն: Անտանելի վիճակ է: Եվ մենք, իրեն Սատուծո անունով խոսող հոգևորականներ,



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ



ՀԱՅԻՑ ԱԶ. ԵՔԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԺՄՆ ՖԻՇԵՐ, ԱՄԵՍԱՅ ՀԱՅՑ ՎԵԼԱՓՈՒ ՀԱՐԱՊԵՏ, ՇԵՅԽ ՈՒԼԻՍԱՍ ՓՈՄԱԶԱՐԵ ԵՎ ԵՀՈՒ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿՈՆՐԱԴ ՈՍՅՁԵՐ

կարծեմ անտարքեր չենք կարող մնալ այս ողբերգական պատկերի առջև: Մենք նախ պարտականությունն ունենք միասին աղոթելու առ Ս.ստված աղբեցանցի և հայ գոհվածների հոգիների համար:

Մենք այստեղ եկանք իբրև հոգևորականներ: Ես չեմ ներկայացնում Հայաստանի կառավարությունը կամ Պարարադի իշխանությունները: Ես ներկայացնում եմ Հայ Սուրբական Եկեղեցին, ներկայացնում եմ հայ հավատացյալ ժողովուրդը, որը իր հայացքը դեպի երկինք ուղղած, գրեթե տևափես աղոթում է Աստծոն, որ խաղաղության շնորհը բաշխվի ամբողջ մեր տարածքի վրա, աղբեցանցիներին և հայերին բաշխվի հավասարապես արևի շերմությունը և արևի լուսը և Աստուծո օրինությունը:

Մենք անշուշտ չենք եկեղ վիճելու համար, չենք եկեղ վիճելի հարցեր քննելու համար: Բնական է, հարցեր շատ կան, արդեն նիշվեցին՝ պատմական հարցեր, ուզմական հարցեր, քաղաքական միջազգային իրավունքի հարցեր և այլն: Այդ հարցերը քննարկելու ես, իբրև հոգևորական, ո՞չ հանգամանք ունեմ, ո՞չ ել կոմպետենցիա:

Փառք եմ տալիս Աստծոն և միանում այս մտքով Շեխս ով Թալամի հայտարարությանը, որ այս ընդհարությները, արյունահեղությունը, որ տեղի են ուժենաւ, որևէ կրոնական համագանձնք չտևեն, և պատմականորեն հայտնի է, որ հայ ժողովուրդը, ո՞ւր ել գտնված լինի մահմեղական երկրություն, միշտ հաշու ու համերաշխ է ապրել մուտքանաների մետ և՛ Կովկասում, և Միջին Ասիայում, և Մերձավոր Արևելքում, ուր, ինչպես գիտեք, կես միջին հայեր են ապրում արաբական մուտքանան երկրություն: Որևէ ժամանակ որևէ խնդիր չի եղել քրիստոնյաշի և մահմեղականի: Եվ ես զոհություն եմ տալիս Աստուծո, որ այս պարագային էլ այդ ճշմարտությունը մնում է հաստատուն: Սովորելու եմ ձեզ, որ խորհրդակցարար, միասնաբար մի փաստաթուղթ կազմենք, մի կոչ՝ ուղղված մեր ժողովուրդներին, հրավիրել, որ կրակը, պատերազմի գործողությունները դադարեն և սկսեն խաղաղ բանակցություններ համերազի մթնոլորտի մեջ, պատկան կողմերի ներկայացուցիչների միջև: Մենք ես, իբրև հոգևորականներ, գուցե այդ ընթացքում մի նպաստ փորձենք բերել, ես՝ իմ կողմում, և դուք՝ ձեր կողմում, արագացնելու համար խաղաղարար ընթացքը:

Ընդհանուր քարտուղարը հայտարարեց, որ այդ պրոցեսը կարող է երկար տևել, բայց, համեմանենեպս, պետք է սկսել:

Պետք է հասնել խաղաղության: Մեր ժողովուրդները սպասում են այդ խաղաղությանը:

Մի անսպասելի խաստախույթ գտա ես Էջմիածնի մեր արխիվմերից: Այս փաստաթղթի ձեռագիրը 1905 թվականն է կրում: Հայերնենից մենք թարգմանեցինք ֆրանսերենի, կարող ենք նաև թարգմանել անգլերենի: 1905-ին Բարվի մեջ, Սորբեցանի մեջ, նոյնիսկ Երևանի մեջ, որ խառն ազգաբնակչություն կար, աղբբեցանցիների և հայերի միջև անհասկացնողություններ են ծագել՝ հասնելով սոյք կացությանների. սպասում էր, որ ազգամիջյան կոխմեներ սկսեն, արյունահեղությունն աղբբեցանցիների և հայերի միջև: Այս կացության մեջ Սորբեցանի Շեխս ով նպաստ զախս է Էջմիածնին: Այն օրեւը Կաթողիկոս էր Խորիման Հայրիկը: Միասին քննարկում են ստեղծված վիճակը և այս փաստաթուղթը են խմբագրում, որ խաղաղության և եղբայրակցության և գործակցության սրանչելի կոչ է: Ես ձեզ ֆրանսերենը կարող եմ տալ հիմա: Այնպիսի խմբագրություն ունի, որ կարծեք կարող ենք մենք հիմա ստորագրել այն: Թող այս ոգին, որ աստվա-

ծասեր ոգի է և մարդասեր ոգի է, մեզ առաջնորդող մնա, և մենք կարողանանք այս մեր հանդիպումներից հետո մի հստակ խաղաղության կոչ ուղղել մեր ժողովորդներին: Թող սա մի սկզբանափորություն լինի, Առշնչիս եթե մենք չհաննենք վերջնական բանաձնումների: Համեմայնդեպս չհուսահատվենք, չբաժանվենք իրարից և շարունակենք հետապնդել այս հարցը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի միջնորդությամբ, և գոյց նաև ոլորակի: Ես միշտ պատրաստ եմ Բարոյ գալու համար: Խսկ Շեյս ով Խսլամը կարող է Էջմիածին գալ: Ահա այս խորհրդով ես վերջացնում եմ խոսք և աղոյում եմ, որ Տերը մնա մեզ օգնական և առաջնորդ ոգի՝ դեպի խաղաղություն և դեպի արդարություն:

**ՀԱՄԱՏԵՂ ՀՅՈՒՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԳԻՊՈՒՄԻՑ  
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա. ՄԱՅՐԱԳՈՒՅՑ  
ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ  
ԵՎ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ ՇԵՅՏ ՈՒԼ ԽՍԼԱՄ  
ԱԼԱՀՅՅՈՒԹՅՈՒՆ ՓԱՇԱԶԱԴԵՒ  
ԱՏԵՆԱՊԵՏ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄՈՒՏՈՒԼՄԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

Մենք՝ երկու ժողովորդների կրոնապետերս, մտահոգված մեր հոգևոր զավակների ճակատագրով, Արանց հոգիների մեջ դաժանության և ատելության սոլոսկումով, որը մղում է Արանց Աստծո կամքին դեմ գործողությունների, հանդիպեցինք 6—8 փետրվարի 1993-ին Մոնթելուում (Շվեյցարիա), Աստուծո ողորմածությամբ և շնորհիվ նախաձեռնությանը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Արա հետ գործակող Եկպրական Եկեղեցիների Կոնֆերանսի, ու դիտորդությամբ Խվամի Համաշխարհային Խորհրդի «ԴԱՌԻՎԱ» մարդասիրական ֆոնդի գլխավոր քարտուղարի:

Քննարկելով խնդիրները, որոնք սպառնում են մեր ժողովորդներին և մեզ, մենք անհրաժեշտ ենք համարում նախ և առաջ շեշտել, որ, հակառակ մի քանի փորձերի՝ ամեն արդու թափող ընդհարությը բնութագրելու որպես բրիտանա-մահմետական դիմակայություն, այն չի կրում կրոնական բնոյթ: Հայ բրիտանացները և աղրեշանցի մահմետականները ապրել են և կապրեն խաղաղությամբ, հարգանքով և բարի դրացիությամբ:

Մենք սրտանց աղոյում ենք Ամենաբարձրագլուխ վասն հանգայան զոհերի հոգիների, որոնք ընկան այս ողբերգական իրադարձությունների ընթացքում: Հանուն Արանց հիշատակի, մեր երկու ժողովորդների ապագայի, կոչ ենք անում մեր հոգևոր զավակներին դադարիցնել արյունահեռությունը և բոլոր խնդիրները լուծել խաղաղությամբ, արդարությամբ, քաղաքական միջոցներով՝ համաձայն համընդհանուր ճանաչում գտած միջազգային նորմերի:

Մենք կոչ ենք անում երկու կողմերին սուանց պայմանի ազատ արձակել պատասխաներին, որոնց մեջ կան շատ կանայք և երեխաներ, և Ժնևան համաձայնագրի ոգով մարդասիրական վերաբերմունք ցուցաբերել ուղագլուխ նորմերին:

Մենք մեր գոհունակությունն ենք հայտնում ընդհարությ խաղաղ ճանապարհով կարգավորման ողովությամբ ձեռնարկվող ջանքերի համար՝ ՄԱԿ-ի, ԵԱԽՀ-ի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայա-

ցուցիչների, ինչպես նաև բոլոր բարի կամքի տեր մարդկանց կողմից, որոնք անկեղծորեն ձգտում են արագորեն դադարեցնել արյունահիւղությունը:

Մենք կոչ ենք անում երկու հանրապետությունների նախագահներին ցուց տալ առավելագույն աշակցությունը այս խաղաղ նախաձեռնություններին:

Արտահայտելով մեր կարենցանքը գոհերի և նրանց ընտանիքների, ինչպես նաև խաղաղ բնակիչների համար, որոնք հակամարտության վայրերում տառապում են դաժան զրկանքներից և կորուսներից, մենք համաձայնվեցինք հիմնադրել մի Միացյալ Միջազգային Մարդասիրական ֆոնդ՝ Եկեղեցների Համաշխարհային Խորհրդի և Խպամական Համաշխարհային Խորհրդի նովանու ներքո, առանց ազգության և հավատքի խրության օգնություն ցուց տալու բոլոր նրանց, ովքեր տառապում են: Մենք կոչ ենք անում բոլոր բարի կամքի տեր մարդկանց և միջազգային կազմակերպություններին ամեն կերպ օգնել այս գործին, որ Աստվածահան է: Մենք պիտի նշանակենք մեր ներկայացուցիչներին այս ֆոնդին և պիտի ի գործ դնենք ամեն ջանք՝ դրա գործունեությունը արդյունավետ դարձնելու համար:

Մենք արտահայտում ենք մեր անկեղծ երախտագիտությունը Եկեղեցների Համաշխարհային Խորհրդի ղեկավարությանը՝ այս հանդիպումը կազմակերպելու և հյուրասիրության համար, որ նրանք ցուց տվին մեզ, ինչպես նաև՝ Եվրոպական Եկեղեցների Կոմիտեանսին և Խպամական Համաշխարհային Խորհրդին՝ այս հանդիպմանը մասնակցելու համար: Մենք համաձայնվեցինք շարունակելու պահպանել բարեկամական կապերը և հետագայում հանդիպումները կազմակերպելու՝ զորացնելու համար բարի դրացիության ոգին մեր երկու ժողովուրդների միջև:

Թող Ամենաբարեկույթն Աստված լիի մեր աղոթքները և թող Նա տարածի իր խաղաղաբար ոգին մեր ժողովուրդների և ամբողջ աշխարհի վրա, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան գտնել ճիշտ ճանապարհը դեպի արդարություն և խաղաղություն: Ամեն:

### ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻՍՐՁ-ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

### ՇԵՅԽ ՌԻՎ ԻՆԼԱՄ

ԱԼԱՀՅՅՈՒՔՅՈՒՆ  
ՓԱԾԱԶԱԴԵ  
ԱՏԵԽԱՊԵՏ ԿՈՎԿԱՍՅԱՆ  
ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախաձեռնությամբ սույն թվականի փետրվար 6—8 օրերին Մոնթելո քաղաքում (Զվիգերիա) տեղի ունեցած Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու և Աղքածանի մուսուլման ժողովրդի կրոնապետերի՝ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կայողիկոսի և Շեյխով Խաչամ Փաշազադեի և նրանց պատվիրակությանց հանդիպումը:

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու պատվիրակության կազմում էին. գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պողապալյանը, Արցախի թեմի առաջնորդ գերշ. Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը, Զվիգերի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Վիգեն եպիսկոպոս Ալբազյանը և Մայր Աթոռի Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ պր. Ռաֆայէլ Պապայանը:


Եռօրյա հանդիպումների ընթացքում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայգերի և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի ընդհանուր քարտուղար պր. Ժան Ֆիշերի ներկայության, մտերմիկ մթնոլորտում քննարկվեցին երկու կողմերին հետաքրքրող մի շարք հարցեր՝ կապված Լեռնային Ղարաբաղում ստեղծված տագնապալի իրավիճակի հետ, խաղաղ և արդար մի լուծում գտնելու առաջարկով:

Հանդիպման արդյունքը հանդիսացավ երկու կրոնապետերի կողմից ստորագրված համատեղ հաղորդագրությունը:

Հաղորդագրությունը ստորագրելու արարողությունից հետո, փետրվարի 9-ին, երկու կրոնապետերը հրավիրվեցին մամլո ասովիսի, որի ընթացքում նրանք պատասխանեցին լրագրողների բազմաթիվ հարցերին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ





## ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂՂԹ

ԽՐԻՍՏՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԵՎ ԲԱՔՎԻ ՇԵՅԽ ՈՒՂ ԻՍԼԱՄԻ  
ՀԱՄԱՏԵՂ ԿՈՉԸ ՀԱՅ ԵՎ ԱԴՐԲԵԶԱՆՑԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ  
1905 ԹՎԱԿԱՆԻՆ

1905 թ.

ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅՈՑ ՀՈԳԵԿՈՐ ԿԱՐԱՎԱՐՈՒԹԵԱՆ, ՊԱՏՃԵՆԸ  
ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՂԱԶԻԻՆ, ԷՉՄԻԱԾՆԻՑ, ՅՈՒՆԻՍԻ 4<sup>ր</sup> ԺԱՄԸ 11.30 ՐՈԴ.  
ԱՌԱԽՈՏԵԱՆ, Հ. 37

Մենք ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Մկրտիչ  
և Ամերկովկասի Ծեյլ-ով-խալամ, հայունում ենք Ամերկովկասի բոլոր հայ  
և մահմետական ազգաբնակութեանք: Աչքի առաջ ունենալով այն կորպու-  
տարեր թշնամութիւնը, եղբայրասպանութիւնները և կոտորածները, որ ուն-  
դի ունեն երկու դարավոր հարևան ազգութիւնների միջն, և որը 4 ամիս  
շարունակ տանում է նրանց դեպի բարյուշան և տնտեսական կործանում,  
մենք, հովուապեսներս, այսօր Էջմիածնից առաքում ենք եերկայ կոչք և  
խրատը մեր ամբողջ հայատացեալ հօտերին և հայրաբար խնդրում ենք  
ամենքին միանձնամ ընդ միշտ վերջ դնել այդ անմիտ և աննպատակ թշնա-  
մութեանը, վերաբերվելով իրար նախկին եղբայրական վատահութիւնով, սի-  
րոյ և խաղաղութեան անհրաժեշտութեան գիտակութեամբ, որի համար եր-  
կու կողմն էլ հանդիսաւոր երդումով խօսք տուին փետրվար ամսին Բագ-  
ուի նկեղեցիներում և մզկիթներում, աչքի առաջ ունենալով երկու ազգու-  
թիւնների բարորութիւնը և խաղաղ զարգացումը:

Թող աճմախտ պահպան Աստուած եերկայ ոխոսը, և թող Աւետա-  
րան ո Դորբանը նպաստեն եղբայրական յարաբերութիւնների վերականգն-  
ման մեր մեջ, որ անմիտ կերպով ներկում ենք մեր ձեռքերը մեր մօտադր-  
ների արիստով: Թող երկնային խաղաղութիւնը և սերը Ձեզ նետ լինի:

Մկրտիչ Կաթողիկոս Ամ. Հայոց և Ծեյլ-ով-խալամ:



# ՍՈՒՐԲ ԷՇՄԻՉՅՈՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Սվագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Թաղեռն աբդ. Զիրեկյանը:

\* \* \*

Հունվարի 5-ին, երեքշաբթի.—Ծրագալուց Շննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Սվագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աշապահյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

Հունվարի 6-ին, չորեքշաբթի.—Տօն Շննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Սվագ և խորանի վրա, օրվա մեծ տոնի առիթով պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպո. Պողապալյանը: «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

Հավարտ և պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց ջորինյաց արարողություն:

\* \* \*

Հունվարի 7-ին, հինգշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Սվագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քին. Մելիքյանը:

Հավարտ և պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ «Վասն յամօրէն ննջեցելոց»:

\* \* \*

Հունվարի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Սվագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քին. Սիմոնյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Հունվարի 18-ին, շոբերշաբթի.—Տօն անուանակոչովին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Տիրայր քհն. Գըլլենյանը:

\* \* \*

**Հունվարի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Վազգեն արդ. Միրզախսնյանը:**

\* \* \*

**Հունվարի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Մամիկոն արդ. Քիլթյանը:**

\* \* \*

**Հունվարի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը:**

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Փետրվարի 6-ին, շաբաթ.—Այսօր Ս. Ծողակաթ եկեղեցում և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:**

\* \* \*

**Փետրվարի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Թադէոս արդ. Զիրեկյանը:**

\* \* \*

**Փետրվարի 14-ին, կիրակի.—ՏԵՍՈՒՆԸՆԴԱՌԱՋՈՒԱՅ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին քարոզ խոսեց:

\* \* \*

**Փետրվարի 16-ին, երեքշաբթի.—Սրբոց Պետնդեանց քահանալիցն:**

Այսօր Ս. Գալստեան եկեղեցում և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Փետրվարի 18-ին, հինգշաբթի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, ի ոգեկոչումն Սրբոց Վարդանանց հիշատակի, և պատարագ մատուցեց գերջ. Տ. Անանիա Եպո. Արքաթաջանը:

Հավարտ և պատարագի բովանդակալից քարոզ խոսեց սրբազն հայր, ապա հոգևորականաց մասնակցությամբ կատարվեց «Հայրապետական մատթանը»:

Ս. պատարագի ավարտից հետո հոգևոր ճեմարանի հանդիսությունները դահլիճում կայացավ գրական-գեղարվեստական հանդիսություն՝ նվիրված Սրբոց Վարդանանց հիշատակին: Համերգին իրենց մասնակցությունը քերեցին նաև Ս. Էջմիածնին կից «Ս. Մարիամ Աստվածածին» կիրակնօրյա վարժարանի սաները:

\* \* \*

**Փետրվարի 20-ին, շաբաթ.**—Կոստանդնուպոլսոյ Ս. Ժողովոյն՝ հարիր լիսուն Հայրապետացն (381 թ.):

Այսօր Ս. Ծոլակաթ եկեղեցում և պատարագ մատուցեց Տ. Վազգեն արդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

\* \* \*

**Փետրվարի 21-ին, կիրակի.**—Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Խորեն քին. Մարտուքանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Միքայել վրդ. Աշապահյանը:

\* \* \*

**Փետրվարի 27-ին, շաբաթ.**—Սրբոյն Թէոդորոսի զօրավարին:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում և պատարագ մատուցեց Տ. Հարություն քին. Դարրիմյանը: «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց Տ. Վազգեն արդ. Միրզախանյանը:

\* \* \*

**Փետրվարի 28-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քին. Մելիքյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

Հավարտ և պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ նվիրված Լուսինե Զաքարյանին:

\* \* \*

**Մարտի 6-ին, շաբաթ.**—Սրբոցն Կիրդի Երուսաղեմայ Հայրապետին, և միւս Կիրդի եպիսկոպոսին, և մօրն նորա Աննայի:

Այսօր Ս. Ծոլակաթ եկեղեցում և պատարագ մատուցեց Տ. Վազգեն արդ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Միքայել վրդ. Աշապահյանը:

\* \* \*

**Մարտի 7-ին, կիրակի.—(Անառակի):**

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Տիրայր քհն. Գըլլընյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց գերշ. S. Ներսէս արքեպո. Պողապալյանը:

\* \* \*

**Մարտի 13-ին, շաբաթ.—Սրբոցն Յովհաննու Երոսաղէմայ հայրապետին, և հայրապետին մերոյ Յովհաննու Օձնեցոյն, և վարդապետացն մերոց՝ Յովհաննու Որոտնեցոյն և Գրիգորի Տաթևացոյն:**

Այսօր Ս. Գայանն եկեղեցում և պատարագ մատուցեց S. Մամիկոն արդ. Քիլեճյանը: «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց S. Միքայել վրդ. Աջապահյանը:

\* \* \*

**Մարտի 14-ին, կիրակի.—(Տնտեսին):**

Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Կոմիտաս քհն. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց S. Թադէոս արդ. Զիրելիյանը:

\* \* \*

**Մարտի 20-ին, շաբաթ.—Սրբոց Մանկանցն քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան:**

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում և պատարագ մատուցեց S. Հովհանի ավ. քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց S. Մամիկոն արդ. Քիլեճյանը:

\* \* \*

**Մարտի 21-ին, կիրակի.—(Պատառքին):**

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ովասալորաբար Մայր Աթոռում գտնվող S. Միոն վրդ. Ազմիկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ովասալորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. S. Տաթև արքեպո. Սարգիսյանը:

\* \* \*

**Մարտի 27-ին, շաբաթ.—Տօն Է Սրբոց Գրիգորի Լուսառոշին մերոյ սուլալի չարչարանացն և մտին ի Վիրապն:**

Այսօր Մայր տաճարում, Խջման և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Վազգեն արդ. Միթքախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

\* \* \*

**Մարտի 28-ին, կիրակի.—(Գալստեան):**

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Խաչատոր ավ. քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց S. Եղիշի ծ. վրդ. Պետրոսյանը:



## Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՒԾ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

1993 թ. հունվարի 19-ին, համաձայն հին տոմարի, Թրիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում, Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնի կապակցությամբ, պաշտվեց սուրբ պատարագ: Պատարագեց Վիրահայոց թեմի քարեխանամ առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայիարյանը:

Մարդաշատ էր եկեղեցու բակը: Կարծես Թրիլիսիի ողջ հայությունը, թվով 200 000, եկել էին ստանալու սրբազն առաջնորդի օրինությունը և հաղորդվելու մեր Փրկչի Մարմահն և Սրբանը: Ըստերցումներից հետո Տ. Նորայր քահանա Կողանցյանը ընթերցեց Հայոց Կաթողիկոս՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. Վազգեն Առաջինի, ապա Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Խլիա Բ-ի ուղերձները՝ ողղված Վրաստանու բնակչող հայ ժողովրդին և առաջնորդին: Պատարագի վերջում սրբազն առաջնորդը ժողովրդին ներկայացրեց հոգևոր ճեմարանի ուսանողներին, որոնք մասնակցում էին տոնակատարությանը՝ օրինելով և քարեմայություններ կատարելով:

Ապա ժողովրդին դիմելով խոսեց հավոր պատշաճի քարոզը, որում ի մասնակորի ասաց. «Նվիրական այս պահին շնորհավորում եմ ձեզ մեր Տիրոց՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ: Ձեզ և մեզ մեծ ավետիս.»

«Քրիստո ծնաւ և յայտնեցաւ:»

Ընդունեցեք մեր սրտագին քարեմայթյունները և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Ս. Վազգեն Ս. Կեհափառ Հայրապետի օրինությունները ձեզ բոլորին, Աստվածակառուց տաճարից Ս. Էջմիածնի:»

Թող մանկացալ Փրկիչը Բեթղեհեմի Սուրբ Ստորից իր քեղուն օրինությունները ցոլացնի ձեզ վրա: Լինեք քաջառողջ, ունենար երկար կյանք: Բեթղեհեմի Աստղը առաջնորդի ձեզ դեպի անխախտ և ամոր հավատքը մեր հախնիների»:



ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՔԱՅԱՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՂՋԱԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԵԱԿԱՆ ՍՊՈՒՏՆԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ





## ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՅՈԼՆՈՒՄ

Ծուրջ մեկ ու կես տարի առաջ, 1992 թվականի հունվարի 31-ին, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի № 1852 սրբատառ կոնդակով Գերմանիայում ստեղծվեց Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու ինքնուրույն թեմ: Ի լրումն այս որոշման, սույն թվականի հունվարի 24-ին Քյոլնի (Գերմանիա) առաջնորդանիստ Եկեղեցում տեղի ունեցավ Գերմանիայի հայոց թեմի նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին Եպիսկոպոս Բեքեյանի այսուհակալության հանդիսությունները:

Սթորակապության հանդիսությանը նախագահեց Թուրքիայի հայոց Ամենասամատիկ Տ. Գարեգին Սրբազն Պատրիհարք Հայոց՝ առընթերական ունենալով Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանին, Ամերիկայի Միացյալ Նահանգների արևմտյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեակյանին, գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մոռաֆյանին (Կ. Պոլիս), Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաչակ արքեպիսկոպոս Պարսամյանին, Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վիգեն Կոմիտաս Վարդապետ Ալբայանին, Բոգեշնորհ Տ. Կոմիտաս Վարդապետ Հովհաննեսին և արժանապատիկ Տ. Հակոբ Ավագ քահանա Գյոլշյանին:,

Սույն հանդիսությանը մասնակցեցին նաև Աստրի Ռողափառ Եկեղեցու Եվրոպայի առաջնորդ գերաշնորհ Տ. Հովհնոս արքեպիսկոպոս Զիշերը, Կայուռիկ Եկեղեցու կարդինալ Մայսաների փոխանորդ Քյառու Եպիսկոպոս Տիգրը, Ավելուարանական Եկեղեցու պետ Մանֆրեդ Քորը, Եթովպիայի Ռողափառ Եկեղեցու պետ դոկտ. Մերավի Վարդապետ Թեպեկեն, Ռուս Ռողափառ Եկեղեցու կողմից՝ Նիկոլաոս Վարդապետ Թոնը, Հովհն Ռողափառ Եկեղեցու կողմից՝ Վարդապետը, Միջեկեղեցական խորհրդի կողմից՝ Տեքսան Ռայներ Վարդապետ Ֆիշերը և պատվելի դոկտ. Հանս-Կեռիկ Լինը, Շապտական Ավելուարանական Եկեղեցու կողմից՝ Մարտիկի Վարդապետ Սասարին, Հովհնական Ավելուարանական Եկեղեցու կողմից՝

Անդրեա Փիեթեր Ֆլիկերը, Հոռմեական Կաթողիկէ Եկեղեցու կողմից՝ դոկտ. Հովհան Գունտան, Ազգայի Ավետարանական Եկեղեցու կողմից՝ պատվելի Հերբերտ Հարշտալը, Նահանգային Ավետարանական Եկեղեցու կողմից՝ պատվելի Հանն Փեթեր Ֆրիդրիխը, և տակավին առաջնորդարանի թաղի Շոշանից՝ Ավետարանական և Կաթողիկէ Եկեղեցիների հոգևոր հովիվներ:

Բացի Եկեղեցականներից, հանդիսությանը ներկա էին նաև համայնքային զանազան կազմակերպությունների ներկայացուցչներ, ինչպես՝ Քենին, Համբուրգ, Բրաունշվայգ, Բրեմեն, Տիգրուր, Նովվիտ, Քյոլն, Ֆրանկֆուրտ, Շտուտգարտ, Էպինգեն, Հանուու, Մյունիս, Նյուրնբերգ, Մայն և Քենի քաղաքներից:

Օրվա ս. պատարագը մասուցեց նորընտիր առաջնորդ Սրբազն Հայրը: Աթոռակալության առջիվ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանն ընթերցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ այս առջիվ գրված կոնդակը:

Հավարտ ս. պատարագի բովանդակալից քարոզ խոսեց Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարք Սրբազն Հայրը և նորընտիր առաջնորդ Սրբազն Հորը նվիրեց Եպիսկոպոսական թանկագին մի պանակէ: Այս անզուգական նվերի համար, ի լուր նաև օսար հյուրերի, գերմաններեն լեզվով շնորհակալական խոսք ասաց առաջնորդ Սրբազն Հայրը:

Ս. պատարագից հետո Հյուրթ քաղաքի քաղաքապետարանի սրահում, առաջնորդական գահակալության առջիվ, տրվեց սիր սեղան, որին ներկա էին շուրջ 550 հրավիրյալներ: Սիր ճաշի ընթացքում իրագործվեց գեղարվեստական կոկիկ մի ծրագիր, որին իրենց մասնակցությունը թերեցին պրոֆ., դոկտ. Լուիզա Պողապալյանը, դոկտ. Միհրան Տապաղը, Արա Մալիքյանը, Արամաթ Զամանը և Արթո Պերճյանը:

Այնուհետև նորընտիր առաջնորդ Սրբազն Հորն ուղղված իրենց շնորհավորական խոսքն ասացին ներկա Սրբազն Հայրերը:

Բարի և ազգանվեր գործունեության երթ մաղթենք նորընտիր առաջնորդ Սրբազն Հորը:





## ՊՐՈՖ. ՎԱՐՍՁԴԱՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նախագահ Մայր Աթոռի ճարտարապետական  
հանձնաժողովի

### ԽՈՐԱՆ ԼՈՒՍՈ ԵՎ ՀԱՎԱՃՔԻ\*

Հեղինակները հաշվի առնելով մրցույթային հանձնաժողովի կողմից արված դիտողությունները, տրված ժամկետում վերամշակման ենթարկեցին իրենց նախագծերը և ներկայացրին Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռ։ Նախագծերը ցուցադրվեցին Նոր Վեհարանի սրահներից մեկում։

1992 թ. օգոստոսի 29-ին գումարվեց հանձնաժողովի եզրափակիչ նիստ՝ վերջնական ընտրություն կատարելու համար։ Նիստին մասնակցում էին հանձնաժողովի ինն անդամներից հինգը (Վ. Հարությունյան, Գ. Խանջյան, Զ. Թորոսյան, Մ. Մինասյան և Բ. Արզումանյան)։

Բարձրագույն մրցանակի արժանացած երկու նախագծերի հեղինակներ՝ Ստեփան Քյորքչյանի և Արտակ Ղոլյանի նախագծերի նոր տարբերակների հետ միասին, քննարկման էին ներկայացվել նաև նարու Հ. Ասատրյանի նախագիծը (Արտակ Ղոլյանի առաջին նախագծի հեղինակակիցը), որը մշակված էր իր ղեկավարությամբ հեղինակային մի խմբի կողմից։

Մրցույթային հանձնաժողովը հանգամանորեն ծանոթանալով ներկայացված նախագծերին, եկավ հետևյալ եզրակացության։ Լիովին հավանություն տալ ճարտարապետ Ստեփան Քյորքչյանի վերամշակված նախագծին և այն ներկայացնել Վեհափառ Հայրապետի ուսադրությանը։ Որոշ ժամանակ անց հարգելի պատճեռով նիստին չմասնակցած Ռ. Զովհակյանը մասնակի դիտողություններով և Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը հայտնեցին հանձնաժողովի եզրակացությանը իրենց նախաձայն լինելու մասին։

Քանի որ ըստ մրցույթային պայմանի նախագծի ընտրության վերջին խոսքը վերապահված էր Վեհափառ Հայրապետին, նախագծերին ծանոթա-

\* Ծարունակված «Էջմիածն» ամսագրի 1992 թ. № Ը-ից։

նալուց հետո, որպեսզի ավելի վատահ լինի իր որոշման մեջ, Վեհափառ ցանկացավ այն կատարել մասնակցությամբ մրցութային հանձնաժողովի անդամների: Ստորև հրապարակում ենք այդ առջիկ կազմված փաստաթուղթը՝ մրցութային հանձնաժողովի № 7 արձանագրությունն ամբողջապես:

«1992 թ. հոկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետի հրավերով և իր մասնակցությամբ կայացավ Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարի մրցութային հանձնաժողովի նիստը՝ մասնակցությամբ Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանի, Գարեգին Եպիսկոպոս Ներսիսյանի, դոկտոր-պրոֆեսոր Վ. Հարությունյանի, ժողովական մարդաբանության բաղադրատ Գևորգ Խաչատրյանի, Հայոց ակադեմիայի պատվավոր Տ. Զոյնակյանի, ճող. ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ռ. Զոյնակյանի, ճող. ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ռ. Արզումանյանի:

Հանձնաժողովի անդամները Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ ևս մեկ անգամ անդրադան ճարտարապետ Ստ. Քյուրքչյանի վերամշակած նախագծին և վերատին հաստատեցին իրենց ընդունած որոշումը, դիտողությամբ, որ նախագծի հաստակցում եկեղեցուն խաչաձևություն արտահայտող ճակատաներում դեպի վեր շեշտված պատերը անհարիր են հայկական ճարտարապետությանը, ավելորդություն են ու պիտի վերացվեն: Այդ դիտողությամբ Վեհափառ Հայրապետը իր համաձայնությունը հայտնեց վերիշյալ նախագծի ընտրությանը և հետագա մշակման ու աշխատանքային գծագրեր կազմելուն:

Պատրաստակամություն հայտնել Վեհափառ Հայրապետին ինչպես նախագծման, նույնական և ան տաճարի կառուցման ամբողջ ընթացքում, սույն հանձնաժողովի կազմով օգնել խորհրդականացնելով, օժանդակել բոլոր հարցերում, որոնք կապված կլինեն Մայր տաճարի նախագծման հետագա կատարման, շինարարության և այն ժամանակին ավարտելու գործին:


Վեհափառ Հայրապետը իր գործունակությունը հայտնեց, դրվագելով մանձնաժողովի անդամների պատրաստակամությունը, օգնելու Մայր տաճարի նախագծմանը և շինարարությանը: Դա, շեշտու Վեհափառ Հայրապետը, կլինեն իրեն խորհրդատու հանձնաժողով մինչև Երևանի Մայր տաճարի շինարարության ավարտը»:

Լրատվական միջոցներով հաղորդված որոշումը ընդհանուր առմամբ հավանության արժանացավ մասնագիտական շրջաններում: Սակայն չեր կարող հիվանդագիտ չընդունվել մրցույթի որոշ մասնակիցների կողմից, ինչը այսպիսի դեպքերում անխուսափելի է<sup>5</sup>:


Ինչպես ընդունված է մրցույթ հապտարարելիս, վերջիվերջ ներկալացրած նախագծերից պիտի ընտրվեր միայն մեկը: Սամենից ընդունելին ու արժանափորը: Դա կատարվեց ստացված 33 նախագծերի ուշադիր ու քաղմակողմանի ուսումնասիրության միջոցով, ապագա սերտուների նկատմամբ պատասխանատվության բարձր զգացումով:

Վերջնական ընտրության համար հիմք ծառայեց մրցույթի նախապատմանը՝ հայկական ճարտարապետության դասական ոճով, միաժամանակ արդիական նկարագրով:

<sup>5</sup> Այդպիսին համարում ենք Արտակ Ղուլյանի անպարկեան եղույթը (նույն ընա «Մայր տաճարի մրցույթն ավարտված է. զգուշացեք մրցույթից» հոդվածը՝ տպագ «Երկիր» թերթի 1992 թ. մայումբերի 10-ի համարում):



ՄԱՅՐ ՏԱՋԱՐ  
ԱՐԵՎԱՄՑԱՆ ՃԱԿԱՏ: ՃԱՐՏԱՐԱՊԵՏ Ա. Հ. ՔՅՈՒՐՔՅԱՆ



ՄԱՅՐ ՏԱՋԱՐ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻՒԾ: ՃԱՐՏԱՐԱՊԵՏ Ա. Հ. ՔՅՈՒՐՔՅԱՆ



Հետուապէս մերժելի պիտի նամարվէին երկու ծայրահեղությունները: Մի կողմից հայկական ճարտարապետության գարգացման արդի փովին անհարիր, խիստ հնամենի, մյուս կողմից ազգային ավանդություններ չունեցող ծայրահեղ արդիական:

Այդ ճշմարիտ դիրքերից էլ անդրադառնանք իրականացման համար հավանության արժանացած համագծին: Ըստ հեղինակի մտահացման, տաճարի հատակագծային, ծավալա-տարածական և կենտրոնակի հիմքը քրիստոնեական հավատքի խորհրդանշան խաչն է: Դրա թևերի շորջը դասավորված չորս խորաններով (ինչպես Եջմիածի Մայր տաճարում և Հայաստանի վաղ միջնադարյան խաչանքներում), կազմավորվում է տաճարի ողջ ծավալը, հանդիսանում երա ճարտարապետական մեկնաբանման ելակետը, պըսակվելով գմբեթով, որը հիմնական ծավալի օրգանական ավարտն է:

Խաչը կազմավորվում է 34,0 մ թոշքով և իրարից 14,0 մ հեռավորությամբ տեղադրվող երկու զույգ կամարների հատումով: Միջնադարյան հայ ճարտարապետության մեջ (ժամաներում, գրատներում, սեղանատներում), լայնորեն կիրառված խաչաձևող կամարների կոնսորիկի համակարգը հինարավորություն է ընձեռում տաճարի ներս ազատել ծածկի ավելորդ հենարաններից ու անկաշվանդ դարձնել ներքնատեսքը, նպաստավոր պայմաններ ստեղծելով նաև լսելիության (ակուսիկայի) առուսուց:

Սղոթարահի ընդհանուր տարրությունը 900 հատառեղի է: Խսկ դրա թիկունքում՝ արևմտյան կողմի երկու խորչերի հարթակները տրամադրվելու են կանգնելու տեղերին: Որպեսզի տեսամեջիլությունը դեպի Ավագ խորանը չխաթարվի, աղոթարահի կենտրոնում հատաճների կողմից, այդ խորչերի հատակներն ունենալու են համապատասխան բարձրություն և թերություն:

Հայկական ճարտարապետության բռն եղբայրն ներդրված է տաճարի կենտրոնագմբեթ, մինևոյն ժամանակ ազատ և ընդարձակ տարածք կազմակերպող հորինվածքի մեջ: Նման մոտեցման համար հեղինակի ելակետն այն է, որ այսօրվա Հայ եկեղեցին պիտի ունենա հայեցի Ակարագիր, սակայն հնչի արդիական, չլինի միջնադարի որևից հուշարձանի կրկնակը կամ տարրերակը: Լինելով արդիական, այն շպիտի զորոկ ինչի ազգային հճեղությունից կամ հնանվի աշխարհի շատ երկներում հանդիպող կումոպոլիտյան եկեղեցներին:

Տաճարի հատակագծային լուծման մեջ առկա է սովորական եռաստիճան հաջորդականությունը՝ նախագավիթը, գավիթը և տաճարի համակարգը: Նախագավիթը չորս կողմից ամփոփված, սակայն վերից բաց ու զանգակատնով պասկված բառակուսի մի տարածք է: Նախագավիթի հարավային և հյուսիսային կողմերից կից են Սուրբ Թաղեսու և Սուրբ Բարթողիմեոս առաքյալների մատունները, որոնց գիշավոր մուտքերը արևմտյան կողմից են, իսկ երկրորդականները՝ նախագավիթից: Այդ երկու փոքրաչափ եկեղեցիներուները կազմում են տաճարի ծավալա-տարածական հորինվածքը հարրստացնող բաղադրիչներ, մինևոյն ժամանակ յուրաքանչյուրը դրանցից կարող է գործել առանձին: Նրանցում կարող են տեղի ունենալ տարրեր ծխակատարությներ (մկրտություն, պատկ, հոգեհանգիստ և այլն): Թեև փոքրաչափ, բայց հիշալ մատունները կարելի է դիտել որպես լիարժեք եկեղեցիներ, քանի որ օծոված են հատակեղիներով ու արարողությունների համար անհրաժեշտ բաղադրամասերով:

Նախագավթին արևելյան կողմից հաջորդում է հատակագծում նոյնական քառակուսի վերևից ծածկված գավթօք: Այստեղ գտնվող կրպակներում է կատարվելու մոմի և եկեղեցական գրականության վաճառքը: Այսուհետո ևս սկիզբ առնում դեպի եկեղեցը ներքնահարկը տանող ասեղովաքները: Գավթօքը տաճարի նախադուռն է, գիշավոր մուտքով դեպի աղոթարան: Տաճարը մուտքեր ունի նաև հարավային և հյուսիսային կողմերից:

Տաճարի ներսույթը, ինչպես նաև արտաքին բոլոր հարթությունները նախատեսնակում է երեսպատել նարնջագույն տոփ քարով: Ներքին պատերի հարթություններում հասուկ տեղեր են նախատեսնակած թևմատիկ որոշակարների համար: Ցերեկները տաճարը կուսավորվի բնական, իսկ երեկոնքը՝ արհեստական լուսով, շամերով:

Դեպի աղոթարանը բացվող նախամուտքերի վերևներում են տեղափորվում երգեհոններին և երգչախմբին հատկացվող հարթակները: Տաճարի գիշավոր խորանը լայնարաց է և խորը, ավանդատները ընդարձակ են և լիովին կապահովվեն անհրաժեշտ հարմարանքներն ու կահավորանքը:

Վերը կատարած համառոտ նակարագիրը երթշիփ կարող է ծառայել այն բանի, որ տաճարի ներսույթի նարուարասեպետական-գեղարվեստական ողջ համակարգն ու բարեզարդումը՝ միացած Ավագ խորանից տրվող արարողությանը ու վերնատներից հնչող եկեղեցական հոգեզմայլ երաժշտությանը, պիտի հավատացյալների առաջ համար շրեղ, տրամադրի աղոթելու առ Աստված, առաջացնի կրոնական սրտարևն գգացումներ, շարունակի պանծացնել անոնքը քրիստոսափառ մեր հոր՝ Գրիգոր Լուսավորչի:

Տաճարն ունենալու է ներքնահարկ՝ տեղափորված աղոթարանի ու նրա հարավից մասերի տակ: Ըստ ենջինակի մտահացման, այն ծառայելու է հասարակական, կրթական, ուսումնա-կրթական ու այլ հպատակների: Այս ընդարձակ տարածքում ամփոփվելու են Սուրբ Գրիգոր Լուսավորչի ու Թագեռու ու Բարթողմէոս առաքյալների հողատեղերը, սրբներ, երկու գրադարաններ, դասախոսությունների դահլիճներ՝ հագեցված կինոպրոեկտուման և ծրագրավորված համակարգիչների սարքերով, կենցաղային օգտագործման որոշ հարմարություններ:

Դրանք բոլորը միասին պիտի ծառայեն Հայաստանում քրիստոնեության տարածման, համաշխարհային քրիստոնեության և այլ հավատքների պատմության ուսումնասիրմանը, առանձին անհատների ու կազմակերպված խմբերի պարապմություններին և այլն: Բացի գավթից, ներքնահարկը, ինչպես նաև Ավագ խորանի հետնամասը մուտքեր ունեն դրսից: Վերջինի միջոցով կապ է հաստատվում տաճարի հարավ-արևելյան կողմից կառուցվելիք քահանայատան հետ:

Սպասարկելու համար տաճար եկող բազմաթիվ հավատացյալներին, նրա հարավային և հյուսիս-հարավային կողմերում նախատեսվում է ստեղծել վերգետնյա և ստորգետնյա տարածքներ ալյունանգառների համար:

Այսպիսին է նախագծի հակիրճ բնութագիրը: Ընդհանուր առմամբ հշելով նախագծի դրական արժանիքները, այնուհանդերձ այն դեռևս կարիք ունի բարեկավելու, ինչի մասին դիտողություններ են արված հանձնաժողովի և Վեհափառ Հայրապետի կողմից: Առանց եական վերափոխումների դրանք միանգամայն հնարավոր է հաշվի առնել տեխնիկական նախագիծը կազմելիս՝ նպատակամվելով ել ավելի հայեցի դարձել տաճարի արտաքին նարուարապետությունը:



## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՍՁ

### ԵԿԵՂԵՑԻՆ ԻՄ ՀԱՅՈՑ...

Եկեղեցին հայկական  
Բարձր բերդն է հավատքի...

Վահան Թերեզյան

Եկեղեցին իմ հայոց՝ առաջնեկն է Հիսուսի.—  
Սրարատյան դաշտն իրեն՝ Աստվածընծա մայր բուրվառ.  
Նա բուրվառի մեջ վառվող ոսկե խոնճկ է մեր հոյսի,  
Որ վառվում է իր ազգի սրտի նման անսպառ.—  
Դարս ինչքան էլ պղծանա՝ վաճքը նման է կոյսի՝  
Վեր մագմահաված՝ կրաչէ որդիներին իր թափառ...  
Ինչպես ոգին մարմնի մեջ՝ Եկեղեցին է երկրում,  
Եկեղեցին իմ հայոց՝ նման ոսկի սանդուխքի,  
Որով երկինք են հոյսի աղոթքները բարձրանում,  
Բուրվառումով հայ ոգու և բորմունքով հայ խոնճի,  
Բայց մեղքերի մուտք՝ ավա՞ն, ինչքան շատ է թանձրանում.  
Սյներան իր զույգ սրտով էլ հոյսը գալիս է ծունկի:

Եկեղեցին իմ հայոց՝ արծիվ երկու գլխանի,  
Մեկն այստեղ է մասիսկած, մեկը դրսի մթարում,  
Երազեղով մեկտեղվել՝ աղոթում են, որ ծնի  
Մսուրն ուրիշ մի Հիսուս, որ հայակապ այս դարում  
Իր զույգ գլխից ոչ մեկը մյուսի աչքը չհանի,—  
Ով չի հանում նա ազգին Աստծո համբույրն է բերում...  
Եկեղեցին իմ խոնարի՝ մեր հին թագի քոյն է վեհ,  
Հայոց գահն է եղել հար՝ հայ գահընկեց դարերում,  
Թրի դեմ էլ խաչ բռնած՝ չի ընկրկել երրևէ,  
Վառ է պահել հայ ոգին, ինչպես կայծը բարերում,

Սղոթելով, որ իցի՞վ, չարը ծով մեղքն՝ իր քավն,

Որ հայ աստվածն հայտնի հայոց բոլոր սարերում...

Եկեղեցին իմ արդար՝ խղճի բուրվառ մորս պես

Ստիճաների զանգերով կաթ է լուծ մեր հովսի,

Կույս մոմերի լուս կաթով դեռ սնում է, ազգ իմ, քեզ,

Գրկած խիղճը, որպես կույս Աստվածամայրն՝ Հիսուսին,

Ազգ իմ, ինձ հետ կաղոթե, որ ցրվածդ բռունցըես,

Հանված աչք՝ Զվարթնոցդ անգամ հառես Մասիսին:

Եկեղեցին իմ հայոց՝ Մասիսն ինքն է գմբեթված,

Միակ ասնդուխըն հավատքի՝ կաթողիկոված դեպի վեր,

Լուրջամբ էլ կաղոթե իր ձյունով էլ կանթեղված,

Լուսավորչի աստղադեմ կանթեղից էլ բարձր ու վեր,

Չյան լուրջամ մեջ էլ հայ մոնշյունն է անթեղված,

Քանզի թվում է, թե մեզ Աստված ինքն էլ կդավն...

Եկեղեցին իմ ամրոց, ազգ իմ, վշտիդ քառում,

Երբ չի կարող վար բերել քար Սատծուն բարձունքից՝

Քո դարերի շշուկով քո սրտի հետ է խոսում՝

Հոյսիդ կանթեղն է վառում Աստվածամոր արցունքից,

Եվ թվում է, թե վերից քո վիշտն Աստված է կիսում՝

Սրթանանլով բուրվառվոյ քո հավատքի հարցմունքից...

Եկեղեցին իմ անկեղծ, այսպես դարեր ոտքնկա՞

Մեղքի ընդդեմ կապատե վերադարձին Հիսուսի,

Կարոտելով Մասիսն հավատում է, որ կգա

Կգա ահեղ դատաստանն՝ աղոթքով էլ իր հույսի,

Ինչքան էլ խոլ դողանչեն հույսի զանգերն իմ ոսկի,

Վաղ-ուշ պիտի փշրվեն շղթաներն էլ Մասիս...

Եկեղեցին հայամեծ՝ ոգորում է մշտակոծ,

Մշտականթեղ, մշտախունկ, մշտամատաղ, մշտահույս,

Խնկաբորդվան աղօթքով բախում երկնի դուռը գոց,

Մերը ծնրադիր մորս պես, մերը Վարդանի ցայտքով լուս,

Սմենօրյա Ավարայրն իրդեմելով մեջն հայոց՝

Հանել կուզե ճերմակ մահն՝ հայ ողջ ազգից վանել դուրս...

... Եկեղեցիդ իմ անմեղ,—սակայն բավ է մանկունի,

Աղոթքներիդ ձեռքերով ընկնես ուռքերն Աստծուն,

Թող հաս քնի... Դու զարթնի, ազգ իմ՝ երկու գլխանի,

Խաչագուխ թուր ցցե գմբեթներիդ, որ ածուդ

Գեթ լճից լիճ ծովանա՝ Վանա ծովի էլ ծով ծնի,

Որ խաչդ թուր կայծակե՝ թթերի դեմ արևածուի:

Եկեղեցիդ իմ խաչված, դու իմ վշտին հավատա,

Երբ խաչերդ թուր ծնեկ՝ կգա Հիսուսն էլ անքիծ,

Հայոց միակ մայր տաճար ք Մասիսն էլ քեզ կտա,

Կտա, երբ թուր կայծակես ք մեղ օրվա սև ամպից,

Սյնժամ պիտի կանթեղվեն արցունքերդ էլ մարգարտյա՝

Սոլյամարս կրծքին էլ՝ Վանա ծովով քո անքիծ:

Եկեղեցիդ իմ անմեղ,—ի սե՞ր գերված մայր հողի,

Աստվածամայրն ես դու կոյս՝ որ հույսով է միշտ հոյի,

Դու՝ հավատով մասիսված այն սանդուխըն ես մեր մարմար,  
Որով ոչ թե սատանան, այլ վաղն Սատված կիշնի վար,  
Կգա ամեղ դատաստան ու նա կուա քոնը քեզ:  
Արարատիդ գագաթին թրախաչդ կզարկես...

Վեր գմբեթված հավատով հավերժ պիտի մասիսվես:

### ՊԻՏԻ ՀԱԽԱՏԱՍ...

Ո՞վ մարդ, մի բանի պիտի հաւատաս,  
Թէկուզ ունայնի, որ ան ունենաս:

Մի ոգեձայնի պիտի հաւատաս,  
Որ քեզ հայր լինի, միշտ մանուկ մնաս:

Մի անսասանի պիտի հաւատաս,  
Որ քեզ սասանի՝ չգազանանաս:

Մի բարի բանի պիտի հաւատաս,  
Որ չարդ վանի, որ բարի մնաս:

Մի երկնայինի պիտի հաւատաս,  
Որ քեզ ան լինի, որ ել ման չտաս:

Մի աստուածայնի պիտի հաւատաս,  
Մի խղճի ձայնի, որ գեթ մարդանաս:

Մի ցախտեանի պիտի հաւատաս՝  
Որ մարդ լինի՝ երբ ել աշխարհ գաս:

Ո՞վ մարդ, մի բանի պիտի հաւատաս՝  
Մարդուց վեր բանի, որ աստուածանաս:

Թէկուզ չլինի՝ պիտի հաւատաս,  
Որ Սասուած լինի, որ գեթ մարդ մնաս...



## ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԻ ՄԵՇ ԿՈՐՈՒՍ

Երգարվեստի պատմությամ մեջ ընդունված գերագույն աստիճանը աստվածային ձայն, երկնային ձայն ընուժագրումներն են: Լուսինն Զաքարյանի պարագային գումարվում է նոյնանձն կարևոր չափանիշ. երգը Լուսինների համար առաքելություն էր՝ մարդկանց հոգիներում վերահաստատել Ամենաբարձրավի մոռացված ճշմարտությունը: Նրա հիբրավի փայլուն կատարողական արվեստը Աստծո կողմից շնորհված հոգու կանչն է:

Փխրուն, բայց զվարյթ մանկական միամտությամբ դերասանուի դառնալու երազով ապրող աղջնակը բոլորի սիրելին էր: Ընտանիքի պայմանները լավագույնը չեն, բայց ընտանիքը ապրում էր կիրթ ու ազնիվ կյանքով, և Լուսինն ընտանիքում զգեցավ բյուրեղային մաքրության առաքելությանը: Այդ առաքելությամբ էլ նա մտավ Եկեղեցի, և հոգին հաղորդվեց դառների հոգեւոր մշակույթին և սկսեց հաղորդակցությունը աստվածային հետ: Էջմիածնի Մայր տաճարում ձևավորվում է նրա հոգին և հոգեւոր երգը մեկնարաններու մոտածելակերպը՝ արժանանալով Նորին Սրբություն Վազգեն Ա Կաթողիկոսի հայրական հոգացողությամբ:

Երգչունու կյանքում շրջադարձային դեր ունեցավ նրա ամուսինը՝ Խորեն Պայլանը, որ Եկեղեցական երգարվեստի խորագիտակ ու հմուտ տեսարան է և կատարող: Ստեղծվեց ներդաշնակ համագործակցություն, և երգը հոգեց դարերի ավանդույթի անխառար հունով: Լուսինն ոչ միայն գերեց իր ձայնով, այլ մանավանդ ստեղծեց հոգեւոր մթնոլորտ Հայաստանի մայրաքաղաքից սկսած մինչև հեռավոր շրջաններ և աշխարհի բազմաթիվ երկրներ, որ հայ հոգին ծարավ էր հայ երգին: Թևածեց երգը ամենուր և այդ երգի հիշողությունը այսօր անխախտ հուշարձանն է Լուսինների կենդանի գոյության:





ՎԵՀԱՓՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԸ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ  
ԼՈՒՄԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՅՅԱՆ ԱՌԹԻՎ.

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ. Ամէն»:

«Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ և բարեգործ գրա Քո արարչական սիրովդ ի հոգին հանգուցեալ ծառայից Քոց, արա հանգիստ և ողորմորթին»:

Սիրեկի հավատացալ ժողովորդ, հոգեհանգստյան պահն է այս: Հոգեհանգստյան աղոթքի պահ բոլոր մեր ննջեցալների հոգիների համար: Հատկապես նրանց հոգիների, որոնց հիշատակը այսօր պիտի կատարվի: Հոգեհանգստյան այս պահին կանգնած ենք կյանքի և մահվան առեղծվածի առջե, կանգնած ենք կյանքի և մահվան խորհուրդի առջե՝ մեր մարդկային տկարութերով և զգացումներով: Միակ մխիթարությունը գտնում ենք մեր քրիստոնեական հույսի մեջ: Քրիստոնեական մեծ հույսը, որ հոգիները չեն մահանում, որ բոլորի համար՝ մի կյանք է վերապահված, որիշ աշխարհում, որին հավատում ենք մենք:

Ահա այս հույսի զգացումով է, որ այսօր պիտի աղոթենք մեր անմոռանցի և աննման Լուսինն Զաքարյանի հոգվոյն համար:

Սյաօր, անցել են ավելի քան 40 օրեր նրա թաղումից, երբ նրա մարմինը հանձնեցինք մայր հողին Ս. Գայանե վանքի սրբացած հողին: Եվ այսօր ավելի քան 40 օրեր հետո, չգիտեմ ինչպես բացատրեմ իմ ապրումն այս պահուն, թե ինչպես կարողացանք բաժանվել Լուսիննեից: Կարծեք ինչ որ դատարկություն ատեղծվեց մեր հոգենոր աշխարհում: Մեր ժողովրդի հոգենոր աշխարհում, և ոչ միայն Հայաստանում, այլ նաև արտասահմանում:

Ես նոր վերադարձա արտասահմանից և բերում եմ այս վկայությունը նաև, որ իրոք Լուսինն լուսավոր մի ներկայություն էր մեր ժողովրդի կյանքում, մեր ժողովրդի մանավանդ հոգենոր կյանքում թե մեզ մոտ, թե Սփյուռքում: Եվ կրկին նույն ապրումը կունենանք երևի բոլորս, թե ինչպես կարողացանք բաժանվել, ինչպես կարողացանք կորցնել Լուսիննեին: Սակայն կարծում եմ, թե ճշմարիտ է այն վկայությունը, թե այդ կորուսի զգացումը, այդ պարապության զգացումը անցավոր է: Եվ հիմա հետզհետեւ կանդրադառնանք, որ վերջապես բաժանված չենք Լուսիննեից: Որ մեր հոգենոր աշքերով տեսնում ենք նրա ներկայությունը մեր մեջ և լսում ենք նրա ձայնը այս անգամ երկնքից:

Լուսինն կմնա մեր մեջ, մեզ հետ և մենք միշտ պիտի լսենք նրա անհրման ձայնը: Լուսինն սովորական խնատով երգչուին չեր, նրա համար երգը մասնագիտություն չեր, արքեստի գործ չեր միայն, այլ մի աղոթք էր տևական, մի աղերս էր և մի առաքելություն: Այս, կարծեմ նիշտ եմ օգտագործում բուն բարը: Նրա համար մանավանդ հոգենոր երգը առաքելություն էր մեր ժողովրդի կյանքում:

Մենք այսօր, այս վերջին տարիների ընթացքում վկաներն ենք մեր հայրենի ժողովրդի ազգային, հոգենոր կյանքի վերագրթունքին: Ես կարծում եմ սխալած չեմ լինի եթե ասեմ, որ բառապես տարիներ շարունակ Լուսինն իր երգով, իր հոգենոր երգով և ազգային երգերով կարենը նպաստ բերեց մեր ժողովրդի հոգենոր զարթոնքը պատրաստելու գործում: Նա գիտակցում էր այն, ես վստահ եմ, ես զգում էի նրա մեջ այդ զգացմունքը տևական, նա էր խոսում: Նա բաղաբական անձնավորություն չեր, բայց հոգով

ապրում էր մեր ժողովրդի հոգու սնանկությունը անցյալում և իր երգով ուզում էր իր լուս բաժինը բերել, որպեսզի զարթնի այս ժողովուրդը իր քնից: Անավասիկ այսպես է, որ նա իր առաքելությունը շարունակեց տարիներ շարումակ:

Մի օրինակ ուզում եմ վկացակոչել այստեղ: Մոտ քանի տարիներ առաջ ինչ որ իշխանության վերներից մի հոսանք իշավ, որով փորձեցին արգելել, որ օպերայի և ֆիլհարմոնիայի երգիչ-երգչունիները երգեն նաև եկեղեցիների մեջ, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ: Ումանք գոյն վախեցան և համակերպվեցին, բայց մեկ հոգի չհամակերպվեց, դա Լոսինեն էր: Նա ֆիլհարմոնիայի հավաքրույթում ոտքի կանգնում և ասում է.—Եթե այդպես է, նա կիրածարվեմ ֆիլհարմոնիայից և կմնամ երգչուի Ս. Էջմիածնում:

Անա խկական ոգին արտահայտող մի վերաբերմունք Լոսինեի կողմից:

Այսօր եկեք աղոթենք բոլորս միասին նրա հոգու հանգստության և լուսավորության համար՝ հավերժության մեջ, ու ոյստենք հավատարիմ մնալ նրա առաքելության ոգուն ամեն մեկս չափով և մեր միջոցներով: Եվ այս ձևով սուրբ պահենք նրա հիշատակը մեր կյանքուն: Մենք մանավանդ, ամեն կիրակի գալիս ենք աղոթելու այս կամարների տակ, ինչպես կարող ենք չհիշել, ինչպես կարող ենք մոռանալ Լոսինեին: Ոչ միայն մենք, այլ այս սրբացած հազարամյա քարերը պիտի հիշեն նրան: Ներծծված են նրանք Լոսինեի քաղցր ձայնով:

Թող Աստված իր Երկնային Արքայության մեջ հավերժական լուսի մեջ պահի նրա հոգին և օրինայի լինի նրա հիշատակը երկնքում և երկրում այժմ և հավիտյան:

Ես մի անգամ ևս հիշեցնում եմ այս սուրբ բեմից մեր վշտակցությունը նրա հարազատներին, նրա ամուսնուն, նրա ընտանեկան պարագաներին և ձեզ բոլորիդ, սիրելի ժողովուրդ, գիտեմ, որ բոլորդ եկել եք այսօր նրա հիշատակը հարգելու համար և նրա հոգու համար աղոթելու:

«Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի, այժմ և յահիտեանս յափառենից, ամէն»:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ**ՀՈԳԵՀԱՆգԻՍ****Լուսինն Զաքարյանի հիշատակին**

Խորանի առջև, Աստվածամոր դեմ  
Սպիտակ մի մոմ՝ խոշոր ու վերձիգ,  
Սպիտակ մի մոմ կայծկլտում է մեղմ —  
Սպիտակ հագած փիսրուն մի առջիկ:

Ու մոմի ծալրին՝ բոցի փոխարեն,  
Լուսի փոխարեն ձայն է թրթոռում  
Հալիլվող մոմից «Սուրբ-սուրբ» է ծորում,  
Պահ առ պահ հատնում, այրում ինքն իրեն:

Դրսում զանգերն են դողանջում տիտոր,  
Մայր Էջմիածնից մինչև Գանձասար,  
Ծունըր է իշել ու խունկ է ծխում  
Աղոթքով լցված մի հայ ներաշխարհ.

Տե՛ր, լնդունելի՝ արա մեր զոհը,  
Տե՛ր, քե՛զ է մնում մեր բախտը ու մեճը.  
Վառել ենք քո դեմ մեր վերջին մոմը,  
Դրանից մաքոր էլ ոչինչ չունենք...

22.01.1993 թ.





## ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ\*

Պատմա-դավանաբանական ակնարկ  
(Ե-Ը դարեր)

Շայլագոյն Վարդապետական թեզ  
1992 թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Երկու տարի առաջ Ս. Էջմիածնի Հոգևոր Ծեմարանում սկսեցի դասավանդել «Հականատական և համեմատական Աստվածաբանություն» կամ «Հայ Եկեղեցու Դավանանքի պատմություն» առարկան, որի առաջին մասի Այութերի վրա էլ հիմնված է սույն ուսումնասիրությունը:

Այս երկի ստեղծման համար պարտական ենք Ամենայն Հայոց Կութողիկոս Ն. Ս. Օ. Տ. Վագգեն Ա.-ին: Վեհափառ Հայրապետը բազմիցս հանձնարարել է ինձ, տարբեր առիթներով, ուսումնասիրել և ներկայացնել Հայ Եկեղեցու Դավանանքի այս խճճված հարցը, որ կոչվում է Քաղկեդոնի խնդիր: Իմ ուսումնասիրությունների արդյունքը, իրք մի փոքրիկ նպաստ վերոհիշյալ խնդրի լուծմանը, այսօր համարձակվում եմ ներկայացնել Նորին Սրբությանը՝ ծայրագոյն Վարդապետական աստիճան հայցելու խնդրանքով:

### ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ Եկեղեցու պատմության և դավանաբանության համար չափազանց կարևոր հշանակություն ունի Հիսուս Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների միավորան հարցը: Ըստք ինք դար, միսած 440-ական թվականներից մինչև Կիլիկյան թագավորության անկումը (1375 թ.), այս հարցը շարունակ դրվել է Հայ Եկեղեցու Վարդապետների առջև և քննվել հատկապես այս Եկեղեցիների ու պետությունների մետք (բյուզանդական, վրացական, լատինական-խաչակիրներ) տեղի ունեցած միջեկեղեցական և քա-

\* Աշխատանքը ներկայացված է ծայրագոյն Վարդապետական աստիճան հայցելու համար: Պաշտպանությունը հաջողությամբ տեղի ունեցավ Հոգևոր Ծեմարանի դահլիճում 1993 թ. ապրիլին:

դարական փոխարարերթյունների ընթացքում: Տվյալ հարցի շորջ ստեղծվել է հնկայական դավանարանական գրականություն:

Հայստնի է, որ Հայ Եկեղեցին դեռ շատ վաղուց մերժել է ընդունել Քաղկեդոնի ժողովը և Լոռն պայմանագրը և իբրև քրիստոնարանական այդ հարցի լուծում որդեգրել Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու (+444) վարդապետությունը՝ «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմացելոյ» բանաձևով: Այսօր, սակայն, մեր առաջ հառնում են բազմաթիվ հարցեր. ե՞րբ, ինչո՞ւ, և ինչպէ՞ս Հայ Եկեղեցին մերժեց Քաղկեդոնի ժողովը և Լոռնի տոմարը: Քաղկեդոնականները ընդունում են Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու վարդապետությունը. ուրեմն ինչո՞ւմն է մեր և նրանց տարրերթյունը թեկուզ թենց Ս. Կյուրեղի գործերին մոտենալու հարցում: Հայ Եկեղեցին, մերժելով Քաղկեդոնի ժողովը և Լոռնի տոմարը, ի՞նչ է դավանում: Հայ Եկեղեցու վարդապետությունը. ուրեմն ինչո՞ւմն է միաբանակ տերմինով, հիմնվում է Դիոսկորու Ալեքսանդրացու (+454), Տիմոթեոս Կողի (+477), Փիլոքսենոս Մաքուգու (+523) և Ալեքսանդրյան դպրոցի այլ Աերկայացուցիչների հայացքների վրա”, թե՞ Հայ Եկեղեցին մշակել է մի ինքնուրույն վարդապետություն՝ հիմք ունենալով Կապադովկյան հայրերի (Ս. Բարսեղ Կեսարացի (+379), Ս. Գրիգոր Աստվածաբան (+389/390) և Ս. Գրիգոր Նյուսացի (+394/395)) և Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու գործերը: Ե՞րբ է ճշովել և հաստատվել Հիսուս Քրիստոսի երկու բնությունների միության հարցում Հայ Եկեղեցու տեսությունը: Այդ վարդապետությունը հոյնուրյամբ պահպանվել է նաև հետագա դարերում անփոփոխ կերպով, թե՞ փոփոխվել ու հարմարեցվել է ժամանակի պահանջներին: Տվյալ հարցի վերաբերյալ Հայ Եկեղեցու տեսությունը համընկենո՞ւմ է Արևելյան մյուս հակարաղկեդոնական Եկեղեցիների (Ասորի, Ղպտի, Հնդիկ, Հարեց) վարդապետություններին: Անս հարցեր, որոնք իրենց վերջնական պատասխանները դեռ չեն ստացել:

Ուստմասահրետով Հայ Եկեղեցու քրիստոնարանության հիմնական աղբյուրները, հանգել ենք մետեսք եղբակացությունների.

ա. Ընդունված է ասել, թե Հայ Եկեղեցին մերժեց Քաղկեդոնի դավանարանական բանաձևը և բաժանվեց (ըստ ուսանց՝ որպեսզի բաժանվի) Բյուզանդական Եկեղեցուց<sup>1</sup>: Իրականում, սակայն, Քաղկեդոնի բանաձևի մերժումը և Բյուզանդական Եկեղեցու բաժանումը տեղի են ունեցել ոչ միաժամանակ, այլ տարրեր ժամանակներում: Քաղկեդոնի բանաձևի դեմ Հայ Եկեղեցու Վարդապետները պայքարել են Ե դարի վերջին, իսկ 506 թ. Դվինի Ս. Ժողովում մերժել այն: Սակայն մինչև 518 թ. Քաղկեդոնի դավանարանական բանաձևը լուրջան էր մատնած նաև Բյուզանդական կայսրության մեջ՝ նախ 476 թ. Բասիլիսկոս Կայսեր (475—476) հրովարտակով և ապա, 482 թ., Զենոն Կայսեր (474—475, 476—491) Հենուտիկոնով: Եվ եթե Դվինի Ս. Ժողովում Հայ Եկեղեցին մերժեց այն, այս այդ արեց ո՞չ թե Բյուզանդական Եկեղեցու բաժանվելու հապատակով (Ճնովվելու ակնկալությամբ, ինչպես ընդունված է ասել), այլ որովհետև այդ որոշումները չեն համապատասխանում իր դավանարանությանը (որ հիմնված էր Կապադովկյան հայրերի և Ալեքսանդրյան դպրոցի աստվածաբանության վրա) և ինչու չեն նաև, որպեսզի չքածանվի Բյուզանդական Եկեղեցուց: Ուրիշ հարց է, որ Բյուզանդական Եկեղեցին, ենթարկվելով քատարական ճնշումների, ստիս-

<sup>1</sup> Մանուկ Աբեղյան, Հայոց հիմնարանության պատմություն, Ս, Երևան, 1968, էջ 99:

ված եղալ հետագայում նորից ընդունել Քաղկեդոնի ժողովի դավանաբանական բանաձևը:

թ. Ընդունված է ասել նաև, թե Հայ Եկեղեցին մերժեց Քաղկեդոնի ժողովի բանաձևը, որովհետու չհակացավ այդ ասհմանումի բուն իմաստը՝ հայ լեզվի մեջ համապատասխան բարդ դարձվածքներ չլինելու պատճառով<sup>2</sup>: Նման մտածումը միանգամայն անհիմն է: Մեր Եկեղեցու վարդապետները ճշգրտորեն թարգմանեցին գրեթե ողջ հունական փիլիսոփայական և աստվածաբանական գրականությունը և մի՞թե չհակացան ժամանակական աշանակում «երկու բնութիւնք եկեալք առ իրեարս ի մի անձնաւորութիւն» հայադասությունը:

Այս՝ առաջին հայացքից Քաղկեդոնի բանաձևը կարող է ուղղափառ թվալ: Քրիստոսի երկու բնությունները միացել են մի դեմքի մեջ անխառն և անշփոթ (Ընդդեմ Եվուղիքականության), անբաժանելի և անանջատելի (Ընդդեմ Նեստորականության) կերպով: Սակայն, համաձայն ժամանակի տիրող կարծիքի, երկու կատարեկություններ մեկ լինել չեն կարող: Իսկ Քաղկեդոնի ժողովը չկարողացավ բացատրել, թե ինչպի՞ս երկու կատարյալ բնություններ կարող են ամփոփվել մեկ դեմքի մեջ: Բնություն տերմինը ընդհանուր է, դեմքը՝ մասնավոր: Մի բնությունը կարող է մի բանի դեմք ունենալ (օրինակ՝ Ս. Երրորդության դեպքում մի աստվածային բնությունն ունի երեք դեմք՝ Հայր, Որդի և Ս. Հոգի): Իսկ հակառակը, որ մի դեմք մեկից ավելի բնություն ունենա՞ անկարելի է:

գ. Քաղկեդոնի բանաձևը հակադրվում է նաև քրիստոնեական փրկարգործության և մի շարք այլ վարդապետությունների: Սրանց գուգահեռ դեր խաղացին ևս երկու կարեւը հարց:

1) Մեջտեղից վերացավ Ս. Կյուրե Ալեքսանդրացու «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձևը:

2) Քաղկեդոնի ժողովի հիմնական դեմքերից դարձավ Ս. Կյուրեի հակառակորդ և Նեստորի համախոն Թեոդորիսոս Կիրոսացին:

Այս ամենը բավական էին, որպեսզի հակառակությունները, այդ թվում նաև՝ Հայ Եկեղեցին, կակածանքով վերաբերվելիս Քաղկեդոնի ժողովին՝ իրեն ծագուած հետորականություն քարոզողի, և մերժելին այն:

Եվ պատահական չէ, որ 553 թ. Կ. Պալոս գումարված Ե Տիեզերական ժողովում դատապարտվեցին Թեոդորիսոս Կիրոսացու գործերը: Մյուս կողմից՝ նոյն ժողովը որոշում է, որ «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձևը նույնանություն ունենալու է, որքան և «երկու բնություն» բանաձևը, եթե ճիշտ հակացվի և խոստվանվի ուղղափառորեն:

Փատորեն Ե Տիեզերական ժողովը սրբագրեց Քաղկեդոնի թերությունները, և պատահական չէ, որ այս սրբագրումը ընդունելություն գտավ նաև Հայաստանում: Ալասես, Ս. Հովհանն Օծենեցին իր «Ընդդեմ Երևութականաց» ճառում, խուելով այս խնդրի մասին, գտնում է, որ Կարելի է ասել և՛ մի բնություն, և՛ երկու բնություն, եթե իրավեն և բարեկարար ապես որոշականը: «զմին ասելով՝ լիշել և զառ ի յերկոցն, և դարձեալ՝ ոչ մոռանալով զերկոցն, խոստվանել և զմին»<sup>3</sup>: Քրիստոս բարկացած է կատարյալ մարդկային և կատարյալ աստվածային բնություններից: Հետևաբար՝ Քրիստոս

<sup>2</sup> Տե՛ս օրինակ Պամասկենու Ա. Պապանդեռու, Հայկական Եկեղեցու հիմնարքում և կազմակերպումը մինչև Ե Տիեզերական ժողովը, Աթենք 1966, էջ 176 (հունարեն):

<sup>3</sup> Յովհաննու Խմաստափիք Աւանեցոյ Մատենագրութիւնը, Վենետիկ 1953, էջ 70:

ունի երկու բնություն: Սակայն այդ բնությունները պյանքես են միացել իրար, որ միտությունից հետո չի կարեկի խոսել երկու բնությունների մասին, այլ՝ միայն մի բնության: Հետևաբար, եթե ասում ենք մի բնություն, Ակատի չունենք, թե Քրիստոսի բնություններից մենք անկատար են, և կամ թե մենք լոծվել են բյուփ մեջ, այլ, պարզապես, մի բնություն ասելով շեշտում ենք Քրիստոսի երկու բնությունների անբակ միտությունը:

Այս է եղել Հայ Եկեղեցու տեսությունը Ը դարում, որը և շարունակվել է Հաջորդ դարերում ևս (Հովհաննես Սարկավագ (+1129), Ս. Ներսես Շնորհալի (+1173) և այլն):

Այս տեսությունը շափազանց մոտ է Ե Տիեզերական ժողովի սկզբունքներին, և երկու կողմերի միջև շատ հավանաբար գլուխ կգար փոխհասկացողություն, եթե չիներ Զ Տիեզերական ժողովը (681 թ. Կ. Պոլիս), որ մի տեսակ անտեսումն էր Ե Տիեզերական ժողովի և վերարժեորմբ Քաղկեդոնի: Այդ ժողովը Քաղկեդոնի երկու բնությունների կողքին գևոտեղեց «երկու կամք» և «երկու ներգործություն» արտահայտությունները: Եվ եթե Ե Տիեզերական ժողովի և Ս. Հովհանն Օձնեցու բացարությունների հիման վրա Հայ Եկեղեցին կարող էր, եթե ոչ ընդունել, ապա գոնե շնորհել Քաղկեդոնի «երկու բնությունը ի մի անձնառորդութիւն» բանաձևը, ապա այլևս հնարավոր չեր հաշովել «երկու բնություն, երկու կամք, երկու ներգործություն» ասամանումների հետ:

Նրանք, ովքեր զարմանում են, թե ինչո՞ւ հայ Եկեղեցին չի ընդունում Քաղկեդոնը, և կամ նրանք, ովքեր Հայ Եկեղեցու տգեսի տեղ են դնում, մոռանում են, որ այսօր, սկսած է դարի վերջերից, Քաղկեդոնը այլևս առանձին հանդես չի գալիս, այլ՝ Զ Տիեզերական ժողովի հետ միայն:

Դ դարում Բյուզանդական կայսրության ասհմաններում ծայր է առնում հապածանք հայ հավատացյալների նկատմամբ: Բազմաթիվ հայ վարդապետներ, շիամնորմելով կայսրության բաղարականությունը, անցնում են Բագրատունյաց ասհմանները և տեղի վարդապետների հետ պայքար ծավալում քաղկեդոնականության դեմ: Ստեղծվում է ծավալուն հականառական գրականություն, որտեղ Հայ Եկեղեցու տեսությունը հանդես է գալիս Ը դարում ընդունված տեսությունից տարրեր ձևով: Այստեղ՝ Քրիստոսի մարդկային կատարյալ բնությունը կորցնում է իր մարդկային հատկությունները և աստվածանում, որով միտությունից հետո Քրիստոսի մեջ ննում է մեկ բրնություն<sup>4</sup>: Այս տեսությունն արդեն բացահայտ միաբնակություն է՝ մոնոֆիզիտիզմ, թեև ոչ եւլիքիսականություն:

Սրբ, ո՞րն է Հայ Եկեղեցու տեսությունը Քրիստոսի երկու բնությունների միտության խնդրում, Ը դարի տեսություննը, որ շարունակվել է հայ հետագա դարերում (Հովհաննես Սարկավագ, Ս. Ներսես Շնորհալի և այլն), թե՝ Ժ դարում առաջացած միաբնակ տեսությունը, որ ունեցել է բազմաթիվ ներկայացուցիչներ նաև հետագա դարերում (Պողոս Տարոնացի (ԺԲ դար), Ստ. Օքելյան (ԺԳ դար) և այլն): Ահա ևս մի հարց, որ կարոտ է լուրջ ուսումնասիրության:

<sup>4</sup> Տե՛ս, օր. Բացահայտությին համաձայն աստուածաբանութեամ նոգելից հարցն արքոց ըստ առաքելականիման աւանդիցն Եկեղեցու Քրիստոսի, հանդերձ հաւատաբանութեամբ ճշմարիտ ուղղական դասանութեամ Հայաստանաց, ասացեալ սրբոյ Վարդապետին Սահմական... Գիրք Թղթոց, Թիֆլիս 1901, էջ 413—482: Տեսան Խաչիկ Հայոց կառուղիկոսի, Բան խոստվանութեամ, Պատասխանի Յունաց գրոյն՝ զոր արձակեալ էր առ նա մետրոյդավայիտն Մելետինոց, Գիրք Թղթոց, էջ 302—322 և այլն:

ե. Անհրաժեշտ է խոսել նաև այն մասին, թե ի՞նչ կարծիք ունեն երկարակները Հայ Եկեղեցու քրիստոնարանության մասին, և որքանո՞վ է այն համապատասխանում իրականությանը:

Սյու պատկերացումները ԺԲ դարում ամփոփել է Բյուզանդիայի Եկեղեցու Շահանավոր մատենագիր Եվթիմիոս Զիօնարքինուսը (+1120): Ըստ Արա Քաղկեդոնի ժողովից հետո հայերը, կորեկով իրենց ընդհանրական Եկեղեցուց..., ընդունել են Եվտիքեսի, Դիոսկորոսի և այլ մոնոֆիզիտների չարափառությունները, ավելի կոնկրետ՝

1. Քրիստոսի մարմինը մեր մարմնին համագոր չեն համարում, այլ անապական և անկիր, նորը, անստեղծ ու երկնային, իբր թե կերել, խմել և այլ մարդկացին պետքերը կատարել է երկութապես:

2. Դարձյալ ասում են, թե Քրիստոսի մարմինը փոխվել է աստվածային բնության և համագոր է դարձել աստվածայինին:

3. Խճանես որ մի կաթիլ մեղրը, լուծվելով ծովի մեջ, ոչ հշմարվում է և ոչ էլ շարունակում լինել, նոյնաւե և Քրիստոսի մարմինը լուծվեց աստվածության մեջ, իբրև մի կաթիլ մեղրը՝ ծովի մեջ, և պատիսով կորցրեց իր բնությունը և իր յուրահատկությունը: Այդ խոհ պատճառով էլ Քրիստոսի մեջ չկան երկու բնություններ, այլ միայն մեկը՝ աստվածայինը:

4. Հայերը շարափառորդներ Ավելատարաններից շնչել են այն հատվածները, որոնք խոսում են Քրիստոսի չարչարանքների (քրտնելու) մասին:

5. Օծում են խաչը Քրիստոսի անոնցով, հայուարարելով, թե Երրորդությունից մեկը խաչվեց, այսինքն՝ Արա աստվածային բնությունը: Եվ քանի որ Քրիստոսի աստվածային բնությունը նոյնն է Հոր և Ս. Հոգու բնության հետ, ապա թեև բացահայտորեն չեն խոստվանում, սակայն այնաւե է ստացվում, թե Հայու ու Ս. Հոգին էլ են խաչվել: Մյուս կողմից՝ Արա աստվածությունը կոչում են չարչարելի և մահկանացու: Այսպիսով տորք են տալիս մի կողմից երևութականներին, մյուս կողմից՝ աստվածաշարչարերին:

6. Նզովում են Որոգինեսին, Եվլիքեսին և Դիոսկորոսին, սակայն բնդունում և դաշտանում են Արանց չարափառությունները:

Թե որքանով են այս մեղադրանքները համապատասխանում իրականությանը, կտեսնենք մեր աշխատության հաջորդ էջերում:

Մեր այս փոքրիկ աշխատությունը մի փորձ է՝ պատասխանելու վերոհիշյալ հայոցերից երկուսին միայն. Ա. զիսում խուսկու ենք այն մասին, թե ինչո՞ւ, ե՞րբ և ինչպես Հայ Եկեղեցին մերժեց Քաղկեդոնի ժողովի դավանարանական որոշումները: Բ զիսում Երևանացներու ենք Ե—Ը դարերում ձևավորված Հայ Եկեղեցու վարդապետությունը Քրիստոսի երկու բնությունների հարցի վերաբերյալ:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծիշտ հասկանալու համար Հայ Եկեղեցու քրիստոնարանության նորությունները, անհրաժեշտ է մի թուոցիկ ակնարկ գցել այդ խնդրի պատմության վրա:

Ողջ Դ դարում Քրիստոսի Եկեղեցին զբաղված էր արիոսականության հարուցած խնդիրներով: Դ դարի վերջին Նիկիական հանգանակի հաղթա-

նակով մեկընդիշտ լուծվեց Ս. Երրորդության երկրորդ դեմքի աստվածային բնության հարցը: Այնուհետև ասպարեզ եկավ Քրիստոսի մարդկության և աստվածության փոխմարաքերությունների հարցը, որ շուրջ երեք դար ակնկոծեց Քրիստոսի Եկեղեցին՝ առանց վերջնական լուծում սուանալու:

Առաջին անգամ վերոնդիշլալ խնդրով զրադակել է Լատիխիայի եպիսկոպոս Ապոլինարիոսը (+ ~390): Նա, լինելով Նիկայի հավատամքի հետևողորդ և արիոսականության բուն հակառակորդ, եղել է Եկեղեցու համավոր հայրերից Աթանասի (+373), Բարեղ Կեսարացու (+379) և որիշների բարեկամը: Ապոլինարիոսը խնդրի լուծման հիմք ընդունեց Նոր-պլատոնական այն տեսությունը, թե մարդը բաղկացած է Յ տարրերից՝ մարմին, անրան հոգի (շունչ) և բանական հոգի (միտք): Եվ սկսեց քարոզել, թե Աստուծու Լոգոսը միացավ մարմնի և անրան հոգու հետ, մինչ բանական հոգին դուրս մնաց: Այսինքն թե՝ Քրիստոսի մեջ մարդու բանական հոգու տեղը բռնեց Աստուծու Լոգոսը: Համաձայն այն ժամանակի հայացքների, բնություն և դեմք աճրաժան էին իրարից, հետևաբար, ընդունելով Քրիստոսի մեջ երկու կատարյալ բնություններ, ստիպված պետք է ընդուներ նաև երկու կատարյալ դեմքեր, իսկ երկու դեմքերի գոյությունը ցույց կտար, թե միություն տեղի չի ունեցել: Այդ պատճառով էլ ասում էր. «Երկու կատարելություններ մեկ լինել չեն կարող»: Մարմնացավ Լոգոսին շտաղով մարդկային ամբողջական բնությունը և հետացնելով հրանից բանական հոգին՝ Ապոլինարիոսը չեզորացնում է երկրորդ՝ մարդկային դեմքը: Նա բնություն է կոչել միայն աստվածայինը, իսկ մարդկայինը՝ ոչ, քանի որ մարդկայինը ամբողջական չէր: Իրեն այս տեսության հետևանքը նա ընդունում էր Քրիստոսի աստվածային բնության և մարդկային յուրահատկությունների ամբողջական հաղորդակցությունը: Այսպիսով ասում էր, թե աստվածային բնությունը ծնվեց, չարչարվեց, մահացավ, մարդկային մասը աստվածացավ և արժանի է երկրպագության:

Ապոլինարիոսի այս տեսությունը, սակայն, ունի մի հիմնական թերություն. եթե Աստուծու Լոգոսը չի ստանձնել ամբողջական մարդուն, ապա փրկությունը կատարյալ չի կարող լինել, քանի որ դուրս է մնացել բանական հոգին (միտքը), որն ամենից շատ կարիք ուներ փրկության: Այդ իսկ պատճառով էլ այս տեսությունը դատապարտվեց Բ Տիեզերական ծողովում:

Երկու աստվածաբանական դարոցներ՝ Ալեքսանդրյանը և Անտիոքյանը, ստանձնեցին գտնելու խնդրի մի նոր լուծում:

Ալեքսանդրյան դպրոցի հիմնական ներկայացուցիչը այդ շրջանում Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին էր (+444), իսկ Անտիոքյան դպրոցին՝ Դիոդոր Տարտունեցին (+394) և Թեոդորոս Մահմուտասացին (+428):

Ըստ Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու, Աստուծու Լոգոսը մարմնանալով՝ ստանձնեց մարդկային բնության ոչ թե մեկ մասը, այլ ամբողջությունը: Սակայն մարմնանանալոց առաջ մարդկային բնությունը կորցրել էր իր յուրահատկ դեմքը: Աստվածային Լոգոսը միացավ, իր մեջ ընդունեց անելու մարդկային կատարյալ բնությունը: Եվ քանի որ Ս. Կյուրեղը անելում էր դեմքը, մերժում Քրիստոսի անհատաբար մարդ լինելը, այն չկոչեց բնություն, այլ պարզապես մարմին—սարկա, թեև այդ երեմինի տակ հասկանում էր երկու բաղադրիչ մասերն Էլ՝ սումա—մարմին և պայտիսն—հոգի. Ս. Կյուրեղը դավանում էր, թե Աստուծու Լոգոսը մարմնացավ՝ մեր բնությունը առնելով, սակայն միևնույն ժամանակ մնաց Աստված ըստ Էռթյան, փոփոխության չենթարկվեց, այլ մարդկայինը միաձառվեց իր Էռթյան մեջ: Միությունից

հետո խոսում է մի բնույթան մասին, բանի որ, Ապոլինարիոսի նման, ըստ նրա էլ, բնույթունը և դեմքը անբաժան են միջանցից, հետևաբար, եթե խոսեր երկու բնույթունների մասին, ստիպված կլիներ Քրիստոսի մեջ ընդունել երկու դեմքեր: Երկու բնույթուններ կարելի էր ընդունել միությունից առաջ: Մարդուությունից հետո, սակայն, կա միայն մի բնույթուն՝ աստվածաբարձրկային, թեպես նա ընդունում էր նաև, որ Քրիստոսի մեջ երկու բնույթունները միությունից հետո էլ մնացին անխառն և անշփոթ, անապական: Խաչի վրա չարչարվեց ոչ թե հովո ինքը Աստվածային Լոգոսը, այլ նրա մարմինը. «Չարչարվեց անշարժար Լոգոսը մարմնով» ըստ Ապոլինարիոսի:

Իսկ Անտիոքյան դպրոցի ներկայացուցիչները՝ Դիոդոր Տարտոնեցին և Թեոդորոս Մատուեստացին, մերժելով Լոգոսի կրկնակի ծնունդը, նայև Հորից՝ ի սկզբանե, և ապա՝ Ս. Կույսից, սկսեցին ուսուցանել, թե Ս. Կույսը ծնել է մի երեխա, որի մեջ մտել է Աստուծոն Լոգոսը, որով Ս. Կույսից ծնվածը դարձել է տաճար Բանն Աստուծոն համար: Հետևաբար և նրանք Քրիստոսի մեջ ընդունեցին երկու անշատ բնույթուններ՝ անխառն և անապական, որոնք անշուշն խառնում ենթակա չեն, որովհետև տարբեր բաներ էին և հակադիր: Մենքը ենթակա էր չարչարվելու, մյուսը՝ ոչ: Եվ Քրիստոսին տպալով երկու անշատ բնույթուններ՝ ստիպված եղան նրան վերագրել երկու դեմքեր: Այդ պատճառով էլ խոսափում էին այնպիսի արտահայտություններից, ինչպես, օրինակ, «Աստված ծնվեց», «Աստված չարչարվեց», և Ս. Կույսին անվանեցին «Մարդածին»: Աստուծոն Լոգոսը, ըստ նրանց, ոչ թե ծնվեց, այլ պարզապես անցավ Ս. Կույսի միջով:

Այս երկու դպրոցների բախումը տեղի ունեցավ 430 թ., եթե Թեոդորոս Մատուեստացու աշակերտ Նեստորը, արդեն իրեն Կ. Պոլսի պատրիարք, սկսեց իր քարոզելուն Ս. Կույսին անվանել «Քրիստոսածին»՝ ի հակադրություն «Աստվածածին» և «Մարդածին» տարբեր անվանումների: Ս. Կուրեղ Ալեքսանդրացին իր համակեներով հանդես է գալիս իրեն «Աստվածածին» անվան ջատագով: Նա Նեստորին ողջած մի համակով հերքում է Անտիոքյան դպրոցի վարդապետությունը և 12 զորքենքը շարադրում Նեստորի հասցեին: Նեստորն ինչ-որ չափով համանջում է՝ ընդունելով «Աստվածածին» անվանումը, այն վերապահությամբ, սակայն, որ ընդունվի, թե Մարդամը երևորապես դարձավ Աստվածածին:

Դեպքերի հաջորդականությունը հանգեցնում է Գ. Տիեզերական ժողովի գումարմանը Եփեսոսում, 431 թվականին:

Եփեսոսի ժողովը բաժանվում է երկու հակադիր մասերի՝ հակադիր որոշումներով: Երկար բանակցություններից հետո, 433 թվականին, ընդունվում է մի հաշտարարական խոստովանություն Ալեքսանդրիայի և Անտիոքի Մթոնների կողմից: Երկու կողմերի կարևոր համանջումները հետևյալներն են: Ալեքսանդրիայի դպրոցի ներկայացուցիչները ընդունեցին, որ խոսք չինի միությունից հետո Քրիստոսի մեկ բնույթան մասին, իսկ անտիոքացիները ընդունեցին Քրիստոսի երկու բնույթունների յուրահատկությունների հաղորդակցությունը: Պաշտոնապես ընդունվեց «Աստվածածին» անվանումը: Դատապարտվեց նաև Նեստորը:

Այս համաձայնությանը հակառակվեցին երկու խմբերի ծայրանել հետևողները:

Խնդիրը նորից արձարձվեց Եվլիքեսի քարոզության հետևանքով: Կ. Պոլսի վաճերերից մեկի վաճառայր Եվլիքեսը՝ Ալեքսանդրիայի դպրոցի, ծայրանել ներկայացուցիչներից մեկը, սկսված է քարոզել, թե մարդացալ Լոգո-

որ աստվածացրեց իր մարդկային բնությունը՝ ընկերմելով այն իր աստվածության մեջ, ինչպես մի կատիլ մեղրը անսահման օվկիանոսում: Հիսուսի մարմինը իշել է երկնքից և կազմվել է Կույսի մեջ, հետևաբար՝ մեր բնությունից տարբեր մի բնություն ունի: Ահա այդ բնությամբ էլ խաչվեց և կարողացավ իր մարմնին հարություն տալ գերեզմանից ու անմահացնել:

Եվութեաի այդ վարդապետությունը դաստապարտվում է 451 թ. Քաղկեդոնի ժողովում: Այդ ժողովը առաջարկեց մի նոր լուծում՝ «Երկու բնությունների և մեկ անձի մեջ» բանաձևով: Երկու բնությունները միացել են միմյանց հետ անխառն, անշփոթ (ընդդեմ Եվութեականության) և անբաժանելի ու անանջատելի (ընդդեմ Նեստորականության) կերպով:

Թզում է, թե ինուիրը լուծում է. շեշտվում են Քրիստոսի երկու բնություններն էլ, թե՝ աստվածայինը և թե՝ մարդկայինը (որոնք միության հետևանքով իրենց յուրահատկությունները չեն կորցնում), որով մերժվում է Եվութեայան հերետիկոսությունը. խոստվաճրվում է հայ մի դեմք և մի անձ, որով և զերծվում է Նեստորականության վտանգը: Քաղկեդոնի ժողովը, սակայն, չի բացատրում, թե ինչպես երկու կատարյալ բնությունները կարող են ամփոփվել մի դեմքի մեջ: Քաղկեդոնի ժողովի դավանաբանական բանաձեռնությանը է Անոն պապի՝ 449 թվականի Կ. Պոլսի Ֆլարիանոս պատրիարքին ուղած համակի վրա, որ ծանոթ է «Լուսնի տոմար» անունով:

Լուսնը ժխտում է «մի բնություն» դավանանքը և խոստվաճրում է՝ «Երկու բնություններ»՝ «եկեղաք առ իրեարս ի մի անձնաւորութիւն»: Ըստ Լուսն պապի համակի, անարգվողը մարդկային բնությունն է, իսկ փառաբանվողը՝ աստվածային բնությունը: Քաղցողը, վախեցողը, մեռնողը այլ է, հրաշագործողը, մարգարեացողը, հարություն առնողը՝ այլ: Թեպետև Լուսնը ընդունում էր երկու բնություն՝ ի մի անձն, սակայն անհրաժեշտաբար ընդունում էր հայ երկու կամք և երկու ենթագործություն:

Քաղկեդոնի ժողովի որոշումները լուրջ ընդդիմություն առաջ բերեցին Կիպրոսի, Պաղեստինի և Սրբելքի բազմաթիվ այլ Եկեղեցիներում, այն աստիճան, որ Բասիլիսկոս կայսը (475—476) 476 թվականին անհրաժեշտություն գտաց հրովարտակով նզովել Քաղկեդոնի ժողովը և Լուսնի տոմարը: Բասիլիսկոս կայսեր հետեւ Զենոն կայսը (474—475, 476—491), որը 482 թվականին իր հշանավոր Հենութիկոնվ լուրջան է դատապարտում թե՝ Քաղկեդոնի ժողովը և թե՝ Լուսնի տոմարը: Նոյն հակարագիկեղոնական վերաբերմունքը որդեգրեց հայ Անաստաս կայսը (491—518): Եվ միայն Հռատիմոսի կայսրության տարիներին (518—527) քաղկեդոնականությունը կըրկին ձեռք բերեց պետական հովանավորություն ու սկսեց աստիճանաբար տիրապետել Բյուզանդիայի Եկեղեցում:

#### Գ Լ Ո Ւ Խ Ա

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ Դ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՆԿԱՏՄԱՄԲ

Ինչպես Հայ Եկեղեցու պատմության բազմաթիվ հարցեր, այնպես էլ Քաղկեդոնի 451 թվականի ժողովի նկատմամբ Հայ Եկեղեցու դիրքորոշման պատմությունը մինչև այժմ թաղված են խորհրդավորության և անհստակության մեջ:

Արտահայտվել են բազմաթիվ կարծիքներ, ընդունվել որոշ սխալ տեսակետներ, որոնցից մի քանիքը թեև ճշտվել, սրբագրվել են, սակայն շարունակվում են շատերի կողմից օգտագործվել՝ մեկը մյուսից պատրաստի առնելով և դնելով իր շարադրանքի մեջ, առանց քննական մուտքման:

Մեր նպատակներից դուրս է տալ հարցի պատմությունն ու գրականության տեսությունը, ոչ էլ ընդդիմաբանել սխալ տեսություններին կամ արժեվորել ճշտվածները:

Մեր նպատակն է պարզապես տալ մի պատմական շարադրանք, հնարավորին չափ ճշմարտապատում՝ օգտագործելով զանազան հարցերի շուրջ արդեն արված ընդունելի լուսաբանությունները, ինչպես նաև խնդիրների և սկզբնաղբյուրների մեր քննությանց եզրակացությունները:

Ա. Քաղկեդոնի ժողովի նկատմամբ Հայ Եկեղեցու դիրքարոշման մեջ հայունի առաջին հատակ հանգրվանը Դվինի Ա. ժողովը է, որին մասնակցել են Հայ, Վրաց և Աղվանից եպիսկոպոսները՝ Հայոց և Վրաց կաթողիկոսները հանդերձ<sup>1</sup>:

ա. Այն մերժել է Քաղկեդոնի ժողովը և Լիոնի տոմարը:

բ. Ժողովը մերժել է նաև նեատորականությունը:

գ. Քաղկեդոնի մերժելու մեջ հայունի առաջին հատակ պատճառն այն է, որ այն դիտվել է իրքն նեատորականությանը վերածնունդ տվյալ մի ուժ:

Բարգեն կաթողիկոսի՝ 507/8 թ. Պարսկաստանի ուղղափառ քրիստոնյաներին ուղարկած Բ թղթի մեջ բացահայտորեն արված է, որ նեատորականները, որ ալեկոնում են սուրբ Եկեղեցին, Քաղկեդոնի ժողովով են հզորացել. «Եւ փախչիմք ուրացեալ զ'ի Քաղկեդոնին ստութիւն Նեատորի և այլցն արմանից, զոր գիտեմք Կենծարութեամբ փախուցեալ ի հեթանոսութեան, և ի հրեական մղորութեան, և զնոյն խոսովանին զիեթանոսութիւն, միանգամայն և զիրութիւն»<sup>2</sup>:

դ. Քաղկեդոնի մերժելու երկրորդ պատճառ կարող ենք համարել այն, որ հավանաբար Հայ Եկեղեցին Դվինի Ա. ժողովից առաջ արդեն ընդունել էր Զենոնի Հենոտիկոնը (482 թ.): Սրբեն ժողովական թղթում (506 թ.) ասված «Զայս հաւատ Հոռոմք և մեր Հայք և Վիրք և Աղուանք ունիմք»<sup>3</sup> արտահայտությունը միայն այս կերպ կարելի է հասկանալ: Պատահական չեն նաև, որ Բարգեն կաթողիկոսի 507/8 թ. վերոհիշյալ թղթում Զենոնի «Թուղթ» համարվում է հավատի կանոններից մեկը: Հատակ է ուրեմն, որ Զ դարի սկզբին Հայ Եկեղեցին հակառակ դիրք ուներ Քաղկեդոնի ժողովի նկատմամբ: Ե՞րբ է ձևավորվել այդ դիրքորոշումը, դժվար է ասել: Կան, սակայն, մի քանի տվյալներ, որոնք կարևոր են, և արժե դրանց ուշադրություն դարձնել:

ա. Տիմոթեոս Կուոքի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» երկի հայերեն թարգմանությունը:

Անկասկած Քաղկեդոնի ժողովի նկատմամբ Հայ Եկեղեցու դիրքորոշ-

<sup>1</sup> Այս ժողովի մասին տե՛ս Ե. Գ. Տեր-Միհանյան, Պատմա-բանափրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 31—44, Բարգեն կաթողիկոսի ժողովի թվականը և տեղը:

<sup>2</sup> Վիրք թղթոց, էջ 49:

<sup>3</sup> Վիրք թղթոց, էջ 45:

<sup>4</sup> Վիրք թղթոց, էջ 49:

ման և այդ դիրքի ամրապնդման համար կարևոր դեր է խաղացել Տիմոթեոս Կողի Հակածառության հայերեն թարգմանությունը<sup>5</sup>:

Ընդունված է Տիմոթեոս Կողի Հակածառության հայերեն թարգմանությունը՝ դեռև 480—484 թվ. միջեւ:

Ե դարի վերջին Անտիոքի Պետրոս Թափիչ պատրիարքը (475—488), դիմելով Հայոց, ամենայն հավանականությամբ, եպիսկոպոսապետին, ասում է. «Եւ ունի քո աստուածությունն զամենապատուականին և զերանելի հարք մերոյ Տիմոթեոսի գգիրս՝ որ ընդդէմ Քաղկեդոնի ժողովին...»<sup>6</sup>: Տիմոթեոսի երկը կարևոր դեր է խաղացել հայ իրականության մեջ. Ե դարի սկզբին հայութաց եկեղեցական հարաբերությունների ժամանակ գրված «Պատճառը Դժողովով կատարված երկարակացն», Մովսէսի Վրաց ուղղափառ եպիսկոպոսի» գրության մեջ այն դասակարգվել է Քաղկեդոնի ժողովը և Լոռնի տոմարը մերժող հինգ կարևոր գրությունների շարքում. «Թուղթն Զենոնի ուղղափառ թագաւորի, որ կոչի Հենատիկոն և թուղթն երանելոյ Անաստասի թագաւորի, և գիրը Տիմոթեոսի Աղեքանիրացոյ. և թուղթ Յովհաննու եպիսկոպոսապետի. և թուղթն Պետրոսի Անտիոքացոյ»<sup>7</sup>:

### բ. Մովսես եպիսկոպոսի և Հովհանն եպիսկոպոսապետի գրությունները:

Քաղկեդոնի ժողովի նկատմամբ Հայ Եկեղեցու դիրքորոշման վերաբերյալ հնագոյն և կարևոր աղբյուրներից են Գիրք Թղթոց-ում պահպանված «Երանելի Մեծի Քերողամարտ» Մովսէսի Խորենացի, եպիսկոպոտին»<sup>8</sup> և «Երանելոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի, Սպացոյց յերկու բնութեանց ասել զՓրկիչն և կամ մի բնութիւն»<sup>9</sup> գրությունները:

Գիրք Թղթոց-ում Ե—Ե դարերի վավերագրերը, առանց բացառության, ճշգրիտ ժամանակագրական կարգով հաշջորդում են միմյանց: Վերոհիշյալ երկու թղթերը գտնվում են Ս. Սահակի և Ս. Մեսրոպի գրագրություններից հետո և Բարգեն կաթողիկոսի թղթերից առաջ: Նկատի ունենալով այս կարևոր հանգամանքը, Կարապետ նպա. Տեր-Մկրտչյանը և Գալուստ Տեր-Մկրտչյանը առաջարկել են Մովսես եպիսկոպոսի թուղթը համարել այն «Երանելի փիլիսոփոսն Մովսէսի»-ի գործը, որի մասին հիշում է Ղազար

<sup>5</sup> Այն մեզ է հասել միայն հայերեն թարգմանությամբ. Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքանիրաց Հակածառութիւն առ ասմանեալս ի ժողովյան Քաղկեդոնի, ճր. Կառապետ ծ. Վարդապետի և Երուանդ Վարդապետի, Ս. Էջմիածնի 1908: Բրիտանական թանգարանու պահպանված նոյն երկի աստրերեն թարգմանությունը (Addit. 12156) Տիմոթեոսի երկի մի փոփոխված և համառողակած տարբերակն է:

<sup>6</sup> Տե՛ս Գալուստ Տեր Մկրտչյան, Հայ Մատենագրութեան հնագոյն թուականները, ՇՊԱԿԱԹ, Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, Ս. Վաղարշապատ 1913, էջ 154—159: Գալուստ Տեր Մկրտչյանի տեսակենը, միմնական ճշգրիտ թվարանական հաշվամեջի վրա, անվերապահորեն ընդունվել է մետաղոտութեան մեծամասնության կողմից (Մ. Աքելյան, Ստ. Մայմանաց, Ս. Արևշատյան և այլն):

Հստ մի այլ կարծիքի, որը թիւ հավանական է, այն թարգմանակած պետք է լինի 550-ական թվականներին: Տե՛ս Ե. Գ. Տեր-Մինասյան, Պատմա-բանափրական..., էջ 394—410, Տիմոթեոս Կողի «Հակածառություն» առ ասմանեալս ի ժողովյան Քաղկեդոնի» երկի թարգմանության ժամանակը, Հ. Ներսէս Ակիմիան, Տիմոթեոս Կողի Հայ մատենագրութեան մէջ, Վիեննա 1909, էջ 17—22 և այլն:

<sup>7</sup> Գիրք Թղթոց, էջ 101:

<sup>8</sup> Գիրք Թղթոց, էջ 126:

<sup>9</sup> Գիրք Թղթոց, էջ 22—28:

<sup>10</sup> Գիրք Թղթոց, էջ 29—40:

Փարպեցին<sup>11</sup> (Եղարք Բ կես), իսկ Հովհան Հայոց եպիսկոպոսապետին նոյնացնել Հովհան Մանդակունու (478—490) նեան<sup>12</sup>:

Կարապետ եւս. Տեր-Մկրտչյանը ցոյց է տվել նաև, որ «Անիք հաւատոյ»-ում պահպանվել է Հովհան եպիսկոպոսապետի գրությունից մի հատված՝ «Երանելույն Յովհաննու Մանդակունոյ Հայոց կաթողիկոսի՝ ի հակածառորժենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացուց»<sup>13</sup> վերնագրով: Սա մի կարևոր փաստ է, որ խոսում է թղթի հարազատորթյան մասին:

Սովոր եպիսկոպոսի և Հովհան Հայոց եպիսկոպոսապետի նամակների քննությունից հստակրորեն կարելի է երկու հետևողաբների հանգիւլ:

ա. Քրիստոսի բնույթյունների հարցը այդ հեղինակների համար անզննելի խորհուրդ է: Մենք միայն կարող ենք խստվանել Սրբազն Ավանդության քարոզը՝ թե Մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեկ է:

բ. Երկու թղթերում էլ ոչ մի խոր չկա Քաղկեդոնի ժողովի և Լուսնի տոմարի մասին:

Արդ, այսպիսի մի գրություն կարող էր գրվել միայն Դվինի Ա. ժողովից առաջ, Զենոն կայսեր Հենությունի (482 թ.) առաջարկած ուղղությամբ. մերժել երկաբնակությունը, առանց հիշելու Քաղկեդոնի ժողովը և Լուսնի տոմարը:

\* \* \*

Բ. Տեսանք արդեն, որ 506 թ. Դվինի Ա. ժողովում Հայ Եկեղեցին, Վրաց և Աղվանից Եկեղեցիների հետ միասին, մերժել է Քաղկեդոնի ժողովը և Լուսնի տոմարը:

518 թ. Հուատինու Ա կայսեր իշխանության գլուխ գալով, Բյուզանդական կայսրության մեջ լայն ծավալ են ստանում հակամարձական շարժումները: Ոչ մի հիմք չունենք, սակայն, ենթադրելու, թե այդ գալուստները տարածվել են նաև Հայ Եկեղեցու վրա: Հնդհակառակը, տեսնում ենք, որ Քրիստոնիոր Ա Տիրանիցի կաթողիկոսը (539—545) հովանավորում է ասորի միաբնակմերին և եպիսկոպոս ձեռնադրում նրանց համար<sup>14</sup>:

Քաղկեդոնի ժողովը և Լուսնի տոմարը Հայ Եկեղեցու կողմից մի անգամ ևս մերժվում է Զ դարի կեսերին՝ հայ-ասորական հարաբերությունների առթիվ: Ասորի ուղափառների մի պատգամավորություն գալիս է Հայոց մոտ՝ իր հավատացյալների անոնց խնդրելով իրենց վիճակը ընդունել Հայ Եկեղեցու գիրկը և իրենց համար եպիսկոպոս ձեռնադրել Արդիշո երեցին:

Ասորիների հետ ունեցած այս թղթակցություններում նշովվում է Անիք Անտիռքացին, որ ուսուցանում էր, թե՝ «Մարմինն տեսան ապականացու էր ի հասչեն, և ապականութեան հնազանդեցաւ, և յանդնեալ նոյնպէս ասեն, եթէ Յորժամ շարշարեցաւ տեսան ապականութիւն ընկալաւ, և զայն

<sup>11</sup> Պազմայ Փարպեցոյ Պատմոթիւն Հայոց, Թուրք առ Վահան Մամիկոնեան, թմն. թմագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Սոն. Մալիսապահի, Երևան 1982, էջ 482:

<sup>12</sup> Կ. եպս., Յովհան Մանդակունի և Յովհան Մալրագոմիցի, ՇՈՂԱԿԱԹ, էջ 92: Գալուստ Տեր Մկրտչեան, Հայ Մատենագրութեան հնագյն բուլվանները, ՇՈՂԱԿԱԹ, էջ 158:

<sup>13</sup> Անիք հստակությունը Հնդհանուր Սուրբ Եկեղեցու յորդափառ և հոգեկիր հարցն մերց դաւանութեանց, յաւուր Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ, միը. Կարապետ եպիսկոպոսի, Ա. Էջմիածին 1914, էջ 130—133:

<sup>14</sup> Երուանձ վրդ. Տեր-Միհնաւեանց, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Սաուրոց եկեղեցիների հետ, Ա. Էջմիածին 1908, էջ 122—125:

ոչ լսեն զոր Պետրոս առէ թէ. Մարմին նորա ոչ ետև զապականութիւն» (Գործք Բ 27, հմմտ. Սաղմ. Ժ 10)<sup>15</sup>: «Նզովեմք և զԱներոս և զգիրս նոցա ապականիշս որ արար բաժանումն աստուածութեանն ի մարմնաւորութեանն, և ասաց եթէ ապականացու էր մարմինն Սաստոծոյ որպէս ամենայն մարդկան, ի կուտէն մինչև ցարութիւնն, և անփառաւոր և անկատար. բայց ի յարութեանն փառաւորեցաւ և կատարեցաւ, և ոչ լուա զբանն Պետրոսի որ առէ, եթէ. Մարմին նորա ոչ ետև զապականութիւն»<sup>16</sup>:

Երփանդ Տեր-Միհապանը, եկնելով այս փաստից, եզրակացնում է, թէ Արդիշոն և նրա հոտը Սևերոս Սենտիոքացու հակառակորդ Հովհանոս Հալիկանացու հետևորդ է և, որ իր գործունեությամբ կարողացավ իր վարդապետությունը փաթաթել Հայ Եկեղեցու գլխին, որով Հայ Եկեղեցին դարձավ հովհանական<sup>17</sup>: Ե. Տեր-Միհապանի այս տեսությունը, սակայն, այնքան էլ հիմնավորված չէ: Հայ Եկեղեցին Արդիշոյից և ինը Հովհանոսից էլ առաջ ուներ իր Քրիստոսարանությունը: Հենց ինըք՝ Ե. Տեր-Միհապանը, նշում է, որ Հովհանոսի վարդապետությունը ալեքսանդրյան և կապադովյան հայրերի քրիստոսարանությունն է<sup>18</sup>: Չէ որ Հայ Եկեղեցու քրիստոսարանությունն էլ հիմնված է նոյն ալեքսանդրյան և կապադովյան քրիստոսարանությունների վրա: Ուրեմն, եթէ Հայ Եկեղեցին հովհանավորում և իր գիրկն է առնում նոյն դավանանքը ընդունող մի հոտի՝ տվյալ դեպքում Հովհանոսի կողմնակիցներին, դառնում է հովհանական:

Մյուս կողմից, պեսոք է նշել, որ աստրիների հետ ունեցած այս թղթակցություններում չեն արտահայտված Հովհանոսի այն սխալները, որոնց համար հետագայում Հայ Եկեղեցին դատապարտեց նրան Սանազկերտի ժողովում<sup>19</sup> (726) Թեղողորոս Քոթենավորի (Ե դար), Ս. Հովհան Օճնեցու (+728) և Խոսրովիկ Թարգմանչի (Ը դար) գրություններով<sup>20</sup>: Ասորիների համակներում ներկայացված է Հայ Եկեղեցու համար ընդունելի մի դավանանք:

Քաղկեդոնականները իբրև նեստորականներ են դիտվում նաև Հովհաննեն Բ Գարեղյան (557—574) կարողիկոսի օրոք, կաթողիկոսի և նրա այսուհեց եպիսկոպոսների Սկոտաց և Աղվանից Եկեղեցիներին ուղղված գրություններում<sup>21</sup>, ինչպես նաև նրա հաջորդ Մովսես Բ Եղիվարդեցու (574—604) օրոք<sup>22</sup>:

Զ դարի երկրորդ կեսի պարսկա-բյուզանդական երկարատև կոխվերից հետո, 591 թ., Բյուզանդիան և Պարսկաստանը վերջնական համաձայնության են գալիս և երկրորդ անգամ Հայաստանը բաժանում իրար մեջ: Այս անգամ Հայաստանի մեծ մասը անցնում է Բյուզանդիային: Բաժանման սահ-

<sup>15</sup> Գիրք թղթոց, էջ 60:

<sup>16</sup> Գիրք թղթոց, էջ 67:

<sup>17</sup> Երուանձ վրդ. Տեր-Միհապանց, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները..., էջ 101—102, 97:

<sup>18</sup> Անդ. էջ 85—86:

<sup>19</sup> Անդ. էջ 198—202:

<sup>20</sup> Յովհաննու Իմաստափրի Անձնեցոյ Մատենագրութիւնը, էջ 171—183=Երանելուն Թէկողորդի Ընդդեմ Մայրագործացըն, էջ 61—97=Յովհաննու Իմաստափրի Ընդդեմ Երանելունաց: Գարեգին Վ. Յովհեկեան, Խոսրովիկ թարգմանչի (Ը դար), Վաղարշապատ 1899, էջ 76—183:

<sup>21</sup> Գիրք թղթոց, էջ 78—80, 81—84:

<sup>22</sup> Ուխտանձ եպիսկոպոս, Հատուած ստաշին, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ 1871, էջ 8—12:

նանագիծ է դատնում Ազատ գետը, Կողովիտի գավառը, Մակուս՝ մինչև Վահան լիճը:

Մորիկ կայսրը ձեռնարկում է Հայ և Հոյն Եկեղեցիների միության գործը, միություն, որը նա պատկերացնում էր Հայ Եկեղեցու քաղկեդոնական դատանալով միայն: Օրբելյանը վկայում է, թե՝ «Յայն ժամանակի բորբոքքը շարահինար աղանդն Քաղկեդոնի ի ձեռն բուն բացատրաց Ցունաց... և առաել ի թագաւորելն Մօրկայ... բազում անգամ հրաման տային ժողովոյ, մի անգամ ի Կոստանդնուպոլիս կոչեցին և երից անգամ ի Թէղորապոլիս և դեմ յանդիման և ուժգին մեծամեծ հարցափորձութիւնք լինէին»<sup>23</sup>: Կ. Պոլսի ժողովին բյուզանդական Հայաստանի 21 հայ եպիսկոպոսներից բացի մասնակցել են նաև պարսկական Հայաստանից Մովսես Բ Եղիշարդեցի կաթողիկոսի պատվիրակները՝ Վրթանես և Դրիգոր Քերթողները<sup>24</sup>: Ըստ Փուտ պատրիարքի, բյուզանդական Հայաստանի եպիսկոպոսները ընդունել են Քաղկեդոնի վարդապետությունը<sup>25</sup>: Պարսկահայքի պատվիրակները, սակայն, մերժել են այն:

Ժողովների մետ զուգահեռ, ինչպես պատմում է Սերեսը, «Հրաման եկան դարձեալ ի կայսերէն վերսին այլ՝ քարոզել զժողովն Քաղկեդոնի յամենայն Եկեղեցին Հայաստան երկրի, և միաւորել հաղորդութեամբ ընդ զար իր: Իսկ մանկունք ոխտի Եկեղեցեացն Հայոց փախատական գնացեալ յատար երկիր վարէին: Եթ բազմաց առ ոչինչ համարեալ զիրամանն զտեղի կարան և անշարժ մնացին: Եթ բազումք հաւանեալ փառասիրութեամբ հաղորդեալ միաւորեցան արինաւքը»<sup>26</sup>:

Իր նախատակին հասնելու համար, ի հակադրություն Պարսկահայքում գտնվող Հայոց կաթողիկոսության, Մորիկ կայսրը մի հակաթոռ կաթողիկոսություն է հաստատում Ավանում կաթողիկոս Հատեցնելով «ուն երկարնակ»<sup>27</sup> Հովհան Բագարանցուն, որը «ընդ հոս հաղորդեալ միաւորեցա, բայց Մովսես ամենեան ոչ լինէի ի հոսա հուաց»<sup>28</sup>:

Ավանի հակաթոռ կաթողիկոսությունը վերանում է նոյն Հովհանի մահով իսկ, որը 608 թ. գերի է տարիում Պարսկաստան, որտեղ և մահանում է աքտորի մեջ 612 թվականին<sup>29</sup>:

Սյս շրջանի՝ Հայ Եկեղեցուն քաղկեդոնական դարձելու Բյուզանդիայի ձգությունների վկայությունն է նաև բյուզանդական Հայաստանի զորավար Սորմենոս ստրատելատի նամակը Պարսկահայքի կարևոր մի անձնավորութաւը<sup>30</sup>, որով մեղադրում է Դվինում հատած կաթողիկոսական տեղապահ Վրթանես Քերթողին, որը համառում էր ընդունել Քաղկեդոնի ժողովը: Պատասխան նամակում<sup>31</sup> կրկին մերժվում է Քաղկեդոնի ժողովը և Լուսնի տոմարը:

<sup>23</sup> Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիմեոն պատմութիւն նահանջին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 101:

<sup>24</sup> Սամուելի քահանայի Անեցոյ Հաւաքում ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 76: Միկրարայ Այրիվանեցոյ Պատմութիւն հայոց, ի լոյս ընծանաց Մկրտիչ Լիմե, Մովսես, 1860, էջ 49:

<sup>25</sup> Հ. Միքայէլ Վրդ. Զամշեանց, Պատմութիւն Հայոց, նու. Բ, Վենէտիկ 1785, էջ 531:

<sup>26</sup> Պատմութիւն Սերեսի, աշխ. Գ. Վ. Արգարյանի, Երևան 1979, էջ 91:

<sup>27</sup> Ուստանացն, էջ 63:

<sup>28</sup> Պատմութիւն Սերեսի, էջ 91:

<sup>29</sup> Անդ, էջ 112:

<sup>30</sup> Գիրը թղթոց, էջ 90—92:

<sup>31</sup> Գիրը թղթոց, էջ 93—98:

Գ. Հայ Եկեղեցու պատմության կարևոր փոլերից մեկն է Հ դարի սկզբին կատարված Հայ-Վրաց Եկեղեցիների բաժանումը: Բարեբախտաբար այս հարցի շորջ մեզ են հասել կարևոր աղբյուրներ, որոնք ճշգրտողնեն բացահայտում են այդ եղեցությունը: Հիմնական աղբյուրները երկուսն են.

ա. «Գիրք Թղթոց»-ում պահպանված է բաժանման առթիվ երկու կողմերի միջև փոխանակված գրեթե ողջ գրագրությունը՝ 26 վավերագիր, որոնք ամբողջական և ճշգրիտ պատկերացում են տախու կատարվածի մասին:

բ. Ուխտամելու եպիսկոպոս, հատուած երկրորդ, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 1—136: Ժ դարի պատմիչ Ուխտամելու իր «Պատմութիւն Հայոց»-ի երկրորդ մասը ամբողջությամբ նվիրել է այս խնդրին՝ օգտագործելով «Գիրք Թղթոց»-ը, այլ արժեքավոր և վավերական փաստաթղթեր (էջ 14), ինչպես նաև բանավոր ավանդությունը (էջ 14, 24, 115):

Հայ և Վրաց Եկեղեցիների բաժանումը տեղի է ունեցել Հայոց Սքրանամ Ա. (607—615) կաթողիկոսի և Վրաց Կյուրիին կաթողիկոսի օրով, 607/8 թ., թեև այդ բաժանումը սկսվել էր ավելի վաղ: Հայ իրականության մեջ բաժանման պատճառը համարվել է Վրաց Կյուրիին կաթողիկոսի անձնական նախաձեռնությունը և երա ծառված բաղկերնական լինելը:

Ըստ Ուխտամելու Կյուրիինը, ազգով վրացի, «ունէր զայրութիւն վասն Վրաց և Հայոց: Եւ երթեալ յերկիր Հռուց բնակեցաւ անդ ամս հնգետասան ի գաւառին, որ կոչի Կողոնիայ. և բնակի անդ ի մեծ քաղաքագեղն Նիկոպոլիս կոչեցեալ՝ յեզր գետոյն, որ կոչի Գայլ: ... Եւ ելեալ անտի գնաց ի Հայու առ Մովսէս Կաթողիկոսն Հայոց, և բնակի առ նա ի սուրբ Կաթողիկեին որ ի Դուին քաղաքի: ... Եւ կացեալ ի Ամին ամս հինգ. ապա ընդ այս ժամանակս մեռածի Կաթողիկոսն Վրաց: Եւ առաքեն իշխանք աշխարհին և նախարարաքն հանդերձ Եպիսկոպոսութ առ Մովսէս Կաթողիկոսն Հայոց՝ խնդրել իրեանց Առաջնորդ: Խսկ առ խորհուրդ արարեալ՝ զի ի տան իրմէ տացէ նոցա Առաջնորդ յաղագ հաւատարիմութեանն և միարանութեան հաւատոյ երկոցունց կրողմանցն, միամզամայն և վասն հաւատաւելոյ զուխտ առաջնոց հարցը՝ որք նախ քան զնա, ձեռնադր զԿիրոն՝ որպէս յառաջն ասացաք՝ իր համարելով զնա, իր թէ հաւատարիմ զնա վարկանելով և միամիտ ի դրան իրում, անգիտացեալ զծածուկ նորա սրտին: Առաք զնա ի ձեռն Պետրոսի Եպիսկոպոսի՝ որ էր ի Վրաց աշխարհեալ՝ և այլ ևս նախարարաց եկեղեց ընդ նմա մեծաւ պատուիք: Խսկ յորժամ ենաս Կիրոն ի վիճակ իրու իշխանութեանն և ի քաղաքն իրեանց՝ որ կոչլի Մցիւթազ, ժողովէ առ ինքն զԵպիսկոպոսուն հանդերձ լայօք աշխարհին և զիշխանն և զնամարարս, և նուածէ նորօք հանդերձ առհասարակ զամենայն աշխարհն ընդ իրով իշխանութեամբ: Խսկ ապա յորժամ տեսանէր զամենայն յաջողենոյ ըստ կամաց իրոց, այնուհետև խորհուրդ նենգութեան ի միտ արկեալ՝ ձեռնադրէ Եպիսկոպոս մի խուժիկ Նեստորական. որում անոն Կիս կոչիր, որ է խատութիւն: ... Եւ ազնամէ լծակից լեալ Կիրոնի անհաւատութեան ժրդուկոյն Քաղկեդոնի՝ ունելով ի ծածոկ լինքն ինքեան հաւանութեամբ զհաւատու նոցա, վաղորեան ներկեալ ի գոյն երկարնակացն, թէպէս և խուժկէն դարձեալ նորոգումն եղէ»<sup>32</sup>:

Խուժիկ նեստորականի Եպիսկոպոսական ձեռնադրությունը լուրջ անհաւատություն է պատճառում Հայոց Մովսէս կաթողիկոսին, որն էլ մի գրու-

<sup>32</sup> Ուխտամելու Կափիսկոպոս, Հատուած երկրորդ, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, էջ 4—5:

թյամբ նորդորում է Կյուրոնին՝ հաստատ մնալ այն հավատքի վրա, որ հաստատել են Հայ և Վրաց Եկեղեցիների ղեկավարները Կալվատ արքայից-արքայի ժամանակ (Դվինի Ա. ժողովում—Ե. թ. Պ), և պատվիրում. «Փախսի՛ր անշափ հեռաւորութեամբ ի պիտօ ժողվոյն Քաղկեդոնի և յանձնելունակ տոմարէն Լևոնի, և նզովեա զամենայն հերծուածողսն զառաջինսն և զմիշինսն և զվերջինսն, զոր սուրբ հարքն նզովեցին... զիտմիկն զայն հաղածեա՝ յերկու քումն և յաշխարհի»<sup>33</sup>: Պատախան թղթում Կյուրիինը վատահեցնում է Հայոց կաթողիկոսին, թե «Ես հանդերձ Եպիսկոպոսօր իմովք և լաօք աշխարհիս խորհուրդ արարի օրէնս, համարելով ո՞չ արգելով ի գալոյ զամանեսեան զայնոսիկ՝ որք ի զջումն զան և յապաշխարութիւն: Խսկ իբրև իմացաք զնորա չարութիւն, դարձեալ մերժեցաք ի մեջ և արգելաք զմարդիկ ո՞չ տպ ողջոյն նմա»<sup>34</sup> և որ անշարժ ունեն Կալվատ արքայից ժամանակ հաստատված միարանությունը, ուստու և հավատոքը: Հստ Ուխտանեսին, սակայն, այդ Խուժիկը «սկիզբն ենի Կյուրոնի կողունան»<sup>35</sup>, «եկեալ առ հայշխարհն Հոռոմոց՝ ի գաւառէն Կողունեայ»<sup>36</sup>, ապինքն այնտեղից, որտեղ ուսանել էր Կյուրիինը:

604 թ. վախճանվում է Հայոց Մովսէս կաթողիկոսը: Նոր կաթողիկոսի ընտրությունը հետաձգվում է: Հայրապետության գործերը վատահելում է Վրթանես Քերթողին: Ծուտով Վրաց Եկեղեցու թեմ Յուրտավի եպիսկոպոս Մովսէսը ահազանգում է Վրթանեսին, թե Վրաց կաթողիկոսը, ինչպես նաև բոլոր իշխանները մեծարում են Քաղկեդոնի ժողովը, և որ ինքը հաղածվել է իր թեմից ու ապաստանել Արագածոտնի Ս. Հովհաննեսի Մկրտիչ վանքում, քանի որ դեմ էր կանգնել Օրանց<sup>37</sup>:

Ուշագրավ է, որ Յուրտավը, թեպետև Վրաց Եկեղեցուն պատկանող, սակայն հայալեզու թեմ էր, որտեղ դեռևս Ե դարի կեսից սկսյալ, Ս. Ծուշանիկի կարգադրությամբ, Եկեղեցական պաշտամունքները կատարվում էր հայերեն<sup>38</sup>: Վրթանես Քերթողը մի գրությամբ սփոփում է Յուրտավի Եկեղեցու անդամներին և հորդորում մեռու մնան Նեաստրի հերձվածողությունից և Քաղկեդոնի ժողովից, «զոր Հայոց և Վրաց և Աղուանից միարան կանոն եպիսկոպոսաց և իշխանաց սուսկալ նզովիք անշխատակութեամբ էր ի բաց բարձեալ»<sup>39</sup>: Մի այլ գրությամբ դիմում է Պետրոս Եպիսկոպոսին, որ կարևոր դիրք ուներ Վրաց եպիսկոպոսների մեջ, և որը, Մովսէս կաթողիկոսի կարգադրությամբ տարել և Վրաց հայրապետական Աթոռին էր բազմեցրել Կյուրիինին: Այդ գրության մեջ Վրթանեսը ասում է. «Զի որպէս յառաջազոյն երանեկի հայրապետն մեր Մովսէս գրեաց յաշխարհի հեռանալ ի Խուժիկ շեպիսկոպոսէն խարեւութեանց. առուելագոյն ևս պարտիմք յանարէն ժողովոյ Քաղկեդոնվէն հայեցութեանցն. զի համասար հրեւութեան է»<sup>40</sup>: Այնուհետև թեկադրում է այնպես ամեն, որ Մովսէս եպիսկոպոսը վերադառնա իր թեմը: Եվ, Վերջապես, մի այլ գրությամբ դիմում է Վրաց Կյուրիին կաթողիկոսին և իշխաններին, որտեղ հիշեցնում է Խուժիկ եպիսկոպոսի դեպքը և

<sup>33</sup> Անդ, էջ 11:

<sup>34</sup> Անդ, էջ 13:

<sup>35</sup> Անդ, էջ 15:

<sup>36</sup> Անդ, էջ 5:

<sup>37</sup> Գիրք Թղթոց, էջ 110—111, Ուխտանես, Հատուած երկրորդ, էջ 25—26:

<sup>38</sup> Գիրք Թղթոց, էջ 130, Ուխտանես, Հատուած երկրորդ, էջ 32:

<sup>39</sup> Գիրք Թղթոց, էջ 136, Ուխտանես, Հատուած երկրորդ, էջ 44:

ասում. «Արդ՝ ոչ միայն ի Նեստորի խմորոյն ունիմք պատուեր ի հարցն և յողղափառ վարդապետացն մերոց հեռանալ և զգովել, այլ և զետիքոս և զմենոսու և զմեներոս և զմարկիվն, զմարկիոս և զայլ նմանին նոց, և առաելագոյն ևս զտիեզերակործան և զայնիշելի գողովն Քաղկեդովնի... Այժմ լուաք թէ դուք զանարէն ժողովոյն Քաղկեդովնի և զտումարն Լևոնի ուղղափառ համարիք և մեծարանաց արժանի»<sup>40</sup>:

Կյուրիկոնի և Պետրոս եպիսկոպոսի պատասխանները մեզ չեն հասել: Հիշատակության արժանի է այն համգամանքը, որ Վրթանես Քերթողը, իբրև հավատքի գեներերից մեկը, Մովսես եպիսկոպոսին է ուղարկել Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը<sup>41</sup>:

607 թ. Հայոց կաթողիկոս է ընտրվում Արքահամ Ա. Աղքարթամեցին (607—615): Ցուրտավի Մովսես եպիսկոպոսը դիմում է նորընտիր հայրապետին: Արքահամ կաթողիկոսը մի համակ է գրում Վրաց Կյուրիկոն կաթողիկոսին, որտեղ դժգոհություն է հայտնում, որ Ցուրտավի եպիսկոպոսը հաւածվել է, և որ Ցուրտավում հայերեն պաշտամունքի փոխարեն արդեն վրացերեն է կատարվում: Այսուհետև հիշեցնում է Կավաստ արքայի ժամանակ երկու Եկեղեցիների կողմից՝ Քաղկեդոնի ժողովի և Լևոնի տումարի մերժումը և եղրափակում. «Կամեցայ եպիսկոպոսուն արձակել առ սրբութիւն ձեր, և զիմուստ գրոց սրբոց, ծանուցանել զվաճամտութիւն ժողովոյն Քաղկեդովնի և զտումարին Լևոնի... Բայց ապա առժամ պատշաճ համարեցաք նախ ի ձեռն պատուական ազատ արանցող, թղթով ընդունել ի ձեռջ պատասխանի»<sup>42</sup>: Պատասխան թղթում Կյուրիկոնը բացատրում է, թե Ցուրտավի պաշտամունքը վրացերենի չի փոխվել, այլ կատարվում է երկու լեզուներով ել, որովհետև նոր եպիսկոպոսը «վրացի ուսումն գիտէ և հայ նոյնակա»<sup>43</sup>: Խսկ դավանանքի տեսակետից Կյուրիկոնի թղթում հստակ պատասխան չի տրվում, այլ միայն նշվում է, թե «զմաւատ զերուաղեմի ունիմք և կալցուր»<sup>44</sup>: Այդ իսկ պատճենով Արքահամ կաթողիկոսը երկրորդ թույլեն է գրում շեշտելով. «Մեր և այժմ ունիմք զիաւատն Երուաղեմի... Սյ ոչ եթէ զմանույութիւնն ունիմք զանիծեալ ժողովոյն Քաղկեդովնի և զտումարն Լևոնի, զոր երեսն բերեալ սերմանեաց Ցուրնաղիոս եպիսկոպոս անուանեալ յԱստուածակերտ քաղաքին. և զամենայն աստուածային և զառաքելական հաւատու և զկարգ ապականեաց և վեր ի վայր տապալեաց»<sup>45</sup>:

Այս անգամ Կյուրիկոնը մի խիստ և բացահայտ հարձակողական պատասխան է գրում՝ շեշտելով. «Հովմայ հայրապետն ի սրբոյն Պետրոսի աթոռն նստի, և Աղեքսանդրացին ի սրբոյ Մարկոսի անտարանչի, և Անտիոքացին՝ ի սրբոյն Ղուկասու անտարանչի և Կոստանդնուպալացին՝ ի սրբոյն Յովհաննու անտարանչի, և Երուաղեմացին՝ ի սրբոյն Յակովայ Եղբարին Տեառն: Արդ՝ զոր նոց հաւատն կալեալ է և մեզ տուեալ և մեր հարանցն, և մեր մինչև ցայծն պահեալ, այժմ զիա՞րդ թղթուցումք զայն և ձեզ հաւատացուք: Եւ այլ եպիսկոպոսունք ուղղափառք որոց համար չկայ, և թագաւորք և իշխանը և աշխարհի ամենայն ուղղափառք, զնոսս զամենե-

<sup>40</sup> Գիրք թղթոց, էջ 138, Ուխտանես, Հաստուած երկրորդ, էջ 42—43:

<sup>41</sup> Գիրք թղթոց, էջ 140:

<sup>42</sup> Գիրք թղթոց, էջ 165, Ուխտանես, Հաստուած երկրորդ, էջ 75:

<sup>43</sup> Գիրք թղթոց, էջ 166, Ուխտանես, Հաստուած երկրորդ, էջ 76:

<sup>44</sup> Գիրք թղթոց, էջ 167, Ուխտանես, Հաստուած երկրորդ, էջ 77:

<sup>45</sup> Գիրք թղթոց, էջ 176—177, Ուխտանես, Հաստուած երկրորդ, էջ 80:

սեան զիա՞րդ մարդու թողով, և ընդ ձեզ միայն միաբանել: Եթ կամ միանգամայն և և եպիսկոպոսունք են ի Վիրս, Մովսէս այդ ո՞ւստի գտաւ միայն ուսեալ և ուղղափառ և այլք ամենեքեան ներձուածող»<sup>46</sup>:

Ինչպես տեսնում ենք, Կյուրիինի այս թղթում նոյնպես թեև բացահայտ երևում է նրա դիրքը, սակայն ոչ մի ակնարկություն չկա Քաղկեդոնի ժողովի և Լուսնի տումարի մասին: Այդ ստիպում է Արքահամ կաթողիկոսին մի երրորդ նամակ գրել Վրաց կաթողիկոսին՝ ասելով. «Զի թէ զիայրենի հաւատն ունիք, մեր այլ խնդիր զի՞նց էր, և կամ բնաւ զաշխատութիւնն զայ զի՝ կամեաք տեսանել, այլ զի փոխեցաք յայնանել. վասն այնորիկ այս երրորդ թուղթ գրեցա ի մեջ առ ձեր սրբութիւնդ»<sup>47</sup>: Հայ Արքահամ կաթողիկոսի, «Ն Քաղկեդոնվանի ժողովնեալքը՝ հակառակ սուրբելոցն և սուրբ ժողովոյն, խոստվանեցին երկուս բնութիւնն ասելով միոյ Քրիստոսի, խարելով զարգացմանս, և փոխանակ Երրորդութեանն՝ չորրորդութիւնն քարոզեն. յաւելուն ներմարդութեան բնութիւնն և որդոց երկակաց, և այլ նոյնախիսի բարբաջն որ է ի սատանայի վարդապետութեանն: Նոյնակն և ի ջնշեալ տումարէն Լուսնայ այսպէս պատմէ վասն Քրիստոսի Աստուծոյ ասէ, Ազդէ կերպարան երկուցունց բնութեանցն ընդ ընկերին շարայարութեամբ, միովն գործել զատուածայինսն որ ինչ Աստուծոյ վայել է, իսկ միասովն զարդկայինսն՝ որ ինչ մարդոյ արժան է, և այլ ինչ բազումս այսպիսիս»<sup>48</sup>: Քաղկեդոնի ժողովի սիալները ներկայացնելուց հետո, ասում է. «Արդ՝ եթէ չէք փոխեալ ի հայրենի հաւատոյ, որպէս բազում գրեցեր առ մեզ, եկ զգովեան և դու զանիծեալ ժողովն Քաղկեդոնի և զայիդ տումարն Լուսնի, որպէս հախնին քո երանելին Գաբրիէլ կաթողիկոսն Վրաց նզովեաց ընդ երանելի հարսն մեր հանդերձ աթոռակցաք իրովք»<sup>49</sup>:

Արքահամ կաթողիկոսը նամակը եզրափակում է հետևյալ տողերով. «Արդ՝ ինձ այս անգամ յաղագ անիծեալ ժողովոյ և պիղծ տումարին՝ թէ որպէս ընդունիք, ճշմարտութեամբ և հաւաստի պատասխանի արարեք»<sup>50</sup>:

Պատասխան նամակում Կյուրիինը ներկայացնում է Քաղկեդոնի ժողովի պատությունը, հիշում, որ այն դատապարտել է Եվլիքեսին և Դիոսկորոսին, և երակացնում. «Այլ բան զայ ասելի հաւատու ամենենին ոչ է պարտ ի մեջ բերել, և կամ գրել, և կամ խաւել կամ բանիր և կամ ուսմամբ»<sup>51</sup>: Այնուհետև Վրաց կաթողիկոսը դիմում է Հայոց կաթողիկոսին. «Արդ զայ գրեցաք վասն սիրոյ ձերոյ, զի արդար և զանշմարիտ հաւատն պահիցէք և կեան ունիցիք ... Եթ դուք ճշմարտութեամբ հաւատացէք զարդար հաւատու զայ, և մի դեղնելով ան և անդր անկանցիցիք»<sup>52</sup>:

Արքահամ կաթողիկոսը, համոզվելով, որ իրավես Վրաց կաթողիկոսը իր եպիսկոպոսներով և երկրի իշխաններով հանդերձ ընդունել են բաղկեդոնական դավանանքը, մի շրջաբերականով շարադրում է Հայ Եկեղեցու դավանությունը և հրամայում. «Վասն որյ և զառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց, զոր ի վերայ Հռոմունի հաւտին, և կացցէ մինչև ցրում թէ ոչ դարձցին ի ճշմարիտն, մեք զնոյն ի վերայ Վրաց հրամայնցաք, ամենենիմք մի հաղորդել ընդ նոսա, մի՛ յաղաթս. և մի՛ ի կերակուրս, և մի՛ լըմպելիս,

<sup>46</sup> Գիրը թղթոց, էջ 179:

<sup>47</sup> Գիրը թղթոց, էջ 181:

<sup>48</sup> Գիրը թղթոց, էջ 182, Ուխտանէս, Հատուած երկրորդ, էջ 85:

<sup>49</sup> Գիրը թղթոց, էջ 184, Ուխտանէս, Հատուած երկրորդ, էջ 87:

<sup>50</sup> Գիրը թղթոց, էջ 188:

մի՞ ի բարեկամութիւն, մի՞ ի դաւեկութիւն... բայց միայն գմել ինչ, և կամ գմոյ տալ որպէս Հրէից»<sup>51</sup>:

Այս շրջաբերականով իսկ Հայ և Վրաց Եկեղեցիների բաժանումը դառնում է իրողություն: Մեզ այստեղ չի հետաքրքրում այն հարցը, թե Վրաց Եկեղեցում քաղկեդոնականությունը տարածվեց կամ վերածնվեց Կյուրիխն կաթողիկոսի օրոք, թե շատ առաջ, ասենք 519 թ., ինչպես ընդունում է պրոֆ. Վլ. Ֆիդայը<sup>52</sup> մեզ հետաքրքրողն այն է, որ Է դարի սկզբին Քաղկեդոնի ժողովը և Լոռնի տումարը վերջնականապես մերժվել էին Հայ Եկեղեցու կողմից:

Զպեսք է անտեսել, սակայն, այն հարցը, որ Մորիկ կայսեր քաղաքականության և Ավանի հակարտող կաթողիկոսության հետևանքով քաղկեդոնականությունը Զ դարի վերջին գգալի տարածում էր գտել բյուզանդական Հայաստանում, որն այն ժամանակ, մինչև 612 թ., կազմում էր Հայաստանի մեծ մասը:

Այս հանգամանքը լուրջ անհանգուտություններ էր պատճառել Հայոց Եկեղեցուն, այն աստիճան, որ Դվինի Գ ժողովը (Ա մաս, 604 թ.) ստիպված է լինում կանոններ հաստատել քաղկեդոնականությունը ընդունողների և նրանցից զղացողների մասին<sup>53</sup>: Խոկ Դվինի Գ ժողովի Բ մասում (607 թ.), երբ օրակարգի հարց էր Հայոց կաթողիկոսի ընտրությունը, Պարսկահայրի եպիսկոպոսները ձեռնարկ հավատու խոստվանության են տալիս Սմբատ Վրկանի մարզպանին, որով մերժում էին Քաղկեդոնի ժողովը և Լոռնի տումարը<sup>54</sup>: Նոյն ձեռնարկի տակ ստորագրում են նաև Սմբատ մարզպանը և այլ հշանավոր նախարարներ:

Կարևոր է նաև այն ձեռնարկը, որ 607 թ. տվել են բյուզանդական Հայաստանի եպիսկոպոսները, վանահայրերը և քահանաները Աքրամամ կաթողիկոսն և Պարսկահայրի եպիսկոպոսներին և նախարարներին, որով հզովում են «զամենայն հերձուածոյս, ու զԱրիոս, և զՄակենոն, և զՆեսոր, և զԵտիրոս, և զար ժողովն Քաղկեդոնի, և զպիլծ տումարն Լոռնի»<sup>55</sup>:

Զեռնարկից տեղեկանում ենք, որ այն ստորագրողները ընկել են քաղկեդոնականության մեջ՝ և այժմ, դարձի գալով, խնդրում են իրենց ընդունել Հայոց Եկեղեցու միաբանության մեջ, խոստվանելով. «Զապաշխարութիւն զոր տայք, յաւժարութեամբ ընդունիմք, և կամաւր կատարեմք, և ի հաղորդութեամբ նզովելոց ամենին հեռանամք»<sup>56</sup>:

Աքրամամ կաթողիկոսի շրջաբերականից տեղեկանում ենք, որ քաղկեդոնականությունը լավ տարածում էր գտել նաև Սղվանքում, այնպես որ Հայոց կաթողիկոսը, Վրաց Եկեղեցու նկատմամբ իր հրամանը տպուց նետու ավելացնում է. «Նոյն հրաման և վասն Աղուանին անշարժ կացցէ, զի պատկառեալ դարձին ի թիր ճանապարհնեն»<sup>57</sup>:

Դ. Քաղկեդոնի նկատմամբ Հայ Եկեղեցու դիրքորոշման աղբյուրներից են նաև Եզր կաթողիկոսի (630—641) հրամանով գրված Մաթուսաղա եպիս-

<sup>51</sup> Գիրք թղթոց, էջ 194, Ուխտանէս, Հասուած երկրորդ, էջ 136:

<sup>52</sup> Տե՛ս Ի. Ֆիդա, Վրաց ավտոկիֆայ Եկեղեցին, Աթենք, 1980, էջ 12, ձ. 3 (Խումարէն):

<sup>53</sup> Տե՛ս Գիրք թղթոց, էջ 146—148:

<sup>54</sup> Գիրք թղթոց, էջ 149—150, Ուխտանէս, Հասուած երկրորդ, էջ 57—58:

<sup>55</sup> Գիրք թղթոց, էջ 152, Ուխտանէս, Հասուած երկրորդ, էջ 64:

<sup>56</sup> Գիրք թղթոց, էջ 152, Ուխտանէս, Հասուած երկրորդ, էջ 64:

<sup>57</sup> Գիրք թղթոց, էջ 194:

կոպու Սյունեցու թուղթը՝ ուղղված Հերակլ կայսեր<sup>58</sup>: Որքոյնից հետո թղթի հնդինակը ակնարկում է, թէ Հերակլ կայսրը մի «Գիր հաստոյ խոստվանոթեան» է ուղարկել Հայ Եկեղեցու դեկապարոյշանը, որը քննելով՝ մեր առաջնորդերը հաստատել են, որ այն իր հիմնական կառուցվածքով ուղղափառ և ընդունելի է, բացի այն կարևոր կետից, որ երեք տիեզերական ժողովների կողքին դրել են նաև Քաղկեդոնի ժողովը<sup>59</sup>: Որ փկապես Հերակլ կայսրը մի «հավատքի խոստվանոթյուն» է ուղարկել Հայոց, հաստատվում է նաև ժամանակակից պատմիչ Սերեսի հետևյալ վկայությամբ. «Կայունիկուն... խնդրեաց ձեռնարկ հաստոյ ի թագաւորէն: Եւ վաղվաղակի առաքեցաւ նաև տումար գրեալ ձեռամբ թագաւորին, և նորմեալ զնեստոր և զամենայն հերձուածողս, բայց ոչ էր նորմեալ զժողովն Քաղկեդոնի»<sup>60</sup>:

Հատկանշական է, որ ինչպես Սերեսի այս հատվածում, այնպէս էլ Մաթուարայի թղթում մինչուն կերպով է խոսվում և գնահատվում Հերակլ կայսեր կողմից ուղարկված թուղթը. այն հիմնականում ուղղափառ է և ընդունելի, եթէ դուրս հանվի Քաղկեդոնի ժողովի հիշատակությունը:

Հայ Եկեղեցու պատմության հետաքրքաշարժ հարցերից մեկն է Եզր կաթողիկոսի քաղկեդոնականություն ընդունելու հարցը: Դեռ միշնադարից ընդունված է այն տեսակետը<sup>61</sup>, թե Եզր կաթողիկոսը դպավանանել է Հայ Եկեղեցու սրբություններին, 633 թ. Կարինում Հերակլ կայսեր հետ հանդիպման ժամանակ ընդունել է քաղկեդոնականություն՝ փոխարենը վարձահասուց ստանալով Կողըի աղահանքը: Եվ որ այդ օրվանից շորջ մեկ դար Հայ Եկեղեցին գտնվել է քաղկեդոնական քոյի տակ և միայն Ս. Հովհանն Օձնեցու գումարած Մանազկերտի 726 թ. ժողովում է, որ վերջնականապես Հայ Եկեղեցին վերագտավ իր նախկին դպավանանքը:

Հարցի հանգամանալից և բազմակրողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բուն Եկեղեցունը այդպես չի եղել: Պատմական փաստ է, որ Եզր կաթողիկոսը 633 թ. Կարինում հանդիպել է Հերակլ կայսեր հետ, Արա հետ ունեցել դպավարահանական վիճարանություն, որտեղ երկու կողմերը համաձայնության են եղել և միասին հաղորդվել<sup>62</sup>: Սակայն ի՞նչ էր ուսուցանում այդ համաձայնեցված դպավանանքը: Սա է հիմնական հարցը և սա պետք է նախ ճշտել:

Մի պահ թղթնենք Հայաստանը և Հայոց Եկեղեցին և անցնենք Բյուզանդական աշխարհը: Ե դարի սկզբին բյուզանդա-պարսկական պատերազմի ժամանակ Հերակլ կայսրին հաջողվում է ծնկի բերել Պարսկաստանին և Վերստին կայսրությանը միացնել իր նախկին արևելյան սահմանները՝ Սիրիան, Պաղեստինը և այլն, որտեղ մեծ տարածում ուներ միաբնակությունը: Քաղաքական հակատառությունը կայսրը սկսում է սիրաշահել միաբնակներին, որպեսզի Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, ինչպես նաև՝ Հայք, ավելի սերտորեն կապվեն Բյուզանդիային: Այսպէս, Կ. Պոլսի պատրիարք է ընտրվում միաբնակ Հակոբիկյան Սերգիոսը, որը, ցամկանալով մի կողմ

<sup>58</sup> Ստեփանոսի Օքելեան արքախևոպոսի Սիմեոն Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 119—130:

<sup>59</sup> Անդ, էջ 120, 130:

<sup>60</sup> Պատմութիւն Սերեսի, էջ 132:

<sup>61</sup> Տե՛ս Գր. Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս 1729, էջ 544—545:

<sup>62</sup> Պատմութիւն Սերեսի, էջ 132, Ստեփանոսի Օքելեան արքախևոպոսի Սիմեոն Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 112—118:

դնել Քաղկեդոնի դավանանքը, առաջ է քաշում «մի կամք և մի ներգործություն» պարտապետությունը: 629 թ. Հերակլը ասորի միաբնակների պատրիարք Աթանասին նշանակեց Անտիոքի պատրիարք՝ ցանկանալով այդպիսով ասորիներին միացնել Անտիոքի հետ: 630 թ. Ալեքսանդրիայի պատրիարք նշանակվեց թունդ հակաքաղկեդոնական Կյուրոսը, որը սիրով է ընդունվում Ալեքսանդրիայում, խաղաղեցնում տեղի ժողովրդին և 633 թ. Կ. Պոլսի պատրիարքին գրած համակում ասում է, որ, միմնվելով կայսեր և պատրիարքի տված դավանության վրա, հաշտեցրել է տարբեր կողմերին և հաստատել հետևյալ դավանանքը. Ով չի խստովանում «Երկու բնութեանց մի Քրիստոս, մի որդի, մի մարտնացեալ բնութիւն Բանին Աստուծոյ, որպէս Ս. Կիրեն ուսոյց, անփոփոխելի և անալլազելի»<sup>63</sup>, թող նզովալ լինի: Կայսրի և Սերգիոս պատրիարքի՝ Կյուրոսին ուղած համակում<sup>63</sup> չեն նիշվում ո՞չ Լուսին տոմարը և ո՞չ Էլ Քաղկեդոնի ժողովը: Հերակլ կայսեր և Սերգիոս պատրիարքի «մի կամք, մի ներգործություն» վարդապետությունը որդեգրում է հան Հոռոմի Հորոնիսու պատը, իսկ մյուս կողմից այն բուռ ընդդիմության է հանդիպում երկարնակ քաղկեդոնականների կողմից, ինչպես, օրինակ, Մաքսիմոս Խոստովանողի, Երուաղեմի Սուփրանոս պատրիարքի և ուրիշների կողմից:

Արդ, վերադառնակը մեր խնդրին. երբ Հերակլը ձեռնարկում է հան Հայ Եկեղեցու հետ միության գործին (ոչ թե Հայ Եկեղեցին Հոյն Եկեղեցու մեջ ձուլու համար, ինչպես այդ ընդունված է ասել, այլ Հայաստանը ավելի սերտորեն բյուզանդիային կապելու և Պարսկաստանից կտրելու համար), Եզր կաթողիկոսը նրանից պահանջում է մի դավանագիր, որը և Մաքուսանան և ուրիշ գիտուններ, բնելելով, հանգում են այն եղրակացորդյան, թե այն իր հիմնական կառուցվածքով ուղափառ է և ընդունելի, միայն թե չի ճպված Քաղկեդոնի ժողովը: Մաքուսաղայի գրած թուղթը Հերակլ կայսեր հանձնելուց հետո, Կարինում կայսը և Սերգիոս պատրիարքը մի այլ խոստվանագիր են հանձնում Հայ Եկեղեցու պատգամավորությանը, որոնք և ոչի ուշով բնելելով, տեսում են, որ այնուելու ոչ մի վտանգավոր բան չկա, և համաձայն է Հայ Եկեղեցու վարդապետությանը: Որից հետո և համաձայնության են գալիս և հաղորդվում:

Արդ, Կարինի ժողովին մասնակցող մեր Եկեղեցու Երկայացուցիչները չկարողացան Քաղկեդոնի վարդապետությունը զանազան Հայ Եկեղեցու դավանությունից: Խնդիրը մեզ համար միանգամայն պարզ է. Հերակլ կայսը և Սերգիոս պատրիարքը Եզր կաթողիկոսին են Երկայացրել անպիսի մի գրություն, որպիսին որ ուղարկել էին Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքին, որը չէր հիշում Լուսին տոմարը, Քաղկեդոնի ժողովը և թեպետև քացարձակ մի բնություն չէր քարոզում, սակայն ուսուցանում էր մի կամք, մի ներգործություն, որով և անողակիրեն ջատագովում էր մի բնության վարդապետությունը:

Արդ, այսպիսի մի գրության հետ համաձայնության գալը, մասնական որ կայսը պատասխան էր Մորիկ կայսեր օրինակով մի հակաթոռ կաթողիկոսություն ատեղծել Հայքի բյուզանդական բաժնում, հշանակում էր Հայոց սրբությունների դավանանում և քաղկեդոնականության ընդունում:

Անհրաժեշտ է անդրադառնակ հան այն խնդրին, իբր թե Հայ Եկեղեցին Եզրից հետո 100 տարի գտնվում էր բյուզանդիայի Եկեղեցու և քաղկե-


դունականության ազդեցության տակ: Սա նույնպես պատմական սիսալ է: Դեռևս երկու տասնամյակ շիբ ամեն Կարինի ժողովից, երբ Կոստանդինոս կայսրը կրկին ձեռնարկում է Հայոց և Բյուզանդիայի Եկեղեցիների միության գործին: Եթե 100 տարի Հայ Եկեղեցին քաղկեդոնական էր, ինչո՞ւ կայսրը ձեռնարկեց այդ գործին: Բացի այդ, ժամանակակից Սեբեոսի պատմության մեջ պահպանված է կայսեր նամակի պատասխան դավանական գրությունը<sup>64</sup> Ներսես Գ կաթողիկոսի (641—661) և հայ եպիսկոպոսաց կողմից, որ մի խիստ, հակաքաղկեդոնական գրություն է և ապացուց, որ Հայ Եկեղեցին քաղկեդոնական չի եղել երբեք:

Ունենք նաև մի այլ պատմական ապացուց. Ե դարի վերջին և Հ դարի սկզբին Աղվանքում սկսում է տարածվել քաղկեդոնականությունը: Նույնիսկ Աղվանից կաթողիկոս է դառնում Գարդմանի քաղկեդոնական Ներսես Եպիսկոպոսը: Տեղեկանալով այդ մասին, Հայոց Եղիա (703—717) կաթողիկոսը 703 թ. մեկնում է Աղվանք, ժողով գումարում, զահընկեց անում Ներսեսին և նրա փոխարեն կաթողիկոս ձեռնադրում Սիմոնին<sup>65</sup>: Սա ևս մի ապացուց է տիրող կարծիքի սխալականության:

<sup>64</sup> Պատմութին Սեբեոսի, էջ 148—161:

<sup>65</sup> Այս մասին հանգամանորեն տե՛ս Եզնիկ քին. Պետրոսյան, Աղվանից աշխարհի քաղկեդոնիկ կաթողիկոս Ներսես-Բակուրի գահընկեցության շուրջ, Էջմիածնին, 1985, № 7, էջ 20—24:





## ԱԲԷԼ ԱԲԵՂԱՅ

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՐԿԱԽԱԳՈՒՃԻՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿԻՒՆԻՑ ԴԻՏՈՒԱԾ

Ռո. Մարիա-Քրիստին Արատ, աստուածաբանութեան մագիստրոսի կոչում ստանալու համար, 1987-ին, լիշեալ համալսարանի կանոնագիտական ինստիտուտին, «Հայ Եկեղեցու ասրկաւագութիւները կանոնական տեսանկիւճի տակ» խորագրով հնտաքրքրաշարժ մի աշխատասիրութիւն ներկայացրեց: Սոյն աշխատասիրութիւնը ամբողջութեամբ հրատարակութեան արժանացաւ՝ 1987 թուականի «Հանդէս Ամսօրեալ» ուսումնաթերթի, թի 1—12, 153—189 էջերում:

Ուրիշ մի ներածական, բաժանուած հետեւեալ վերնագուերի տակ.

Դիրքորոշում՝ կնոջ քահանայական օծումի հանդէպ. 1. Արեւմտեան Եկեղեցում, 2 Արեւելեան (օրթոստքս) Եկեղեցիներում:

Հեղինակը, նախ Արեւմտեան և Արեւելեան Եկեղեցիներում, կնոջ քահանայ լինելու վերաբերեալ հարցի այժմէականութիւնը և նրա զարգացումն է նկարագրում, ապա այս առնչութեամբ՝ Անգլիքան, Լատին և Օրթոստքս Եկեղեցիների կեցուածքը՝ մեզ ծանօթ այն արդինքով, որ Անգլիքան Եկեղեցին իր ներքին զարգացումներին, և յատկապէս արտասահմանից, այսինքն՝ երբեմնի անգլիքական գաղութներում հիմնուած տեղական իր Եկեղեցիների կողմից գործադրուող ճշշումներին տեղի տալով, 1987-ի փետրուարին կայացած Lamberth-ի ժողովում, կանանց քահանայացումը ձայների մեծամասնութեամբ ընդունում է: Մինչդեռ Լատին և Օրթոստքս Եկեղեցիները, քահանայական կոչումի մասին միասնական որոշակի մի աւանդութիւն և հակացողութիւն ունենալով՝ մերժում են, այդ միայն այլ մարդուն վերապահելով:

### ԿԱՆԱՅ ՍԱՐԿԱԽԱԳ ԶԵՇՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

Երբ կանանց քահանայացումը մերժելու հարցում, Լատին և Օրթոստքս Եկեղեցիները միասնում են, իրարից զգալիօրէն բաժանում են՝ կանանց սարկաւագ ճենադրելու առթիվ: Զնայած այն իրողութեան, որ Լատին Եկեղեցում սարկաւագութիւնների գողութեան մասին պատմական հատ ու կենտ վկայութիւններ կան, իսկ ներկայում, Լատին աստուածաբանների կեցուածքը

այս հարցի մկանամբ, նոյնիսկ՝ դրականից էլ առվի է, այնուամենայնի այդ տակախն տեսականից գործնականի չի անցել, և այս առութով, Կարողիկ Եկեղեցու կողմից ցարդ պաշտօնական թույառու մի որոշում չի ընդունուել:

Ի տարբերութիւն Կաթոլիկ Եկեղեցուն, օրթոդոքսների մօս անցեալուս զարգացել է սարկաւագութիւններ ձեռնադրելու Եկեղեցական հնաւորց մի աւանդութիւն, որ սակայն, անշափահան երեխաներ կամ մանուկներ մը կը բուտելու սվորութեան ընդհանրացումի, և չափահան երեխաների չափահան (չմը կը բուտուածների) մկրտութեան վճռական նուազումի պատճառով, փաստորէն սահմանափակում է սարկաւագութիւնների ծառայութեան կարեւրագոյն բնագաւառներէն մին: Ուստի, ծառայութեան բնագաւառի սահմանափակումով, Եկեղեցու հետզհետէ վերանում է նաև սարկաւագութիւններ ձեռնադրելու կարիքը:

Խողով օծելու սվորութիւնը Արեւելքի կամ հրեական շրջապատի մէջ նոյնքան հիմ է, որքան մինչ ջրով մկրտելու կամ լուսայու արարողութիւնն է: Սուանց հրա կրօնագիտական և պատմական մանրամասնութիւնների մէջ մտնելու, ասեմ, որ հրեական միջավայրից ծննդեղ առնող քրիստոնէութիւնը, Հիմ Կոտակարանի թագաւորների, և ի մասնաւորի՝ մարգարէների օծումին տրուած կրօնական ընլոյթ իր նախական նորակազմ Եկեղեցուս որդեգրել և մկրտութեան արարողութեան միջանելով ընդհանրացրել է: Ի տարբերութիւն Հիմ Կոտակարանի, քրիստոնէական մկրտութիւնը մէղքերից մաքրուելու ջրի սուս մի լուսցում չեղ, այլ այդ նախակարասկանի վկայութեան համաձայն, առաջին հերթին՝ մի մկրտութիւն էր «Ը Հոգին Սուրբ» (Մտք. Գ, 11), որ դրոշմի խորհուրդով երաշտուայսուելու: Մկրտութիւնը, դէսի քրիստոնէութիւն մի մուտք կամ Քրիստոնէաց լինելու արարողութիւն է: Անտարանի առակների համեմատական պատկերով՝ մի ուրախութիւն է, որին մասնակից են երկինքն ու երկիրը, երեշտակներ և մարդիկ՝ քրիստոնէական ամբողջ համայնքը: Չորի ընկլիմումով եւ ջրից դուրս հանելու գործողութեամբ, Քրիստոսի Մահուան և Յարութեան խորհուրդի մէջ մկրտուղը, Սր. Հոգու բաշխած աստուածային շնորհքներով է «կնքում», որ իոնի օծումին կամ դրոշմի խորհուրդով է իրականանում: Սակայն նախական Եկեղեցու դրոշմում էին ոչ միայն ճակատն ու մարմնի որոշ մասերը, այլ օծում էին մկրտուղի ամբողջ մարմնը: Ծիշու պատեղ է, որ սարկաւագութիւնների ներկայութիւնը անհրաժեշտ էր դառնում, եթի մկրտուղը՝ չափահան մի կիմ էր լինում: Քահանան կամ եսահկոպուս, նորադարձ կնոջ ջրի մկրտութեան արարողութիւնն էր միայն կատարում, մինչդեռ սարկաւագութիւն՝ առասորդն հրա ամբողջ մարմնն էր օծում: Հեղինակի աշխատասիրութեան երկրորդ մասը՝ պատմական է:

Ամբողջական մի պատկերացում կազմելու և Հայոց մէջ հող գուած կանաց սարկաւագութիւնը իր Եկեղեցա-պատմական հիմքերի վրայ ըմբռնելու միտումով, օգտակար ենք համարում պատմական մասը հանգամանօրէն ներկայացնել:

### ՎԱՅԻՆԻԹԻՒՆՆԵՐ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Կանաց սարկաւագութեան աստիճան շնորհելու իմաստով՝ անտարական կարեւոր վկայութիւններ են համարում Հոռմ. ԺԶ, 1—2. Ա. Տիմ. Գ, 11 և Ա. Տիմ. Ե, 3—16 տեղիքները:

Հոռմայեցիմերին ողղուած թթուում, Պօղոս Սուաքեալը Փիբէ-ին Diakonos անոնն է տալիս. «յանձն առնեմ ձեզ զՓիբէ զբոյ մեր, որ է ՍՊԱՍՍԻՈՐ=Diakonos եկեղեցուց Կենքրացուց»: Այս միտի շորջ աստուածաբանները հանդէս են գալիս թեր ու դէմ կարծիքներով: Ունանք, Սուաքեալի տուած Diakonos անոնի մէջ, եկեղեցական կոչում վերաբերեալ մասնաւոր իմաստ չեն գտնում, առարկելով, որ նախնական Եկեղեցում, կոչումի գաղափարը տակալին անորոշ էր և Diakonos կամ Diakonia բառերը, որոշակի ծառայութիւններ կամ եկեղեցական կոչում բնորոշող իրայատկութիւն չունեին: Խակ ուրիշներ, նիմնուելով Փիլիպպեցուց թղթի Ա. գլխի 1. համարի վրայ, որտեղ Սուաքեալը տեղի բոլոր քրիստոնեանների և եպիսկոպոսների շարքին, նաև սարկաւագներին է ողղուած, եզրակացնում են, որ արդէն առաքելական վաղ եկեղեցում, Diakonos բառը եկեղեցական կոչումի կազմաւորուած լրստակ իմաստը արտայայտում էր: Սրանից բացի, բարի Diakonissa=սարկաւագուի իգական ձեւը ծանօթ չէ Սուաքեալին, նետեաբար անհաւանական չէ, որ բարի հենց արական կիրառութեամբ, սարկաւագուիններ եւ յիշուած լինեն:

Ա. Տիմ. Գ, 11 համարն է՝ «Նոյնպէս և կանայք նոցա պարկեցտք, մի շարախօսք, մեզք՝ հաւատարիմք յամննայնի», ենթադրուում է, որ Պօղոս Սուաքեալի կողմից սարկաւագուիններին ողղուած մի յորդոր է, քանի որ այդ մէջքերութիւնը՝ սարկաւագներին վերաբերող խրատների մի ամբողջական շարքում է հանդէս գալիս: Այս առումով, մեկնիշների ընդհանուր եզրակացութիւնը այն է, որ վերոյիշեալ հատուածը ողղուած է սարկաւագուիններին, որոնք սակայն, նետագայի հասկացողութեամբ՝ տակալին եկեղեցական որոշակի մի կարգ չունեին:

Սարկաւագուինների մասին կատարուած նոր Կտուկարաննամ երրորդ յիշատակութիւնը՝ Ա. Տիմ. Ե, 3—16 համարներն են: Այստեղ խօսքը՝ այրիութեան կարգի և նրա պարտականութիւնների մասին է: Սուաքեալը յորդորում է այրիացած երիտասարդ կիններից հրաժարուել, «զի յորժամ խայտան զՔրիստոսի, ամուսնանալ կամին» (11): Նա թեկադրում է, Եկեղեցում այնպիսի այրի կանայք ընդունել, «որ ճշմարտի այրի իցէ, և մենացեալ յուսացեալ լԱստուած, և կամինալ յաղօթս և ի խնդրուած զցայ և զցերեկ... ԱՅՐԻ ԸՆԴ ԱՅՐԻ ԱՆՈՒԱՆԵՍՑԻ, որ չիցէ պակաս ի վարտունամենից, միոյ առն կին լեալ, և ի գործս բարիս վկայեալ» (5—10): Ահաւասիկ, մենց այս արտապատութիւնը «Այրի՝ ընդ այրիս անուանեսցի», ազատ թարգմանութեամբ՝ «Այրինների թում կը համարոի այն այրին» կամ «Այրինների կարգում թող նրանք ընդունեան», վկայութիւն է տալիս այն մասին, որ նախնական Եկեղեցում նման մի «կարգ» գոյութիւն ունեցել է:

Արեւելեան Եկեղեցու ամբողջ աւանդութիւնը, և նրա փայլուն ներկայացուցիններից, լատկապէս՝ Որոգիննես Աղեքսանդրացի, Յովհան Ռոկերնաս և Կղեմէս Աղեքսանդրացի հայրապետները, նոր Կտուկարանի վերջեալ այս երեք տեղիքների մէջ, կանացի սարկաւագութեան ծագումն են տեսնում:

#### ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԴԱՐԵՐԻՑ

Քրիստոնէական առաջին երեք դարերից մեզ չի հասել մի գործ, որտեղ կանացի սարկաւագութեան մասին ողղակի յիշատակութիւններ լինեն: Այս

ժամանակաշրջանից, հեթանոս թէ քրիստոնեաց հեղինակների կողմից կատարուած, միայն անողողակի վկայութիւններ կան, որոնք Եկեղեցու սարկաւութիւնների գոյութեան մասին, այդ, չուզու են, բայց նրանց եկեղեցական կարգը չեն Ակարագրում: Քիթանիոյ կառավարիչ՝ Պիլիստու Կրտսերը, շուրջ 112-ին, Տրայանոս կայսեր ողողուած իր նամակում տեղեկացնում է, որ նա անհրաժեշտ է Ակատել, քրիստոնեաների մօս «ծառայ» = «ministrae» = «diakonos» կոչուող երկու սորկութիւնների, նրանց դաւանած հաւատքի ճշմարտութեան մասին շարշահանքով հարցաքննելու:

Չնայած Պիլիստու Կրտսերի սոյն տեղեկագրութեան և Ա. Տիմ. Գ, 11 համարի միջեւ որոշակի մի կապ ստեղծում է, այնուամենապես Եկեղեցու սարկաւութիւնների որոյն մի պաշտօն որոշել հնարաւոր չի լինում:

Իգբաւախոս Անտիոքացին (մահացած 110-ին) Եկեղեցու ծառայող այրիների մասին խօսում է, բայց նրանք կուսանեներ լինելով, տարրերում են այն այրիներից, որոնք Ա. Տիմ. Ե-րդ գլուխու էին Ակարագրուում:

Պողիկարպու Զմիւննացին, որ Խճնաւոխոս Անտիոքացու ժամանակակիցն է, այրիների պարտաւորութիւնների մասին խօսելով ասում է, թէ նրանք քրիստոնեավայել կեանքով ու աղօթքով այսոք է ապրեն, շարագրութիւններից, ուրացումներից և սուս վկայութիւններից հեռու մնան, որովհետև նրանք «Խորան Սասունոյ» են:

Վերոյիշեալ երկու պարագաներում էլ, Եկեղեցու սարկաւութիւնների պաշտօնի մասին յատակ մի ըմբռնում չի ստեղծում:

Տերտուլիանոսի հաղորդած տեղեկութիւնների համաձայն, այրիները պատկանում են Եկեղեցականների դասին, սակայն օժտուած չեն մասնաւոր մի պաշտօնով, և քարոզելու իրաւունք չունեն:

Հոռոմի Հիպառոլիտ եպիսկոպոսը, որ «Traditio Apostolica» կամ «Առաքելական Աւանդութիւն» գործում, այրիներին ու կուսանեներին իրարից նրանով է տարրելում, որ առաջինները չեն ձեռնադրուում: Այսօրուա իմաստով սարկաւութիւններ՝ նա չի ճանաչում:

Կումեւ Աղեքանդրացու (150—215) և Որոգիմէսին (185—215) էլ քարոզելու իրաւունքից գորկ, բայց Եկեղեցականների դասին պատկանող այրիներ ծանօթ են: Այս երկու հեղինակների մօս նաև սարկաւութիւններն են լիշտում, սակայն ինչպէս պարագան 2-րդ և 3-րդ դարերի միևնու թուրք հեղինակների մօս էր, նրանք ես՝ կամանց վարդապետական և ծիսական իշխանութիւններ շնորհել մերժում են: Այս ժամանակաշրջանում, թէ՛ այրիներին, և թէ՛ սարկաւութիւններին, Եկեղեցու Հայրերի կողմից, աւելի ճրգուղական ցուցմունքներ են տրում, քան համայնքից ներս՝ որեւէ Եկեղեցական իշխանութիւն:

ՍԱՐԿԱՆԱԳՈՒՀԻՒՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ (3—6-րդ դդ.)  
ՍԱՈՐԱԿԱՆ DIDASKALIA-Ն ԿԱՄ «ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԵԼՈՅ»Ը

Կնոջ սարկաւութեան մասին յատակ վկայութիւններ, մեզ միայն 3-րդ դարից յետոյ են հասնում, այդ էլ՝ ասորական շրջապատից: Այս առումով, կարեւրագոյն աղբիւր է հանդիսանում ասորական «Վարդապետութիւն Առաքելոց»-ը, խմբագրուած 3-րդ դարի սկիզբներին: Այստեղ, այրիներն ու սարկաւութիւնները իրարից յատակօրէն տարրերում են, և իրաքանչիրը՝ հանգամանօրէն Ակարագրուում:

Սյրի՛ համայնքում մի տեսակ աշխարհական ճգնաւոր է: Նրան ծխական արարողութիւններ կատարել կամ բարողել արգելում է: Սյրի կնոջ հիմնական պարտականութիւնը՝ համայնքի համար աղօթելու և հիմնդնելու խնամելու մէջ է կայանում: Նա կարող է նաև «ձեռնադրութիւններ» կատարել, որը հասկանալիօրէն եկեղեցական իշխանութիւն փոխանցելու հանգամանք չունի:

Վարդապետութիւն Առաքելոցի 12-րդ և 13-րդ գլուխներում, այդիների կողքին, առաջին անգամ, յիշում են նաև՝ սարկաւագութիւնները: Նրանց պարտականութիւնը աւետարանել և մկրտութեան ժամանակ օգտակար հանդիսանալն է այնուեղ, որտեղ այր սարկաւագի գործը սահմանափակում է. «Տներ կան, —սառու է Վարդապետութիւն Առաքելոցը, —որտեղ ներթանուններից զգուշանալով, կանաց մօս չեն կարող մի այր սարկաւագ ուղարկել»: Սարկաւագութիւնը հիմնական պաշտօնը, ինչպէս վերեւում ասուեց, կին մկրտութեանը, չըի մէջ մնտելուց առաջ, իդով օծելու մէջ էր կայանում, իսկ յաւարտ մկրտութեան, քահանան կամ եպիսկոպոսը կին մկրտուածի միայն նակատն էր օծում: Այնուհետեւ, նրա հոգեւոր դաստիարակութեամբ զքաղ-նելու պարտականութիւնը, վերասին՝ սարկաւագութիւն էր ստանձնում: Եթէ եպիսկոպոսը Աստծոն, իսկ քահանան Քրիստոսին է ներկայացնում, որեմն՝ սարկաւագութիւն էլ իր կոչումով Սուրբ Հոգու ներկայութիւնն է խորհրդանշում, որի համար էլ պէտք է նրան ըստ արժանույն յարգել:

#### ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ (4-րդ դար)

Առաքելական Կանոնադրութիւնը նմանապէս ասորական միջավայրի արդինք է, որ հաւանաբար 4-րդ դարում է իմբրագուած: Այսուղ, կանաց սարկաւագութիւնը կենդրնական տեղ է գրաւում, որովհետև այրիտուան աստիճանը արդէն հետզիւտէ անհնատանում էր: Սարկաւագութիւն կարող է մի այրի կին կամ կուսան լինել, որ ենթարկում է այր սարկաւագի եկեղեցական իրաւասութեանը: Ծիշ է, որ սարկաւագութիւն Սուրբ Հոգու ներկայութիւնն էր խորհրդանշում և համապատասխան ձեռով՝ յարգում, այնուամենայնի, «այնպէս ինչպէս Սուրբ Հոգին առանց Քրիստոսի տօնորհնութեան չէր գործում», նոյնպէս էլ առանց սարկաւագի ցուցմունքներին, սարկաւագութիւն համայնքում չի գործում: Հաղորդութեան ժամանակ նա տղամարդկանց շարքին չի կանգնում, սակայն այրի կանաց և կուսանների մէջ նա առաջին տեղն է գրաւում: Նրա մօս վճռականը, որի շնորհի նա հոգեւորականների դասին անդամ էր դասնում, բոլոր եկեղեցականների ներկայութեան, եպիսկոպոսից ստացած օծումն է: Այսուղ, էլ, նրա հիմնական պաշտօնը՝ մկրտութեան ժամանակ օգտակար հանդիսանալն է, բայց հոգեւոր խնամատարութեան կամ բարոզչութեան իրաւոնք նրան չի տրում: Սարկաւագութիւն չի կարող եկեղեցում օրհնութիւն տալ կամ այնպիսի արարողութիւններ կատարել, որոնք այր սարկաւագի կամ քահանապի իրաւասութիւն են համարում: Արտածխական պարտականութիւնների շարքին, սարկաւագութիւն եպիսկոպոսի յանձնարարութեամբ կարող է նրա պատգամը այլ համայնքներին տանել, ինչպէս նաև տունալ համայնքի կանուց և եկեղեցական բարձրագոյն իշխանութեան միջեւ կապ ստեղծել: Մահացած կանաց մարմինը լուալու պարտականութիւնն էլ կանաց սարկաւագութեան կարեւորագոյն պաշտօններից մէկն էր համարում:

Տեսնում ենք, որ ասորական միջավայրում խմբագրուած Առաքելական կանոններում, մի կողմից, կանանց սարկաւագութիւնը՝ օծումով ուրոյն մի նկարագիր է ստանում, միևն կողմից սակայն, քարոզական կամ խորանի վրայ սպասարկելու որեւէ իրաւասութիւն նրան առաջարկութիւն խստի արգիլում է:

### ԱԻԵՏԱՐԱՆ ՑԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ (5-րդ դար)

Սոյն ստեղծագործութիւնը, միաների նման, միեւնոյն միջավայրի ծընունի է: Այսուեղ, այրիներին աւելի մեծ տեղ է տրում, և նոյնիսկ՝ սարկաւագութիւնները ենթակայ են նրանց իրաւասութեան: «Այրիութեան» կոչումը շնորհուում է նրանց մի օրինութեամբ, որը կարելի չէ սակայն իբրև ծիսական օծում հասկանալ: Այրիութեան կարգի և տղամարդկանց վերապահուած սարկաւագութեան միջեւ որոշ զուգահեռներ կարելի է նշմարել, օրինակ՝ արարողութեան ընթացքին եպիսկոպոսի ձախ կողմում նշանակուած նրա կայուն տեղը, մինչդեռ սարկաւագը նրա աջ կողմում է կանգնում: Այս բոլորով հանդերձ, այրիների կեանքը ճգնաւրական իտէալին հուիրուած լինելով, նրանք զուրկ են «հովուական» պարտականութիւններից, որի համար էլ նրանց կողքին, չնայած ենթակայ նրանց իրաւասութեան, սարկաւագութիւններն են գործում:

### ԺՈՂՈՎԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ (4—6-րդ դդ.)

Սարկաւագութիւնների վերաբերեալ որոշումներ, արդէն Նիկույ ժողովի (325) 19-րդ կանոնում կան: Այսուեղ, խօսքը նրանց մասին է, որոնք զանազան խմբաւորումներից դէափ ընթանարական եկեղեցի են զախի: «Նրանք չեն ձեռնադրուում, ուստի՝ աշխարհականների դասին են պատկանում»: Թէողոսի կանոնախմբում (390) սարկաւագութի լինելու համար 60 տարիքն է սահմանում, իսկ Քաղկեդոնի ժողովի (451) 15-րդ կանոնում, այդ 40-ի է իշեցում: Ձեռնադրութիւնից յնոտոյ կատարուած ամուսնութեան պարագալին, սարկաւագութիւններին եկեղեցական հաղորդակցութիւնից (Exkommunikation) գրկելու ծանր պատիճ էր սպասում: 6-րդ դարում, Յուստինիանոս կայսեր յայտարարած օրէնքների մէջ, սարկաւագութի իբրև պետական պաշտօնեալ է ճանաչում: Կ. Պոլոյ «Հագիա Սոֆիա» տաճարում գործող 425 հոգեւրականների մէջ, 40 սարկաւագութիւններ են յիշում, որոնք կամ իբրև ընտանեկան յարկում, և կամ էլ միասնարար եկեղեցու մօս էին ապրում: Սարկաւագութիւնների դասի զարգացումը Եկեղեցում, Քալկեդոնի ժողովով հասնում է իր ապրում:

### ՍԱՐԿԱՆԱԳՈՒՀԻՒՆԵՐԸ ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԱԻՍՆԴՈՒԹԵԱՆ ՄԵԶ

Բիզանդական Եկեղեցում, 4-րդ դարից սկսեալ բազմաթիւ հանրածանօթ սարկաւագութիւնների անուններ են հանդէս գալիս, ինչպէս օրինակ՝ Յովհաննէս Ուկերերանի սերտ բարեկամութի՝ Ողիմպիաս սարկաւագութիւնն, Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նիւացու բոյն՝ Մագրինան, ինչպէս նաև նրա կինը՝ Թէոսուպիա սարկաւագութիւն և այլն: Այս շրջանում, սարկաւա-

գոհիները մեծա մասամբ հոգեւորականների ազգականներ էին. այս կամ այն քահանայի մայրը, բոյր կամ կինը: Տրութան ժողովից (692) վերջ որդունեց, որ քահանայի կինը նրա եպիսկոպոսացուից յետոյ, նրանից քահանուած է ապրելու:

Քիզանդական եկեղեցում, կանաց սարկաւագական ձեռնադրութիւն շնորհիելու աւանդութիւնը, շարունակում է կիրառուել մինչեւ 10—11-րդ դդ., որից յետոյ սկսում է հետօնելու տկարանալ:

### ՍԱՐԿԱՆԱԳՈՒՀԻՒՆԵՐԸ ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Արդյն վերեւում ասուեց, որ կանացի սարկաւագութիւնը, իբրև եկեղեցական կոչում, ասորական միջավայրի և եկեղեցական մշակոյթի արգասիքն է: Թէ՛ ասորի յակորիկեան, և թէ՛ նեստորական Եկեղեցիներում, այս աւանդութիւնը մինչեւ 11-րդ դար իր զարգացումն է ապրում: Երկու Եկեղեցիներում էլ սարկաւագուհին հանդէս է գալիս զանազան պարտականութիւններով ու պաշտօններով: Համեմատելով Եկեղեցու մէջ ներկայում կիրառուող սարկաւագութեան հետ, որոշ վերապահումներից բացի, տեսնում ենք, որ սարկաւագուհին ոչ միայն մասնաւոր ձեռնադրութիւն է ընդունում, այլ պատարագի ընթացքում խորան բարձրանալով վերաբերում է կատարում և աւետարան ընթերցում:

Նկատի ունենալով ցարդ կատարուած նկարագրութիւնները, եզրակացնում ենք, որ Եկեղեցու պատմութեան մէջ, 4—11-րդ դդ. ձգուող ժամանակահատուածը, կանացի սարկաւագութեան զարգացման դասական շրջանն է հանդիսանում, որից յետոյ, գրեթէ ամենուրեք այն սկսում է հետօնելու դաշտանալ: Այս իմաստով, միակ բացառութիւնը՝ Հայ Եկեղեցին է մնում:

### ՍԱՐԿԱՆԱԳՈՒՀԻՒՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Թէ՛ արեւմտեան, և թէ՛ արեւելեան Եկեղեցիներում, երբ 12—13-րդ դարերում կանացի սարկաւագութիւնը այլևս անհետանում էր, այդ զարթօնքը է ապրում Կիլիկան Հայաստանում: Միսիար Գոշ և Պողոս Տարօնեցի վարդապետները, կանաց սարկաւագութեան այդ վերածնունդը, Հայ Եկեղեցի մուտք գործող ժամանակի լատինական ազդեցութիւնից սկիզբ առած մի նորարարութիւն նկատելով՝ մերժում են: Թէ՛ կանաց սարկաւագութեան այս վերածնունդը Կիլիկիայում, լատինակերի միսիոնարական ազդեցութեան հետեւանք չէր կարող լինել, յատակ է, քանի որ այդ ժամանակաշրջանում, Արեւմուտքում հատուկենու մնացած սարկաւագուհիները լրիւ անհետացել էին:

Ուրեմն ինչո՞ւ մեր վարդապետների բացասական դիրքորոշումը այս շարժումի նկատմամբ:

Այս հիմքը ուսումնամիտող՝ Դր. Արսար, այդ միջնադարեան մեր վարդապետների կանաց հանդէպ ունեցած «թշնամական» ըմբռնումներին է մինրազրում, և այնքան ոչ միայն Եկեղեցական կամ ծիսական մարգերում, այլ նաև աշխարհական հարցերում: Օրինակ՝ Միսիար Գոշի «Դապրատանագիրք»-ում, կանաց արգիլում էր դաստական ատեաններոյն վկայութիւն տան, Կոխրճել խաղողը, որից պատարագի գինի էր պատրաստուելու, և այն:

Միջնադարեան հայ վարդապետների կանանց հանդէա ունեցած «քշնամական» մտածելակերպը, մեղինակը հիմնում է Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց»-ից մի մէջերումով, թէ՝ «Սյուն կատարեալ է, իսկ կին կէս» (Գր. Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 365):

Առ այս պէտք է հնտեւեալը ասել: Նախ վերոյիշեալ մէջբերութիւնը, իբրև հաստատում հախորդ Ակարագրութիւնների անտեղի է: Ծիշ է, որ ի թիւ միևնույն վարդապետների, Տաթևացին էլ տղամարդու համեմատությամբ, կնոքը ընկերային իրաւահասար դիրքերի վրայ չի դիտում, բայց այստեղ նրա առաջադրանքը ոչ թէ կանանց «համարժեքութեան» կամ «ազատագրութեան» վերաբերեալ հարցերով զբաղուելն է, այլ «Գիրք Հարցմանց»-ի Ե-րդ հատորի խորագրին համաձայն, մեկնարանելի՝ Հնգամատեանն ու Մովսիսական օրէնքները: Այս հատորի ամրող 45-րդ պրակը, սր. գրական լեզուամտածողութեան սահմաններում մտածուած, «Վասն զենման կենդանաց հարցում»-ին մի պատասխան է: Թէ կենդանին զենողը այր մարդ պէտք է լինի, ոչ թէ Տաթևացու, այլ «Մովսէսի» կողմից հրեանների համար սահմանուած օրէնք է: Իսկ եթէ սրա պատճառները սր. գրական լեզուամտածողութեան սահմաններում մեկնարանուեն, այդ ժամանակ նրա նման ասելու էինք՝ «նախ՝ զի այրն կատարեալ է, իսկ կին կէս, երկրորդ՝ արուն առնող է, իսկ կիցը կրող, երրորդ՝ զի յառնէ առա կինն, չորրորդ՝ զի այրն տայ զարինն, հինգերորդ՝ զի այրն է գլուխ» (Տես, նոյնը):

Ահաւասիկ, տեսնում ենք, որ այստեղ Հին և Նոր Կտակարանների հիմքի վրայ սեմական մտածելակերպն է հանդէս գալիս, որ քրիստոնէութեան համապարհով մուտք էր գործել Հայաստան և իրացուել՝ հայ որոշ վարդապետների կողմից: Բնական է, այլ կերպ չէր կարող լինել:

Երկրորդ՝ ինչքանով ճիշդ էր լինելու, արդի դիրքերից դատելով, ընկերային կեանքի զարգացման, մշակութային և կրօնա-քարոյական ըլքունումների հետ կապ ունեցող պատմական հարցեր, որպիսին կանանց Եկեղեցում տրուող պարտականութիւնների վերաբերեալ, միջնադարեան մեր վարդապետների ունեցած դիրքորոշումը իբրև «քշնամական» որակել:

Կանանց սարկաւագութեան զարգացումը Հայ Եկեղեցում կարող ենք պատմական երեք ժամանակահատունների բաժանել:

ա. Մեծ Հայք՝ 4—8-րդ դդ.: Կանոններում անորոշ վկայութիւններ այն կանանց մասին, որոնք յաւակնում են մկրտութիւններին իրենց մասնակցութիւնը բերել:

բ. Արեւելեան և Կիլիկեան Հայաստան՝ 9—11-րդ դդ.: Սարկաւագուիի բարի կիրառումը ձեռնադրութեան մաշտոցներում:

գ. 12-րդ դարից սկսեալ մատենագրական վկայութիւններ և սարկաւագուիների վերաբերեալ կարգեր ձեռնադրութեան Մաշտոցներում, նախ Կիլիկեան, ապա Արեւելեան Հայաստանում:

#### ԱՌԱՋԻՆ ԾՐՁԱՆ՝ 4—8-ՐԴ ԴԱՐ

4-րդ և 5-րդ դարերից, ասորական վարդապետութիւն Առաքելոցի կամ Առաքելական Կանոնադրութեան նման, սարկաւագուիների գոյութեան մասին մատենագրական վկայութիւններ՝ մեզ չեն հասել: Սակայն թում է, թէ այդ աւանդութիւնը ժամանակի հայերին բոլորովին էլ անձանօթ չի եղել: Հայկագեան Բառագիրքը, հիմնուելով Ուկենարեան շրջանի մեր Հայութի կա-

տարած թարգմանական տեղիքների վրայ, «սարկաւագութի» բառի դիմաց՝ կին պաշտօնեալ, կամ կուսան սպասարոր ի գործ ինչ եկեղեցոյ, և Մայր վանից կուսանաց իմաստներն է տալիս: Ար. Սահմակ Հայրապետի ամուսնով մեզ հասած կանոնախմբի 16-րդ կանոնում նետեւեալն ենք կարդում.

«Մկրտութիւն առնել երկիրածութեամբ, և կանայք ի ժամ մկրտութեանն մերձ առ քահանայսն մի՛ իշխանցեն կալ, որպէս սովորեցին ումանք առնել յանդամաքար և մկրտել ընդ հոսա, այլ ի տեղուց իրեանց աղօթեցն» (Յակոբեան Վ., Կանոնագիրք Հայոց, Ա., Երևան, 1964, 377—378):

Միեւնոյն կանոնը վերահաստատում է Դուինի Բ. 554/5-ի ժողովում.

«Եւ կանայք առ քահանապս մի՛ իշխանցեն կալ... Բայց սարկաւագունքն սպասաւորեցեն, և կանայքն իրեանց տեղին աղօթեցեն, և մի՛ եղիցին [կանայք] գործակիցը քահանայիցն, որպէս լսնքը ումելով զտեղիս սարկաւագացն» (Տէր Միթքեան Ա., Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա. Շուշի, 1903, 380. Կանոնագիրք Հայոց, Ա., 485. Միթքարեանց Ա., Պատմութիւն ժողովոց Հայաստանեաց Եկեղեցոյ, Վաղարշապատ, 1874, 80):

Դուինի Բ. ժողովի և Վերոյիշեալ կանոնի կապակցութեամբ, ուսումնասիրողը որոշ թիրիմացութիւնների մէջ է: Նա երկու տարբեր աղքիրների վրայ հիմնուելու հետեանքով, Դուինում գումարուած երկրորդ՝ 554-ի ժողովը, իբրև իրարից տարբեր երկու ժողովներ է ընդունել: Առաջինը՝ Դուինի 527 թուականի, իսկ երկրորդը՝ Ներսէս Բագրեանանցու կաթողիկոսութեան ժամանակ 548—557 ժողովներ անուանուելով: Նախ 527-ին գումարուած Դուինի ժողով գոյութիւն չունի: Դուինի Ա. ժողովը 506-ին, իսկ երկրորդը՝ 554/5-ին է տեղի ունեցել: Հեղինակի մօս ստեղծուած այս շփորութեան հետեանք եղող առաջին Արք արք. Միթքարեանցի «Պատմութիւն ժողովոց Հայց. Եկեղեցոյ» աշխատասիրութիւնն է: Արք արքեպիսկոպոսը իր գործում նշել է սակայն, որ նա Դուինի Բ. ժողովի կանոնները և մի շաք այլ կանոնախմբեր, Չամշեանի համառոտութիւններից է վերցրել (Կանոնագիրք Հայոց, Ա., 381), ուստի՝ նրա գործում վերոյիշեալ կանոնը ներկայացում է ամփոփ ձեւով.

«Ծ մկրտել քահանային՝ մի՛ կայցեն առ նմա կանայք, ունելով զտեղի սարկաւագաց» (Միթքարեանց, 80):

Երկրորդի պարագային, հեղինակը աշքի առաջ է ունեցել Վազգէն Յակոբեանի աշխատասիրած «Կանոնագիրք Հայոց»-ը, որտեղ Դուինի Բ. ժողովի կանոնները, «Կանոնը Ներսէսի կաթողիկոսի և Ներշապետ Մամիկոնէից եախսկոպոսի» խորագրով են ներկայացուած: Իսկ այստեղ յատակ է, որ վերոյիշեալ կանոնը իր ամբողջական ձեւով է հանդէս գալիս:

Ինչպէս տեսանք, 4—8-րդ դարերից մեզ հասած կանոնական վկայութիւնները ուղղուած են այնպիսի կանանց դէմ, որոնք սարկաւագութեան սատիճան չունեն: Այստեղ պէտք է հաստատել նաև այն պարագան, որ ամբողջ «Կանոնագիրք Հայոց»-ում, սարկաւագութիւնների վերաբերեալ կանոնները ընդհանրապէս գոյութիւն չունեն: Այս երեսով կարելի է բացատրել նրանով, որ «Կանոնագիրք Հայոց»-ի առաջին խմբագրութիւննը, արդէն 8-րդ դարի սկզբում, Յովհան Խմաստաւէր կաթողիկոսի շնորհի աւարտուել էր, մինչդեռ կանանց սարկաւագութիւնը, հաւատաբար աւելի ուշ շրջանի ծնունդ է:

## ԵՐԿՐՈՐԴ ԾՐՁԱՆ՝ 9—11-ՐԴ ԴԱՅ

Կանանց սարկաւագութեան երկրորդ շրջանում, սարկաւագ-«ուսիի» բառը իր հօգականաձեւ մասնիկով մեր ձեռագրերում արդէն վկարում է: Վենետիկի Մխիթարեան մատենադարանի թ. 457 Մաշտոցում, որը 9—10-րդ դարի խմբագրութիւն է համարում, «Զեռնադրութիւն կրօնաւորութեան արժանացելոցն» խորագիր արարողութեան վերջում կատարուած, կին վաճականներ ձեռնադրելու մասին մի խակուած կայ, որտեղ ասում է, թէ վաճական դարձող կեռոց զգեստաւորումը՝ «սարկաւագուիսին» է անելու: Այսպէս «Խոկ կանանց» պարու է սքեմ տալ և զնոյն կատարել կարգ: Բայց հունական ՍՍՐԿԱԽԱԳՈՒՀԻՔՆ արացեն, սեւ փակեղամբ ծածկեսցէն զանկատն մինչեւ յօնան» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի Վենետիկ: Հ. Բարսեղ Սարգսիսեան / Հ. Գրիգոր Սարգսիսեան, Գ, Վենետիկ, Սբ. Ղազար, 1966, 27—33):

## ԵՐՐՈՐԴ ԾՐՁԱՆ՝ 12-ՐԴ ԴԱՅ

Սարկաւագուիսինների մասին մեր մատենագիրների կատարած բուն վրկայութիւնները սկսում են 12-րդ դարից: Ներսէս Շնորհալի հայրապետի «Թուղթ ընդհանրական»-ը, ուղղուած մեր ժողովրդի բոլոր խաւերին, ո՞չ կուսանների, և ո՞չ էլ սարկաւագուիսինների մասին խօսք չի անում:

«Եւ փոքր է կրօնաւորութիւն ոչ միայն քան զբանապութիւն, այլ և քան զարկաւագութիւն, զի սա և կանանց է համարձակելի, որպէս և սուրբ Բարսեղ գուէ: իսկ սարկաւագութիւն և ոչ բնաւ», գոյում է Ներսէս Լամբրոնացին (Խորիրդածութիւնը ի Կարգս Եկեղեցոյ և Մեկնութիւն Խորիրդոց Պատարագին, Վենետիկ, 1847, 53), համաձայնելով կանանց վաճական լինելու աւանդութեան, բայց ոչ սարկաւագութեան աստիճան ստանալու գաղափարի հետ:

1184-ին խմբագրուած Մխիթար Գոշի Դատաստանագրքում, սարկաւագուիսինների մասին հետեւեալն ենք կարդում.

«Են եւ ի կանանց սարկաւագունք ձեռնադրեալը, որը կոչին սարկաւագուիք, վասն քարոզելով կանանց և ընթեռնով Անետարան, զի մի մտցէ անդ այր, և մի նա արտաքս, քան զիանսն եղանիցէ: Բայց լորժամ մկրտութիւն առնեն քահանայքն, գան յաւազան, զի զիանայն նորան լուսան շրով քաւութեանն ներքո վարագուիին... Մի՛ ինչ նոր և անկարգ վարկցին զայս, քանզի ի սրբոց Առաքելոցն աւանդութեան ուսանիմք, քանզի ասէ՝ յանձն առնեմ ձեզ զՓիրէ քոյր մեր, որ է սպասաւոր Եկեղեցոյն» (Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխ. Խոսրով Թորոսեան, Երեւան, 1975, 136—137):

Սարկաւագուիսինների մասին նման վկայութիւններ կարդում ենք Համե՛ Միքան Սպարապետի 1165-ին խմբագրուած Դատաստանագրքում.

«Եւ թէ հրամայէ քահանայն, նաև սարկաւագուիք էլ կարեն ձեռնադրել, որ եւ նոքա եւս կարեն քարոզ ասել կանանց, եւ Անետարան կարդալ, որ եւ այր մարդ շմոցէ... և կարեն լուսալ տղայք և կանալ քաւութեան շըրտվն... և ի Հայոց կանանց վաղ է շնչած այս կարգ: Բայց այս այն է, զոր գորկ է Առաքեալը՝ թէ յանձն առնեմ ձեզ զՓիրէ քոյր մեր, որ է սպասաւոր Եկեղեցոյն» (Ամբան Սպարապետ, Դատաստանագիրը, աշխ. Ա. Գալստեան, Երեւան, 1958, 66—67):

1299-ին, Սիւնեաց արքեպոս Ստեփանոս Օքքելեամը, իր «Պատմութիւն Համանգին Սիսական» գործում, սարկաւագութիւնների մասին հետևեալն է գրում.

«Իսկ ի կանաց սարկաւագութիւնը լինին, զի ի կանաց վաճա քարոզին... քարոզէ և ընթեռնու Աւետարան՝ ոչ յամբոնի ի վերաց բնմին, այլ առանձինն կամ յանկեան ուրեք. բայց ի սուրբ խորդողոյն սպասարութիւն բնաւ մի հայեցի, որպէս զարու սարկաւագուն» (Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝ Պատմութիւն Տանն Սիսական, նրա Մկրտիչ Լմին, Մուկուս, 1861, 80):

Դր. Արատը այսքանով աւարտում է սարկաւագութիւնների մասին կատարած իր պրատուները՝ նայ վարդապետների երկերում: Այս աղյօնվ, օգտակար և շահեկան եմ համարում, այստեղ, կարևոր երկու աղբիւներ եւս ուշադրութեան յանձնել: Առաջինը՝ Պողոս Տարօնեցի վարդապետի 12-րդ դարի սկզբում խմբագրած «Թուղթ ընդում Թէոփիասէ Հոռոմ Փիլիստիայն» գործն է, իսկ երկրորդը՝ մեր դասական աստուածաբանութեան գագաթ՝ Գրիգոր Տաթևացու հանրածանօթ «Գիրք Հարցմանց»-ն է: Առանց Տաթևացու, մեր Եկեղեցու աստուածաբանական աւանդութիւնը ըմբռնելու հարցում ոչ մի քայլ առաջ չենք կարող զնալ:

Վերեւում, Դր. Արատի կողմից, Պողոս Տարօնեցին իբրև հեղինակ հարեւանցի կերպով յիշուեց, սակայն Ծիյին առնչութեամբ արժէ նրա կարծիքը աւելի մօտիկից յանանալ: Աստրինների Եկեղեցական որոշ աւանդութիւնների դէմ բողոքելու առիթով, «Ասորիք՝ կանաց հրամայնն ելնել ի յուրանն, զոր չէ օրէն» նաև աւելացնում է.

«Նաև կանաց հրամայնն ելանել ի սուրբ Խորանն Աստուծոյ, որ օտար է յԱռաքեալական և ի մարգարեական կամոնացն, զոր և ատեաց իսկ զայս Հոգին Սուրբ, զուրբ Խորանն կոխան առնել կանաց:

Եւ արդ՝ ամա գրեան է յօրէնսն, եթէ Մովսէս միայն իշխէր ելանել ի գուխ լերինն, և խօսել ընդ Աստուծոյ, յօրինակ այս Աստուածընկալ Խորանիս Աստուծոյ: Եւ ամենայն քահանայքն կանգնեալ կային ի ստորոտ լերինն, որ է այս Եկեղեցի Քրիստոսի: Եւ ծողովորդքն կային ի ստորոտ լերինն որ է արտաքին սրան Եկեղեցւոյն: Այս լեռն՝ օրինակ էր այս սուրբ Եկեղեցւոյն, և պայսիսի պատուիրան՝ ի հին օրինացն եղաւ սրբութեամբ մերձենալ ի լեռն սուրբ:

Իսկ նորումն այսպէս ասէ գիրն, եթէ Յակոբոս Եղբայր Տեառն, նա միայն իշխէր մտանել ի Սրբութիւն Սրբութեանցն: Ն հեռումն լեռն հրով վառեալ լինէր, և ի նորումն ապս Եկեղեցի, որ է թամկարս Աստուծոյ, և տեղի զեննան, արեան պատարագին Քրիստոսի: Եւ այս է ճշմարտութիւն տօօրենութեան Քրիստոսի, զոր և սուրբ Հայրապետքն, որ ի Նիկիա ծողովկեցան, զնզովս կարգեցին և ասացին, թէ ոչ է պարտ կանացն ի բնմ ելնել: Զոր և սուրբ Առաքեալն Պողոս, արգելոյր զդասս կանացն, և ոչ տայր նոցա թոյլ բնաւ խօսել յեկեղեցին: Եւ ամա դոքա [Ասորիք] հակառակ Պողոսի Ելեալ, և զկանայսն Բնական արարին» (Պողոս Տարօնեցի, Թուղթ ընդում Թէոփիային, Կ. Պոլիս, 1752, 178—179):

Մկրտութեան հարցի կապակցութեամբ, Տաթևացին լատինների անադութեան դէմ արտայասուելով, նոյնիսկ ծայրագեղ կարիքի պարագային մերժում է կանաց կողմից մկրտութեան կատարումը:

«Ասէն հերձուածող ազգն ֆուանկաց թէ՝ թէպէս մկրտութիւն գործ քահանայի է, բայց ի հարկաւոր ժամանակն, թէ քահանայ ոչ լինի, ամենայն որ,

որ գիտէ զձեւ մկրտութեան՝ կարէ մկրտել: Եւ թէ այր մարդ ոչ լինի, և տղայն մերձ ի մեռանիլ լինի, կինն կարէ՝ մկրտել, թէ գիտէ զձեւ բանին, զոր քրիստո ուսուց (Յանուա Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ), ցանէ զօտրեն և ասէ՝ մկրտեալ լինի: Որ և է այս հերձուած մեծ և յանդուգն հայմութիւն ընդիւմ կարգաց Եկեղեցոյ» (Տաթեացի, 588—589):

Այնուհետև, Տաթեացին, լատինների այս աւանդութեան դէմ լինելու իր բոլոր պատճառներն եւ բուարկում, որոնք լոյժ հետաքրքրական են իմանալ, նիւթիւն կապակցութեամբ Տաթեան դպրոցի դիրքորոշումի մասին ամբողջական մի պատկերացում կազմելու համար:

«Նախ՝ զի պապիսի չար աղանդու ո՛չ գտանի յայլ Եկեղեցիս քրիստոնէից: Երկրորդ՝ զի այս խորհրդոյ նշանակ ի սկզբան արարածոց Աստուած Աղամայ եւս և ո՛չ կնոշն, յորման էած զկենանիս առ Աղամ, զի անուն դիցէ նոցա: Երրորդ՝ զի թէ կայր հնար, որ ի ձեռն կնոշն տուեալ լինէր շընորիք, Աստուածածին Կոյսն Մարիամ ընդէ՛ր ոչ եղեւ մերձ մկրտութեան Որդուոյն իւրոյ ի Յորդանուն: Չորրորդ՝ զի թէ ի ձեռն Փիլիպպոսի Առաքելոյ, որ էր մի Խօթանց անուի սարկաւագացն, ո՛չ եղեւ իշեալ Հոգին ի վերայ Աերքինոյն մինչեւ յահշտակեցալ յԱզովսո, և ապա էջ Հոգին ի մըկրտեալն նորա, զիա՞րդ ի ձեռն կնոշ լինի տուեալ շնորիք Հոգուոյն լուացմաբ ջրոյն: Հինգերորդ՝ զի թէ գոյր հնար կնոշ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց Նունի Կոյսն մկրտել զոր ի վրաց, յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն, այլ առաքեաց առ սուրբն Գրիգոր և ի խնդրեաց քահանայս՝ մկրտել զնոսա: Վեցերորդ՝ զի թէ կինն կարէ մկրտել ի հարկաւոր ժամանակի, սուրբն Գրիգոր Լուսատրիչն քանի եւս առաւել պատուական էր քան զմի կին, ընդէ՛ր ոչ մկրտեաց զոր ի հաւատացելոցն, մինչեւ գնաց ի Կեսարիա ձեռնադրեցաւ, և ապա եկեալ զհազարս հազարաց և զիիւր բիւրոց մկրտեաց ի գետն: Եօթներորդ՝ զի մկրտելն է գործ քահանայի, և քահանայութիւն է սպասաւորութիւն Աստուծոյ. իսկ զայս սպասաւորութիւն Աստուծոյ և ո՛չ կուպաշտքն ունեին սովորութիւն սնուի կողցն ի ձեռն կանանցն մատուցանել զպատարագն, զնոյն եւ զամենայն հեթանոսք սունեն: Իսկ թէ ի հեթանոսս պապիսի պարկեստութիւն պարտ էր առնել, քանի՞ ես առաւել յԵկեղեցիս պարտ է լինի, որ է ճշմարիս կարգաւորութիւն և սրբութեան օրէնք: Ութերորդ՝ զի թէ զգենումն կենդանաց ո՛չ ունին հրաման զենու ազգ կանանց, որ է՛ խորութիւն մարմնաւոր սրբութեանց, զիա՞րդ պատշաճի տալ հրաման կանանց ազգին մերձնեալ ի կարգ հոգեւոր սրբութեան: Իններորդ՝ զի մկրտութիւն է գործ քահանայութեան, և քահանայութիւն է ազատ և ո՛չ ընդ ունեք հարկի Աերքոյ: Իսկ կինն ծառայ և ուոր է առն, վասն այսր հարկի ո՛չ է պարտ ծառային առնել զգործ տեառն, որպէս և գրեալ է ի գիրս Անկիսական կանոնացն, եթէ զծառալ ի ծառագործիւն Եկեղեցոյ կարգել ոչ հրամայեմք, բայց թէ ազատեալ լիցի տեառն կամօք, որպէս Ուեսիմուն այն: Իսկ թէ զայր, որ ընդ ծառայութեամբ է, ո՛չ հրամայեցին Հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան Եկեղեցոյ, քանի՞ ես առաւել հերձուած մեծ է կանանց, որոյ ասաց Աստուած թէ (առ այր քո, և նա տիրեացէ թեզ) [Ծննդ. ԺԶ, 16], հրաման տալ զգործ քահանայի առնել, որ ազատաց է և ո՛չ ծառայից: Տաթեացին՝ զի մկրտութիւն է գործ քահանայի, որ աղօթիք կատարի. իսկ կանանց ազգին պատուիրէ Առաքեալն ի ժամ աղօթիցն շոր նենել զիսոյն վասն հրեշտակաց, այսինքն՝ վասն քահանայից, որ հրեշտակ կոչին ի գրոց, ապա քանի՞ դատապարտութիւն է հրաման տալ նոցա. և ի գործ քահանայութեան յանդգնիլ: Են և այլ

բազում վկայութիւնք ի Գրոց Սրբոց, որ գայսպիսի հերձուածս ստու և ընդունացն երեւեցուցանեն»: (Տաթեացի, 589—590):

Տաթեացին ո՞չ միայն կանանց մկրտութիւն կատարելը, այլ՝ մկրտութեան առիթով, ճարաց կնքամայր լինելու և կոչուելու պարագան էլ է մերժում, քանի որ յունարէնին Eklesia իգական բարի հետեւողութեամբ, կնքամայր միայն Եկեղեցին կարող է լինել, իբրև «Եկեղեցի Նորածնելոցն»: «Կին մարդ կարէ» կնքամայր լինել թէ ոչ» հարցին, ևա հետեւեալ պատասխանն է տալիս:

«Ո՛չ կարէ, զի կնքամայր ասեմք, և ոչ կնքամայր: Զի կնքամայր Եկեղեցին է նորածնելոցն՝ որոյ պատճառ է, զի կին երաշխատոր եւ վկայ ո՞չ կարէ լինի, վասն որոյ և ո՞չ կնքամայր կարէ լինի: Եւ դարձեալ՝ կանանց ազգ ո՞չ կարէ քահանայագործել, և ո՞չ կնքամայր լինի: Եւ ոչ այս միայն, այլ ի ժամ մկրտութեան ո՞չ է պարտ մնալ կնոջ Եկեղեցւոցն, զի և Տիրամայր Կոյսն ո՞չ էր ի ժամ մկրտութեան ընթ Քրիստոսի ի Յորդանան, որպէս ասաց ի վերոյ» (Տաթեացի, 591):

Անշուշտ, այսուղի կարելի է առարկել, որ Տաթեացու քննադատութիւնը ձեռնադրութիւն չունեցող կանանց, քայլ ոչ ուղղակի սարկաւագուիներին է վերաբերում: Սակայն միւս կողմից պէտք է նկատի ունենալ այն իրողութիւնը, որ նա սարկաւագուիներին մասին ընդհանրապէս խօսք չի անում, ո՞չ իսկ Եկեղեցական աստիճանների, յատկապէս վեցերորդ՝ սարկաւագականը մեկնելիս (Տաթեացի, 606—608): Մինչեւ, թէ՝ Ներսէս Լամբրուսացին, թէ՝ Միխիթար Գոշը, թէ՝ Սուեկանոս Օրբելեանը, և թէ՝ Սմբատ Սպարապետը, Եկեղեցական վեցերորդ՝ սարկաւագական աստիճանի մասին խօսելու առիթով էին անդրադարձել սարկաւագուիներին: Այս իրողութիւնը մտածել է տալիս, որ Տաթեացու նաև ժամանակի գիտական օրենքներին հետեւող մի աստուածաբան, որ իր երկերը խմբագրելիս աշքի առաջ գտնէ: Տեր մատենագրութեան կարեւորագոյն մասը ունեցել է, չէր կարող մինչ այդ մեր Եկեղեցում գոյութիւն ունեցող սարկաւագուիների աւանդութիւնը անտեսել, այո՛, նոյնիսկ այս «ազգային» աւանդութեան դիմ արտապատուիլ:

Կանանց կնքամայր լինելու կամ մկրտութիւն կատարելու հարցի կապակցութեամբ, Յովհաննես Երգմկացի Պլուզ Վարդապետն էլ մերժողական կեցուածք ունի: Ալսպէս, Յովհաննես Երգմկացի Պլուզ Վարդապետը, իր «Խորան հասարակաց Քրիստոնեաց» ստեղծագործութեան մէջ յորդորում է՝

«Զալլազգի մի՛ առնելք կնքամայր: Ի կին մարդոյ գիրկ մի՛ դնեք. զի կնքամայրն վկայ է և երաշխատոր, և ուսուցիչ է հասատոյն, և կին մարդն ո՞չ վկայ, ո՞չ երաշխատոր, ո՞չ ուսուցիչ չէ պարտ որ լինի» (Մաշտոցի Անտան Մատենադարան, Ձեռ. թի՛ 1712, էջ 156թ):

Դր. Արաւոր նկատի է ունեցել նաև մի շարք մատենագրական այլ վրկայութիւններ, որոնք մի քանի ձեռնադրութեան Մաշտոցներում, իբրև սարկաւագուին ձեռնադրելու կանոն, մեզ են հասել: Ալսպէս, Վեճեւտիկի Միխիթարեանց մատենադարանի, 13-դ դարի սկզբում խմբագրուած, թի 199-ը ձեռագրում «Ձեռնադրութիւն սարկաւագ կանանց, որ են սարկաւագուինք» խորագիր կանոնը: Էջմիածնում կամ Մաշտոցի Անուան Երեւանի Մատենադարանում 1314-ին Կիլիկիա գրուած մի Մաշտոցում «Սարկաւագուինք առնելք» վերնագրով յատեկալ կանոնը: Նոյնպէս 1314-ից, Տաթեացում օրինակուած Մաշտոցների շարքում կարգ «Սարկաւագուինք» բացատրութիւնը, ի թիւս այլոց, վկայութիւն են տալիս այն մասին, որ Հայ Եկեղեցում սարկաւագուիներ ձեռնադրելու մի սովորութիւն եղել է: Այս առիթով, մեղի-

նակը նշում է, որ Թիորքիոյ Հայոց Պատրիարք՝ Ընորհիք արքեպիսկոպոս Գալուստեանը, սարկաւագութիմներ ձեռնադրելիս, սովորաբար այդ սարկաւագներ ձեռնադրելու մեջ ծանօթ կանոնն է կիրառում:

### ԿԱՆԱՆՑ ՍԱՐԿԱԽԱԳՈՒԹԵԱՆՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿՈՒՍԱՆՑՑՆԵՐՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻՑ ՍԿՍԵԱԼ ԿԱՏԱՐԻՆԵՒ ՎԱՆՔԸ ՆՈՐ ԶՈՒՂԱՑՈՒՄ

Կիլիկեան Հայաստանում սարկաւագութիմների մասին եղած մասնակի վկայութիմներից յևսոյ, 17-րդ դարում այն կազմակերպուած ձեռվ առաջին անգամ տեսնում ենք Նոր Զուղայի Սր. Կատարիմնեի վանքում: Հստ աւանդութեան, վանքը հիմնուել է 1623-ին, Շահ Արքայի Հայաստանում կատարած բռնագալթի հետեւանքով, Նոր Զուղայի Սր. Յովհաննես եկեղեցու մօտ ապաստանած երեք կուսանների կողմից: Կուսանցը ունեցել է բարձր պարհապնդը, կենդրուում գտնուող եկեղեցու շորջ եղել են մենաստաններ, իսկ վանքը կոչուել է հաւա «անապատ»: Իր գոյութեան առաջին 50 տարիների ընթացքում, միաբանների թիւը մինչեւ 33-ի է բարձրացել, որից յևսոյ, մետղինեւ հուազել է: 1937-ին, վանքը բռնացին իմաստով վերակենդանացմելու համար կատարուած փորձը յաջողութիւն չի գտել, և 1954-ին այդ լրի ամայանալով փակուել է: Վանքում եղել է հաւա աղջկանց մի ճեմարան: Վանական ովաստադրութիւնից յևսոյ, որ 20 տարիքը թեակոխսելուց վերջն է կատարուել, նորընծանները եսիսկոպոսից եկեղեցական շորս աստիճաններն են ստացել: Վանքում սարկաւագութիմներ ձեռնադրելու սովորութիւնը, 1851-ին, Թաղէոս արքեպիսկոպոս Պէհնազարեանի կողմից է հաստատուել: Սեւտարաններու և եկեղեցական որոշ սպասարկութիւններ ինքնարաւ կերպով վանքում կատարելու համար, հաւանարար կուսաններից միայն մի քանիսն են սարկաւագութիմներին, իսկ մնացեալ մեծ մասը բաւարարուել են եկեղեցական շորս փոքր աստիճանները ստանալով:

Սր. Կատարիմնե վանքի բացի, յիշում են ևս երեք կուսանց-վանքեր, որտեղ սարկաւագութիմներ ձեռնադրելու աանդութիւն կիրառուել է: Սուածինը՝ Կատարիմնե վանքի օրինակի մետեսողութեամբ և նրա հիմնարկութիւնից մէկ հարիւրամեակ յևսոյ, Թիֆլիսում հիմնուած Սր. Ստեփանոսի կուսանցն է: Վանքի հիմնադիր է համարում, Նոր Զուղայից Թիֆլիսի գաղթած և Կատարիմնե Կուսանցին ծանօթ՝ Պեհրովդեանց ընտանիքը, որ նըմանը իր ընտանեկան կալուածների վոր է ուզու հիմնել: Ալսպիսով, Սր. Ստեփանոսի վանքը երկար ժամանակ այս ընտանիքի անմիջական ազդեցութեան տակ է մնում, այնքան, որ նրա մեծաւորութիւն միայն ընտանիքի կողմից է հշանակուում: Խնչպէս Սր. Կատարիմնե Կուսանցում, պատել էլ սարկաւագութիմներ ունենալու սովորութիւնը, Թաղէոս արքեպիսկոպոսն է եւրուուծել: Վանքի մեծաւորութիւն միշտ աւագ սարկաւագութեան կոչում է ունեցել:

Այս ատիթով, մետաքրքրական է ենդինակի հաղորդած տողանուակ տեղեկութիւնը, որ 1864-ին, Կատարիմնե անունով մի կուսան, Երուաղեմի Յովհաննես պատրիարքին է եւրկայանում, Թիֆլիսի Սր. Ստեփանոս վանքի կուսանների նման, սարկաւագութիմներ ձեռնադրուելու խնդրանքով: Երուաղեմի պատրիարքը մերժում է նրան, այն առարկութեամբ, որ այդ՝ Հայ Եկեղեցու ասանդրութեան և կանոններին հակառակ է:

Ծովիում ես եղել է մի կուսանց-վանք, որի անդամների թիւը սակայն, չորսից-հինգ հոգուց չի անցել:

Սյատեղ, լիշտակործեան արժանի է Կ. Պոլսի Գալֆայեան վաճր-կուսանցը յատկապէս այն բանի համար, որ շնայած իր ապրած մայրամուտին, այնուամենայնի ցարդ գոյատեսում է նա իր վերջին միաբան-սարկառագութիով:

Գալֆայեան Միաբանութիւնը 1866-ին Բիմնադրուել է Սրբուի Գալֆայեանի կողմից, որբախնամորթեան Բիմնական նպատակով: Այս Միաբանութիւնը յատկանշական է նաև նրանով, որ նրա բոլոր անդամները սարկառագութիւնը, իսկ մեծաւորութիւն՝ աւագ սարկառագութիւն է եղել: Վաճրի առաջին մեծաւորութիւն, Նարոյեան Պատրիարքի կողմից, 1932-ին է սարկառագութիւն ձեռնադրուել, իսկ «Վերջինը», և այժմ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանում ծառայող՝ քոյր Հոփիսիմէ Սաստմեանը, սարկառագ է ձեռնադրուել 1982-ին, Շնորհը արքեպոսկ. Գալուստեանի կողմից:

### ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻՆԵՐԻ ԶԳԵՍՏԱԽՈՐՈՒԽԸԸ

Որպէսզի սարկառագութիւների մասին մեր պատկերացումը ամբողջական լինի, աելորդ չեր լինելու հակիրճ կերպով նրանց զգեստաւորումի մասին եւս անդրադառնալ: Այս առումով, մեզ հասնող առաջին վկայութիւնները 12-րդ դարից են: Բոլոր հեղինակների մօս միանման է՝ սարկառագութիւների նակարած կախուած մետաղեայ փոքրիկ խաչը եւ ուսից՝ ուրարը: Այսպէս, Միխթար Գոշի մօս այս մասին հետեւեալը ենք կարդում.

«Սրեմ է նոցա ամենայն ինչ հաւատաւորաց, բայց ի ճակատն խաչ լինի, եւ բուշկէն [ուրար] ի յաջմէ կողմանէ ի կախ ունելով» (Միխթար Գոշ, 137):

Գրեթէ միեւնոյն տեղեկութիւններն են տալիս նաև Սմբատ Սպարապետն ու Ստեփանոս Օրբելեանը: Աւելի ուշ շրջանի՝ 19/20-րդ դարի լուսանկարներում, արարողութեան ժամանակ սարկառագութիւն շապիկով, եւ գլխից գրեթէ մինչեւ գետին հասնող սպիտակ մի շղարշով զգեստաւորուած ենք տեսնում:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

ա. Ծիշդ է, որ մեր Եկեղեցում սարկառագութիւներ գոյութիւն ունեցել են ու տակաւին ԿԱՅ, բայց ընդհանուր Հայ Եկեղեցու վրայ տարածուող կանանց սարկառագութեան մնայուն մի աւանդութեան մասին խօսք չի կարող լինել, որովհետեւ այդ մեր Եկեղեցում պարզապէս տեղական բնոյթ է ունեցել եւ ունի:


բ. Կանանց սարկառագութիւնը մեր Եկեղեցուն եղել է ոչ ամբողջական, այլ՝ մասնակի: Այսինքն՝ սարկառագի ծառայութեան բնագաւառի համեմատութեամբ, սարկառագունու պաշտօնը Եկեղեցուն, հակառակ կատարուող ձեռնադրութեան կարգի նոյնութեան, սահմանափակ է եղել: Հաւանարա, այդ կարելի է այսօրուայ կիսասարկառագութեան հետ համեմատել: Այլ է Պոլսահայ Եկեղեցուն կիրառուող ամբողջական սարկառագութիւննեան պարագան, որ ինչպէս ասուեց, խիստ տեղական բնոյթ ունի:

գ. Վերեւում արդէն տեսանք, որ կանանց սարկառագութիւնը Եկեղեցուն հովուական, աւելի՝ ծիսական մի կարիքի ծնունդ էր: Կինը Եկեղեցական ծառայութեան էր կոչում այնտեղ, որտեղ սարկառագի կամ քահանայի առա-

քելութիւնը, պատշաճութեան պահանջով, սահմանափակում էր: Տեսանք նաև, որ Հայ Եկեղեցում, կանացի սարկաւագութիւնը համեմատաբար աւելի ուշ շրջանի ծնունդ լինելով, չէր կարող պատշաճութեան պահանջի հետևանքը լինել, քանի որ Հայոց մէջ, եթէ ոչ սկզբից, գունէ 9-րդ դարից յտույ, վատահաբար կարելի չէ մկրտուողի ամբողջ մարմինը օծելու ծիսական նման մի սովորութիւն գտնել, ինչ որ պարագան, տակսին մինչեւ այսօր ասորիների մօս է: Ուրեմն, թէ կանացի սարկաւագութիւնը Հայ Եկեղեցում ինչպիսի՝ կարիքի արդինք է, առ այժմ՝ մնում է անորոշ, քանի որոշ է այն, որ այդ ո՛չ ծիսական, և ո՛չ էլ հովուական է: Թէ՛ Սահմակ Պարթեանի, և թէ՛ Դուինի Բ. ժողովի կանոններից պարզում է, որ կանաց սարկաւագութեան սկզբանութիւնը Հայոց մէջ, որեւէ ձեռով կարելի չէ մկրտութեան հետ կապել: Չատ աւելի համանական է, որ այդ մեր Եկեղեցում էլ գոյութիւն ունեցած, կանաց կրօնաւորութեան կամ վանականութեան ծնունդն է, որտեղ հասկանալի, բընական պատճառներով, եկեղեցական որոշ սպասարկութիւնների մէջ ինքնարաւ լինելու նպատակն է հետապնդուել:

Դ. Կանանց եկեղեցական կոչումներ շնորհելու հարցում, միջնադարեան մեր վարդապետների մերժողական կեցուածքը սր. գրական ազդեցութեան, ժամանակի ոգու և ըմբռնումների հետևանք է: Այս ողղութեամբ, նրանց կատարած քննադատութիւնների ետևում, կնոջ «անսուրբ» լինելու համոզմունքն է թաքնուած, որի համար նա չէր կարող սրբութեան մերձենալ:





## ՍԻՓԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԽՍԵԱՆ

### ՄԻՐՈՅ ԱՌԱՔԵԱԼԸ ՑՈՎՀԱՆՍԵՒ

Ցովհաննես Զերեղէոսի և Սողոմէի որդին էր և կրտսեր եղբայրը Յակոբոսի: Սողոմէ Ա. Կոյս Մարիամի մօրաքրոջ դուստրն էր: Որով կը տեսնեմք, թէ Յիսուս մօտիկ ազգականութիւն ուներ Յակոբոս և Յովհաննես: Յովհաննես իր եղբօրմէն առաջ մետեւցաւ Յիսուսի և յանախ Աերկայ գտնուեցաւ Քրիստոսի մես՝ անոր առաքելութեան ընթացքին: Յովհաննես իր ազգակցութեամբ և համակրելի բնաւորութեան պատճառաւ արժանացած էր Յիսուսի յսոոկ սիրոյն: Ան համարձակութեամբ կը գրէ ինքն իր մասին, բայզով աշակերտն զոր սիրէք Յիսուս (Յովհ. 13:23, 21:20): Սակայն այդ համակրելի բնաւորութեան համբնաց Զերեղէոսի երկու որդիները ունեցած են նաև բուռն և ցաւկու բնաւորութիւն մը, որոն համար Յիսուս անոնց Բաներենքու մականոնը տուաւ, որ կը թարգմանուի **Որդիք Որոտման:** Այդ բնաւորութեան որպէս մետեւանք կրնածք յիշել Սամարացիներու վրայ երկինքն կրակ իշեցնելու առաջարկը (Ղոկ. 9:54) և միւս Սոպքեալներուն վրայ բարձր դիրք մը ձեռք ձգելու մետամոտութիւնը (Մարկ. 10:35):

Սոպքեական խոմքին առաջին քառեակը՝ Պետրոս և Անդրէաս, Յակոբոս և Յովհաննես համապատուեալ Սոպքեալներ էին և գլխաւոր առիթներով անոնք միշտ ալ Յիսուսի մես գտնուած են, ինչպէս Յայրոսի տունը, Սցակերպութեան վայրը, Զիթենեաց լեռ և Գեթսեմանի պարտէզը:

Սիրոյ Սոպքեալը կը գրէ. «Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրէք զիրար, ինչպէս ես ձեզ սիրեցի, դոք ալ սիրեցէք զիրար: Եթէ դոք զիրար սիրէք՝ առով ամենքը պիտի գիտնան թէ դոք իմ աշակերտներս էք» (Յովհ. 13:34—35):

Սոպքին երեք Անտարանները կը կոչուին «Համատես Անտարաններ», որովհետեւ անոնք նոյնանատ են իրենց մօտեցումով և գրութիւններով: Կը կարծուի, թէ Յովհաննես Սոպքեալ միւս առաքեալներէն աւելի երկար կեանք կարծուի, թէ Յովհաննես Սոպքեալ միւս առաքեալներէն աւելի երկար կեանք, լուսայ՝ ապրելով 100 տարի: Վատահարար Յովհաննես Անտարանը ունեցած լուսայ՝ ապրելով 100 տարի: Վատահարար Յովհաննես Անտարանին իր աշքին առջև ունեցած է միւս երեք Անտարանները, որոնք աւելի բանից իր աշքին առջև ունեցած է միւս երեք Անտարանները, որոնք աւելի

կանուխ գրուած էին և ինք չեւ ուզած նոյն բաները կրկնել: Ան Աստուածաբանական ու տարբեր տեսանկիննեւ դիտելով Քրիստոսի կեանքն ու գործը՝ հստ այն գրած է իր Աւետարանը:

Յովհաննես կը ջանա որոշ չափով ժամանակագրական կարգ մը տալ, ինչպէս «յաջորդ օրը» (1 Յովի. 1:29, 35, 43): Ան կը ներկայացնէ տրամաբանական և ժամանակագրական յաջորդականութիւն մը: Յովհաննես նոյնպէս ոշադրութիւն կը դարձնէ տեղերու և քաղաքներու, ինչպէս «Բերաբրավի մէջ՝ Յորդանանի միս կողմը» (Յովի. 1:28) «Կանա Գալիլիացւոց» (Յովի. 21:1):

Յովհաննես իր Աւետարանը գրելուն պատճառներէն մին ինք կու տալ, այսպէս. «Յիսուս շատ մը ուրիշ բարձրներ ալ գործեց աշակերտներուն սուծն, սակայն այդ բոլորը գրուած չեն այս գիրքին մէջ: Խսկ այսափը գրուցաւ որպէսզի հաւատաք, թէ Յիսուս՝ Քրիստոս է, Աստուծոյ Որդին, և որպէսզի հաւատաք և կեանք ունենար անոր անունով» (Յովի. 20:30—31):

Վերստին ծննդեան պարագան կը շեշտուի այս Աւետարանին մէջ, մասնաւորաբար եթք Քրիստոս կը խօսակցի Սիկողեմոսի հետ, այսպէս. «Ծըմարիտ, Եշմարիտ Կ'ըսեմ քեզի, եթէ մէկը չծնի ջորէն ու հոգիէն՝ չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութեան մէջ: Կանզի մարմինն ծնածը մարմինն է և հոգին ծնածը՝ հոգի: Դուն մի զարմանար որ քեզի ըսի թէ պէտք է վերստին ծնիս» (Յովի. 3:5):

Քրիստոս փրկութեան դուռն է Հրեաներու և Հեթանոսներու համար հաւատարապէս: Խեցն է Ծանապարհը, Կեանքն ու Յարութիւնը բոլոր հաւատացողներուն:

Խաչելութենեն առաջ մեր Տէրը իր Առաքելներուն միտքը կը պատրաստէ ապագայի դէպքերուն առնչութեամբ:

Պիհասու Խաչին վրայ Քրիստոսի յանցանը գրեց երրայերէն, լատիններէն և յունարէն լեզուներով. «Յիսուս Նազովունցի, Հրեաներուն Թագաւորը»:

Երրայերէն Կրօնի լեզուն էր, լատիններէն՝ օրէնքի և իշխանութեան, իսկ յունարէն՝ մշակողի, իմաստահրութեան և գիտութեան:

Հրաշտիս Յարութենեն եւր մեր Տէրը Պետրոսը վերաբատանեց առաքելական իր համարդ դիրքին մէջ՝ արածելու համար Տիրոց Ռիխարծները:

Յովհաննես Առաքեալ հետեւեալ խօսքը կը փակէ իր Աւետարանը. «Տակային շատ մը բաներ ալ կամ, որ Յիսուս կատարեց, որոնք եթէ մանրամասնութեամբ գրուած ըլլային, կարծեմ թէ նոյնիսկ աշխարհը անբաւար ախտի ոլլար պարունակելու այդ բոլոր գրութիւնները» (Յովի. 21:25):

Յովհաննեսի Աւետարանը խորոնկ է և յուաբանոյ: Ան հեղինակն է նաև Ընդհանրական Առաջին, Երկրորդ և Երրորդ Թուրթերուն, ինչպէս նաև Յայնութեան Գիրքին, բոլորն ալ Նոր Կուանարանին մէջ:

Եթէ Աստուածաբանական հիմքերու շորջ կ'ուզք բարողել, կարդացէք Պողոս Առաքեալի նամակները: Խսկ եթէ կը փախարիծ թախանցէլ Քրիստոնեական Կրօնի սրտին, կարդացէք Յովհաննու Աւետարանը: Յովհաննես Քրիստոսի հետ իր մշակած եւրու յարաքերութեան և գործակցութեան շընորին ունեցաւ զգայուն ոգի մը, որ զինք դարձոց Սիրոյ Առաքեալը: Անշուշտ կը ծագի հետեւեալ հարցը: Քրիստոս բոլոր աշակերտները չսիրեց: Ենական է սիրեց, Ան չիւտարքրունցաւ համայն մարդկութեամբ, անշուշտ թէ հոգաց և մտածեց բոլորին մասին: Արդեօք ամ չսիրեց աշխարհը. Աստուած սիրեց և Քրիստոս ալ բնականարար սիրեց, ինչպէս Յովհաննես

Աւետարանից կը գրէ. «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորուի, այլ ընդունի յափունեական Կեանքը» (Յովի. 3:16): Հապա ինչո՞ւ համար յատկապէս շնչուել եւ ըսել. «Եւ աշակերտներն մէկը զօր Յիսուս կը սիրեր, նուած էր Յիսուսի բռվ» (Յովի. 13:23): Քրիստոս բոլորը սիրելով հանդերձ, մասնաւոր աէր ունէր, օրինակի համար Ան լացաւ Ղաղարոսի գերեզմանին վրայ, իսկ խաչելութեան ժամանակ Ս. Կոյոր յանձնեց Յովիանեսու Առաքեալի խնամքին: Այս է մասնաւոր սիրոյ և վատահութեան արտայատութիւնը:

Ինչպէս յիշեցի, Յովիանեսի մէջ անարատ և ճշմարիտ սէրը զարգացաւ Քրիստոսի հետ իր ունեցած շփումներու պատճառաւ: Մենք բոլորս ալ ընածին սէր ունինք մեր մէջ, սակայն մասնաւոր մէկը սիրելը աւելի ուշադրութեան և զոհողութեան կը կարօտի և այդ կու գայ իրար ճանչնարկ և կատարուած գործերուն հաւատալով: Իսկ առանց անանձնական և անկեղծ սէր ունենալը մեր մէջ կը զարգանայ Աստուծոյ շնորհներով, որ մեզի տրուած երկնային պարգև մըն է: Յովիանեսու ալ ունեցաւ բարկութեան և փոթորկալից պահեր, սակայն յաղթահարեց այդ բոլորին՝ շնորհի իր զգայուն և ազնի ոգիին... անոր մէջ անեցաւ սիրոյ և ըմբռնողութեան ոգին և զինք դարձուց հաստն և մարդկային սիրուր ողորկող ու խրատող Աւետարանչին՝ քարոզելով, որ իրար սիրեն եւ թէ «Աստուած սէր է»:

Յովիանեսի ձկնորսութեան արթեստը ժառանգած էր իր հօրմէն: Հայրը կեանքի մէջ յաջողած անձ մըն էր և հիմական վիճակն ալ լաւ էր և կըրնար ծառաներ ունենաւ իր տան մէջ: Սակայն Յովիանեսու անհանդարտ էր եւ կը զգար թէ իր կեանքին մէջ բան մը կը պակսէր: Երբ ան լսեց, որ մարդարէ մը անապատին մէջ կը քարոզէր և Յորդանան Գետին մէջ մկրտութիւն կը կատարեր, խնդրեց իր հօրմէն, որ մի բանի օր աշխատանքէ զերծ կացուցանէր զինք, որպէսզի երթար և լսէր այս անձանոթին խօսքը: Ուստի Յովիանեսու Անդրեասին հետ, որ նոյնպէս ձկնորս մըն էր, գնաց Մկրտչին պատգամը լսելու: Զգայուն այս երիտասարդին համար չափազանց տպատրիչ էր այն տեսարանը, երբ քարոզչին հրաւերին ընթառածելով մարդիկ Յորդանան Գետին մէջ մտնենալով կը մկրտութիւն ապաշխարելով և դարձի գալով: Սակայն այս դեպքերուն մէջ աւելի խորունկ տպատրութիւն բողուց իր վրան, երբ Մկրտիչը բարձրածայն յայտարարեց, բաւելով. «Ես ձեզ կը մկրտեմ ջուրով. ձեր մէջ կայ մէկը, զոր դուք չեք չանչնար, որ ինձմէ յետոյ պիտի գայ և որուն կօշիկներուն կապերը քակելու արժանի չեմ ես... Ահա՝ Գառն Աստուծոյ, որ կը բառնայ աշխարհի մեղքը» (Յովի. 1:26—29):

Յովիանեսի դարձուց իր գլուխը և ոչարտութիւնը կեղործացուց այն կէտին վրայ, որ Մկրտիչը ցոյց կու տար: Ան ցեցում մը ունեցաւ՝ տեսնելով իր զարմիկը՝ Յիսուսը, Մարիամի և Յովիէփի գաւակը, որուն մասին Մկրտիչը կ'ըսէր «Գառն Աստուծոյ»: Ան հոգեկան ցնծութեան մէջ էր եւ մտքով տարուած ի տես այս անակնակ դէպքին և յայտարարութեան: Ան յաջորդ օրը գնաց Յիսուսի մօն՝ անոր հետ խօսակցելու համար, երբ արդէն իսկ շատ մը խորհուրդներ կը տողանցէին իր մտքին մէջ և վատահարար իինեց պատանեկութեան օրերուն նազարէթի մէջ ընտանեկան այցելութիւններ կատարած էին և Յիսուսի հետ խաղցած էր նեղ փողոցներուն մէջ: Իսկ նիմա Ան «Գառն Աստուծոյ» կը յայտարարուէր:

Այս առաջին յայտարարութեան և Յիսուսի հետ իր հանդիպման առաջին խաչելու Յովիանեսու հաւատաց որ Յիսուս՝ իրավես «Գառն Աստուծոյ» էր, և իր Աւետարանին մէջ գործածուած գլխաւոր բառերէն մին է

«հաւատալ» բառը, որ մօտ հարիսր անգամ գործածուած է: Ան անձնական փորձառութեամբ զաց հաւատքի գօրութիւնը և հաւատալու իրականութիւնը: Ան կը գրէ: «...ան գիտէ որ ճշմարիտ կ'ըսէ որպէսզի դուք ալ հաւատաք» (Յովհ. 19:35): Յիսոս կը սիրէ բոլոր մարդոց, ասկայն Ան մասնաւոր սէր ունի այն մարդոց նկատմամբ, որոնք կը հաւատան իրեն: Թերեւս բացի ազգականական կապէ, գիտաւոր պատճառը այն է, որ Յովհաննեն հաւատաց իրեն և Յիսոս մասնաւոր սէր ունեցաւ անոր նկատմամբ և գիտաւոր որ Յովհաննեն իր Աւետարանը տարածելու առաքելութեան մէջ մեծ բաժին մը պիտի ունենար:

Յովհաննեն նախ հաւատաց և ապա անեցաւ սիրոյ մէջ: Իր Աւետարանին մէջ ան չի լիշուիր անունով, այլ «Եւ աշակերտներէն մէկը զար Յիսոս կը սիրէր» (Յովհ. 13:23): Ան Յիսոսի մօտ նատած էր եւ մեզի կը պատճառէ: Տիրոց խօսքը. «Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրէր զիրար. ինչպէս եւ ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէք զիրար» (Յովհ. 13:34): Գիտաւոր բնաբանն է «սիրեցէք զիրար... առով ամէնքը պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք» (Յովհ. 13:35):

Օր մը երբ Յովհաննեն քարոզչական առաքելութեան մէջ էր, բան մը զինք վրդովեց: Ան վերադարձին հետեւեալը հաղորդեց Քրիստոսի. «Վարդապէն՝ մէկը տեսանք որ քո անունվդ դեւեր կը հանէր, բայց մեզի հետ չեր շրջեր. եւ արգիլեցինք զայն: Եւ ան ըսաւ. Արգելք մի՛ ըլլաք անոր, որովհետեւ չկայ մէկը որ իմ անունով զօրաւոր գործեր ընէ ու կարենա ինձի հայինյել. վասնի ով որ մեզի հակառակ չէ՝ մեր կողմն է» (Մարկ. 9:37—39): Յովհաննեն տակախն իր տուած պատճառը «սիրեցէք զիրար»-ը գործնականի չէր վերածած:

Սատուած և իր սէրը սահմանափակուած է: Յովհաննեն Քրիստոսի տուած պատասխանը ստանալէ նոք աւելի ընդարձակեց իր միտքն ու հոգին եւ անելի հաստացա իր քարոզչական առաքելութեան մէջ, գրելով. «Սիրելինե՛ր, սիրենք զիրար, բանի որ սէրը Սաստուծն է. ամէն որ որ կը սիրէ Սաստուծն ծնած է եւ կը ճանչնա զԱստուած» (Ա. Յովհ. 4:7): Յովհաննենի համար ըսինք, որ զգացուն եւ ազնի հոգի ունեցող երիտասարդ մըսն էր եւ սակայն որպէս մարդ՝ ի պահանջել հարկին բարկացող, համարձակ եւ քաջ մէկը, ճշմարտապէս իրաւացի իր եղրօրը հետ «Որդիք Որոտման» կոչուելու:

Մենք այն տպաւորութիւնը չունենանք, որ Յովհաննեն տարիքով միւս Սուպերեալներէն փոքր ըլլալուն պատճառաւ տկար էր: Քրիստոսի խաչելութեան ժամանակ խաչի մօտ միայն Յովհաննեն ներկայ էր քաջարար: Քրիստոս խաչին վրայէն նայեցա իր շուրջ գունուղեքրոն, որոնք ատելութեամբ լեցուած էին եւ հօգիով ալ կոյր էին: Սակայն Յիսոս տեսաւ նաև Յովհաննեն Աւետարանինը, որ հասկացած էր իր առաքելութեան նպատակը, խաչելութեան և յախտենական կեանի իմաստը: Յովհաննենի ներկայութիւնը ճշանն էր խկական սիրոյ և քաջութեան սիրոյ, որովհետև ան որպէս Սուպերալ ճանչցուած էր ծողութորին եւ իր կեանքը վտանգի տակ ունելով հետեւած անցուտարձերուն և Սաստուծորդույն ու իր մանկութեան ընկերոց և ազգականին անարգ խաչելութեան և մահուան: Ան ճշմարիտ սիրոյ պատճառը վերածած էր գործնականի...:

Քրիստոս իր տագնասին եւ ցաւերուն մէջ դառնապով իր մօրը եւ Յովհաննենին, ըսաւ. «Ո՛վ կին, անի՛ քո որդիի: Ապս ըսաւ աշակերտին. Անի՛ քո մարդի: Եւ այդ պահէն աշակերտ իր քով առա զայն» (Յովհ. 19:27):

Քրիստոսի հրաշափառ Յարութենէն եւր Սուպելալներ քարոզեցին Երուսաղէմի մէջ: Հալածանթերը սկսան, անոնց արգիլունցաւ քարոզել եւ ո-մանը ալ բանտարկունցան: Պետրոս և Յովհաննէն պատասխանեցին. «Եթէ Սատունոյ առջև արդար է աւելի ձեզի՝ մտիի ընել բան Սատունոյ՝ դո՞ւք որոշեցէք: Իսկ մենք չենք կրնար չխօսիլ, ինչ որ տեսանք եւ լսեցինք» (Գործ 4:19—20): Անոնք սպանալիքներու ենթարկունցան, սակայն քաջարար շարունակեցին իրենց քարոզութիմը՝ վկայութիւն տալով Քրիստոսի իսկական Յարութեան: Անոնք այլևս բոլորովին փոխուած եւ գօտեալուած էին Քրիստոսի սիրոյն մէջ:

Սիրոյ Առաքեալ՝ Յովհաննէսի մասին Կ'ըսուի, թէ երբ շատ ծերացաւ եւ չէր կրնար քաղել, հաւատացեալներ զինք տոնէ տուն կը փոխադրէին, որպէսզի քարոզէր: Սակայն ան միշտ կը կրկնէր, ըստով. «զիրար սիրեցէք»: Օր մը մէկը համարձակութիւնը ունեցաւ հարցնելու, թէ ան ինչո՞ւ համար որիշ բան չէր ըստը: Յովհաննէս Աւետարանից պատասխանեց. «Որովհետեւ ասիկա մեր Տիրոց միակ պատճամն է: Եթէ մենք ասիկա կատարենք, որիշ որեւէ բանի պէտք չենք ունենար»:

Յովհաննէս բացադիկ կարողութիւն ունէր ըմբռնելու հոգեւոր ճշմարտութիւնը: Ան տաղանդաւոր ու զօրաւոր միտք մը ունէր: Ան մէզի կը նկարագրէ մարդեղութեան խորհուրդը: Ան խորապէս կը գիտակի եւ կը հասկնայ Սատուածորդույն աշխարհ գալը: Վերջապէս միայն ինքն է, որ կը գրէ. «Սկզբէն էր Բանը, և Բանը Սատունոյ բռլ էր, և Բանը Սատուած էր...: Եւ Բանը մարմին եղաւ և բնակեցաւ մեր մէջ. և մենք տեսանք անոր փառքը, որպէս շնորհով եւ ճշմարտութեամբ լի Միածնի փառք՝ ստացուած Հօրմէն» (Յովհ. 1: 1, 14): Այս Աւետարանին բացումը գրական բարձր մակարդակ մը կը ներկայացնէ:

Յովհաննէս Քրիստոսը կը հասկնայ որեւէ աշակերտ աւելի: Ան այս կարողութիւնը ունէր և խորապէս կը գգար ամէն բան: Ան գիտէր Քրիստոսի մօտնալու զաղուննիքը: Ան կը գրէ. «Իսկ եթէ լոյսին մէջ քաղենք, ինչպէս որ ինքն է լոյսին մէջ՝ հաղորդութեան մէջ Կ'ըլլանք իրարու հետ, և անոր Որդիին՝ Յիսուսի արիւնը կը մաքրէ մեզ ամէն մէղք» (Ա. Յովհ. 1:7): «Ով որ Կ'ըսէ թէ ինք կը բնակի Անոր մէջ՝ պարտի այնպէս ընթանալ, ինչպէս որ ա'ն ընթացաւ» (Ա. Յովհ. 2:6):

Յովհաննէս Աւետարանից Սիրոյ Աղքիրէն՝ Քրիստոսէն ստացաւ սիրելու շնորհը, որ ուստանով և կամ պաշտօնով ձեռք չի բերուիր: Ան իր սիրելու ձիրքը, մտային և հոգեկան կարողութիւնները միացնելով մեզ Կ'առաջնորդէ լոյսի ճամբայէն: Ան մեծ սիրու մը ուներ:

Այս գրութիւնը Կ'եզրափակենք հետեւեալ մէջքերումով. «Ան որ սկզբէն էր, որուն մասին լսեցինք, որուն ականատես իսկ եղանք, որուն նայեցանք, և մեր ձեռքերը շօշափեցին կենաց Բանը—քանի որ կեանքը յայտնուեցան, և մենք տեսանք, կը վկայենք ու կը պատմենք ձեզի այն յախտենական կեանքը՝ որ Հօր մօս էր և յայտնուեցա մէզի—զա՞յն է որ տեսանք ու լսեցինք և կը պատմենք նաև ձեզի, որպէսզի դուք ալ հաղորդակից ըլլաք մէզի հետ: և մեր հաղորդութիւնը Հօր մօս է և անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի հետ: Եւ այս բանը կը գրենք ձեզի, որպէսզի կատարեալ ըլլայ ձեր որխախութիւնը» (Ա. Յովհ. 1:1—4):



## Հ. Հ. ՔՅՈՒՍԵՅԱՆ

### ՆՈՐԱՀԱՅՏ ԾԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի հայերեն ձեռագրերի Մայր ցուցակի Գ հատորը\* խմբագրելիս մեր ուշադրությունը գրավեց № 944 ձեռագրում «Եղիշէի վարդապետի ասացեալ վասն հաղորդութեան» (14ար) կանոնախառական բնագրին հետևող և «Երանելոյն Յոհաննու Ռոկերերանի վասն չսգալոյ զվախճանեալսն, մանաւանդ, որ տղայր անարատը թողին զայս կենցաղս» խորագրով ճառին (16ա—20ա) նախորդող անխորագիր («Ալլուս») ճառագրական մեկ միավոր (14բ—16ա), որը դարձյալ նվիրված է Սուրբ Հաղորդությանը:

Ենթելով այն իրողությունից, որ ճառիս սուրբգրադին վկայությունները համապատասխանում են Աստվածաշնչի հայերեն ընկալյալ քարգմանությանը, պետք է ենթադրել, թե Ենդիճնակն անհայտ այս երկը (եթե այն տեղայնացված տարբերակը չէ օտարապեսու բնագրի) հայ հայլատացյալի հոգևոր պետքերը դարմանող մի հնանուրույն աշխատություն է: Ի տարբերություն ավելի ուշ շրջանին հատուկ եկեղեցակենտրոն վարդապետության, այսունո՞ւ իշխողը քրիստոնակենտրոն վարդապետությունն է, որ ավելի հատուկ է դասական հայրախոսությանը: Սա անուղակիրեն վկայում է, որ խնդրո առարկա միավորը առնչվում է վաղ շրջանի ավանդույթից\*\*:

Իր լեզվանական հկարագրով այն շատ մոտիկ է Եղիշէի և Ռոկերերանի ճառերում կիրառված ճարտասանական ձևերին, որոնք համեստություն են բարձր ու ազնիվ հուզականությամբ: Այսուամենայնիվ, թիշ թե շատ հավաստի փասությի գործության պատճառով, դժվար է հստակ կարծիք հայունել ճառի հուզակային պատկանելության մասին:

Ճառն աչքի է ընկնում իր հարուստ բառագանձով: Այստեղ կիրարե-

\* «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» հո. Գ, կազմեց Օ. Եղանեանը, խմբագրեց Փ. Անդրահենը, Յ. Քյուէլեանը (անտիպ):

\*\* Տես թեկուզ «Յովհաննու Մանդակունոյ Վասն զգուշութեամբ մերձնենալոյ ի մարմին և յարին Որբոյն Աստուծոյ» ճառը («Տևան Յովհաննու Մանդակունոյ Հայոց հայրապետի ճառը», Վենետիկ, 1860, էջ 165—173):

ված «Ճաղկոծ» և խոռոքադ բառերը բացակայում են նոր Հայկացյան բառահանում:

Ծառը հրապարակվում է մեզ հայտնի միակ՝ № 944 ձեռագրի հիման վրա: Ձեռագիրը ժողովածու Ոսկեփորիկ է, որն ընդօրինակվել է 1431 թ. Երեք անապատում Հովհաննես (1ա—52բ) և Ղազար (53ա—227ա) արելանների ձեռքով: Ստացողը Շնոփոր խաթունն է: Թերթաքանակը՝ 227: Պրակ' Ա—Ի×12 (ԺԸ 11, ԺԹ 8, Խ 4): Կյուք' թուղթ: Մեծություն՝ 28×18: Գրություն՝ միասբան: Գիր՝ բոլորգիր (տարրեր ըստ գրիշների): Տող՝ 27 (երբեմն՝ 22—26)\*\*\*:

### [ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ]

Լուիցուք բանիցս, կամակար յաժմարութեամբ մատիցուք և ճաշակեացուք զքաղցրութիւն Փրկչին մերոյ: Զգուշութեամբ և երկիութիւ<sup>1\*</sup>, հաւատով և յուսով, սիրով և խոնարհութեամբ դիմեսցուք ծարաիրս առ աղբիրն կենաց և արքուք զիմաստութիւն, արքուք զկենանութիւն արքուք զլոյս և զճշմարտութիւն: «Ո» որ ծարաւիր էք, ասէ, երթա[...]ք ի ջորճ և վաճառեցէք առանց արծ[աթ]ոյ զգրի թողութիւնն<sup>1</sup>: Այս[ս]պէս և ասու պարու է ասել. «Եկայք ճաշակեցէք զգրի թողութիւն, եկա[...]ք արբէք զանգին փրկութիւն, եկայք զմալեցարուք յուսս փափկութեան, առէք զլոյս, առէք զգիտութիւն, առէք զմանանայն կենաց, զանձախելին, զանձորելին, զանիմանալի ծերն զերիտասարդեան վազեսցէ, տղայն զմանուկն յառաչեսցէ, կոյսն զամուսնացելովն և ամուսնացեալն զպառաւովն անցցէ, լրեցարուք զբարիոք լրբութիւն զառիթ կենաց, զառաշնորդն փրկութեան: Գովելի է խիզախութիւնն, պատուելի է համարձակութիւնն, փարելի է տենչումն, դեղ է կենաց, բժիշկ է բաղձալի<sup>2\*</sup>, նորոգումն ոգոց, մաքրութիւն է մարմնոյ, լոյս խաւարելոց, յոյս յարութեան, ճանապարհ ճշմարտութեան, դուռն կենաց, հաց իմանալի, բաժակ անհետազաւտելի: «Երանի ո բաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոր[ա] յագեսցին»<sup>2</sup>. միայն զգուշութեամբ, միայն զջմամբ, միայն մաքրութեամբ, միայն ապաշխարութեամբ, միայն երկեղի և ամարթսածութեամբ<sup>3\*</sup> և պատկառանաւք, զմովեսր պատկառան, միայն տքնութեամբ և արքութեամբ, միայն ողորմածութեամբ և բարեգործութեամբ: Մի՛ որ ոհակալ մերձեսցի, մի՛ որ՝ հսպարու և ամբարտան, մի՛ որ՝ անզեղ և անարտան, մի՛ որ՝ ազատ և անիրան, մի՛ որ՝ անգույք և անկարելից, մի՛ որ արքեցոյ և շոայլ, զի մի իբրև զնադարք<sup>4\*</sup> և զլբիուդ այրեսցին<sup>5</sup>, զի նոցա պատմումանըն ամրող մնացցին՝ յարիմակ մարմնոց մերց, զի այնպէս լիցի, յորժամ որ անարժանութեամբ հաղորդի: «Նայ և զմարմնոյ վիշու և զվանգ առարեալ յալու առնէ ասելով. «Հիանիք բազումք ախտածէոր»<sup>6</sup> վասն այնպիսի լրբութեան իցէ: Մի ոք խոռոքադ հեշտասիրութեամբ ախտից, զի մի տան-

\*\*\* Ծկարագրությունն ըստ վկայակոչված Ձեռագրացուցակի:

<sup>1\*</sup> Ճեռ. երկեղի:

<sup>1</sup> Նայի ԾԵ 1:

<sup>2\*</sup> Ճեռ. բաղձալի:

<sup>2</sup> Մատթ. Ե 6:

<sup>3\*</sup> Ճեռ. ամարթածութեամբ:


<sup>4</sup> Ճեռ. զԱնարադ:

<sup>5</sup> Տե՛ս Ղաւ Ժ 1—2:

<sup>6</sup> Ա. Կորնթ. ԺԱ 30:

չեսի, իբր զարդնական զայն, մի՛ ոք գող է ագահ և խորող տերունականաց, զի մի քարկոծեսի յաստուածային պատուիրանացն իբր զԱքար, զԱմրան առ Յեսու Նաւեան<sup>5</sup>, մի՛ ոք լիբր և ապառում, որպէս Յուղա, զի մի առ տեղաւ ձաղլոծ լիցի յաստուածախաս թերանոյ, մի՛ ոք զլացաղ և ոիշտ շնորհացն Աստուծոյ՝ ոչ տալ առատութեամբ և սիրով ի տրապիզիոն նոգեսր զպարգևս Փրկչին, զի մի առժամայն մահացի, իբր զԱնանիսան և զԱսփիրապ<sup>6</sup>, մի՛ ոք ցանկացող ատար վայելից և շնորհաց, զի յանդիմանալ և հեռանիպած լիցի իբր զԱքարը<sup>7</sup> և զՍիմոն<sup>8</sup> զայն եղեկելի, զի ամենայն, որ առնել զմեղս, ծառայ է մեղացն, և ծառայն ոչ լիցի ծառանգ տերունացն: «Եղերոր, ասէ, սորբն, զի ես սորբ եմ»<sup>9</sup>: Տէր Աստուծ մեր և սորբութիւն վայել է սորբոց և տաճար Աստուծոյ սորբ է, ասէ առաքեալ, որ «Եք դուք և բնակեցայց, ասէ, ի նոսայ»<sup>10</sup>, և զնացից և ինձ սեփականեցից ի վերստին սիրով: Եւ զի հաղորդութիւն միատրութիւն է ընդ Քրիստոսի, և որ Որդի բնակէ, անդ՝ Ա' Հայր, Ա' Հոգի: Եւ ի հաղորդելն սորբութեամբ կառք քրովբեկան լինիցին մարդիկ հողեղեն բնութեամբ ամենայսուրը Երրորդութենէ: Եւ զինչ ասեմ կառք քրովբեկան Աստուծ ընդ Աստուծ միատրեալ: Հոր է հաղորդութիւն, և ի հաղորդելն, առ ով գուանք յարդառեակ կամ եղեգն[ե]ա, մնան մեղս, այդէ և տանջէ գործողն, իսկ յորս գըտանէ ուկիատեսակ առաքինութիւն, հրազինէ և մաքրէ: Վասն որոյ ոչ հուսահատութեամբ հրած[ար]ելն [է] բարի և ոչ՝ լրբութեամբ խիզախելն, այլ ընդրութեամբ վայելելն, և որ պասկի և պատույ առնել արժանի և փառար փայլեցուցանէ անզուգական և գերապայծառ, յորս լիցի ամենեցուն մեզ վայելել շնորհք մարդասիրին Քրիստոսի, որ է արհմեալ ընդ Հայր և Հոգուն Սրբոյ յախտեան:

<sup>5</sup> Տե՛ս Յես Զ. 18, Է. 1—26, Ա. Մասց. Բ. 7:<sup>9</sup> Ա. Պետ. Ա. 16:<sup>6</sup> Տե՛ս Գործը Ե 1—10:<sup>10</sup> Բ. Կորնթ. Զ. 16:<sup>7</sup> Տե՛ս Գ. Թագ. ԺԶ. 29—ԽԲ. 40:<sup>8</sup> Տե՛ս Գործը Ը 9—24:



## ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

### ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱՎԵՏԱՐԱՆԸ\*

ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ. ԽԱԴԱՅԻ ՎԱՆՔ

Վաղարշապատի առաջին հայագիր դպրոցից հետո, Հայաստանի բնիր գավառներում բացվեցին նույնատիպ դպրոցներ, որոնք միաժամանակ գրչության կենտրոններ էին: Ավելի խոշոր գրչության կենտրոններն ու դպրոցներն ունեին նաև մատենադարաններ, որոնք ծառայում էին դպրոցին և միաժամանակ պահպանում ձեռագրերը հաջորդ սերունդների համար: «Եթե դպրոցը մարդկային մտածողության զորանցն է, ապա մատենադարանը՝ նրա գինարանն է»—ասում էին միջնադարում: Եթե մեր նախնիներից ստացած ամենամեծ ժառանգության համար պարտական ենք մեր գրչության կենտրոններին, ապա նրանց փրկության և մեր օրերը հասցնելու համար՝ մատենադարաններին՝ տերունական, վանական թե անձնական:

Վաղարշապատից հետո նշանավոր էին Սևանի, Բագրևանդի, Արշակունյաց, Մարենցաց, Տաթևի, Արգիշտի, Անիի և այլ դպրոցները, գրչության կենտրոններն ու մատենադարանները, որ մշակվում, կատարելագործվում էր հայ գրչության արվեստը, ստեղծվում մատենադրությունը:

Սլդպիսի մի հզոր մշակութային կենտրոն էր Արցախի Խաղավի վանքը՝ իր նշանավոր դպրոցով, գրչության կենտրոնով, մանավանդ մատենադարանով, որի շահած-պահած ձեռագրերը այսօր Հայ ժողովրդի հոգևոր գանձարանի թանկագին գոհարներն են:

Խաղավանքը (Խաղի վանք, Խաղավի վանք, Խաղարի վանք, Խաթրավանք) գտնվում է Վաղոնիս գյուղից 5—6 կմ արևմուտք, Թարթառ գետի աջ ափին, անտառածածկ մի լեռնաբազուկի վոր (այժմ Լեռնային Ղարաբաղի հանրապետության Մարտակերտի շրջան): Կառուցվել է հանուն հայոց մեջ քրիստոնեություն տարածող Թադևոս առաքյալի յոթանասուն աշակերտներից

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1992 թվականի թ-ժ-ԺԱ. միացյալ համարից:

մեկի՝ Խաղի: Վանքը սկզբից անոտի եղել է Արցախի Մեծ Կողմանք կամ Մեծ-Կվենք գավառի առաջնորդարան<sup>32</sup>:

Խաղավանքը 12-րդ դարում հիշվում է որպես Վերին Խաչենի կամ Ծարի իշխանության հոգևոր կենտրոն: 13-րդ դարի առաջին կեսում, երբ Վախտանգ Բագրի իշխանի մահից հետո Հաթերքի իշխանության տարածքը բաժանվեց Աերքին խաչենցիների և ծարեցիների միջև, Հաթերքի առաքելադիր հոչակավոր Խաղի վանքը դարձավ Ծարի իշխանության հոգևոր կենտրոնը և տոհմական տապանատոն, որը չխանգարեց, սակայն, Խաղավանքի եպիսկոպոսանիստ և գլխավոր տոհմական տապանատոն մնալու<sup>33</sup>:

Խաղավանքի վանական համալիրը՝ կաթողիկեռով, կից եկեղեցիներով, մատուններով ու բազմաթիվ օժանդակ շինություններով սաստիկ տուժել է 1139 թ. երկրաշարժից: Մի քանի տարի անց, սեղուկ թուրքերը հիմնահատակ կործանել են խաչենցիների հոգևոր կենտրոնները և սրբությունները գերեզմանել: Մինչ այդ էլ Մովսես Կաղանկատվացին ողբում էր անօրինների բարբարություններից կործանված երկրի համար. «Իրկեզ եղեալ յանօրինաց՝ կտակարանք և սպառ, և տեղիք կալոյ նոցա»:

Խաղավանքի հետագա ծաղկումը կապվում է իշխանական պայազատներից Հովհաննես վարդապետ Խաչենցու հետ: Հայրենի գավառում հոգևոր ծառայությունից հետո, ատանձնում է Սարգիս Զարարյան սպասավորի Զարարէ և Խվանէ որդիների դաստիարակությունը: 1170—80-ական թվականներին Սահահինի, 1180-ականների<sup>34</sup> Հայրատի վանքերի առաջնորդն է, հայտնի շինարարական իր գոծունեությամբ, իսկ 1195—1205 թ. վարդապետը կրկին Խաչենումն էր և վերականգնում է Խաղավանքը:

Խաղավանքում, որ և տաճար կար և այլ շինություններ, Հովհաննես վարդապետը կառուցում է մի եկեղեցի, հատուկ հապատակով. այսուել պետք է հավաքվեին վանքում եղած բոլոր գրքերն ու սպառը: Այդպես էլ ամուս է, և 1204 թվականին ավարտում է ձեռագրերի և սպառի համար հախատեաված շինքը, և թանկագին գանձերը հավաքում նրա մեջ:

«Ի ՈՒԳ (1204) թուիս, ես տէր Յոհաննէ շինեցի զեկեղեցիս և ժողովեցի զիաշ և զգիրը որ ի ամա, եւ արկի զ. Զորթացն այգին և զմատադիս՝ բազում աշխատութեամբ: Եւ եսու զվանը իր սահման իմ առա աղբաւր Հասանա և իր որդեացն՝ Հաթերք տեառն միջնորդութեամբ:

Ով խափանէ, խափանեցի ի կենացն Աստուծոյ:

Ասպա նոյն տողից շարունակվում է արձանագրությունը նոյն գրով, բայց արդեն Հովհաննեսի ավագ եղբայր Հասանի անունից. «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Հասանայ. որ երբ իմ աղբերս զեկեղեցիս շինեաց ու զվանը իման երես, ես զիսնառորդակս իր սահմանովն ի եկեղեցիս տուի:

Ով հակառ(ա)կս՝ Աստուծոյ է հակառակ:

Ով զայս գիրս խափանէ, չունի թողովթին յԱստուծոյ»<sup>35</sup>:

Սակայն դրանով գործը չի վերջանում: Նա նոր շինության է նվիրում Զորթանց այգին և բազում աշխատությամբ հիմնած նորատունկները: Ուրեմն

<sup>32</sup> Բ. Ողորմարյան, Մ. Հասրաթյան, Խաղավանք-Խաթրավանք, «Հայկագեան հայագիտական հանդէս», հ. Ժ. Բեյութ, 1982—1984, էջ 24:

<sup>33</sup> Բ. Ողորմարյան, Մ. Հասրաթյան, Խաղավանք-Խաթրավանք, էջ 21:

<sup>34</sup> Սույն վիմագիր արձանագրությունը ցուցադրվում է Մաշտոցի ամվան Մատենադարանում, որից կատարել ենք վերծանությունը:

այս եկեղեցի-շինությունը՝ հաստատություն է: Այնտեղ ձեռագրերը ոչ թե պիտք է միայն հավաքվեն, այլև բազմանան. այսինքն՝ այն մատենադարան է և գրչության կենտրոն, այլև դպրոց, ինչպես կուսանենք այնտեղ հավաքված ձեռագրերից, իսկ նրանց հիշատակարաններից կիմանաքը դպրոցի, ուսուցիչների և աշակերտների մասին: Նորաշեն եկեղեցին Հովհաննես վարդապետի հոգածության առարկան էր:

Ավարտից հետո նա ամբողջ վաճը իր ամեն ասիմանով նվիրում է իր ավագ եղբօրը՝ Հասանին: Վերջինս ընդունելով մեծագույն նվերը, նորաշեն եկեղեցուն է նվիրում Խնձորաբակը՝ յոր սահմանովը: Նշանակում է, նորաշեն եկեղեցին խկապես ուսումնական կենտրոն է, որի գոյատևման և ծաղկման համար բազում աշխատություն է հարկավոր՝ սեփական գյուղերով և այգիներով:

Որեմն սույն արձանագրությունը Խաղայի վաճքի դպրոցի, գրչության կենտրոնի, մատենադարանի հիմնադրման վավերագիրն է, որն հաստատվում է նաև նրա փառավոր գործունեությամբ, անոնեները մեզ անհայտ վարդապետների, գրիչների, ծաղկողների, արծաթագործ ու ոսկերիչ հմուտ վարդապետների շանքերի շնորհիվ մեզ հասած սակավաթիվ արդյունքներով, որոնք հիմա թանկագին մասնաբներ են, թեևուզ հիշատակարաններում պահպանված վկայությունների ձևով: Այս հաստատվում է նաև ճարտարապետական հորինվածքների համարնանությամբ:

Խաղավանքի համալիրի առանձին հուշարձանների ուսումնասիրությունը մասնագետներին բերել է այն եզրակացնության, որ նրանցից մեկը իր ճարտարապետությամբ համապատասխանում է միաժամանակ և՛ գրչության կենտրոնի, և՛ մատենադարանի, ինչպես նաև դպրոցի, որի մեծ քառակուսի դահլիճը մեծ երդիկով ծառապէլ է ուսումնական պարագաներների և գրչությամբ գրադպելո համար, այսինքն դպրատուն և գրչառուն, իսկ խոշոր որմնախորշերով հաջորդ դահլիճն՝ ձեռագրատուն՝ մատենադարան, նրանաւ Սահաննի, Հաղբատի, Գոշավանքի, Սաղմոսավանքի, Հոռոմոսի, Դադիվանքի գրատներին<sup>35</sup>: Թե՛ն ինչպիսի և քանի ձեռագիր է ժողովել Հովհաննես վարդապետը իր նորակառուց մատենադարանում, անհայտ է, քայլ հայտնի է դպրոցի շրջանավարտներից մեկի նվերը դպրոցին ու մատենադարանին, որը հասել է մեզ և պահպում է Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 6288):

Սարգիս քահանան ավարտում է Մեծ կողմանց եպիսկոպոսարան Խաղայի վաճքի դպրոցը, 13-րդ դարի սկզբում, ձեռնադրվում քահանա, և ի պատիվ «իր սենյեան տեղի» որոշում է ձեռագիր նվիրել դպրոցին: Այն քաղաքում, որ հոչակված էր նաև չքեղ ձեռագրերի պատրաստմանը ու վաճառքով, գնում է «ի հալավ ընչից իրոց իր ցանկալի» «մեծայժախ», ոսկեգիր և ոսկեճանանշ ծաղկար զարդարեալ... կենսայքեր Ավետարան» և ընծայում Մեծկողմանց եպիսկոպոսարանի Սուրբ Գրիգոր Եկեղեցում «որ է իր տեղի սենյեան», որ «սենյակ սրբութեամբ ի մէջ Եկեղեցոյ, և զարգացեալ ի մէջ իմաստուն և հոգևոր արանց»: Նվիրատվությունը տեղի է ունենում 1223 թ. «Ու լիշտանութեան հզարի Հասանայ որդոյ Վահստանգա, եւ ի հայրապետութեան տեան Յոհաննեսի»<sup>36</sup>:

<sup>35</sup> Բ. Ռուբերթյան, Մ. Հապրաթյան, Աշլ. աշխ., էջ 48—49:

<sup>36</sup> Մատենադարան ձ. № 6288 էջ 358ր—359ս: Հմտ. Ա. Մաթևոսյան, Հաղերեն ձեռագրերի հիշատակարաններ Ժ. դար, Երևան 1984 թ. էջ 134: Ձեռագիրը գրվել է 1211 թ. Հաղբատում, տեղի դպրոցի սան, Անի քաղաքացի Սահանի պատվերով, Հակոբ գրչի

Այստեղից պարզվում է, որ Մեծ Կողմանց եպիսկոպոսարան Խաղավանքը բահանայական դպրոց է ունեցել, որտեղ աշակերտները դաստիարակվում էին խաստուն և կատարյալ ուսուցիչների ձեռքի տակ, և պարտում լցված դպրոցի և դաստումների նկատմամբ երախտագիտությամբ ու այն գիտակցությամբ, թե «սիրոյ զարութիւն գերազանց է քան զբնութիւն», որը էլ իր եերթին խոսում է ուսման դաստիարակիչ ազդեցության մասին:

Հիշատակարանի շարադրանքը և գիրը, ձեռագրում բացակա ամենաբաների նկարների կատարումն ու հավելումը, ձեռագրի վերատին կազմումը վկայություն են գրչության արվեստի բարձր մակարդակի, որ կար Խաղավանքում՝ 13-րդ դարի սկզբներին:

Թե Սարգիս քահանայի նման քանի շրջանավարտ է տվել Խաղայի վանքի դպրոցը, և քանի ձեռագիր է մուծվել մատենադարանում հաշորդ բանամյակում, տեղեկություն չունենք: Միայն հայտնի է, որ 1244 թ. Խաղայի ձեռագրատան հավաքածուն միանգամից հարատանում է մի քանի այժմ առավել խանկագին ձեռագրերով, որոնցից մեկի մեջ պահպանվել է այդ մասին հետևյալ տեղեկությունը. «Բարկութիւն Սաստիճոյ ենաւ մեզ և ծնողաց մերոց և քրիստոնեից խև ազգես նետողաց արելից, որ տատար կոչին և զարձար սիրեն»:

Կործանելով պարսից թագավորությունը, սրանք մտնում են «յաշխարին Հայոց և Սղուանից և առավել զանթի զավասու և զբաղարայ, ի սուր սուերի մատնեցին զազն քրիստոնեից՝ զիշխանս մեծամեծու և զումիկ ծողովորական... տապալեալ և քանդեալ զեկեղեցիս և ըսպասա սըրբութեան և զնշանս տէրունական յաւար առեալ յանարինացն ի գերութեան վարեալ առհասարակ»:

Հասանի և Խոփի որդի Գրիգոր իշխանը, որը իր հեծելազորով հարկադրաբար մասնակցում էր մոնղոլների Բաշու նոյնին արշավանքին, շարունակում է պատմել, որ նվաճողները ասպատակում էին քաղաք, գլու ու վաճք և «սրոյ ճարակ տային զամենեսին եւ մեր կական բարձեալ դողայար տագնապէն զլործանման ամեն» և տանջվում են, որ չեն կարողանում օգնել քրիստոնյաներին «քանզի ընդ նոցին տէրութեամբ էաք»: Խսկ թշնամին սպանում ու թալանում էր ամեն ինչ: Խաչենի իշխանին մնում էր թալանչիներից գնելով փրկել սրբությունները «...և զտաս աստուածային ոչ ձեռաւը մերաւ առեալ յաւարի այլ գնեալ ի նոցանէ, թերաք ի սեփական տէրութեան մեր՝ զծաղկալից բորսատան զԱւազ Տանսական և զմիս այլ Տանսական, զծողովոց Ցոհանն և զԱւատարանն, և զաջն սրբուն Ստեփանոսի, զոր ի քաղաքէն կանու թերաք և տուաք ի ընկի հայրենական սուրբ ուխտուն մեր Խաղայի վանից»:

Ձեռոքվէ: Նկարազարդել է մասսամ՝ Մարգարի ծաղկողը Անդում, կազմել Աքրահամք՝ Հոռոմուս: Ձեռագիրը Սահմակը նվիրել է Արջունի վամբուն իրենց կառուցած նկեղեցուն: Ձեռագիրը ինչքան է մնում Խաղայի վամբուս, հայտնի չէ: Տարինս է Գևասէն, այնուելից է Գ. Հովհաննեալ թերում է Եջմիածնի Մատենադարան:

Հանրապէու է նաև, որ Հայերի իշխան Վախտանգը իր տիկնոց կառուցած (1212 թ.) եկեղեցն ավիրելու համար Ամենապահ պատվիրի է Անդում, որի խորամի պահեցը նոյն պահագանքում էն արձանագրությամբ, իսկ Գանձասարի Գրիգոր և Վարդան քահանա եղարքների ձեռք թիրած Ամենապահը, անշուշու Սահի շրջանից է զնիած: Բանի այն է, որ ձեռագրի խորամենքը նկարազարդել և պյունիքի վրա ինչպես իրենց, այնպէս էլ սուպողների մասին հիշատակագրություններ են թողել Խանասիու Հոռոմոսից Ակարիչը և Արա աշակերտ Հովհաննեալ՝ (Ս. Մարկոսան, մ'գ դարի հիշատակագրաներ, էջ 94—95 և 199—200):

Խսկ ի միւսում ամի այլ եւս գնալով ընդ նոսա, նասաք մինչև ի մայրաբառ Կեսարիայ Կապաղկացոց նահանգին, եւ անտի առեալ զԱնտարան պարոնն իմ Սուսան, եւ ես ինձ: Եւ իմ խնդալից եղեալ եւ բերկրեալ սրտի, զի ես ինձ Տէր զիր զաւետարել քարոզն, եւ բերել ետու ի նախասացեալ սուրբ ուխտու: ...Եւ այս գործեցաւ ի թուականութեանն Հայոց ՈՂԳ (1244):»:

Ուրեմն նախորդ չորս ձեռագիրը, որ փրկվել են առաջին արշավանքի ժամանակ, Խաղաքի ուխտի մատենադարան են մուծվել 1243 թվականին:

Պարուն Ավագի Գրիգորին նվիրած Անետարանը, որի վերջում գրված է սույն հիշատակարանը, պահպում է Մատենադարանում 7347 համարի տակ: Նրա մեջ գրված նշված հիշատակարանն ավարտվում է այսպէս. «Արդ, ոք առջիք, ընթեռնոյք և ագտիք յաստուածաշունչ տափցու եւ ի սուրբ Վարդապետութեանն կենարարի մերոյ, յիշեցէր առաջի գենմանն Քրիստոսի զիս՝ զԳրիգոր, եւ զԱմուսին իմ զՄամքան, եւ զիարազատ որդիքու իմ զՀասան, զՄեսադա եւ զՅոհաննես, եւ ոք յիշէր, յիշեալ լիշիք ի Քրիստոսէ»<sup>37</sup>:

Մյուս ձեռագիրը «Ժողովոց Յոհանն» պետք է հասկանալ Հովհանն Խմատասեր Օճնեցու «Սակու ժողովոց որ եղեն ի Հայոց» աշխատությունը: Ծակատագիրն անհայտ է: Երկու տոննական ժողովածուներից առաջինն անվանված է «Սուագ Տոնական»: Տոնականի այսպիսի անվանում մեզ այլուստ հայտնի չէ: Կան Մաշտոց, Մայր Մաշտոց, Ժամագիրը, Անենի Ժամագիրը, Անետարան, Մանկության Ավետարան, Շարական, Զայնքան շարական և այլն: Տոնականի «Ավագ» անվանումը վերաբերում է սոյն ձեռագիրի մյուսի նկատմամբ ունեցած մեծությանը, բովանդակության հարստությանն ու թվականին, ինչպես որ է: Բանն այն է, որ Երգելակայի Ավագ վանքը հոչակված էր Տոնականների ընդուրմակությամբ, մասնագիտացված էր այդ բարդ գործի մեջ: Գրիգոր իշխանը 1244 թ. իր ձեռք բերած Տոնականներն իբրարից տարրերելու համար կարող էր Արանցից մեկը կոչել «ավագ» որպես մյուսից մեծ: Կարեն երկրից (որի մեջ էր հան Սեպուհ Լեռան Ավագ վանքը), երկու Տոնական է բերվել Խաղաքի վանք: 1227 թվականին Ավագ վանքում երկու Տոնական է ավարտվում: Առաջինը Ներսես գրիշը գրում է Վարդան վարդապետի համար: Այն այժմ ունի  $50 \times 33$  սմ մեծության 612 թերթ: Նույն թվականին և նոյն տեղում, նոյն Ներսեսը Կարապետի ընկերակցությամբ

<sup>37</sup> Մատենադարան ձ. № 7347, էջ 342ա—342բ: Հմմտ. Ա. Մաթևոսյան, ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 228—229:

Զեռագիրը կազմված է  $26,5 \times 19$  սմ մեծության մագաղաքան 342 թերթից: Գրված և նկարագրված է Հռոմեացում, 1166 թ. Կողման գրի ձեռորդ: Միջն մեծության մարդարտաշար երկարագործ, երկայն գրությամբ, զարդարելով, լուսանցագրդելով է կազմված 18 տողանոց յուրաքանչյուր էջու: Ծրջ ավանդաբանացին նախորդում է ավետարացի ուղեցիկ նկարը: Զեռագիրն սկսվում է տար գունազարդ աղյուսակագիր խորաններուի: Սրանց և Մաթևոս ամենաբարձր նկարի մեջունուն նկարված է Քրիստոսը՝ զարաւրակի վրա, որի առջև ծնկաշոր Ավետարանն է ստանու Անծունան զավակի Սուագիրությունը:

Զեռագիրը վերջում Գրիգոր Խաչեանց վերը հիշված հիշատակարանն է:

Զեռագիրի սկզբի հիշատակարանից (այժմ՝ ցեղակեր) երևում է, որ դուռև 1658 թ. ձեռագիրը գտնվում է Գրիգոր Լուսավորչի վանքում, որի անունով կոչվում էր, ինչպես երկում է Սարգիս քահանայի հիշատակարանից, Խաղաքի 1204 թ. կառուցած եկեղեցին: 1887 թ. ձեռագիրը արդեն Շիրակի Օքտաբիլսա (Մալիսան) գյուղում էր: Մատենադարան է սույն 1937—1940 թվականներին:

Տուրքի համար ընդօրինակում է նոյն օրինակից, բայց համեմատաբար փոքր Տունական (47×32 մմ մեծության 545 թերթ):

14-րդ դարում, առաջին կամ Ավագ տոնականը գտնվում էր Արցախի Ծինոց գլուխ Ս. Նշան եկեղեցում, ինչպես երևում է հետագա հիշատակարաններից, իսկ 1655 թվականին՝ Գողթան գավառի Վերին գետի Ս. Ստեփանոսի վանքում, որտեղ նորոգել են տալիս և հանձնում գլուխի բահանային: Մատենադարան է մուծվում 1920 թ. Խ. Դարյանի երկրորդ հավաքածուի հետ, ունի 6196 համարը: Երկրորդ տոնականը նոյնպես գտնվել է Ս. Նշանում, իսկ 18-րդ դարում Սևանա կղզու մատենադարանում էր, որտեղից 1911 թ. տեղի բռնը ձեռագրերի հետ տեղափոխվում է Էջմիածին: Այժմ ունի 3779 համարը:

Կարինից բերած Ավետարանը հայտնի Կարն կամ Թեոդոսիոսի Ավետարանը է, որն այժմ գտնվում է Վեճետիկի Միսիօնարյան միաբանության մատենադարանում, և այսուղ է տարվել 1842—53 թվականներին, դարձյալ Ծիրակից:

14-րդ դարի սկզբին Խաղայի վանքում հշած ձեռագրերին միանում է Թարգմանչաց Ավետարանը, որտեղ ձեռագրի էջերում գրված հիշատակարանները բավականին հանգամանալից տեղեկություններ են տալիս ձեռագրի մասին: Ահա հիշատակարանները, առաջինը գրված Մաթեոսի, երկրորդը՝ Մարկոսի ավետարանի վերջում:

«Յ/ամե/նառատ պարզեացն Աստուծոյ, որ միշտ ներգործէ յարարած գրարիս քաղցրութեան կամացն իրոց:

Արդ, որպէս յամենայն դարու, նոյնպէս և ի մերս նուաղեալ ժամանակին, յարոց զքրիստոսաւոր և զիանաւոր պարոնն, զարինեալն ի կամաց զԱս/իալն/<sup>38</sup>, դուստր Տարսահմին տեսան Սիմեաց, յազգէ Ուրպելանց, որ էր ամուսին մեծ և փառաւոր իշխանաց իշխաննին պարոն Գ/րիգորի: Սա ամենայն բարեպաշտությամբ զարդարեալ, զարդարեաց զանազան սպասիք և շինուածիք զեկեղեցին Հայաստանեաց, ստացալ և զուրբ Աւետարանս յարդար ընչից իրոց, և ընճայեաց ի սուրբ ուխտն իր Խաղարիվանս, որ է գերեզմանաւուն մեծ իշխանացն ազգին Դոփանց. և ինըն կարճարեալ Կենաք փոխի մահուամբ յաշխարիես առ Քրիստոս, և դնի ի դանքանի ի նոյն վերասացեալ սուրբ ուխտն:

Իսկ ըստ մարմնոյ գլուխ Առին և այր, մեծ իշխանն Գրիգոր զարդարեալ պահնէ զառ ուկով և արծաթով, ի յիշատակ հոգույ սուրբ ամուսնոյն իրոց Ասփային, և երկարութիւն կենաց իր և քրիստութեան զաւակաց իրոց, որոց յիշատակ նոցա եղիցի արքմանութեամբ»<sup>39</sup>:

«Ը ժամանակս և ի դարս աւուրց տիեզերակալութեան բռնը աշխարհաց ազգին նետողաց, որ տիրէ ի ծովէն Պոնտոսի մինչև ի ծովն Կազբից, և յեփրատ գետոյ մինչև յայնկոյս լեռանցն Կովկասու, որոց գլուխ և ինքնակալ խանն աշխարհակալ Խարպանոս կոչեցեալ, ի թվին Հայոց ԶԿՍ. (1312), յատմ ժամանակի ծագեցաւ ոմն մեծ և երեսի տոհմալին պայազատութեամբ ի ցեղէ վերից, ի զարմէ դիցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց Գրիգոր մեծ իշխան Հայոց<sup>40</sup>, տէր և պարոն Փոքր Սիմեաց Հանդա-

<sup>38</sup> «Ասփայ» և «Գրիգոր» անունները գրված են ուկով, գերեր մասամբ ուկեթափած են:

<sup>39</sup> Մատենադարան ձ. № 2743, էջ 113 թ.:

<sup>40</sup> «Մեծ իշխան Հայոց» բառերը և «Գրիգոր», «Ասփայ», «Մարգիս» անունները ուկեգին են:

քերդոյ և Ալվանոյ և Բարձր Լեռանց ծովակին Գեղամայ՝ Սոթից մինչև ի Ծառուայգայ, ամուսնացեալ ընդ դստեր Տարսային իշխանին, ընդ ամենա-օրհնեալ պարկեալ տիկնոջն Ասփային, ծնանի ի Ամսնէ ուստերս և դստերս: Խոկ զմինն, որում անոն էր Սարգիս, նուիրէ Քրիստոսի ի ստընդիա հասա-կին, որ արժանաւորութեամբ ի կոչման Հոգուց, Էանց ընդ ամենայն աստի-ճանն քահանապութեան, հասեալ ի պատի և պահուապութեանն Տանն Խա-չեայ, ընդ մարմնական տէրութեանն, զոր ունէր ի հարանց ստացեալ, ըն-կալաւ և զիոգեռ պեսութիւնն:

Արդ, յայսմ ամի, որ էր թիս ԶԿ (1311), փոխեցաւ յաշխարհէս Ասփայն առ Քրիստոս և եղաւ ի շիրմի, ի սուրբ ուստոն Խաղաքի վանս, վանս որոյ և մէծ պարուն Գրիգոր նուիրէ գերեզմանի նորա ընծայս լորով գեղորախ, այժին և անդաւուսն, և զարդարէ զուրբ ուստոն զանզան սպասիք և անդերձիք, ընդ որս պանել շրեղացոյց և զուրբ Աւետարանս ուկենեկար կազմածով և շնորհեաց գերեզմանի նորա և իր նախնեացն յիշատակ, որում բարձադը և ընթերցողը սուրբ Աւետարանին յիշեցէք զԱսփայն ի Քրիստոս և յիշողոյ յիշեալ լիշիք ի Տեանձ»<sup>41</sup>:

«Զմեծ եւ զամենաւրինեալ պարոնաց պարոն գԳրիգոր որդի Դաւիթին, եւ զամենագով եւ զբարեապատ ամուսնն իր զպարոն Ասփայն ստացաւը եւ զարդարիչը սուրբ Ավետարանին յիշեսիք ի Քրիստոս»<sup>42</sup>:

Չառ կարտոր տէղեկություններ է մեզ հաղորդում Սարգիս արքեպիսկո-պոսը, մանավանդ վերջին, երկաթագիր հիշատակագրությամբ: Ասփան, Այուն-յաց տէր Տարսային իշխանի դուստրը և փառավոր իշխանաց իշխան Գրի-գորի ամուսնը ստանում է սուրբ Ավետարանը և ընծայում իր սուրբ ուս-տին՝ Խաղաքի վանքին: Կարճ ժամանակ անց, 1311 թ. նա մահանում է և ամփոփվում նոյն վանքում, որը Դուիլյանների դամբարանն էր: Ասփան ա-ռաջին երկու հիշատակարաններում հիշվում է որպես Ավետարանի ստացող: Գրիգոր իշխանը նոյն Ավետարանը զարդարում է արծաթյա ուկենեկար կազ-մով և շնորհում Ասփայն գերեզմանին՝ նոր և իր նախնեաց յիշատակ: Գրի-գոր իշխանը՝ հիշվում է որպես զարդարիչ, քանի որ ինըն իսկապես զարդա-րել է տվել Ավետարանը:

Վերջին հիշատակարանում Ավետարանի ստացող Ասփան հիշվում է նաև որպես զարդարիչ, իսկ զարդարիչ Գրիգոր իշխանը՝ նաև ստացող: Հի-րավի, իշխանը նաև ստացող է, քանի որ նա Ավետարանի վրա ծախս է արել, ստացել է և նոր միայն զարդարել, և որպես իր սեփականություն նը-վիրել իր ամուսնու գերեզմանին:

Ստացող Ասփայն զարդարիչ համարվելք վարկարազի հիշատակու-թյուն չէ. նա ծեռագիրն ստացել և նվիրել է ուխտին զարդարելուց հետո, որի և պատճառ ուներ իշխանութին և հնարավորությունները, ինչպիս ցուց են տալիս, որ ավետարանին նկարելու կատարել է առ ծեռագրի գրիչ և ծաղկող Կողման, որը 1219 թվականին դեռ ողջ էր: Առ ավանդին Խարբերդի Բարչանց գյուղում նա Գրիգոր Մուրդանցու օրինակից ձեռա-

<sup>41</sup> Նոյն տեղում, էջ 183ա, թ:

<sup>42</sup> Նոյն տեղում, էջ 293թ: Ամբողջովին գրված է ուկեսպատ երկաթագրով:

գիր է ընդօրինակում, որի ավետարանիշները ներդիր չեն: Ուրեմն Հռոմեացի ավետարանը գրելոց հետո հիսուս տարում ևս ատիթ ունեցել է լրացնելու նկարների պահապ, մասնաւոն որ հոյն տեղում էր ապրում (1205 թ. Խարբերդում ձեռագիր էր գրում):<sup>43</sup>

Ներդիր էին նաև Սարգիս քահանայի 1211 թ. Խաղարի վաճքին նվիրած Հաղպատի կամ Գետաշենի ավետարանի ավետարանիշները, որոնք, ամենայն հավանականությամբ, հենց Խաղարի վաճքում էին մուծված:<sup>44</sup>

Ավետարանիշների և տերունական նկարներ չուներ նաև Թարգմանչաց ավետարանը, որ ստացել էր իշխանութիւ Ասփան: Նա զարդարիչ հոչվելու համար պետք է զարդարել տված լիներ Ավետարանի այն մասը, որը պակասում էր ձեռագրին: Եվ նա, հիրավի, նկարազարդել է տվել այն մի շատ շնորհալի նկարչի, որի գործի հետ նաև անոնն է պահպանվել, ինչպես և գիրը՝ նաև նկարների վրա:

Քրիստոսաւեր և փառաւոր պարոնը, «զարդարեալն ի կանալս Աստիայն... ամենայն քարեպաշտությամբ զարդարեալ, զարդարեաց զանզան սպասիր և շինուածիր զեկողեցիս Հայաստանեաց»<sup>45</sup>: Հիրավի. «Ասուսինը թաթարաց արշավանքների մեջ էր,—գրում է Բ. Ողորարյանը,—և Ասփան նըրու համար բնի սեղան կանգնեցրեց հայունի Խաթրավանքում՝ «նպաստ եղեալ քրիստոսապասակ գիլոյ ինոյ մեծափառ իշխանին Գրիգորի ի շինութիւն լուսանուէր սուրբ եկեղեցույ»: Նոյն Խաթրավանքում, դարձալ ամուսնու քացակայությանը, Ասփան խաչքար կանգնեցրեց և կամորջ կատել տվեց Թարթառի վրա «յիշատակ հոգուց անցելոց, ներկայի և ապագայի»<sup>46</sup>:

1305 թ. վախճանվում է ՀՀվիաննես առաջնորդը, Ասփանի կեսարացի եղբայրը, որի հետ նա համագործակցում էր, և «ի ձեռն քահանայապետին մեծի տեսոն Ցովհաննեսի նորոգումներ էր կատարում Խաթրավանքում, նրա իսկ կառուցած սուրբ Աստվածածնի եկեղեցում կանգնեցնելով բնի սեղան»:

Զեռագրի ստացումը, զարդարելն ու Խաթրավանքին նվիրելը պետք է դնել 1305 թ. հետո, որից վեց տարի անց 1311 թ. «ինքն կարմարեա կեար փոխի մահումբ յաշխարհէս առ Քրիստոս և դնի ի դանքանի ինոյն վերասացեալ սուրբ ոհսուն»: Իսկ ով էր Ասփան պարոնն պատվերը կատարող արվետավորը, որ այնպես է ներդաշնակել իր նկարազարդումները ծաղկողի մահրանկարներին, որ արվետարանները չեն տարբերել ծաղկողին նկարչից:

#### ԳՐԻԳՈՐ ՆԿԱՐԻՉ

Թարգմանչաց Ավետարանի խորանները գրադեցրած թերթերի հակառակ էջերում Յա-ից սկսած<sup>47</sup>, գեղեցիկ գրով, նկարազարդ կողմի սյունակ-

<sup>43</sup> Ա. Մաթենոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար, էջ 53, 54, 115, 116:

<sup>44</sup> Ա. Մաթենոսյան, Նշմարներ Ամի քաղաքի գրչության և մանրանկարչության, «Բանակը Մատենադարանի» հ. 14, Երևան, 1984 էջ 106—134:

<sup>45</sup> Մատենադարան, ձ. № 2743, էջ 113ը:

<sup>46</sup> Բ. Ողորարյան, Խաչքանի իշխանություն... էջ 316: Հմտ. Ա. Բարխարյան, Դիվան մայ վիճագրության, աշ. V Արցախ, Երևան 1982, էջ 129—130:

<sup>47</sup> Յա-ում գրված է Եվսեբիոսի թղթի շարունակությունը: Մեկնությունը գրադեցնում է ձեռագրի Յա, 4թ, 5ա, 6թ, 7ա, 8թ, 9ա, 10թ էջերը:

Աերի շրջանակում գրված է Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն խորանաց» փոքրիկ երկը, որն անջատված, ավելի ճիշտ վերախմբագրված է հեղինակի «Համառատ մեկնութիւն չորից աւետարանչաց» աշխատության սկզբից: Մեկնությունը գրադեցնում է Յա—Դա էջերը: Այս էջի կեսից սկսած, այսուհետև մնացած երեք էջերում ևս, շարադրված տեղեկություններ են յուրաքանչյուր ավետարանչի, ավետարանի գոյխների, վկայությունների և գլխավոր ավետարանների քանակի մասին, քանի որ նրանք մի ամբողջություն են ընկալվել:

Վերջին 10ր էջում, Հովհաննեսի մասին տեղեկություններից հետո առանձին-առանձին բերված է բոլոր ավետարանների տների, գլուխների, վկայությունների և գլխավոր ավետարանների միագումարությունը, ապա՝ գրող գրչի հիշատակագրությունը. «Տէր Սաստուած ողորմեա Գրիգոր Ակարչի և աշխատողաց ի սմայ»: Այս հիշատակագրությունն ընդունվել է որպես ձեռագրի ծաղկողի հիշատակագրություն, հոյանացվել են Գրիգոր ծաղկողն ու Գրիգոր Ակարիչը, և ամեն ինչ վերջացած են համարել:

Դեռևս մեր դարի բանական թվականներին ձեռագրում երկու տարբեր Ակարիչ եր տեսել ե. Նիկոլսկայան<sup>48</sup>, որի տեսակետի հետ հաշվի չեն նատել, և կորցրել են ինքնատիպ մի Ակարիչ գրչական և մանրանկարչական մի նշանավոր կենտրոնից, որտեղ կան նրա գոյության այլ վկայություններ են:

Գրիգոր ծաղկողը իրեն մասին իր մանրանկարած էջերի մանրանկար-ների վրա Աերկով գրում է, որ ինքը «ծաղկող» է, որ «ծաղկազարդարեաց սուրբ Խնեմարան»: Այս նշանակում է, որ նա, խլապես, ծաղկող է, և ինըն է ծաղկել տվյալ ձեռագրիը, որի գրչի հետ աշխատել է համատեղ: Գրիգոր Ակարիչը իր անոնմ Ակարի վրա չի գրել, այլ ինքնուրույն մի բնագիր վերջում, որ ամեն մեկն էլ կարող էր ընդորինակել և վերջում գրել. «Տէր Սաստուած ողորմեա գրչին...» և իր ամունը, որովհետև կատարված է գրչի գործ: Եվ այդ կատարողը Գրիգոր Ակարիչն է, և ոչ ձեռագրի գրիչը, ոչ էլ ծաղկողը: Գրիգոր Ակարիչը ձեռագրում Ակարիչ է մասնագիտությամբ և գործով, իսկ մեկնություն արտագրելիս՝ գրիչ:

Բայց գոյց մեկնությունը գրող Գրիգոր Ակարիչը ձեռագրի տերունական Ակարների Ակարողը չէ, որ Ակարողը մի որիշ մեկն է: Արա դեմ ունենք շատ որոշակի ապացուց: Բանն այն է, որ Գրիգոր Ակարիչ ձեռովով գրված մեկնության գրությամբ են գրված տերունական Ակարների վրայի մակագրությունները, որոնք անառարկելիորեն ապացուցում են, որ երկուսն էլ միևնույն ձեռքի գործն են, այսինքն՝ մեկնության գրիչ Գրիգոր Ակարիչը Թարգմանչաց Ավետարանի Աերդիր Ակարների, տերունական և ավետարանիների, ինչպես նաև լուսանցանկարների և խորհրդանշանների Ակարիչն է:

Բացի այս, Գրիգոր ծաղկողը, որ աշխատել է գրիչ Տիրացոյի հետ ձեռագիրն ատեղծելիս, ու այնքան խնամքով ծաղկազարդել խորանները՝ հանդիպակաց էջերում, ազատ թողնելով հաջորդ հանդիպակաց էջերը, չեր աղարտի իր կատարյալ գործը՝ ազատ էջերում արագագրելով մեկնությունը և ավետարանիների մասին տեղեկությունները, մանավանդ, երբ վերջիններս սովորաբար գրվում են յուրաքանչյուր (Մաթևոսի, Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի) ավետարանի վերջում:

<sup>48</sup> Նոյն տեղում, էջ 16:

Անշուշ, հայերեն ձեռագրերում պատահում է, որ Եվսեբիոսի կանոնների հետ գրվում է նաև Սլունեցու սովու մեկնությունը: Բայց այդ արվում է պատշաճավորությամբ, նախորդի համառությամբ խորաների մեջ, նույնայինի գարդարվածությամբ և գրությամբ: Այլ գրությամբ ավելացնում են միայն որիշները, ստացողի պարտադրանքով:

Այսուղ, Թարգմանչաց Ավետարանը «յարդար ընչից իրոց» ստանալուց հետո, իշխանութիւն Ասիան հանձնարարում է Գրիգոր Ակարչին Ակարագարդելու և լրացնելու ձեռագիրը: Ավետարանիշների և տերութական էջալին նկարները մագաղաթյա առանձին թերթերի վրա, լուսանցանկարները և խորհրդանշները ավելացնում է համապատասխան էջերու: Նկարելուց հետո Գրիգոր Ակարիչը գրում է նաև մեկնությունը:

Գրիգոր Ակարիչը Ավետարանը Ակարագարդելիս պահպանում է Գրիգոր ծաղկողի Աերկապնակը, Եվսեբիոսի և Կարպիանոսի դիմանկարչությունը, տեղ-տեղ միջամտում է նաև Գրիգոր ծաղկողի գումերին՝ իր Ակարների հետ որոշակի Աերդաշնակություն ստեղծելու նպատակով: Այն հատկապես նկատելի է իր Ակարած ավետարանիշների և Գրիգոր ծաղկողի ավետարանառաջների էջարացքում, որտեղ նրանք հանդիպակաց դիրքում են: Հովհաննեսի ավետարանառաջի գլխազարդի ստորին գերանը, որի վրա երևում է, որ գրություն է եղել, Ակարիչը խնամքով ծածկել է կապույտ գույնով, Աերդաշնակելով հանդիպակաց Հովհաննեսի ավետարանիշի Ակարի գումերին:

Գրիգոր Ակարիչը Աերդիոն ամրացնում է ձեռագիրը քանիքելուց հետո: Յուրաքանչյուր ավետարանիշի նկար դնում է իր Ավետարանից առաջ, և, ինչպես երևում է պահպանված Ակարների դասավորությունից: Ավետարանը եզրափակում է կենտ էջում նկարված մի թերթով՝ հայացքով նախորդ էջը:

Ավետարանիշի և սույն նկարի միջև տեղավորված է եղել ևս երկու նը-կար, որն համապատասխանում է տասներկու տերութական և չորս ավետարանիշների նկար ունենալու կանոնին:

Չեղագիրը կազմելուց հետո հանձնվում է ստացողին: Խշխանութիւն Ասիան նկարագրդ Ավետարանը ընծանում է «ի սուրբ ուխտան իր Խառայի վանս, որ է գերեզմանատուն մեծ իշխանացն ազգին Դոփանց»: Կարճ ժամանակ անց, 1311 թվականին վախճանվում է Ասիան, և ամփոփում նոյն դամբարանում, որին նվիրել է Ավետարանը: Ամուսին՝ մեծ պարուն Գրիգոր իշխանը, ի պատիվ ամուսնու դամբարանին է նվիրում գլուխեր, այգիներ և անդաստան, սպաս և հանդերձանք, իսկ Ավետարանը՝ պճնում է ուկենար կազմով, և «նորինեաց գերեզմանի նոցա»: Այս արդեն 1312 թվականն էր<sup>49</sup>:

Մեզ արդեն ծանոթ են Խառայի վամբում գտնվող ձեռագրերից մի քանից, որոնք պահպես են մուծվել Թարգմանչաց ավետարանից առաջ, և ո-

<sup>49</sup> Գրիգոր Ակարիշն է եղել, հավանաբար, նաև ուկենօծ կազմի հետինակը, քանի որ թիշ չեն ադրախ դեմքերը, երբ գիշը նաև նկարում և կազմում է ձեռագիրը: Դեռևս 1066 թ. Սերաստիայում Գրիգոր Ակրոնցի գիշը ստվորում է «զգործ ուկի ի զարդ պատուիրաց Տևան և ի կազմած նորին»: Այսինքն ուկերչության մեջ հնաւանվիս ստվորում էին ուկի օւ, ուու, ուրծե և տերութական մանրանկարների մեջ և ձեռագրերի կազմերում, և բայց ու մազաղախ և մնասի վրա: Գրիգոր Սորցիսեցին, ինչպես երևում է, նոյնակա ստվորել է «զգործ ուկու», և Թարգմանչաց ավետարանի նկարները համոզում են, որ նա ևս արդ էր ուկին օգտագործել և «ի կազմած նորին»:

(Մատենադարան, ձեռ. 311 էջ 282թ. Հմտ. Ա. Մարկոսյան, Հայերեն ձեռագրերի միջամտակարաններ, Ե-ԾԲ դդ. Երևան, 1988, էջ 105):

րոնք ավելի լավ ծանոթ էին Գրիգոր Ակարչին, որը չէր կարող հրանցից չօգտվել կամ չօգտագործել իշխանությունը պատվերը կատարելիս:

Մեզ հայտնի առաջին ձեռագիրը Հաղբատի կամ Գետաշենի ավետարանն է, Սարգիս քահանայի նվերը: Մասնագետները Հաղբատի և Թարգմանչաց ավետարանների միջև նմանություններ են տեսնում, որը մտածել է տալիս, որ հրանք սիևնոյն անձնավորության գործն էն: Ծատերին անհայտ է, որ Հաղբատի ավետարանի ավետարանառաջների նկարների թերթերը ներդիր են, որ նկարի ու գրի Մարգարեն, երբ նըկարագրուում էր Ավետարանը և լրացնում բնագիրը, ևս հնարավորություն ուներ ավետարանիշներին նկարելու բնագիր առաջ եղած ազատ թերթերի վրա, ինչպես այդ արվել էր Թարգմանչաց ավետարանում, բայց չի նկարել: Այսպես էլ կազմել ու հանձնել են Սահմակ Սնեցուն: Այն Խաղայի վաճքի սեփականությունն էր, առանց ավետարանիշների նկարների:

Ծառ հետաքրքրական է, որ Հաղբատի ավետարանիշներին նկարելիս, նկարիչը պահպանել է Մարգարենի նկարած «Ընծայական» նկարի շրջանակի գարդանը: Այդ նույն գարդանը պահպանված է նաև Թարգմանչաց ավետարանի տերության որոշ նկարներում, հատկապես 184 էջի «Խարդարան դժոխացն» նկարի շրջանակում: Այս նշանակում է, որ Թարգմանչաց ավետարանի տերության և այլ նկարները կատարվել են Խաչենի եպիսկոպոսարան Խաղայի վանքում, որտեղ գտնվում էր Հաղբատի Ավետարանը, որ Գրիգոր Ակարիչը Խաղարավանեցի էր և նա է, ամենայն հավանականությամբ, Հաղբատի ավետարանի ավետարանիշների ներդիրների հեղինակը:

Այդ դեպքում ինչպես հաշտեցնել Թարգմանչաց և Կարինի կամ Թեղուոպուսի ավետարանների խորհրդանիշների այդքան շատ նմանությունը: Այսուեղ տարակուսելու բան չի մնում, երբ փաստերը ցույց են տալիս, ոյ Կարեն Ավետարանը գտնվել է Խաղայի վանքում:

Մենք արդեն վերևում տեսանք, որ Գրիգոր մեծ իշխանը 1243 թ. արշավանքի վերադառնալիս «...զԱւետարանն և զԱշճ սրբոյն Ստեփանոսի, զոր ի քաղաք Կարճն բերաք, և տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտու մեր Խաղայի վանցից»<sup>50</sup>: Որ Կարին քաղաքից բերած Ավետարանը հենց Վենետիկում գտնվող Կարճն Ավետարանն է, առաջին վկայությունը ավետարանիշների խորհրդանշանների նմանությունն է: Կարինից ավետարան է բերվել Խաղայի վաճք, իսկ այստեղից Կարին նկարիչ չի գնացել: Գրիգոր Ակարիչ Խաչենցին հրանցից օգտվել է Խաղարավանքում, բանի որ ինքը այստեղ էր աշխատում:

Հոռմկայի ավետարանում նույնպես կան ավետարանիշների խորհրդանշաններ, բայց հրանք Թարգմանչացի ավետարանառաջների գարդարվածությանը չեն համապատասխանում: Նրան ներդաշն են Կուրճն Ավետարանի ավետարանառաջները, որ գալիս է Գրիգոր Մուրզանեցու գաղափարից: Գրիգոր Ակարիչը Կարճն ավետարանից Մաթենս ավետարանիշի խորհրդանշանը նկարելիս, ինչպես նկատել է Ս. Տեր-Ներսեսյանը, «բյուզանդական Loros-ի ձևը չի հասկցած և այն վերածած է գիրքի մը, որ նրեշտակը կործքն առջև կրոնե»<sup>51</sup>:

<sup>50</sup> Մատենադարան № 7347, էջ 342թ:

<sup>51</sup> Տես աստ, էջ 14:

Եվ, ինչպես հասու ենք մեծավաստակ արվեստագետի կարծիքին, Թևողությունի և Թարգմանչաց ավետարանների ծաղկողները «անկարելի է, որ նոյն անձը ըլլան»<sup>52</sup>: Այդ երևում է նաև գոյսների համեմատությունից և ուկու գործածությունից, որը Թարգմանչացում բացակայում է: Այստեղ էլ Ականտելի է գոյսների համապատասխաննեցում ծաղկողի խորանների մեջ: Մարդուն ավետարանի նկարի գոյսները նման են ավետարանի խորհրդանշից գոյսներին: Իսկ որ Կարճն ավետարանը գտնվել է Արևելյան Հայաստանից և հաստատվում է նրանով, որ այն Արևելյան Հայաստանից է տարվել Վենետիկ<sup>53</sup>:

Ավետարանիների և տերունական նկարների համար Գրիգոր Արցախեցին գաղափար օրինակներ ուներ ոչ միայն Խառայի վանքի հարդուրամախատենադարանում, այլ ուներ գրչության և գիտության այնպիսի միջավայր, ինչպիսին Գլանորի հզոր համապարանն էր իր հոչակավոր մանրանկարիչ արվեստարաններով—Մոսիկոյ ու Թորոս Տարոնացիով, Պողոս և Տիրասոր կիլիկեցիներով, որոնց և ձեռագրերը, և թերևս իրենք Գրիգոր նկարիչ Արցախցուն անձանոթ չէին: Գլանորում էր գտնվում Կեռան թագուհի 1283 թ. Հեթումին Ավիրած Ավետարանը, որից օգտվել էր Մոսիկը, Գանձասարում՝ Դգնատիու Հոռոմոցու և Հովսեփի ու Աքասի նկարազարդ Ավետարանը (բերված 1237 թ.), Բեգյունց ճշանավոր Ավետարանը նկարազարդված Հովհաննես Սանդղկավաննեցի ճշանավոր ծաղկողի ձեռքով (բերված 1273 թ.) և այլ հուշարձաններ, որոնք չեն կարող ծանոթ չլինել Գրիգոր Արցախեցին:

\* \* \*

Ինչ է մեզ հասնել Գրիգոր նկարողի Թարգմանչաց Ավետարանի նկարազարդումներից, այսինքն՝ ավետարանիների նկարներից, տերունական ամբողջական և լուսանցային նկարներից և խորհրդանշաններից: Մենք արդեն գիտենք, որ խորանները, ավետարանառաջները (բացի ավետարանիների խորհրդանշաններից, որոնք բոլորն էլ ներկա են) լուսանցազարդերն ու զարդարերը Գրիգոր ծաղկողի ստեղծագործությունները են:

Գրիգոր նկարչի գրչին է պատկանում, ինչպես ասացինք, Ստեփանոս Սյունեցու խորանների մեկնության ընդորինակլությունը, գրչի անվան հիշատակագրությամբ, որն զբաղեցնում է խորանների ազատ մնացած էջերը: Ավետարանիների նկարներից պահպանված են:

**Մատթեոս ավետարանիչը** «Մատթեոս» մակագրությամբ: Մտախտի նըստած է բարձր գահավորակի վրա, ձախ ձեռքը ծնուտին, աշք՝ գրիշը թանարի մեջ թաթախելիս: Վերջինս հորիզոնական մի սրբակ է, հենված թռչունի կտորից և գիմի վրա: Թոշունը, ինչպես և գրակալը ամրացված է սնդուկի

<sup>52</sup> Նոյն տեղում:

<sup>53</sup> 1843—53 թվականներին Վենետիկի Միջիարյան միարան Ներսէս վրդ. Սարգսյանը Զայտոնիայից դորս գալով, ձեռագրեր որոնելով, արտագրելով ու ձեռք բերելով հասնում է մինչև Գուգարք, Այրարատ, Վասպուրական, Սարպատական, և մաս-մաս ուղարկում Վենետիկ: Կարճն Ավետարանի մասին կարդում ենք. «Զետագիր 1842—1852-ին մոտերք ըստ է Բավարման մեջ մեր միարան հ. Ներսէս վրդ. Սարգսյան նշան է ի Մայրավան Ս. Պապարու»: Վարդապետը շատ ձեռագործ է ընդորինակել կամ ուղարկել Վենետիկ, ինչպես երևում է ձեռագրացուցակից: (Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց ի Վենետիկ Հ. Ս. Վենետիկ. 1914 էջ 570: Ն. Սարգսյան, Տեղեկագրութիւնը ի Փոքր և ի Մեծ Հայութ Վենետիկ, 1864թ. Նախագիտելիք):

Վրա: Ավետարանիչը հագին ունի կապույտ պարեգոս և տոգա: Նկարի շրջանակը խորանաւոխ է: Վերևի զարդակամարը հանգչում է խոյակներով ավարտվող գույց պուների վրա, սրանք էլ՝ ստորին գերանի: Կամարի տակ, ավետարանիչի երկու կողմում, կապույտ խորքի վրա սպիտակով գրված է «Մատթեոս»:

295բ Հովհաննես ավետարանիչ: Կապույտ կարմիր պարեգոտով և վարդագույն թիկնոցով կանգնած է՝ հայացքը Տիրոց աջին: Ավետարանիչի աջ ձեռքը ուղղված է ձախ կողմում հստած Պրտիորոց աշակերտին, որը գրում է ուսուցչի թելադրանքը: Ծրչանակը քառանկյուն է, պուների խոյակների վրա հանգչում է սրածայր կամարը, որի տակից Հովհաննեսին է ուղղված Սատծո աջը: Սյուների շարունակության և վերին գերանի ստեղծած անկյուններում զարդանախչեր են:

Տերունական նկարներից ամբողջական ներդիր թերթերի վրա էշերի ներթականությամբ պահպանվել են հետևյալ նկարները.

15ա «Ծնննիք». Ծրչանակի վերևում կարմիր թաճարով շղագոված է «Ծնննիք Փրկչին»:

20ա «Մկրտութիւն»

114ա «Հրեշտակների հայտնությունը»

170ա «Խորհրդատոր ընթրիք» նկարի զարդարում շրջանակից ներքև գրված է «Վերնաստունն խորհրդոյ»:

184ա «Էջք դժոխք»: Զարդարում շրջանակի վերևում բոլորգրված է «Աւարումն դժխոց»:

188բ «Աւետում»: Ծրչանակի վերևում բոլորգրված է «Աւետիս Գարդելի առ Մարիամ»:

294ա «Աստվածամոր նինջը»—Ծրչանակի վերևում գրված է «Ննջումն Ածամարեն»<sup>54</sup>:

Այս ամբողջական նկարներից բացի Գրիգոր նկարիչը ձեռագրի լուսանցքներում ևս կատարել է բնագրական հատվածների բովանդակության համապատասխան նկարներ, այնպես, որ այդ հատվածների պատմությունը կարդալուց հետո նաև աչքով տեսնեն այդ տեսարանը կամ անհնապորտությանը, որպեսզի ավելի ապելի տպավորիչ լինի ընթերցումը և ավելի հմայիչ՝ ձեռագիրը: Եթե վերջին, այժմ պակասող թերթերում որևէ լուսանցանկար չի եղել, որենքն մեզ հասել են Գրիգոր Խաչենցու ձեռորով կատարված բոլոր լուսանցանկարները:

Դրանցից մի մասը համընկնում են Գրիգոր ծաղկողի լուսանցագարդերի էշերին: Այս շատ բնական է, քանի որ լուսանցագարդերը ճշանավորում են գլխավոր ավետարանները, այսինքն ավետարանական այն հատվածները, որոնք վերաբերվելով Քրիստոսի կյանքի և հրաշագործությունների այս կամ այն դրվագին, ընթերցվածների հյութ են հանդիսանում և ընդունված կանոնական ամբողջական էշերից գրադեցնող նկարներից դուրս արժանի են

<sup>54</sup> Անտեսելով «Ննջումն Աստուածամարեն» տևարանի վերաբերյալ Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքը, ըստ որի այն հաջկական ձեռագրերի ձևավորումների շարքում հաստատում տեղ է գրավում միայն 14-րդ դարում, և Հուգանական հայտարարում է. «Ո՛ դեմ Թարգմանչաց ավետարանի մասնանկարի, մենք ունեմք 13 դ. հայ գրքավաստում միշտլած թեմայի պատճին և միայն պատկերումը»: Խնչակու տևանում ենք, Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքը հիմնալոր է և մենք է ոմի մեջ: 14-րդ դարում նկարված նկարը «Յիշչի պատկերագրության լրիվ զարգացած ձևն է» ինչպես գտնում է Միհրաբի Տեր-Ներսեսյանը («Գրիգոր ծաղկող» էջ 79):

պատկերման: Մեզ հայտնի են Գրիգոր Խաչենցու մետկալ լուսանցանկարները.

- 105բ «Պետրոսի ուրացումը»
- 131ա «Դիվանարների բժշկությունը»
- 173բ «Հուդայի դավաճանությունը»
- 202բ «Քրիստոսի փորձությունը անապատում»
- 224բ «Տեռատես կնոջ բժշկությունը»
- 247բ «Կոկված կնոջ բժշկությունը»
- 207բ «Քրիստոս ու Զակքեոսը»
- 284ա «Պետրոսի ուրացումը»
- 304ա «Քրիստոս ու Նիկոնեղոսը»
- 307բ «Քրիստոսի զրուցը սամարացի կնոջ նետ»
- 312 «Անդամալուզի բժշկությունը»
- 332ա «Ո ծնե կույրի բժշկությունը»
- 341ա «Ղազարտոսի հարությունը»
- 384բ «Պետրոսի ուրացումը»
- 365ա «Աքաղաղ»

Ընդամենը տասնհինգ լուսանցանկար:

Այսպիսով, Գրիգոր Արցախիցի նկարչից Թարգմանչաց ավետարանում վընած նկարներից հասել է մեզ յոթ ամբողջական, տասնհինգ լուսանցանյին և երկու ավետարանիչների և չորս խորհրդանշանների նկարներ, ընդամենը քսանվեց:

Սյս բավականին լուրջ ժառանգություն է տասնչորսերորդ դարի գրչության նշանավոր կենտրոնի նշանավոր մանրանկարչից, եթե նկատի ունենաք, որ այնունակ ստեղծված համարյա բան չի հասել մեզ, բացի այդ շատ մանրանկարչներ կան, որոնք մեկ կամ մի բանի մանրանկարով են ներկայանում մեզ:

Հանրահայում է, որ Արցախում պահպանվել են շատ հնագույն ձեռագրեր, որոնք քանից նորոգվել, լրացվել, նկարազարդվել, կազմվել են արցախյան գրչության կենտրոններում: Ուստի ամեն մի ձեռագիրը ուսումնաշիրելիս պետք է բժաննդրությամբ քննել ձեռագիրը, որպեսզի մեր աշխարհի ոչ մի գրչության կենտրոնից մեզ հասած ժառանգությունը չվերագրվի մյուսին, այլ գնահատվի ըստ արժանվույն, որպես հայերեն ձեռագրական ընդհանուր մշակույթի մի ազնիվ երակ, կամ վտակ սեփական գույնով ու փայլվ, որոնցից ծովանում է հայերեն ձեռագրերի սրբազն ավագանը:



## ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԱՆԻՒ\*

ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՑԻ. ԱՆԻԻ ԱԹՈՈՒԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1081 թ. Բարսեղ Անեցու կաթողիկոսական ձեռնադրությանը նախորդել էր ծավալուն նախապատրաստական աշխատանք, քանի որ այն տեղի ունեցավ ոչ միայն Գրիգոր Վկացանի համաձայնությամբ, այլև Տաշիր Չորագետի Բագրատունի թագավոր Կյորիկեի նովանավորությամբ, Անիի ամրրա Մանուչեի կամացցությամբ, իսկ օժումը կատարելու համար հրավիրվեց Աղվանիքի կաթողիկոս Ստեփանոսը։ Հաղբատի վաճքում մեծաշուրջ հանդեսով կատարված ձեռնադրությունից հետո Բարսեղն ուղարկվեց Անի, որի բնակչությունը ցնծությամբ դուրս եկավ նրան ընդառաջ։ Կաթողիկոսին դիմավորողների մեջ առաջինն էին նրա հայրն ու եղբայրները՝ Սայիրատյան իշխանական տան կորովի ներկայացուցիչները<sup>1</sup>։ Այս ամենին մասին, բավական հանգամանորեն ու ոգեշնչված պատմում է Մատթեոս Ունիայեցին. «...ի յամի Ըլ. (1081) արքեպիսկոպոսն Շիրակայ, որ էր ի բաղաքն Անի, որոյ անոն

\* Սկիզբ «Էջմիածնի» 1992 թ. Ը, Թ—Ժ—ԺԱ. Խամարներում։

<sup>1</sup> Անրի Բետագան պատմության ընթացքում մեծ դեր կատարած և հատկապես քաղաքի հոգևոր իշխանությունը տեսականորեն տնօրինած այս ազնվականական տան առաջին խոր գործիչը Հասանի որդի Սայիրատն էր՝ «յանձնանից մեծացեալ և վասն խեղացի և առա ձեռնացն մինչ լիներ տէր երկուսան հազար մեծելոց...» (Վարդան Արեւելցի, էջ 131): Սա փաստորեն հրաժարվում է մասնակցել Հովհաննեն Սմբատի ու նրա եղբայր Աշոտի եղբայրական պաքաքրին, իր գերդաստանով անցնում Դմիթի ամրրայի մոտ, բայց վլորչինս կողմից դավադրաբար սպանվում է, որից հետո նրա եղբայր որդիները վերադառնում են Անի (Մատթեոս Ունիայեցի, էջ 12—13): Նրանցից մեկը՝ Վասակը, ամուսնանում է Գրիգոր Մագիստրոսի դստեր հետ: Վերջիններին զավակն էր Բարսեղ Անեցին, որն այսպիսով, մոր կողմից Պահապումին էր:

ասէին տէր Բարսեղ, յարուցեալ զնաց յաշխարհն Հայոց ի լԱղուան գաւառի՝ ի Լոռէ քաղաքի առ թագաւորն Հայոց Կորիկէ... և խնդրէր Բարսեղ առնել ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Հայոց: Որ ժողովեաց թագաւորն Կորիկէ զեախսկոպուտն Սղուանից աշխարհին, և բերեալ զուէր Ստեփանոս կաթողիկոս Սղուանից ի վաճըն, որ կոչի Հայրաթ, ձեռնադրեցին զուէր Բարսեղ կաթողիկոս յԱթոռ Սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին Հայոց, հրամանաւ Կորիկէ թագաւորին և տեսան Ստեփանոսին:

Յայսմ ժամանակիս նորոգեալ եղեւ Աթոռ Սրբոյն Գրիգորի ի քաղաքն Անի... Եւ ելեալ գայր Բարսեղ կաթողիկոսն Հայոց ի թագաւորաքնակ քաղաքն Անի, և ելեալ ամենայն Տունն Ծիրակաց զնալ ընդ առաջ նորա, և ահա գայր Վասակ' հայր տէր Բարսեղի և եղբարքն նորա՝ Հասան և Գրիգոր և Ասվլահանպ, արք քաջը և հօգորք՝ հանդերձ եպիսկոպոսիք, և նատուցին զուէր Բարսեղ յԱթոռ տեսան Պետրոսի: Եւ եղեւ օրն այն օր մեծ և ուրախութիւն ամենայն Տաճան Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զԱթոռ հայրապետութեանն ի քաղաքն Անի»<sup>2</sup>:

Վարդան Արևելցին լրացնելով Ուռիայեցուն, հաղորդում է դեպքերին Մանուչեի թերած մասնակցության մասին, գրելով, թե Բարսեղը «...ձեռնադրեցաւ ի Հայրատ կաթողիկոս՝ հրամանաւ և կամար Մանուչի և ամենայն Հայոց»<sup>3</sup>:

1081-ից մինչև 1105 թ.<sup>4</sup> Գրիգոր Վկայասերի մահը, Բարսեղ Անեցին դիմում է որպես աթոռակից, իսկ մինչև 1113 թ.<sup>5</sup> միանձնյա կաթողիկոս, թեև ինչպես ստորև կտևնենք, ձեռնադրությունից հետո նա փաստորն իր ձեռքն է վերցնում կաթողիկոսական ողջ իշխանությունը: Հայաստանեաց եկեղեցու ընդհանոր վիճակն այդ ժամանակ աննախական էր: Ազգային պետականության անկման և Գրիգոր Վկայասերի թույլ կառավարման հետևանքով առաջացել էին մի քանի հակաթոռ կաթողիկոսություններ, որոնց դեմ ոչ մի քայլ չէր ձեռնարկվում: Այսպէս, 1076 թ. Փիլարտոս Վարածնումին իր հիմնած իշխանութան մեջ եկեղեցական ժողով գումարելով, կաթողիկոս է օծել տալիս Պետրոս Գետադարձի քրոջ որդի Սարգսին, որը հաստատվում է Մարաշի մոտ գտնվող Հռնի քաղաքում, իսկ Վկայասերը հրան է ողարկում «...զքոյն և զգաւազն և սուրբ Նշանն տէր Պետրոսին»<sup>6</sup>: 1077-ին Սարգսին հաջորդում է Թեոդորոս Ալախոսիկը: 1083 թ. Փիլարտոսը տեղափոխվում է Մարաշ, Թեոդորոսը հրամարվում է հրան հետևել և իշխանն այստեղ նոր կաթողիկոս է ձեռնադրել տալիս Վարագավանեցի Պողոսին: Այս երկուսից բացի Գրիգոր Վկայասերի աթոռակալության սկզբում ձեռնադրված Գետրգ Լոռեցին էլ շարունակում է կաթողիկոսություն վարել Տարսում:

Այսպիսով, Հայոց կաթողիկոսական Աթոռը անկայուց վիճակում էր, ժողովուրդը՝ տարաբաժան, իսկ բուն երկիրը՝ սեղուկներից նվաճված ու բազում զրկանքների ենթակա: Ահա նման պարմանեերում է հրապարակ գալիս գործունակ ու խոհեմ Բարսեղ Անեցին: Մ. Օրմանյանն իրավացիորեն գրում է. «Այս շինթ կացութեան մեջ Բարսեղն էր միայն, որ իրա հայրապետական պաշտօն կը վարէր, իր հօտին նորածութիւնն ուներ և անոր ներքին և արտաքին պէտքերը լրացնելու կաշխատէր: Որչափ ալ շատ ընդարձակ չէր իր

<sup>2</sup> Մատթեոս Ուռիայեցի, էջ 265—267:

<sup>3</sup> Վարդան Արևելցի, էջ 188:

<sup>4</sup> Մատթեոս Ուռիայեցի, էջ 253:

իրավասութեան սահմանը, սակայն իր Մօրեղքը (Գրիգոր Վկայատերի, Կ. Մ.) բարեացակամութեալը օգտուելով և անոր ձեռնթափ վիճակին դատարկը լրացնել փափաքելով, համարձակ կը նշանալէր իր ձեռնարկները, այնպէս որ իրականութեան հեռու չեն անոնք, որոնք Բարսեղը իբր բու կաթողիկոս կը նկատեն»<sup>5</sup> (Ակատի ունի Սամուել Անեցուն, որը Բարսեղի աթոռակալության տարիները 31 է հշում. «տէր Բարսեղ... եկաց կաթողիկոս զկնի տէր Գրիգորիսի՝ ամս ԼԱ.»): Սամուելին է հետևում ան Սխիթօք Անեցին)<sup>6</sup>:

Կաթողիկոսական իշխանությունն ամրապնդելու և եկեղեցու դրույցունը բարպետելու համար Բարսեղ Անեցին ընտրում է առավել արդյունավետ ուղին. 1090 թ. նա անձամբ ուղևորվում է սելջուկյան պետության տիրակալ Մելիքշահի մոտ, հախապէս հոգալով ժամանակի դիվանագիտության պահանջները՝ «առեալ ընդ իր նուերս սուլտանին իբրև բիրս ուկոյ և արծաթոյ և դիպակաց»<sup>7</sup>: Բարսեղին ուղեկցում են եպիսկոպոսներ, քահանաներ, իշխանազուններ, նա ինքը Մելիքշահի նատավայրն է մտնում ձի նեծած, իսկ առջևից տանում են բարձր ձողին ամրացված խաչվառ: Այս մասին Սամուել Անեցին գրում է. «Բարսեղ... գնացեալ առ մեծ սուլտանն Մելիքշահ, որ ի Խորասան, բազում համարձակութեամբ ընդ բաղաքամէշն պարսից ձիով և խաչապատով, որ առաջի ամբարձեալ էին ի ձողի»<sup>8</sup>: Անեցի կաթողիկոսի այս համարձակ ձեռնարկի դրդապատճառների և Եշանակալից արդյունքի մասին ավելի հանգամանորեն է պատմում Սատթեռս Ունիայեցին, գրելով. «... հայրապետն Հայոց տէր Բարսեղ... տեսաներ, որ նեղէին զհավատցեալս Քրիստոսի ի տեղիս տեղիս, և հարկս պահանջէին յեկեղեցեացն Աստուծոյ և ամենայն ժառանգաւորաց նորա, և զվանորայսն և զեպիսկոպունսն հարկի չարշարէին. և յայէժամ կաթողիկոսն... խորիեցաւ գնալ առ բարի և բաղցր թագաւորն Պարսից... առ ի ծանուցանել նմա զայս ամենայն. և առեալ ընդ իր նուերս սուլտանին... հանդերձ ազանոր և եպիսկոպոսը և քահանայիր՝ առեալ վարդապետ զիւտ իր և գնաց ի Պարսիկս առ աստուածաներ սուլտանն: Եւ տեսալ սուլտանին զտէր Բարսեղ՝ լոյց մեծարեաց զնա, և կատարեաց զամենացն խնդրուածն նորա. և արարեալ զամենայն կամս տէր Բարսեղ, և ազատեաց զամենայն եկեղեցին և զվանորայս և զբահանայս. և առեալ գիր ազատութեան, և նրովարտակօր և մեծարանօր արձակեաց զիայրապետն Հայոց»<sup>9</sup>:

Այսպիսով Բարսեղը դիվանագիտական հմտությամբ ոչ միայն հարկաւությունից ազատում է Հայոց եկեղեցին ու հոգևորականությանը, այն սուսանում անհրաժեշտ արտոնություններ, որոնք շուտով գործադրում է հակածոտ կաթողիկոսությունների դեմ: Մ. Օրմանյանի կարծիքով կաթողիկոսը նախ վերադառնում է Ս. Ան, իր նատավայրը «այսուեղէն սկսելով իր սուսացած հրամանները գործադրել տալ»<sup>10</sup>, ապա ուղևորվում է Հոնի և Վճռականորեն աթոռանեկ անում Թեոդորոս Ալախոսիկին «առեալ ի նմանէ զրոյն և

<sup>5</sup> Մահարիս Օրմանյան, Ազգապատում, էջ 1314:

<sup>6</sup> Սամուել Անեցի, էջ 117, Սխիթօք Անեցի, Մատեան աշխարհավեպ հանդիսարանաց, Երևան, 1983, էջ 69:

<sup>7</sup> Մատթեոս Ունիայեցի, էջ 288:

<sup>8</sup> Սամուել Անեցի, էջ 117—118:

<sup>9</sup> Մատթեոս Ունիայեցի, էջ 289—290, տես նաև Ս. Բունազյան, Հայաստանը և սելչուկները XI—XII դդ., Երևան, 1980:

<sup>10</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1315:

զգաւազան և սուրբ Նշանն տեսան Պետրոսի...»<sup>11</sup>: Մարտաշում աթոռակալող Պղղոսն ինքնակամ հրաժարվում է կաթողիկոսությունից, իսկ Տարոնում հասող Գեորգ Լոռեցին արդեն մահացել էր: Այսպիս Բարսեղը վերականգնում է Ամենայն Հայոց կաթողիկոսության ամրոջականությունն ու միասնությունը: Ինչպես Վարդան Արևելցին է գրում՝ «եղել միահնձան Սուրբ Աթոռուն»<sup>12</sup>: Թեև Բարսեղն էր, որ հնազանդեցրեց «զամենայն հակառակուն»<sup>13</sup>, և ուսանց աչքում «արար միահնձան զիայրապետութիւնն իր»<sup>14</sup>, բայց ժամանակի գերագահ կաթողիկոս էր ճանաչվում Գրիգոր Վկայասերը, իսկ Անեցին համարվում էր աթոռակալից, չնայած որ նենց նա էր իդականացնում կաթողիկոսության հիմնական իշխանությունը:

Կիլիկիայի սահմանները հասած Բարսեղը Հոնիից անցնում է Ուտիա, ապա՝ Կեսարիա, Անտիոք և կրկին Ուտիա, ամենուր կատարելով իր հայրապետական առաքելությունը, ընծույթելով հայության կողմից («Ղիներ ուրախութիւն մեծ ամենայն աշխարհի՝ որք տեսանելին զնա»)<sup>15</sup>:

1093 թ. մահինում է Մելիքշահը, երկրում սկսվում են ներքին կոփվաներ, խառնաշփոթությունն և Անեցին ստիպված է լինում շտապ վերադառնան Անի<sup>16</sup>: Կաթողիկոս Անիում է մնում շրոջ տասը տարի, այսուղից իրականացնելով իր համահայկական հոգևոր իշխանությունը: Այն, որ նա իշխապես օժտված էր նման բարձրագույն իշխանությամբ, երևում է Աղվանիքի կաթողիկոսության գործերին նրա ունեցած վճռորոշ միջամտության օրինակից: Ստեփանոս կաթողիկոսի մահից հետո Աղվանքում Բարսեղի գիտությամբ նոր կաթողիկոս էր ձեռնադրվել հանգույցալի եղբայրը: Որոշ ժամանակ անց վերջին անարժան է համարվում «վասն խոտոր վարուց իրոց»<sup>17</sup> և Անեցին նրան աթոռանել է հոչակում: Հայոց կաթողիկոսի վճիռ անվերապահորեն իրականացվում է:

Բարսեղը հշանակալից գործունեությունն է ծավալել նաև բուն Անիում: Կաթողիկոսն Անիում ամուր հենարան ուներ հանձին իր համբավավոր ազգատոհմի և եղբայրների: Նրանցից հատկապես հշանավոր էր Գրիգոր իշխանը, որին ժամանակին Անի էր հրավիրել Մամուչեն՝ «մեծաւ հանդեսին ընդ առաջ եկալ մուծաներ ի ներքս (քաղաքին) զԳրիգոր զորդին Վասակայ, զքոռն Ապիրատին, զոր ասեն ուներ ի գլուխ ազատականացն հինգ հարիւր թագու երեւելիս, զի տէր էր մեծ օգործ և բազում ազատաց»<sup>18</sup>: Այդ օրից շատ տարիներ անց (ըստ Ուտիայեցու՝ 1099 թ.) Գրիգոր իշխանն օտար աս-

<sup>11</sup> Մատթեոս Ուտիայեցի, էջ 291:

<sup>12</sup> Վարդան Արևելցի, էջ 143:

<sup>13</sup> Սամուել Անեցի, էջ 117:

<sup>14</sup> Մատթեոս Ուտիայեցի, էջ 291:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> «Տէր Բարսեղն, որ էր ի քաղաք Ուտիա, իրեւ փախատական անկաներ ի քաղաք Անի և հասա ի Աթոռ իր», Մատթեոս Ուտիայեցի, էջ 294:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 265: Մ. Օրբելիանը (Ազգապատում, էջ 1327) և նրա մատուցությամբ Ե. Պատրոպամանը կարծում են, թե Ստեփանոսի եղբայրն արքունիք է արվել, բայց որ առա ձեռնադրության մասին տեղյակ չի եղել Բարսեղ Անեցին (Ե. Պատրոպամ, Հայ Նվելեցու պատմություն, մասն Ա., «Հայրապատմանք» 1990, էջ 85): Մինչդեռ այս դեպքի նաև տեղյակացնության միակ սկզբանաբրդը՝ Մատթեոս Ուտիայեցին, նման բան չի հայտնում, ընդհանառակը, Աղվանիք նոր կաթողիկոսի ընտրության ժողովը գտնարվել է նենց Բարսեղի հայտաձևությամբ:

<sup>18</sup> Վարդան Արևելցի, էջ 138:

պատակիչների դեմ մղված մի կովում փրկում է Մանուչի կյանքը, իսկ ինքը զոհվում<sup>19</sup>:

Բարսեղի աթոռակալության տարիներին հավանորեն կաթողիկոսարանի եկեղեցու դեր է կատարել Անիի Ս. Առաքելոցը, որը բաղադրի եպիսկոպոսարանի եկեղեցին էր: Հիշեաբ, որ 1064 թ. Ավի Սպանի կողմից Անիի գրավումից անմիջապես հնաս սեղուկները մզկիթի էին վերածել Մայր տաճարը: Սակայն, ինչպես երևում է, հայերի հնա լավ հարաբերությունների մեջ գտնվող Մանուչին, ինքն էլ այդ վիճակը բնական չէր համարում, այլպես չէր հիմնի մեկ այլ մզկիթ, դրա համար օգտագործելով Բագրատունաց շրջանի մի աշխարհիկ բնույթի շենք՝ կից կառուցելով միմարե (այն կանգուն է մինչև այժմ): Քաղաքի մահմեղականների համար պետք է որ գլխավոր մզկիթ հանդիսանար մենց ամիրայի հիմնածը:

Բարսեղի Անիում կատարած կարևորագոյն գործերից մեկը կաթողիկոսարանի վարդապետարանի վերաբացում էր: Դեռևս Արգիմայից սկզբանավորվող, ապա Սարգիս Սևանցու և Պետրոսի ժամանակ մայրաքաղաքում, գործող բարձրագոյն հոգևոր դպրոցն էր, որ Կրկին կյանք առավ Բարսեղի հոգածությամբ և ժամանակի հշանակոր վարդապետ Հովհաննես Սարկավագի ուսուցապետությամբ: Վերջինիս կենսագործոյան մեջ բազմաթիվ արծեքավոր վկայություններ կան դպրոցի գործունեության, ուսումնական ծրագրերի, կրթական գործընթացի մասին: Կենսագրի պատկերավոր արտահայտությամբ՝ Հովհաննես Սարկավագը «իրք զիմաստուն մեղո՞ւ բարձեալ յանդամն մուաց զծաղիկս յերանցոց գունց, և հոտոց, և համոց, բերեր ի բաղաք իր և տեղի սենեղեամ՝ ի բաղաքամայրս Անի, և լի առներ ըստուն ի փարթամոթենէ անտի... Ծուրջ բակ բոլորեալ զմանկուն զիրեալ՝ խոնարհարար և ախորդելի սիրով ուսուցանէր զիրթին և զիրթին իրս... Եւ գերը յորովայնէ նորա բյիսեալ՝ արբոցին զոտն տէրուսական և զնորսատունկ մանկուն յարկաց Աստուծոյ... Եկին յարմատոյ և ի շառակիդէ նորին... ուսուցիչը և լուսաւորը ոգուվ... և լցին զտիեցերս բանին կենաց...»<sup>20</sup>:

Յավոր, Հովհաննես Սարկավագի գլխավորած դպրոցին անդրադառն ուսումնասիրությունը, որպես կանոն, չեն խորացել նոր հիմնադրման հանգամանքների մեջ, որի պատճառով անտեսել են Անիում կաթողիկոսական Աթոռուի վերահաստատման և Բարսեղ Անեցու գործունեության դերը, կարծելով, թե Սարկավագը բաղաքում մի մասնավոր դպրոց է ստեղծել<sup>21</sup>, ուստի ել այն աշխարհիկ դպրոց են համարել<sup>22</sup>: Մինչեւո, իրողությունն այն է, որ ամիրա-

<sup>19</sup> «Գրիգոր» ճահատակեցած... ի Կաղորած՝ գերծոցեալ զամիրայն Անոյ ի մամունէ՝ Մանուչի. և տարեալ թաղեցին զնա ի Կեշառու, Եղբար տէր Բարսեղ կաթողիկոսի. և Մանուչ և ամենայն զօր բանակին Հայոց երթայր զկնի դիոյն»: Նոյն տեղում, էջ 145:

<sup>20</sup> Ա. Աքրամանյան, Հովհաննես Խմանաւերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 120—121: Սամուել Անեցին, որն ինքն էլ աշակերտ է մեծ վարդապետին, նիշատակում է Սարկավագի անեցի սամերից ևս մի բանին՝ «Խաչատոր և Գրիգոր և Ցովհաննես և Սամուել, ամեներեանք սորա Անեցիք»: Սամուել Անեցի, էջ 128:

<sup>21</sup> Ա. Աքրամանյանը գրում է. «Հովհաննեսը Հայորատում կրթություն ստանալուց հնաս եկել է Անի և պատեղ դպրոց հիմնելու»: Ա. Աքրամանյան, նշվ. աշխ., էջ 25: Ըստ Կ. Միքումյանի Սարկավագը եղել է «Անիի դպրոցի (գուց Անիի դպրոցներից մեկի) ունկալար», որը ձեռք է բերել «աշխարհիկ բնույթ»: Կ. Միքումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, 1984, էջ 29:

<sup>22</sup> Թ. Հակոբյանի կարծիքով Սարկավագի գլխավորած դպրոցը «իր բնույթով նիմանկառում աշխարհիկ էր, իմաստափառական»: Անիի պատմություն, գիրք Բ, Երևան, 1982, էջ

յական իշխանության տակ գտնվող Անդրու համահայկական ճշանակություն ունեցող Վարդապետարան կարող էր բացվել միայն Կաթողիկոսական հովանավորության պայմաններում: Հաղբատում ձեռնադրված Բարսեղը, թերևս հենց այդ ժամանակ էլ իր հետ Անի է բերել տեղի Եշանավոր Վարդապետ Հովհաննես Սարկավագին, նրան հանձնարարելով Վարդապետարանի վերաբացումը: Այս էր պատճառը, որ հոգեու բարձրագույն կրթություն ստանալու համար ուսուցապետի մոտ էին գալիս Հայոց երկրի տարրեր ծայրերից, որպես «իմաստութեան գանձուց վաճառականք», Անդրու ուսանելով դասնում «ուսուցիչը և լուսաւորը ոգով» և վերադառնալով իրենց գավառները Վարդապետի պատգամները տարածում ողջ Հայաստանում («...նորայն առասացութիւնը լցին զոյլուու Հայաստանեաց»)<sup>23</sup>:

Բարսեղ Անեցու և Հովհաննես Սարկավագի անհական շրջանի համագործակցության մյուս կարևոր դրվագը կապված է եկեղեցական կյանքի մի այնպիսի կարևոր բնագավառի հետ, ինչպիսին էր տոմարը: Խոսքը վերաբերում է 1084 թ. հաստատված, այսպես կոչված «Սարկավագադիր տոմարին»: Այդ թվականին է լրանում Աթանաս Տարոնացու կազմած շարժական տոմարի առաջին հինգհարյուրամյակը և ակնհայտ դասնում Հայոց և Հովյան տոմարի միջև առկա տարբերությունը: Վերստին առաջանում է Հայոց անշարժ տոմար ունենալու խնդիրը, որը և յորովի լուծում է Հովհաննես Սարկավագը: Ցավոք, սկզբնաղյուրները որոշակի վկայություն չեն պահպանել Սարկավագադիր տոմարի ատեղծման մանրամասների վերաբերյալ, սակայն ինչպես իրավացիորնեն նկատում է Մ. Օրմանյանը. «անհնար էր, որ Բարսեղ որևէ գործակցութիւն ունեցած չըլլայ»<sup>24</sup>: Խելապես, պատմության հայնընթաց փորձը ցուց է տալիս, որ տոմարի հետ կապված խնդիրները միշտ ել լուծվել են կաթողիկոսի և ժամանակի Եշանավոր Վարդապետներից մեկի համագործակցությամբ: Զ դարում նման գործակցության մեջ ենք տեսնում Մրկվես Բ Եղիվարդեցուն և Աթանաս Տարոնացուն, Է դարում կաթողիկոս Անաստաս Ակոռնեցուն և Անանիա Շիրակացուն, ուստի ԺԱ դարում Էլ Հովհաննես Սարկավագ Վարդապետի կողքին շպետը է մոռանանք Բարսեղ Ա Անեցուն:

Անիի այս շրջանի եկեղեցական կյանքի կացությանն անդրադառնալիս պետք է նկատի ունենալ, որ թեև կաթողիկոսի՝ Մելիքշահից ստացած արտոնություններով և հոգևորականությամբ հարկատվությունից ազատվելով, որոշ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել, սակայն երկիրը գտնվում էր անկայուն վիճակում, պարբերաբար ենթարկվում ասպատակություններից: Բարսեղի ժամանակ լուծվում են թեմական, վարչաստարածքային որոշ հարցեր: Մասնավորապես, հենց կաթողիկոսի օժման ժամանակ, նրա և Աղվանքի Ստեփանոս կաթողիկոսի կողմից նպիսկոպոս է ձեռնադրվում Կյուրիկեի արքունիքի ավագերեց Սարդիսը և ստեղծվում է Հաղբատի նպիսկոպոսությունը, որին տարածքներ են հատկացվում Տաշիրից և Արցախից<sup>25</sup>:

114: Խակ Ա. Մովսիսյանը մոռանում է նաև դարդոցի գործունեության ժամանակը, և գրում «Անիի դարոցը միանգամայն աշխարհիկ պահանջմանը համապատասխան էր կառուցված և ամրողացման գոնվում էր արքունիքի հովանավորության ձերքը»: Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դարդոցի և մամեկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 243:

<sup>23</sup> Ա. Արքահաման, Եղի. աշխ., էջ 120:

<sup>24</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1309:

<sup>25</sup> Վարդան Արևելցի, էջ 139:

Սմիրայական տիրապետության պայմաններում Անիում առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հոգևոր կյանքի բոլոր երևողակները: Վարդան Արևելցու վկայությամբ 1094 թ. մեծ հանդիսավորությամբ Անի է բերվում Նունեի խաչը (Նինո, Վրաստանու քրիստոնեություն տարածած, սրբերի շարք դասված կույս), որը Հայաստան էր տեղափոխվել դեռևս Սահմակ Պարթևի ժամանակ, դարձել Մամիկոնյանների տոհմական սրբություններից մեկը, պահվել Կապոյտ բերդում, ապա՝ Վանանդում: Եվ ահա այն շուրջով բերվում է Անի և Բարսեղ կաթողիկոս այսուղ նրա համար հատուկ տոն է ասհմանում: «Առ այսու ժամանակաւը եմուս սուրբ խաչն Նունեայ ի յԱնի... ի հայրապետութեան տեսան Բարսի և կանգնեցաւ նմա տօն կիրակէն, որ զենի ութօրէիցն Խաչվերաց տօն»<sup>26</sup>: Ինչպես տեսնում ենք, Անեցի կաթողիկոս ամեն շանք թափել է կաթողիկոսական Աթոռի և իշխանության ամրապնդման համար, նոգ տարել ինչպես վարդապետարանի, այնպես էլ ժողովրդի հոգևոր կորով պահպանելու մասին:

Հայոց եկեղեցու ընդհանուր շահերով մտահոգ կաթողիկոսը 1103 թ. դուրս է գալիս մի նոր ուղևորության դեպի հարավային թեմեր՝ «իջևալ... ի քաղաքէն Անոյ, ամենայն պաշտոնէիք հիրովք և ազատօք, եպիսկոպոսօք և քահանայիք...»<sup>27</sup>: Նա նախ գալիս է Ուտիս, որ տեղի լատին կոմսը հարկադրված է լինում վերականգնել Հայոց եկեղեցու հնուց ունեցած կալվածքները<sup>28</sup>: Ապա անցնում է Քեսուն, Հայոց Վասիլ (Գող Վասիլ—«որ Գող Վասիլ կոչէր յայլազգեացն վասն արիութեան նորին»)<sup>29</sup> մեծ իշխանի մոտ, այցելում Կարմիր վանք, Քեսունի գավառի եպիսկոպոս ձեռնադրում շնորհաշատ Ստեփանոս Մանուկ Կարմիրվանեցուն<sup>30</sup>, հանդիպում է նաև Գրիգոր Վկայասերին: Այս երկամյա ուղևորության ընթացքում հավանաբար այցելում է նաև Կիլիկիայի հայ իշխաններին, իսկ 1105 թ. վերադարձնում Անի, մանավանդ, որ կրկին քաղաքական խառնակ իրավիճակ էր ստեղծվել («...Բարսեղ նեղեալ ազգի ազգի շիոթմանն էնայ յԱթոռն իր յԱնի»)<sup>31</sup>:

Սակայն նա նոր էր աթոռանիստ հասել, եթե Անի է գալիս նաև Գրիգոր Վկայասերի համակարելը, որի միջոցով նա Բարսեղին տեղեկացնում է, թե մահամերձ Է՝ «... հասեալ է ժամանակ իմ, եկ յուղարկեա զիս առ Տէր»<sup>32</sup>: Անեցին «ոչ յապաղեալ» ճանապարհ է ընկնում և չնայած խառն ժամանակների պատճառով ճանապարհին ավազակների հարձակման է ենթարկվում, բայց «քաջարտարար արիացեալ» այդ խոշընդուն էլ հաղթահարելով հասնում է Վկայասերին<sup>33</sup>:

Քեսունի Կարմիր վանքում Բարսեղ Անեցու և Վասիլ իշխանի ներկայությամբ Գրիգոր Վկայասերը հայտնում է իր վերշին կամքը, որ Բարսեղից հետո Հայոց կաթողիկոս ձեռնադրվի իր քրոջ թոռը՝ Գրիգորը (Գրիգորի), որն այն ժամանակ պատահ էր: Ուտիայնցին գրում է, թե. «առե Բարսեղ հնազանդ լեալ ամենայն հրամանաց տէր Գրիգորիս և յանմ օրէ եան առ

<sup>26</sup> Վարդան Արևելցի, էջ 147:

<sup>27</sup> Մատուցու Ուտիայնցի, էջ 364:

<sup>28</sup> ՄՌ Ուտիանան, Ազգապատում, էջ 1327:

<sup>29</sup> Ե—ԺԲ դի. Բայերեն ձեռագրերի իշխանակարաններ, էջ 171:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 172:

<sup>31</sup> Վարդան Արևելցի, էջ 150:

<sup>32</sup> Վարդան Արևելցի, էջ 150:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 150—151:

իմբն զանուանեալ կաթողիկոսի Գրիգորէս»<sup>34</sup>: Դրանից քիչ անց Վկայասերը մահանում է և թաղվում Կարմիր վանքում: Անեցին Գրիգորի ու նրա եղբայր Ներսեսի (ապագա Շնորհակու) կրթության գործը հանձնարարում է Ստեփանոս Մանուկին, որի գլխավորած հոգևոր դպրոցն այն ժամանակ ամենաշահավորներից էր:

Վկայասերից հետո՝ 1105 թ. հունիսից Բարսեղը դառնում է միանձնյա աթոռակալ: Այդ ժամանակ նրա առաջ բնականարար բարձրանում է աթոռանիստ տեղի խնդիրը. վերադառնալ Անի<sup>35</sup>, թէ մնալ Քեսունի շրջանում, որ գտնվում էր ժամանակի Հայոց ամենազորեղ ու անկախ իշխանությունը: Ինչպես երևում է, սկզբում Բարսեղը մտադիր է եղել վերադառնալ, որովհետո Վասիլ իշխանն ու հայ մեծամեծերը Վկայասերի մահը ողբալիս մտածում էին, թէ մնալու են առանց հայրապետի՝ «... լային զանտիրանալ իշխանց ի յօտար աշխարհի...»<sup>36</sup>: Բայց հետո, թերևս Ակատի ունենալով, որ Հայոց քաղաքական ոժի կենտրոնը փոխադրվել էր Կիլիկիայի սահմանները և ապստեղ անհրաժեշտ էր նաև հոգևոր իշխանության ներկայությունը, Բարսեղը որդում է մնալ «զետիկանն Աթոռ Թողեալ ի Շիրական Անի»<sup>37</sup>: Ըստով իրավիճակը փոփոխվում է նաև Անիում, քանի որ 1110 թ. մահացած հորը՝ Մանուչեին փոխարինած որդին՝ Արքավագարը, բարյացակամ չէր հայերի Ակատմամբ:

Քեսունի իշխանության շուրջ ևս անհանգիստ վիճակ է ստեղծվում: Այսումենայնիվ Վասիլ իշխանն ու Կիլիկիայի Հայոց իշխան Թորոսը հաջողությամբ են վարում ուզմաքաղաքական գործերը «իսկ Բարսեղ կաթողիկոս անց իշխանություն և իշխանություն էր և իր միջնորդութեամբ կը ջանար փորձանքները հեռացնել Հայոց գլխեն»<sup>38</sup>:

1112 թ. մահանում է զորեղ Վասիլ իշխանը, որի խոստվանահայրն ու հոգաբարձուն էր Բարսեղ Անեցին: Իշխանությունն անցնում է իշխանի հոգեզավակ Տղա Վասիլին («... արար միաբան ծողով տէր Բարսեղ և տայ զամենայն իշխանութիւն ի Տղա Վասիլն»)<sup>39</sup>: Սակայն դրանից մեկ տարի անց՝ 1113 թ. մայիսին, մի դժբախտ պատահարի զոհ է դառնում նաև իմքը՝ Բարսեղ Անեցին (փոլ է գալիս մի նորաշն տուն և մահացու վիրավորում այդտեղ գտնվող հայրապետին): Մահամերձ կաթողիկոսը հասցնում է երիտասարդ Գրիգորին եախկոպու ձեռնադրել և դեպքից երեք օր անց մահանում է: Ահա այսպիս անակնկալ ավարտ է ունենում բազմերախտ հայրապետի անհանգիստ կյանքը, որն անմասցորդ նվիրված էր Հայաստանեաց Սուպերեական Եկեղեցու բարորությանը, կաթողիկոսական իշխանության ամրապնդման ու ազգային միասնության գործին: Բարսեղ Անեցու դին հոդին է հանձնվում Կարմիր վանքում՝ Գրիգոր Վկայասերի և Վասիլ իշխանի շիրմերի կողքին:

Նոյն 1113 թ. Գրիգոր Վկայասերի, ապա նաև Բարսեղ Անեցու վերջին

<sup>34</sup> Մատթեոս Ուտիայեցի, էջ 372:

<sup>35</sup> Նոյն տեղում, էջ 372—373:

<sup>36</sup> Տասն Ներսեսի Շնորհակու Հայոց կաթողիկոսի Բանք շախու, Վեճետիկ, 1830, էջ 550:

<sup>37</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1339:

<sup>38</sup> Մատթեոս Ուտիայեցի, էջ 404—405,

<sup>39</sup> Աղբյորմերը ճշում է պատահարի երկու տարբերակ: Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1345—1346;

պատգամի համաձայն, Հայոց կաթողիկոս է ձեռնադրվում Գրիգոր Գ Պահլավուածին (1113—1166):

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ ԱՆԻՌԻՄ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ.  
ԲԱՐՄԵՂ Բ ԱՆԵՑԻ**

Բարսեղ Անեցու մահից հետո՝ 1114 թ. Վասպուրականում Դավիթ և պիտի կոպոսն իրեն կաթողիկոս է հռչակում, ինմը դնելով Սոլթամարի հակառակ կաթողիկոսությանը (որը գոյատևում է մինչև 1895 թ.): Կարմիր վանքում գումարվում է եկեղեցական ժողով, որը բանադրանքի է ենթարկում Դավթին: Վերջինս իր դիրքն ամրապնդելու համար փորձում է անեցիների աշակցությունը ստանալ, բայց մերժվում է. «Դամիր... սակայն ոչ եղև ընկալեալ թէն շատից եղև աշխատ ընծայիք և աղաշանաք՝ մանաւանդ ի յԱնոյ գըլխաւրացն»<sup>40</sup>: Ուշագրավ է, որ Դավիթը հատկապես անեցիներին է դիմել, գիտակցելով այս հարցում նրանց ունեցած կշիռը: Բայց վերջիններին դիրքորոշումը ևս միանգամայն բնական էր, քանի որ նրանք դեռևս չեն հրաժարվել կաթողիկոսական Աթոռուն Անի վերադարձնելու մտքից: Ինչպես ստորև կտևնենք, Գրիգոր Գ Պահլավուածին ևս մտադիր է եղել Անիում հաստատվել: Դավիթն Սոլթամարում իր կաթողիկոսության հռչակումը պատճառարանում էր նաև նրանով, որ այսուհետու մայր հայրենիքում, մի վայրում, որը ժամանակին Հայոց թագավորական իշխանությունն է եղել<sup>41</sup>: Հաւկանալի է, որ այս տեսանկյունից Անիի առավելությունն ավելի ակնհայտ էր: Մինևուն ժամանակ Քեսունի Կարմիր վանքն այլևս ապահով հանգըրվան չէր Հայոց կաթողիկոսի համար. 1115 թ. Ուսիայի լատին կոմսը գրավում ու վերացնում է տեղի հայկական իշխանությունը, իսկ Գրիգոր Գ Պահլավուածին մեկ տարի անց թողնում է Եղանավոր վանքն ու տեղափոխվում Ծովք ամրոց, որը իշխում էր նրա եղբայր Վասիլը:

Ահա նման պայմաններում Գրիգորը բանակցությունների է սկսում Անիի նոր ամիրա Արուզավարի հետ: 1120-ական թվականների սկզբներին կաթողիկոսի և ամիրայի միջև նախնական համաձայնություն է կարացվում Աթոռուն Անի փոխադրման համար: Սամուել Անեցու վկայությամբ՝ «հայրապետն... տէր Գրիգորիս... ունատ սիրոյ ուներ առ Ապլսուար, վասն իր սեփական Աթոռուն՝ գալ այսրեն նորա յօժար կամակցութեամբ...»<sup>42</sup>: Սակայն Անիում արագորեն ծավալվող քաղաքական անցքերն ակամա խափանում են այս կարևոր ձեռնարկի հրականացումը:

Հարկ է նշել, որ Անիի պատմության մեջ ողջ ԺԲ դարը բնորոշվում է որպես մի հարյուրամյա պայքարի շրջան, որը մղում էին՝ Ծեղողադյան ամիրաները՝ Մանուչեից մետք մնացած ժառանգությունը պահպանելու համար, զորացող Վրաց թագավորության գահակալները՝ քաղաքին ու նրա շրջակային տիրելու համար, և վերջապես ազատաքը անեցիները՝ որոնք աստիճանաբար սկսում են հանդես գալ որպես ինքնուրույն ուժ, փորձելով ստեղծել հնարավորին չափ ինքնիշխան գոյավիճակ: Այդ անհայտ պայքա-

<sup>40</sup> Վարդան Արևելցի, էջ 153:

<sup>41</sup> «ասեմ» Աթոռ է և այս թագավորացն Արծրունեաց՝ վայել է լինել և պատրիարքութեան» (Վարդան Արևելցի, էջ 153):

<sup>42</sup> Սամուել Անեցու, էջ 126, հմտ. Մատենադարան № 5619, էջ 104թ:

որի ընթացքում երեք անգամ՝ 1124—26, 1161—64, 1174—76 թվականներին քաղաքն անցնում է Վրացիներին և Կրկին վերադարձվում Շեղադյաններին, մինչև որ 1199 թ. Զաքարե և Խվանն եղբայրների գլխավորած հայ-Վրացական գործերը վերջնականապես Անին ազատագրում են ամիրայիկան տիրապետությունից: Այդ ընթացքում անեցները հաճախ հանդես են գալիս որպես ինքնուրույն քաղաքական ուժ, իրենք որոշում, թե ում իշխանությունն է տվյալ ժամանակամիջոցում հախընտրելի: 1155-ին Օրանք սեփական հայեցողությամբ փոխում են քաղաքի ամիրային, 1186-ին արշավում ու գրավում ավագակային որչ դարձած Շառարար ամրոցը և այլն<sup>43</sup>:

Ահա այս քազմամյա հակամարտության մկանը էր, որ ժամանակով համընկավ Գրիգոր Գ Պահլավունու Անիում հաստատվելու ցանկության հետ: Պատմիչների վկայությամբ Անիի ամիրա Արուպավարը ոչ միայն չեր կարողանում ապահովել քաղաքի անվտանգությունը (որի շրջակայքն անընդհատ ասպատակում էին մերժ քոչվոր ավագակները, մերժ Վրացիները), այլև հայերի նկատմամբ անքայցակամություն դրսեւում, ոտնահարում նրանց կրոնական գգացումները: Այս խորի վրա, Գրիգոր կաթողիկոսի հետ նրա ունեցած պահմանավորվածությունը թվում է սոսկ մի քաղաքական քայլ, որով ամիրան թերևս փորձում էր բարձրացնել իր իշխանության դերը: Ինչևէ, փաստն այն է, որ առ Խղաթում պատրաստել է տախս, Անի թերում ու Կաթողիկեի գմբեթին բարձրացնում մի մեծ մահիկ, որով լցնում է անեցների համբերության բաժակը: 1224 թ. Օրանք կանչում են Վրաց Դավիթ Շինարար թագավորին և քաղաքի դարպասները բացում երա առաջ: Վերջինս Արուպավարին ընտանիքով հանդերձ գերեզմանում և ողարկում է Վրաստան (ուր բղորը մահանում են), կրկին օծել է տախս Կաթողիկեն և քաղաքի պաշտպանության համար անհրաժեշտ գործ թողնելով վերադառնում<sup>44</sup>:

Բայց դրանով խնդիրը չի ավարտվում: Արուպավարի որդիներից մեկը Փաղունը, համախմբելով համակիր մահմեղական ուժեր մեծ վճաներ է հասցնում Անիին և ի վերջո կարողանում է երկու տարի անց Դավիթի որդի Դնենուրիցից են ստանալ քաղաքը, ընդունելով վրաց գերիշխանությունը: Երկամյա պատերազմից ու ավերածություններից հետո անեցները հասնում են այն բաժին, որ նոր ամիրան երդում է այլևս Կաթողիկեի նկատմամբ ուղնձգություն շահել («Խակ որդիքն Մանուչի արարին սաստիկ երդումն, վասն զի Սուրբ Կաթողիկեն, որ էր լՍնի, համապատ Հայաց կացը և մի՛ մոցէ ի առ տաճիկ և ոչ մսուրման ազգ»)<sup>45</sup>:

Կարող էր թվալ, թե Գրիգոր Գ Պահլավունու Անի գալու համար նպաստավոր պայմաններ էին առաջացել, բայց ինչպես երևում է, անեցների ապատամբական կեցվածքը և վրացական միջամտությունը մթագնել էին կաթողիկոսի և Շեղադյանների հարաբերությունները: Գրիգորի պատվերով իր

<sup>43</sup> Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մէջ բանի հարցեր, Երևան, 1980, էջ 87—147:

<sup>44</sup> «...ամիրայն Անոյ Արլստար... այդ անարի և կմամարդի... ես թերել եալ ծանրացն և բարձրահասակ ի Խլաթայ և նետ ի Վերաց գմբեթի Կաթողիկեն՝ փոխարժեն գեղաբան յառաջնոցն. վասն որոյ սրտառակ բրիսոններցն կոչեն զԴախիր և տան ի ձեռն նորս քարտար Անի: Ես ըլկեցեալ զգենն ատելի ի պատուական գլխոյն Կաթողիկեի, զոր ումէր զամն մասսուն... եղին զամակն զարդու և զբագն Յիսուսի... զիսան աստուածընկապ» Վարդառ Արլեւցի, էջ 156, Մատուռու Ուռիայեցի, էջ 451—452, 1. Ստիլիստը Բեկ, Վրաց արյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 42—43:

<sup>45</sup> Մատրեսու Ուռիայեցի, էջ 459:

ժամանակագրությունը շարադրած Սամուել Անեցին խոսելով 1124—26 թթ. ղեպքերի մասին թեև հիմնավորապես պատճառաբանում է անեցիների վարքագիծը, բայց նետո, փաստորեն, պարսավում է իր համարավարացիներին, որոնց ընդզման նետևանքով երկիրը մատնվեց կատարյալ թշվառության, իսկ կաթողիկոսն էլ չկարողացավ Անիում հաստատվել: Նա գրում է. «...յաղագ վերոյգրեալ նեղութեանց և վասն հարկապահանց յափշտակութեանց եկա եմաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն և տառապահը անհնարինք... բայց սրբազն հայրապետն... տէր Գրիգորիս, վասն զի ոխտ սիրոյ ուներ առ Ապլուտար, վասն իր սեփական Աթոռոյու՝ զալ պարեն նորա յօժմա կամկցութեամբ, յորմամ լուա զիսամբաս զայն՝ առաւել զայրացաւ տրտմագին ցամամբ առ գործող իրին: Եւ այս ամենայն լինի... ի յառակելութեանէ մեղաց, զի իբրև սուն դառնացողաց արարաք զանձինս մեր...»<sup>46</sup>:

Այսպիսով Գրիգոր Գ Պահապետու Անիում հաստատվելու ծրագիրը խափանվում է, սակայն կաթողիկոսը մշտական կապ է պահպանում քաղաքի հետ (պատահական չէ, որ ժամանակագրությունը է պատվիրում հենց քաղաքի Մայր տաճարի ավագերեց Սամուել Անեցու): 1149 թ. կաթողիկոսը Ծովքից տեղափոխվում է Հոռոմիլա, սեփականացնում այն, հիմք նելով մի կայտն կաթողիկոսամեատ կենտրոնի, որ և Աթոռոր մնում է մինչև 1292 թ.:

Սակայն վերադառնանք Անիի կացությանը, որի պատվախննիլիր քաղաքացիները դեռևս Աթոռոր վերադառնելու հոյսեր են փայփայում:

1124 թվականից հետո քաղաքը հոգևոր կյանքում կրկին կայսրագույն տեղ է գրավում Կաթողիկեն: Վերստին օծված եկեղեցու առաջին սպասավորներից մեկն է դառնում Հոռիաննես Սարկավագը<sup>47</sup>: Նրանից հետո հիշվում է Կաթողիկեն Գրիգոր անունով համարձակ ավագերեցը<sup>48</sup>, որին հաջորդում է Սամուել Անեցին, իսկ վերջինին՝ պատմիչ և քարգմանի Միհիթար Անեցին: Քաղաքային կյանքում հոգևորականությունն աստիճանաբար մեծ կշիռ է ձեռք բերում և անգամ գլխավորում քաղաքական շարժումներ<sup>49</sup>: Անիի վիմագիր արձանագրություններում քաղաքի «Արեցանին» ներկայանում է, որպես սեփական շահերը պաշտպանող հասարակական-տնտեսական որոշակի ուժ, որը գլխավորում էր Անիի արքեպիսկոպոսը: Վերջինն հատուկ հեղինակություն էր վայելում նաև համահակական եկեղեցական գործերում: Ինչպես Մ. Օրմանյանն է գրում. «Անոյ արքեպիսկոպոսները լիազոր իշխանութեամբ գլխաւորութիւնը կը պահէին բոլոր Հայաստանի մէջ եպիսկոպոս յարեւել հիւսիսոյ կոչմամբ և միայն մեծագոյն իրողութեանց մէջ յարաբերութիւն ունեին Հոռոմիլայի աթոռին հետո»<sup>50</sup>:

Առաջ նաև պայմաններում է, որ անեցիները կաթողիկոսական Աթոռոր վերադառնելու ողղությամբ մի նոր փորձ են կատարում: Նրանց մտադրության իրականացմանը խոշննդուող գլխավոր պատճառը Անիի շորք ծավալված ուզմա-քաղաքական վիճակն էր, որը մնում էր անկարու: Սակայն կային նաև գործին նպաստող հանգամներներ, որոնցից մեկը կաթողիկոսի անհրաժեշտ թեկնածուի առկայությունն էր՝ հանձինս քաղաքի Բարսեղ արք-

<sup>46</sup> Սամուել Անեցի, էջ 127:

<sup>47</sup> Ե—ԺԲ դդ. Բայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 157, 282:

<sup>48</sup> Վարդան Արևելցի, էջ 158—159:

<sup>49</sup> Մի քանի արաք պատմիչներ վկայում են, որ 1155 թ. «Անի քաղաքում քահանացը ապստամբեցին և այն գրավելով ամիր Չաղդաշից, հանձնեցին եղբորը՝ Ֆաղլունին» (Մը ալ Ասիր, Երևան, 1981, էջ 257, 400, Հ. Մարգարյան, Եղվ. աշխ., էջ 99):

<sup>50</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1525:

և պատմության մեջ հայունի է Բարսեղ Բ Անեցի անունը: Այս եռանդուն գործիքը Բարսեղ Ա Անեցու եղբայր Գրիգոր իշխաննի որդի Հասան Մագիստրոսի որդին էր<sup>51</sup>:

Նա առաջին անգամ հիշվում է Անիի պարսայի բոլգերից մեջի 1160 թ. շինարարական արձանագրության մեջ: Քանի որ Անիի արքեպիսկոպոսը հյուսիսային Հայաստանի եպիսկոպոսական մյուս աթոռների նկատմամբ առաջնություն ուներ, Բարսեղն այդ հանգամանքը ընդգծելու համար արձանագրություններում երբեմն կոչվում է հայրապետ: Նշված արձանագրության մեջ ևս ևս հիշվում է այդ կոչումով («Ե՛ ՈԹ (1160) թին ի թագաւորութեան Փատղոյ ի հայրապետութեան տեսոն Բարսեղի...»<sup>52</sup>: 1174 թ. Հոռոմուս՝ Պետրոս երեցի արձանագրության մեջ Բարսեղի իշխանության ոլորտն ավելի որոշակի է նշվում «...ի հայրապետութեան նահանգին մերուն տեառն Բարսեղի...»<sup>53</sup>:

Այս շրջանում Անիի արքեպիսկոպոսն ու նրա եղբայրները, որոնցից նշանավոր էր հայուսապետ մեծ իշխան Սպիրոսը, երբեմն ուղարկիրոնն տնօրինում էին քաղաքի քախորը: Մասնավորապես, հայունի է, որ 1161 թ. Արանք Անիից փոարել են քաղաքի ամիրային<sup>54</sup>: Բարսեղը քաղաքական նըկատուումներով հիմնականում բնականոն հարաբերություններ էր պահպանում ինչպես Վրաց թագավորների<sup>55</sup>, այնպես էլ Անիի Շեղադյան ամիրաների ու տեղի մահմետականների մետք<sup>56</sup>: 1186 թ. թեև քաղաքը գտնվում էր ամիրաքական տիրապետության տակ, բայց անեցիները համախմբվելով հարձակվում են մերձակա Ծառաքար քերդի վրա, որը Բարսեղի ժառանգությունն էր եղել և գրավելով կոտսրում են այնուղե հավաքված մահմետական ավազակներին («...առին Անեցիք զԾառաքար՝ զհայրենիսան տեառն Բարսեղի...»)<sup>57</sup>: Բնական է ենթադրել, որ իր հայրենի ժառանգության ազատագրման ու վերադարձման գործ մեջ Բարսեղն է կազմակերպել:

Հիշալ ժամանակաշրջանի քաղմապետի քաղաքական անցրերի մեջ շխրանգով, նշենք, որ Բարսեղ Բ Անեցին, փաստորեն, ամեն կերպ ջանում էր անհրաժեշտ հող նախապատրաստել կաթողիկոսական Աթոռուն տիրելու համար: Նրա օրոք Անիում ու նրա շրջակայրում վերելք է ապրում հոգևորեկելեցական կյանքը, կառուցվում ու նորոգվում են քազմաթիվ եկեղեցիներ<sup>58</sup>: Անիում նորոգվում է Ս. Փրկչի եկեղեցին, վեր է հատնում եպիսկոպոսանիս Ս. Առաքելոց եկեղեցու շքեղ գավիթը, ուր 1184 թ. իր և ծնոյ-

<sup>51</sup> Մ. Օրմանյանը կարծում է, որ Բարսեղ Բ-ը Բարսեղ Ա-ի եղբայր Գրիգորի որդին է (Ազգագրանում, էջ 1486), միջնդար, վերջինիս տոռն է, ինչպես վկայում է Միհրան Գոշը (տե՛ս Ն. Ալիմյան, Ներսուս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 394, Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 102):

<sup>52</sup> Դիվան հայ վիմագրության, Բ. Ա, էջ 2: Այս արձանագրության մեջ նշված Փաղուն Բ-ը 1155-ին գտն է բարձրացել հայերի աշակցությամբ: Ուշագրավ է, որ նրա եղբայրներից մենք բրատունություն է ընդունել: Վարդան Արևելցի, էջ 161:

<sup>53</sup> Կ. Անրուսյան, Տեղագրություն..., էջ 148:

<sup>54</sup> Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 101—103:

<sup>55</sup> 1174 թ. Բարսեղը Վրաց Գևորգի Գ-ի օգնությամբ գերությունից ազատել է տվել Ա Կարսից Անի Վերաբարձրել եղբորը՝ Ասպիրատին: Վարդան Արևելցի, էջ 170:

<sup>56</sup> Ներսուս Լամբրոնացին Ալոն Բ-ին գրած տրոտմ փորձելով վարկարեկել Բարսեղին շահարկում է նրա լավ հարաբերությունները մահմետականների մետք, Անեցուն կոչելով «բորբք քածակի ընկեր» ակնհայտորեն «մոռանդով», թե ինչ պայմաններում և ու տիրապետությամբ տակ էր գտնվում Անին: («Գարուն», 1991, № 8, էջ 89):

<sup>57</sup> Վարդան Արևելցի, էջ 171, 174:

<sup>58</sup> Ե—ԺԲ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 207:

Աերի հիշատակին նվիրված խաչքար է կանգնեցնում Բարսեղը<sup>59</sup>: Նա հետևում է նաև Ծիրակի մյուս վանքերի կացությանը, հատկապես հովանավորով Հռոմոսի հշանավոր վանքը, որի վիմագիր արձանագրություններում ու տեղի գրչատան ձեռագրերի հիշատակարաններում երախտագիտությամբ է հիշվում<sup>60</sup>: 1191 թ. Բարսեղ Բ Անեցին ալազգիներից ազատում, գնում է Լմբատավանքը (Արդիկի մոտ) և կալվածքներ նվիրում<sup>61</sup>: Նոյն շրջանում ոմն Գևել նորոգում է Երազգավորի (Ծիրակավան) Ս. Աստվածածին եկեղեցին «միջնորդութեամբ տեառն Բարսի եպիսկոպոսի»<sup>62</sup>:

Այժմ տեսնենք, թե ինչ հարաբերություններ ուներ Բարսեղը Հռոմելիայի Սթոռոյ հետ: Վերջինս Գրիգոր Գ Պահապունոց հետո անցնում է նրա եղբարը՝ Ներսես Դ Կայեցուն (1166—1173), իսկ նրանից հետո՝ Գրիգոր Դ Տղային (1173—1193): Այս կաթողիկոսի օրոք՝ 1177 թ. բյուզանդական Մանուկ Ա Կոմեննոս կայսրից հովն և Հայոց եկեղեցիների միության խնդիրն արձարծող համակ է ստացվում (միավորման խնդրի քննարկումը սկսվել էր ավելի վաղ)<sup>63</sup>: Գրիգոր Տղան այս մասին համակով ծանուցում է Հայատապահ եպիսկոպոսներին ու նոգերականությանը, որոնցից մերժողական պատաժան է ստանում: Այդ գրությունը ստորագրած նոգերականության անվանացանկը սկսվում է Բարսեղ Բ Անեցու անունով:

1179 թ. ապրիլին Հռոմելիայում գումարվում է եկեղեցական մեծ ժողով, որի հայատապահի մասնակիցներից առաջինը հիշվում է Բարսեղը՝ «Բասիլիոս արքափակուպոս թագաւորականուստ քաղաքին Անուոց»<sup>64</sup>, որը Մ. Օրմանանի ընորշմանը՝ «ընդդիմադիրներուն պետու էր»<sup>65</sup>: Ժողովը բավական երկար է տևում (մինչև՝ 1180-ին մահանում է կայսրը) և ի վերջու ավարտվում է անարդյունք, քանի որ նոգերականության ավանդապահ մասը դավանարանական գլխավոր հարցերում մնում է անզիջում: Դրանից հետո Բարսեղը վերադառնում է Անի, իսկ Հռոմելիայի Աթոռոյ հետագայում ևս շարունակում է քայլել ձեռնարկել եկեղեցիների միավորման ուղղությամբ (այս անգամ արդեն կապեր ստեղծելով լատինական կաթողիկան եկեղեցու հետ), որի ջատագովներից էր ժամանակի հշանավոր գործիչներից մեկը՝ եպիսկոպոս Ներսես Լամբրնացին:

Հյուսիսային Հայատանի նոգերականության շրջանում աստիճանաբար խորանում է այն համոզումը, որ անհրաժեշտ է սեփական կաթողիկոսական Աթոռո ունենալ, հետո մնալով զանազան ազդեցություններից ու դավանարանական վեճերից: Այս խնդրի իրականացման համար լավագույն թեկնածու է համարվում Անիի արքեպիսկոպոսը: Եթե 1193 թ. մահանում է Գրիգոր Տղան, Հայատանում առաջ է քաշլում Բարսեղ Անեցու թեկնածությունը, բայց այն ընդունելություն չի գտնում Կիլիկեցիների մոտ: Հռոմելիայում կաթողիկոս է ձեռնարդվում երիտասարդ եպիսկոպոս Գրիգոր Ե-ը:

<sup>59</sup> Դիվան հայ վիմագրության, հ. Ա, էջ 31, տե՛ս նաև Հ. Մարր. Անի, հնագույն քաղաք և քաղաքական կազմակերպությունների մասին, Անդրանիկ Մարտիրոսյան, Երևան, 1980, էջ 74, 117.

<sup>60</sup> Ն. Սարգսյան, Տեղագրություն..., էջ 149—150, Ե—ԺԲ դր. Բաշերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 233, 251:

<sup>61</sup> «Ու (1191) կամա Աստուծոյ ես տէր Բարքեր, որ գնեցի զվաճքը բանարիմաց և եսու զՅիցըն վանաց և զշորը որ իրեանցն էր ի հնոց եղեալ, յիշատակ ինձ եւ բարեխաստ առ Քրիստոս», Ղ. Ալիշան, Ծիրակ, էջ 164:

<sup>62</sup> Ն. Սարգսյան, Տեղագրություն..., էջ 170:

<sup>63</sup> Մ. Օրմանան, Ազգապատում, էջ 1383—1459:

<sup>64</sup> Ընդհանուրան բոլոր ս. Ներսեսի Ծնորհաւոյ, Երուսաղեմ, 1871, էջ 198:

<sup>65</sup> Մ. Օրմանան, Ազգապատում, էջ 1467:

Ամի քաղաքի Ս. Փրկչի եկեղեցու 1193 թ. Տրդատ քահանայի արձանագրության սկզբում նշվում է. «Յամս աստուածապատի և հոգեւոր տեսան Բարսի Հայոց կաթողիկոսի և յամիրապետորիեանն բարիանուն Սոլյանին... յամի ՈԽԵ (1193) թուականին...»<sup>66</sup>: Իսկ Հոռոմոսի վահանայր Պետրոսի 1195 թ. արձանագրության մեջ կարդում ենք՝ «Ե թ ՈԽԵ (1195) յառաջին ամի կաթողիկոսութեան տեսան Բարսի...»<sup>67</sup>: Փաստերի թվայցը անհամապատասխանությունը պարզվում է, եթե ծանոթանում ենք Հոռոմկայուն ծավալված դեպքերին: Ինչպես երևում է, Գրիգոր Տղայի մահվան լորեն առնելուց հետո անեցիները Բարսեղին արդեն կաթողիկոս են համարել, բայց հրա ձեռնադրությունը տեղի է ունեցել ավելի ուշ՝ Գրիգոր Ե-ի մահից (1194) հետո՝ 1195 թ.: Բանն այն է, որ Հոռոմկայի աթոռակալը զոհ է գնում կիլիկյան արքունիքում և բարձրաստիճան հոգևորականության շրջանում նորոված խարդավանքներին, ևս ձերքակալվում ու տարփում է Կոպիտառի քերդ: Եվ մինչ Սատու պատրաստվում էին կաթողիկոսին մեղադրող ժողով գումարել, մի առավոտ հրա դիմ գտնում են քերդի պարիսաների տակ, ժայռերի վրա ընկած (այստեղից էլ առաջացել է դժբախտ կաթողիկոսի Քարավեծ մականունը): Լուր են տարածում, թե կաթողիկոսը մահացել է փախուսի փորձ կատարելիս, սակայն Հայաստանում ավելի շատ հակված են լինում կարծելու, որ Գրիգոր Ե-ն բռնի մահվան զոհ է<sup>68</sup>: Ինչպես էլ որ եղած լինի, փաստն այն է, որ կիլիկյան գորացած արքունիքը, Լուս Բ-ի գլխավորությամբ (1198-ից՝ թագավոր), ուղղակիորեն միջամտում էր կաթողիկոսության գործերին: 1194 թ. վերջերին Սատու գումարվում է եկեղեցական ժողով, որը Լուս Բ-ի ցուցումով կաթողիկոս է ձեռնադրում Գրիգոր Զ Ապիրատին (1194—1203): Ձեռնադրությունը կատարվում է առանց Հայաստանի հոգևորականության կարծիքը հաշվի առնելու;

Այսպիսով, Կիլիկիայում դեպքերը զարգանում են եկեղեցական կյանքի համար անբնական ընթացքով և Հայաստանի հոգևորականությունն իրեն իրավունք է վերապահում ինքնուրույնաբար գործելու: Տեղի եալիկոպատերն ու վարդապատները նախ հանդիմանական նամակ են հղում Լուսնին, նշելով, որ չեն ճանաչում նոր կաթողիկոսի իշխանությունը, առաջարկում են նոր ընտրություն՝ տալով Բարսեղի թեկնածությունը, և պահանջում են արքունիքից հեռացնել Ներսես Լամբրոնացուն, որին կատարված դեպքերի գիշավոր մեղավորն են համարում: Լուսն փորձում է խուսանալի, Լամբրոնացուն հեռացնում է, բայց Գրիգոր Ապիրատին թողնում է Աթոռի վրա: Միայն դրանից հետո է, որ 1195 թ. Հայաստանի հոգևորականության միակամությամբ կաթողիկոս է ձեռնադրվում Բարսեղ Բ Անեցիկ<sup>69</sup>: Այս է պատճառը,

<sup>66</sup> Դիման Բայ Վիմագրության, Բ. Ա., էջ 47:

<sup>67</sup> Ն. Սարգսյան, Տեղագրութիւնը..., էջ 150:

<sup>68</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 148:

<sup>69</sup> Ն. Ակիմյան Բարսեղի լաթ դիլուս նարու մասին գրում է. «1173-ին երբ վախճանցան Ներսես Շնորհայի Հիւմանային Հայաստան (Հայրան) Բարսեղ «Կաթողիկոս» կը նշչակուի, եւ ասպա երբ Գրիգորի Տղայ կաթողիկոս կը նարուի Բարսեղ «Հայրապետ» լոլջորջումը կը նմանուն: Նույնպես նաև 1194/5-ին, երբ Գրիգորին Ե Քարավէջ կը լլայ, Բարսեղ «Կաթողիկոս» կը լոլջորջուի երկրորդ անգամ»: (Ն. Ակիմյան, նշվ. աշխ., էջ 397): Բայց այսուեւ ակնհայտ շփոթմունք կա: Նախ Բարսեղ Բ-ի Հայրաստուն ձեռնադրվելու մասին ոչ մի վիճակություն չկա (համանարար շփոթված է Հայրաստի համանուն եախլուպում մետքուն տես՝ Գ. Հովհաննիս, Յիշատականամբ ձեռագրաց, Բ. Ա., Սարիլիսա, 1951, էջ 407—410, Կ. Ղափարարյան, Հայրաստ, Երևան, 1963, էջ 275): 1173 թ. Բարսեղը որպես

Այսպիսով, Բարսեղ Ա Անեցու 1105 թ. քաղաքից հեռանալուց 90 տարի անց անեցիները մի վերջին անգամ վերականգնում են Անիի կաթողիկոսական Աթոռը: Գործունյա Բարսեղ Բ-Ա հմտորեն տնօրինելով եկեղեցական գործերը, անհրաժեշտ հող է նախապատրաստում նաև երկրի քաղաքական զարթոնքի համար: Հաշողորդունները սպասել չեն տպիս, շուտով Անին վերջնականապես ազատագրվում է ամիրայիկան տիրապետությունից ու դուները բացում Զաքարի և Խվանե Զաքարյանների գլխավորած հայ-վրացական գորքերի առաջ: Այս դեպքերի շունչն է, որ զգացվում է Հոռոմոսի վանահայր Միհիթարի արձանագրության մեջ՝ «Եղեւ այս ի հայրապետոթեան տէր Բարսի և... ի տէրութեան քաղաքին և երկրին Մեծ Հայոց Քրիստոսի մեծ զարականաց Զաքարէի և Խանէի, որոց հովանի լիքի Սուրբ Երրորդութիւն»<sup>21</sup>: Անիում վերականգնվում է թէ՛ կաթողիկոսական Աթոռը, թէ՛ քրիստոնեական իշխանապետությունը և քաղաքը թևակիրխում է իր ծաղկման երկրորդ շրջանը:

Բարեկի մահվան մասին որոշակի տեղեկություն չի պահպանվել, բայց հավանաբար ծերունազարդ հայրապետը մահացել է մինչև 1203 թ.<sup>72</sup> Գրիգոր Սահիրասի մահը: Անիի նոր տերը՝ Զաքարէ ամիրապասալարը, Հայոց եկեղեցական միասնալությունը չխախտելու, թերևս առա վրացիների հետ դավանաբանական հարցերը չսրելու մտահոգությամբ, որոշում է Բարեկի հետո քաղաքում պահպանել միայն եպիսկոպոսական Աթոռը: Անիի եպիսկոպոսությունը է ձեռնադրվում Բարեկաղ Բ Անեցու եղրոր՝ Սահիրատ իշխանի որդի Սարգիսը, որին դեռ երիտասարդ տարիքից, որպես իրեն փոխարինող երախիապատրաստել Անիի վերջին կատողիկոսը<sup>72</sup>:

Բարեկ Բ Անեցոյ պատուհանությամբ ավարտվում է Աճի կաթողիկոսական Սթորի պատմությունը, որը սկսվել էր դրանից երկու դար առաջ:


կաթողիկոս չի հիշվում, Ն. Ալիքնանը Ակատի է ունեցել Ամինի մի արձանագրությունը, բա-  
րելով «Ծիրակից» (Էջ 85), որ Հցված է ՈՒԲ (1173), մինչդեռ եղալ է ՈՒԲ (1193): Տե՛ս  
Դիվան հայ Վիմագրության, թ. Ա, Էջ 47: Սխալ է առա Բարսեղի՝ Գրիգոր Ե-ի մասից ան-  
միջական հևտո կաթողիկոս դատապարտ մասին պետությունը: Բարսեղը ձևանադրվել է Գրիգոր  
Ասկիրատի՝ Բայաստանի հոգևորականության կողմից շնամաշված ձևանադրությունից հետո՝  
1195 թ.:

<sup>70</sup> Ա. Օպանոսյան, Ազգապատում, էջ 1525:

<sup>71</sup> Ա. Ասրագան, Տեղական թիւների մասին, էջ 149:

<sup>72</sup> Ե—ԺԲ դդ. Բակերեն ձևագրերի հիշատակարաներ, էջ 251:

Սյունիկն Հայաստանի եկեղեցական կյանքում ծանրակշիռ դեր է կատարում Անիի եպիսկոպոսությունը: Իսկ Հայոց կաթողիկոսական Աթոռը դեռ երկար ժամանակ շարունակում է գործել Հայաստանի սահմաններից դուրս՝ Կիլիկիայում, մինչև որ 1441 թ. կրկին վերադառնում է մայր հայրենիք, իր նախնական ու սրբազն վայրը՝ Լուսավորչաթիմճ Ս. Էջմիածին:





#### Գ. Խ. ԱՏԵՓԱՆՅԱՆ

### ԵՐԶՆԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ\*

#### 5. ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԿԱՄ ՏԱՏԱՍԿԻ ՎԱՆՔ

Համարվում է Երզնկայի վանքերից ամենամեծը. նաև հնագույններից: Կառուցված է եղել քրիստոնեության արշավուսին, Տոմիկ լեռների ստորոտում, Մերջան գետի վտակի ափին, դրա համար էլ կոչվել է նաև Մերջան վանք: Գտնվել է քաղաքի 4—5 ժամ հեռավորության վրա:

«Ծինված էր հարթ ու տափարակ դաշտագետնի մը վրա,—գրում է Գ. Սյուրմենյանը, —Հողալյուսէ բարձր, թանձր ու հաստատուն պարիսպներու մեջ առնված էր վանքը, որ կրովանդակեր վանականներու բնակության համար տուն, խոհանոց, ճաշարան, մառան, խկ կենդանիներու համար՝ ախոռ, գոմ, մարագ, մեղվանոց և այլն: Ծենքին հարավային մասին վրա կառուցված էր եկեղեցին՝ գեղեցիկ մատուռատաճարիկ մը, որուն վեջ կգտնվեր և Գրիգոր Լուսավորչի աջը, արծաթապատ և ոսկեզօծ, ինչպես նաև երկաթյա փոքր տատասկներ, որոնց վրա, ըստ Ագաթանգեղոսի, դրան ու չարշարած են սուրբ և որոնց ճիշտ տեղը շինված է այս վանքը, այդ պատճեռով կոչված է Տատասկի վանք»<sup>39</sup>:

Ծենքի հարավային մասի անկյուններում եղել են սենյակներ, խկ հյուսային կողմի անկյունների վրա՝ դիտարաններ, «թշնամին հեռուեն տեսնելու և կանխապատրաստվելու համար»: Տաճարի ներսում, դրան մոտ, եղել է այսպիսի արձանագրություն: «Լոյս համափիտ ճառագայթեալ յԱրևելից փառօք ծագեալ»:

Վանքի մոտքի մոտ փուլած է եղել ընդարձակ մարգագետինը, եզերված հոկա թթենիներով: Մի մեծ ու բարքարոտ ձոր վանքը բաժանել է դիմացի սարալանչից, որտեղ եղել է բավականաշատ վարելահող, սեփականություն վանքի:

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1992 թվականի Թ—Ժ—ԺԱ. միացյալ և ԺԲ համարներից:

<sup>39</sup> Գ. Սյուրմենյան, էջ 95:

Բերված փաստերից երևում է, որ Զարչարանաց Լուսավորչի վաճքը ունեցել է բնական հարմար դիրք, լայն տարածություն, վաճառապատկան կալվածներ, հողամասեր, որոնք հաճախ տրվել են կապալով: Վաճքը մասամբ ապահովված է եղել նաև պաշտպանության միջոցներով, աշխարհիկ ամրոցներին հատուկ հարմարանքներով, պարհսպների վրա կառուցված դիտակետերով: Եթե ունեցել է թշնամուն հետախուզելու հնարավորություն, կնշանակի ունեցել է նաև զենք և կովող ուժեր:

Կամ վկայություններ, որ Երգմկայի վաճերից շատերն ունեցել են ինքնապաշտպանության համար անհրաժեշտ զենք, որն օգտագործվել է ոչ միայն վաճքի մարդկանց կյանքը Փրկելու համար, այլև՝ հարևան գուղերի: Ծակատագրական հարձակումների օրերին նրանք ապաստանել են վաճերը և կազմակերպել դիմադրություն: Այն վաճքերը, որ ունեցել են նման հնարավորություններ, ավելի ազատ են մնացել թշնամու խժդություններից ու վայրագություններից:

Գոյց դրանով պիտի բացատրել, որ Տատասկի վաճքը գոյությունը պահել է մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները:

Այժմ նրա կրթական, մշակութային դերի մասին:

Այնպիսի մի վաճք, որի հիմնադրման թվականը հասնում էր մինչև վաղ քրիստոնեության դարերը, և որտեղ հավատացյալներին ցուց էին տրվում երկաթյա այն տատասկները, որոնցով իբր թե շարչարել էին Գրիգոր Լուսավորչին, չեր կարող իրեն չգրավել հոծ թվով մարդկանց: Հենց նրանց օժանդակությամբ ու նյութական նվիրատվություններով էլ պիտի բարգավաճեր ու ծավալեր մշակութային գործունեություն:

Զարմանալի զուգահպությամբ՝ այստեղ նոյնպես մատենագրական աշխատանքը սկսվել է 13-րդ դարի հենց սկզբին: Խնչպես Ավագ վաճքում, այստեղ գրված ձեռագրերից հնագույնը, որի մասին կա հիշատակություն, կրում է 1201 թվականը: Այդ տարում Տատասկի կամ ս. Լուսավորչի վաճքում գրվել է մի Ավետարան, որի գրիշը եղել է Ղազարը, իսկ Ստեփանոս կրոնավորը նոյն տարում, նոյն վաճքում գրել է մի այլ Ավետարան: Հենց մի տարում, միևնույն վայրում երկու Ավետարան արտագրվելու փաստը ինքնին ապացուց է 13-րդ դարի արշալուսին վաճքի ապրած կենսունակության, գրչագրական եռուն գործունեության մասին:

Ունենք վկայություններ նաև հետագա տասնամյակների մասին, մասնավորապես դարավերջի տարիների:

Ստենք, որ Մնանուի լանջերին հաստատված վաճերը առհասարակ ենթակա են եղել մոտական գյուղերի պարբերական հարձակումներին: Սուպել ևս այդ բախտին պիտի արժանանար Տատասկի վաճքը նյութական հարտությամբ գայթակղեցնելով կողոպուտի սովոր ցեղերին: «Գյուղեն մեռու ըլլալուն, —գրում է Գ. Սյուրբենքանը, —միևնույն գյուղացիներու օգնության գալը՝ բյուրերը իրենց գործը տեսած դարձած կրլլային: Անոնք գիշերները լեռներեն վար հշեելով՝ գոռում գյոյցնով կմոտենային վաճքին: Հոն գունվողներն ալ պատուիսաներեն հաց, դրամ, ծխախոտ վար կնետեին՝ այդ պատուհասն ազատելու համար: Կպատահեր, որ անոնք այսքանով կրավակնանալին ու ետ կդառնային»<sup>40</sup>:

Բայց հաճախ էլ դրանով չեն գոհացել, գործը հասկը է զինված ընդհարումների, համատարած կողոպուտի և սպանությունների:

Ամա այս պայմաններում վաճքը շարունակել է իր գոյությունը երկար դարեր: 1895 թ. գոնվել է Տեր-Ղևոնդ քահանայի իրավասության տակ: Նա վաճքը ժառանգած է եղել Թորից, համարվել է նրա պատկենական կալվածը: Այդ մարդը եղել է պարթե հասակով, կայտառ ու ճարպիկ, իմացել է, թե ում հետ ինչպես պիտի վարվի: Բարեկամներ, ծանոթներ է ունեցել թե ազգային իշխանություններում, թե թուրք բարձրաստիճան պաշտոնյաների շարքերում և թե բուրդ ցեղապետներից:

Հայտնի է, որ գեր վերջին դարերում վահանայրերը մեծ մասամբ լինում էին կուսակրոն հոգևորականներ, այսինքն՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, որոնք ամուսնանալու, սերնդագործելու իրավունք, հետևաբար իրենց հարստությունը որդիներին թողնելու հնարավորություն չունեին: Խցակե՞ն է Տեր-Ղևոնդը ժառանգել այդ ամբողջ հարստությունը, մեզ հայտնի չէ: Ամենայն հավահականությամբ պետական որևէ հրամանագրով, տալով համապատասխան կաշառք, մի քանի, որ օրինականացած երևոյթ էր: Մեր այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ առաջին տարիներին Ղևոնդ քահանան այնքան ազատ է զգացել իրեն, որ հաշվի չի առել եկեղեցական մարմինների գոյությունը: Զգիտենք նաև, թե վաճքը Տեր-Ղևոնդ քահանայի իրավասության տակ գոնվելու տարիներին ունեցել է մշակութային գործունեություն, թե միայն ուխտատեղի է եղել:

Համենայնեւաս հայերը գոր են մասցել Տեր-Ղևոնդից, որ կարողացել է երկար ժամանակ ապահով պահել վաճքը:

1895 թ. ընդհանուր շարդերի օրերին, Տատավիլի վաճքը ենթարկվել է բարբարոսական հարձակման: Տեր-Ղևոնդն իր փոքրաթիվ մարդկանցով օրհսասկան պայքար է մղել թշնամու դեմ, սակայն պարտվել է: Թորքերը խուժել են պարհապետից ներս, գազանաբար խոշտանգել քաջարի Ղևոնդ քահանային ու նրա ըմտանիքի բոլոր անդամներին:

## 6. ԿԱՅԻՓՈՍԻ ԿԱՄ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲԱ. ՄԾԲՆՍ. ՀԱՅՈՍՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Կայիփոսի վաճքի հնությունն էլ, ըստ ավանդության, հասնում է մինչև քրիստոնեության առաջին դարը, Տրդատի օրերը: Հնարավը է, որ այդ ավանդությունը հիմքից գործ լինի, սակայն վակերական փաստ է առնվազն 600 տարվա նրա մատենագրական, կրթական գործունեությունը:

Կայիփոսի մասին գրել են շատերը: Ոմանք, ինչպես Ս. Ամալյանը, Գ. Սյուրմենյանը և որիշներ, գրել են ականատեսի տպավորություններով, գրառումներով, որիշներ՝ օգտվելով առկա գրականությունից, ինչպես Հ. Ուկյանը: Եվ որովհետև վաղուց պատմության գիրկն անցած, «հանգած» այդ վաճքի մասին հժվար թե գրվի ամփոփ մի գրություն, ոգում ենք մի քիչ հաճամանորեն խոսել այստեղ:

Գ. Սյուրմենյանը գրում է. «Երգեկայեն 4—5 Ժամ ենուավորության վրա, երկար ու հոգնեցուցիչ զադիվեր մը վերջ՝ լայնանիստ լեռնադաշտի մը խորը կրտսեվը այս վաճքը: Չորի մը բարձունքը, սարահարթի մը կողքին կրարձրանար վաճքին փառակիր շենքը, վեհ ու պատկառելի դիրքով, ամուր ու քարշեն պարիսպներով շրջապատված: Ուներ ընդարձակ գավիթ մը և արտաքին մեծ դռան դիմացը, գետնեն բարձր, հոյակապ եկեղեցի մը, իր փոքրիկ զանգակատունով: Քովը վահատուն ու մրու կողքին երկարէ մաքուր սենյակներ կային ուխտավորներուն համար: Վաճքին շորջը կար լայ-

նատարած մարգագետին մը: Այս վաճքը ամենաբարձր դիրք ունեցողն էր Երզնկայի բոլոր վաճեքրուն մեջ: Կիման խիստ, և օքը ընդհանրապես պայ ըլլալոն, բերք չէր հասներ հոն: Ոչ ծառ, ոչ պտու և ոչ ալ բանջարեղեն ուներ: Վաճապետին գործը միայն արջատ պահել էր. հազիվ քանի մը կտոր արտեր կային հեռուները, ցած տեղեր, անոնք ալ անջրդի ըլլալոն՝ մեծ բերք մը չէին տար<sup>41</sup>:

Լավ ող, շինչ ու պայծառ երկինք է ունեցել Կայիփոսը: Գտնվելով գյուղերից, բնակավայրերից շատ հեռու, նմանվել է կատարյալ մենաստանի: Ուստաբնացությունների բազմությունն էլ շատ մեծ չի եղել: Հաճախ ենթարկվելով կողոպուտի՛ վերջին տարիներին դարձել է գրեթե ամայի մի վայր:

Ս. Ամատյանի նկարագրությունը վաճքի աշխարհագրական դիրքի, կիմայի մասին, հաստատում է Սյուրմենյանի գրածը, բայց այնքան էլ անհրապույր չէ: Ծիշտ է Սյուրմենյանը գրել է Ամատյանից 60 տարի հետո, գուցե որոշ բուականություն չբացել են, սակայն դրանով հանդերձ՝ ուշագրավ է նաև 1880-ական թվականների Կայիփոսի պատկերը:

«Լեռնատափն, որ կանգնյալ է Ս. Հակոբա վաճքն, Եկեղյաց դաշտեն խիստ բարձր դիրք ունի, որում չեն հասնելի բնավ գավառին մյուս բարձրադիր վանորենից բարձրությունը, և զոր շորջանակի կապատեն ծաղկազարդ, դալարագեղ ու ակնապարար բլորներ: Խոկ հովիտն, առաստությամբ, բազմազանությամբ ու գեղեցկությամբ, բուտց ու ծաղկանց՝ մշտադալար պարտիզի Կմանի»:

Ե՞րբ է կառուցվել վաճքը: «Բնաշխարհիկ բառարանը» այդ մասին ոչինչ չի գրում: Այլ աղբյուրներ հակասական կարծիքներ են հայտնում կառուցման ժամանակի մասին:

Ե. Բորեն, որ 19-րդ դարի առաջին կեսին այցելել է այնտեղ, գրում է, թե ըստ իրեն տրված բացարությունների՝ պետք է որ «Տրդատի դարուն հասնող շինություն մը ըլլա»:

Նոյն այցելուն ասում է, թե թեև այս վաճքը չունի Անիի եկեղեցիների շքելությունը, սակայն օժտված է հիմ ոճով, «Որուն ձևերն ու նկարագիրը շատ գեղեցիկ չափակցությամբ Բագրատունիներու մայրաքաղաքին մեջ ալ կգտնենք: Եկեղեցվո նաև, գմբեթը վեր կրոնեն չորս պյուներ, որոնց վրա բափական հին թվական կրող արձանագրություն մը գտանք»<sup>42</sup>:

Նման մի արձանագրության մասին խոսել է նաև բանասեր Խաչատրյանը, «Արևելք» թերթում տպագրած հոդվածում: Նա ասում է, թե ինքը այցելել է այդ վաճքը, բայց շինության թվականը մասին որոշակի գաղափար չի կարողացել կազմել: Միայն դուսն ճակատին նկատել է Զթ թվականը: Հ. Ռուկանը, մեջ բերելով այդ վկայությունը, ասում է, թե Զթ-ն, այսինքն 1460-ը ինքնին հնությունից հեռու է:

Նոյն Ռուկանը բերում է փաստեր, որոնք մեզ տանում են խոր անցյալը: Բայց դա չէ էականը, այլ այն կարծիքը, թե Կայիփոսի վաճքի ճարտարապետությունը հիշեցնում է Բագրատունիների ճարտարապետական ոճը:

«Եկեղեցվո գավիթին հարավային կողմն է այն փոսը,—կարդում ենք մի նկարագրության մեջ,—որ ճգնած է սուրբ Հակոբ, ուսկից առած է վաճքը զլոր անունը՝ Կա-ի փոս: Կպատմվի թե սույն փոսեն մինչև Զուղուակ Հայրապետ ժամանակով ներքողի մը կա եղեր, բայց ալմ գոյություն չունի:

<sup>41</sup> Գ. Սյուրմենյան, Երգելա, էջ 97:

<sup>42</sup> «Հանդես ամսօրյա» 1949, նունվար-մարտ:

Վանական եկեղեցույն տաճարին երկու կողմերը քանդակված են եզան և առյուծի վիմապատճերներ»<sup>43</sup>:

Այս Ակարագրության առաջին մասը մեզ թիշ կարող է հետաքրքրել, որ ժողովրդական իմաստավորումով բացատրվում է կապու բառը՝ որպես կա ի փոս, բայց երկրորդ մասը, որտեղ խովում է քանդակապատկերների մասին, շատ կարևոր է:

Եզրակացնենք՝ Կապոսի վանքը Երզնկայի վանքերից հնագույններից է, սակայն այն դարերի ընթացքում ենթարկվել է ավերումների ու վերանորոգումների: Նման ավերումներից մեկը պատճել է 1416-ին՝ ըստ S. Պալյանի, իսկ ըստ այլ բանասերների՝ 1406-ին: Կործանվել է մի ահավոր հրթենից, բայց կարճ ժամանակից վերանորոգվել է, պահել փառքը: Մի վերանորոգում էլ ունեցել այն տարիներին, երբ վանահայրն է եղել հայտնի Ավետիք Եվդոկիացին («Խետագայում» պատրիարք):

Մանոթացնենք Կապոսի վանքի կրթական, մատենագրական գործունեությունը, հեմվելով մեզ հասած Կցկուոր փաստերի վրա:

Հնագույն վկայությունը, որ ունենք վանքի մատենագրական գործունեության մասին, վերաբերում է 1224 թվականին, երբ Վարդան մանրանկարիչը այսուել ծաղկել է մի ճառընտիր, հայր Կոստանդինի համար: Կշշանակի 13-րդ դարի սկզբներից, գուցե 12-րդի վերջերից ունեցել է հասուն միարանություն:

1230 թ. Իշխան գյուղացի Վարդան քահանան Սարգիս քահանայի հետ Կապոսի վանքում Միխիար գրիշին գրել են տվել մի Ծաշոց և մի Տոնական: Երկու ձեռագիր մի տարում, այն էլ մեզ հասանենք, թիշ չէ վանքի գրչական արվեստի զարգացումը ցույց տալու համար:

1255 թ. Սամուել առաջնորդը օրինակել է տվել ոսմ Գրիգորին՝ U. Աքանասի գործերից հատվածներ: 1343 թ. Ներսես սարկավագը արտագրել է տվել մի Յարակնոց «Ընդ հովանես սրբոն Յակոբայ Կապոսի»:

Այդ դարի վերջերին Կապոսի վանքի առաջնորդն է եղել Գևորգ Երզնկացին, որն ունեցել է գրական, մանկավարժական բեղուն գործունեություն, աճեցրել է աշակերտներ, որոնցից հիշվածներից է Հակոբ Ղրիմեցին: Գևորգ Երզնկացին այնպիսի մեծ հեղինակություն է ունեցել քաղաքում, որ հոգևոր պետքն առաջարկել են նրան Անդրկայանալ Լանգթիմուրին և խնդրել խնայել իրենց աղոթատեղիներին: Գնացել է, բայց սարսափահանը և ապարդյուն վերադարձել է, ինչպես վկայում է Թ. Մեծոփեցին:

Հայտ Հ. Քյուրյանի՝ Գ. Երզնկացին Կապոսի վանքը ղեկավարել է մոտ քառա տարի՝ 1389—1397 և 1411-ից մինչև մահվան տարին 1417 թ.:

Այդ ժամանակաշրջանում Կապոսի վանքում գրիմած ձեռագրերի հիշատակարաններում Գևորգ Երզնկացու մասին գտնում ենք դրվագական տողեր: Գրիգոր գրիշը, օրինակ, 1416-ին գրած հիշատակարանում ասում է, թե աշխատել է «Ընդ հովանես սրբոն Յակոբայ սրբնչելագործ հայրապետին Մծրնա, ի յառաջնորդութեան սուրբ ուխտին եռամեծար և քաջ փիլիսոփայի բազմերախտ հօրու մերոյ և վարդապետի Գևորգա քաջ ուրունապետին»:

Գևորգ Երզնկացին վախճանվել է 1417-ին և թաղվել է Ծոյն վանքում: Այդ փաստն արձանագրող գրիշն էլ նրան համարել է «հոչակելի ուրունապետ»:

<sup>43</sup> «Հանդես ամսօրյա», 1949, թիվ 1—3, էջ 30:

<sup>44</sup> Դ. Փիրդակեմյան, Նոտարը հալոց, էջ 79—80:

Գևորգ Երզնկացին Կապոսի վաճքում ծավալել է մանկավարժական բեղուն գործունեություն, աճեցրել մի քանի տասնյակ աշակերտներ, որոնցից են Սրբաւակես Սեբաստոցին, Գրիգոր Գրիչը, Ավետիք Երզնկացին, Հակոբ Դրիմեցին, Սարգիս Դրիմեցին, Արքանամ արեղան, Հովհաննես Երզնկացին, Ղազար Երզնկացին և ուրիշներ: Մրանց մի մասը եղել են թելմնավոր գրիշեր, մյուսները՝ նաև մատենագիրներ, ինչպես Հակոբ Դրիմեցին, որը 1412 թ. գրել է «Հարցումն Գևորգայ ռարունապետի և ծառայարար կատարումն Յակոբայ աշակերտի... զիրաման հարկի բարունյոյ իմոյ հրաշալի, և զվարդապետաց պէտի, քաջ փաղերայի Գևորգ վարժապետի, թորգումնան տոհմի և հայկազեան սեռի, մանաւանդ Եկեղեց գաւառի, և Դարանադեաց հահանգի, ընկալայ սիրով, հնազանդ ծառայս և աշակերտ Յակոբ Դրիմեցի, և ներգնեալս ոգի»<sup>44</sup>:

Ենթադրվում է, որ Կապոսի վաճքում Գևորգ Երզնկացուն հաջորդել է Սվետիք Դարանադեցին:

Սակայն սրա վանահայրության շրջանից մեզ ոչինչ չի հասկել, թեև կամկածից վեր է, որ շարունակել է ուսուցչի գործը, մանավանդ որ այդ տարիներին վաճքում էին աշխատում Գևորգ Երզնկացու աճեցրած վերոհիշյալ գլուխներն ու մատենագիրները:

Հաջորդ վանահայրը, որ Կապոսի վաճքի կշիռը կրկին բարձրացրել է, ականավոր կրթական գործիչ Հովհաննես Համշենցին է: Նույնպես վանահայր է եղել թե Ավագ վաճքում, թե Կապոսում: Այսուել նա մանկավարժական թելուն գործունեություն է ունեցել 1480-ական թվականներին:

Նրանով հիացողներից մեկը՝ Գրիգոր Տարոնեցին, մի հիշատակարանում պատմում է, որ ինքը սովորել է Գրակա վաճքում, բայց լսելով Հովհաննեսն Համշենցի «քաջ ռարունապետի համբավը» և իմանալով, որ «Նստեալ կայ ի գաւառն Եկեղեց ի դրուն սուրբ Հակոբին և ունի աշակերտք բազում և ուսուցան հանգոյն համեկին վարդապետացն», եկել է և ընդունվել նրա համալսարանը «Մտի ի համալսարան նորա և նուայ ի յունկերությին աստուածային իմաստութեան, զոր ար ըստ արէ պատմէր հոգույն սրբով և տպարուեր ի միտս աշակերտացն»<sup>45</sup>: Ապա ասում է, թե ինքը մեկ տարուց այնքան բան է սովորել, որ սկսել է գոել Դիտնախոսի երկերի լուծումը:

Այս հիշատակարանը գրված է 1489 թվականին:

Որ Հովհաննեսն Համշենցու առաջնորդության և տեսչության շրջանում Կապոսի վաճքը հոչակվել է և Կոչվել համալսարան, վկայում են նաև այլ ձեռագրեր: 1496 թ. Կապոսում գրված մի ձեռագրի հիշատակարանում՝ կարդում ենք. «Ի գաւառն Եկեղեց ի դրուն սուրբ Յակոբայ և Սիմեոնի, որ մականուամբ Կայիփոս վաճք կոչի, ի համալսարան Յովհաննես քաջ ռարունուն, որ աշխարհաւ Համշենցի, յառաջնորդութեան նոյն ուսուի Տէր Ներսէսի որդոյ խոճան Ասարպեկի»<sup>46</sup>:

Դրանից մեկ տարի առաջ, 1495 թ. Խաչատոր արեղան այնուել արտագրել է մի Ուկենփորիկ, իսկ ավելի վաղ՝ 1490 թ. գրվել է մի Մանրուանունք և Տունացուց «ձեռամբ մեղապարտ և անիմաստ Գրիգորիս Տարանացու ի վաճուց Ամլորդույն ի գաւառ Եկեղեց որ ասի Եզնկայ, ի դրուն ս. Յակոբին որ Կայիփոս վաճք կոչի»:

Կապոսի միաբաններից բարերդյի Մաղաքիան էլ եղել է Հովհաննես

<sup>45</sup> «Հանդս ամսօրյա», 1948, հունվար-մարտ:

<sup>46</sup> Նոյն տեղում:

Համշենցու մամկավարժական, գիտական վաստակը բարձր գնահատողներից և իր արտագրած երկու ձեռագրերի հիշատակարաններում արտահպատել է ուշագրավ մտքեր:

1494 թ. գրած հիշատակարանում նա հիմացմունքով խոսելով Կապոսի համալսարանի մասին, գնահատում է «մեծի բարունույն Յովանիսի, ի ժամանակիս, որ ամբարի, առ լոյս ծագի մեջ աշխարհի, լուսաւորող սա համայնի, հայոց տառապեալ ազգի...»:

Հովհաննես Համշենցին վախճանվել է 1497-ին, մեծ սույն մատնելով Բարձր Հայրի ժողովուրդը, մանավաճան մուսկորական դասը»<sup>47</sup>:

Համշենցու հետ միասին Կապոսի վաճքում բեղուն գործունեություն են ունեցել Ցրեցին, Աստվածատուրը, Հայրապետը, Պետրոս Պիշուրը: Դարանալցին հիշում է նաև մի անարժան ու անառակ վարդապետի՝ Որոգայթ անունով:

Համշենցու մամից հետո Կապոսի վաճքը կրթական կենտրոնի դերը միանձամանակ էլ պահել է Ստեփանոս վարդապետի վանահայրության շրջանում: Այդ տարիներին արտագրվել, Ակարազարդվել են մի քանի ձեռագրեր, որոնց հիշատակարաններում հանդիպում ենք «մեծահուշակ վաճք Կայիփոսի» գնահատականը:

Ենթադրվում է, որ վաճքի առաջնորդ Ստեփանոսին հաջորդել է Մկրտիչ Պարոնտերը, որի առաջնորդության շրջանում 1534 թ. Սրբափին Մոկացին Կապոսում ունեցել է կրթական ու գիտական գործունեություն: Այդ նոյն տարիներին այնտեղ Ակեքսիանոսը գրել է մի Քարոզգիրք, իսկ Ղուկաս քարտուղարը՝ մի Շարակմոց:

1633 թ. Միքայել Եպիսկոպոսը արտագրել է մի Աղոթամատոյց «Ի լեռ-կիրճ Եղմնու, ի հոչակառ անապատ Կայիփոսո, որ կա սուրբ Յակոբայ կզակն և սուրբ Կարապետի Ըկոյթն, ի հայրապետութեան Տէր Եղիայի»:

Կապոսի վաճքը մեկ էլ աշխուժության շրջան է ապրել հայտնի Ավետիք Եվդոկիացու առաջնորդության տարիներին, 17-րդ դարի Վերջերին: Ավետիքը 1684 թ. հիմնովին Վերանորոգել է վաճքը, ուժեղացրել միաբանությունը, զարկ տվել կրթական աշխատանքին: Այնուհետ կրթություն սուացած մարդիկ գործել են Հայաստանի տարբեր վայրերում ու քաղաքներում: Սիմեոն Լեհացին ասում է, թե Արմացում հանդիպել է Կապոսի վաճքի եպիսկոպոսներից մեկին:

Վաճքի մշակութային դիմագիծն սկսել է աղոտանալ 18-րդ դարի սկզբներից, հավանաբար Ենիշերիական ասպատակությունների ուժեղացման և հաճախաղեակ դանալու պատճառով, իսկ 19-րդ դարի կեսերին գրեթե անշուր վիճակում է եղել: Բորեն գրում է, թե 1840-ական թվականներին այնտեղ ապրում էին երկու հայ քաթանաներ, որպես վաճքի պահապան:

Ս. Ամառանը, որ այցելել է այնտեղ 1870-ական թվականներին, այսինքն Բորեից մոտ 30 տարի հետո, հուսարորդ օրոց տոռեր է գրել, ասելով, թե վաճքի խնամատարությունը հանձնված է եղել Նարանաղյաց գավառի առաջնորդական փոխանորդ Վարդան քահանայի եղբոր՝ Խաչատոր աղային:

Ինչ որ մեծահարուստ Խաչատորի նյութական օճախակությունը կարող էր օգտակար լինել, բայց երբեք չէր կարող վաճքին տալ կենացառություն:

Ալապիսով, Երգեկայի Կապոսի վաճքը 600 տարի կտրական, մշակութային կենտրոն լինելուց հետո հանգել է 19-րդ դարի վերջերից:

<sup>47</sup> «Համայնքաւայրք», 1949, նոյն տեղում:

## 7. ԵՐԿԱՆԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԻ ՎԱՆՔ

Եղել է Երգմկայի հնագույն վանքերից և գոյությունն ամենդժող պահել է մինչև 19-րդ դարի վերջերը:

Ականատեսի վավերականությամբ այս վանքի մասին գրել են Ս. Ամատյանը, Գ. Սյուրմենյանը, Կ. Ղազանյանը, Տ. Պալյանը և ուրիշներ, սակայն նրանցից ոչ մեկը չի կարողացել արձանագրել ուշագրավ փաստեր՝ նրա կործական, մատենագրական գործունեության մասին, թեև այդպիսի դեր կատարել է գեր որոշ դարերում, ինչպես երևում է ձեռագրերում պահպանված հատուկենա հիշատակարաններից:

Վանքի արտաքին և ներքին նկարագրի մասին որոշ տեղեկություններ հաղորդում է Տ. Պալյանը: Նրանից իմանում ենք, որ սրբատեղին ունեցել է 15—20 սենյակներ՝ բարձրադիր և հովասուն, ունեցել է սառնորակ աղբյուրներ, մի «լուսաղբյուր», որուն ջորեն հավատացաւը կրվացվել և կիսեն ի բժշկություն»: Վանքի սեփականություն է եղել 50 արտավարի չափ մշակելի հող և մի մրգատու այգի<sup>48</sup>:

Պալյանն ասում է, թե մոտակայքում կամ հին վանքերի, եկեղեցիների ու գերեզմանատեսի ավերակներ: Հայ երկույթին բուն Սուրբ Գևորգի վանքը եղել է դրանցից մեկնումնեկի տեղում, հետագայում երկրաշարժի կամ այլ որևէ աղետի պատճառով քանդվել է և կառուցվել նորը՝ ավելի անշուր:

Ս. Ամատյանը այնուղեք տեսել է մի Հայոմավորք, որի հիշատակարանից այն եղրակացության է հաճակ, թե Երկամի Սուրբ Գևորգի վանքը «երբեմն մեծ ու հշանավոր մենաստան է եղեք ի զավառին» և ունեցել է «քազմություն միայնակեցած, արեղայից և վարդապետաց, որոց թիվն, պաշտոնն ու անվանք հիշատակյալ են անդ»<sup>49</sup>:

Դժբախտաբար նա չի արտագրել այդ արժեքավոր հիշատակարանը, անգամ չի ասում, թե որ թվին է գրված եղել:

Երկամի Ս. Գևորգ վանքի վերաբերյալ հնագույն հիշատակությունները հնանում են 13-րդ դարի վերջերին և 14-րդ դարի սկիզբներին, այսինքն գուգադիպում են Երգմկայի մուտքոր զարդումը շրջանին:

Այնուեւ ուսում են ստացել, գործել են մի քանի տասնյակ վարդապետներ, որոնցից քերի անունները են մեզ հասել: Մի ընդարձակ հիշատակարանից իմանում ենք, որ այդ վանքում գործել է «մեծ և բոչակավոր վարդապետ Կիրակոսը, անշուշտ Կիրակոս Երգմկացին, որը 1320-ական թվականների վերջերին գործել է այնուղեք:

Նոյն վանքի միաբաններից է եղել հայունի գրիշ Մխիթար Երգմկացին, որի թողած հիշատակարանները հետարքիր տեղեկություններ են պարունակում ժամանակաշրջանի, առհասարակ Երգմկայի տնտեսական և մուսուր կյանքի մասին: Նրա՝ 1327 թ. գրած մի հիշատակարանում խոսվում է Աստվածաշնչի համաց ծավալուն մի ձեռագրի արտագրման մասին, 14-րդ դարի սկիզբներին, ինչ որ վկայում է ոչ միայն գրիշի, այլև ծաղկողի, թուղթ կողի և այլ մասնագետների առկայության մասին վանքում<sup>50</sup>:

Երկամի վանքում գործող վարդապետներից է եղել շատ անհագիւտ, թափառական կյանքի սիրահար Վորթանեսը: Նա այնուղեք է ստացել հայ-

<sup>48</sup> «Բյուզանդիոն», 1902, № 1614:

<sup>49</sup> «Արևելյան մամուլ» 1887, էջ 435—438:

<sup>50</sup> Հ. Քորտուան, էջ 266—273:

նական կրթությունը, դարձել արեղա, գործել միատժամանակ, պա մեկնել է Դերջան, սովորել Մաղաքիա վարդապետի մոտ: Հետագայում եղել է Քղիոս և այլոր: Ուղիղ տասը տարի թափառելուց հետո, վերադարձել է Երկանի վաճքը:


Ըստ երևոցին վերադարձել է բավականաշափ հարստացած, քանի որ կարողացել է վճարել վանքի պարտքը, կառուցել շենքի վերին և ներքին պարիսպները և այլ մասնաշենքեր:


Վրթանես վարդապետի վերոհիշյալ հիշատակարանը ցուց է տալիս, որ այդ տարիներին վանքը ունեցել է բավականաշափ հնարավորություններ գիտական և կրթական գործունեություն ծավալելու: Միաբանների թիվն էլ մեծ է եղել, որոնց դեկավարը եղել է Վրթանեսը:

Սյու երևում է նաև Գր. Դարանադու այն վկայությունից, թե ընդամենը մեկ ամիս այնուղի մնային՝ միայն մի գալֆում 24 վարդապետի գերեզման է տեսել, «ուր թեև կրակ կիյնա, սակայն գերեզմաններն անեղծ կմնան»<sup>51</sup>:

Պիտի ափսոսալ, որ մեզ չի հասել ոչ այդ շիրիմներում հանգստացողների անունները և ոչ էլ նրանց գործը: Բայց, դրանով հանդերձ, 24 գերեզման միայն մի գալիքում, ցուց է տալիս, թե որքան մարդիկ կապված են եղել այս վանքի հետ և իրենց կյանքը անց են կացրել այնուեղ:

<sup>51</sup> Գր. Դարանադու, էջ 403:





## ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՄԻԶԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայաստանի ծաղկուն և շեն մայրաքաղաք Աճին գրավվեց սելջուկյան թուրքերի կողմից 1064 թ.: Հետագայում՝ 1072—1199-ի ժամանակահատվածում (որոց ընդմիջումներով) տիրել են բրդական ծագում ունեցող Ծաղդադյան ամիրալության զորքերը, որոնք անկման էզրին հասցրին քաղաքի մը շակորային և տնտեսական կյանքը: Հայաստանն և մայրաքաղաք Աճին ավելի մեծ հարված ստացան արևելքից ժամանած թաթար-մոնղոլական արշավանքի ժամանակ: 1236 թ. Աճին գրավեցին մոնղոլները: Քաղաքի բնակչությունը երկու անգամ՝ 1249-ին և 1260-ին ապստամբեցին և երխուժող այդ վայրագ ցեղերի դեմ, բայց դաժանորեն ճնշվեցին: 13—14-րդ դարերում մոնղոլների ճնշումների, ապա նաև ծանր հարկերի պատճառով, անցնելու և Հայաստանի բազմաթիվ բնակչություն սկսեցին լքել իրենց հայրենիքը, արտագաղթել և ապաստան գտնել օտար երկրներում, այսպես օրինակի համար Վրանատան, հարավային Ռուսաստան (Սատրափիան և Ղրիմի զանազան քաղաքները), իսկ ավելի ուշ՝ Ղրիմից գաղթեցին Կոստանդնուպոլիս, Գալիցիա, Լեհաստան և Դոն գետի ափին հիմնեցին Նոր Նախշեան քաղաքը<sup>1</sup>:

Վերոհիշյալ ավելիթից արշավանքների հետևանքով հայերի գաղթը դեպի արևմտաք պատճան դարձավ, որ հայկական համայնքները բազմանան Բյուզանդական կայության մեջ: Մուրեն իշխանը գրավեց Լեռնային Կիլիկիո մեծ մասն և 1080 թ. այստեղ հիմնեց հայկական իշխանություն, որն սկզբում ուներ կիսանկախ կարգավիճակ, իսկ հետագայում հանդիսացավ անկախ պետականություն: Այն գոյատնեց շուրջ երեք դար, բայց Փոքր Սահայից ժամանած թուրքերի, իսկ ապա 1375 թ. Եգիպտոսի մամլուքների կատարած արշավանքների հետևանքով կործանվեց Կիլիկիո հացա թագավորությունը: Հայոց վերջին Լուս Զ թագավորը իր ընտանիքով գերի տարվեց Եգիպտոս:

Կիլիկիո հայոց գերիշխանության ժամանակ (1080—1375 թթ.) տեղի ունեցած Խաչակրաց արշավանքները: ԺԱ դարում քրիստոնեության կենտրոն Երուսաղեմ քաղաքը գրավված էր սելջուկ թուրքերի կողմից: 1095 թ. Ֆրանչիայի Կիերմոն քաղաքում գումարված եկեղեցական ժողովում Հռո-

<sup>1</sup> Հայկական համառոտ համբագիտարան, Ա հատոր, Երևան, 1990, էջ 206:

մեական Կաթոլիկ եկեղեցու պետի՝ Ուրբանոս Բ-ի առաջարկով որոշվեց Եվրոպայում հավաքագրել քրիստոնյա զորաբանակ, որպեսզի արշավի դեպի արևելք, գրավի Երուսաղեմ քաղաքն ու ազատագրի Քրիստոսի աճի հետ կապված Սուրբ վայրերը, այլակրոն մահմետականների ձեռքից<sup>2</sup>:

Պատմության մեջ հայունի են Խաչակրաց ութ արշավանքներ, որոնց առաջինը տեղի ունեցավ 1096—1099 թթ., իսկ վերջինը 1270 թ., որով տևեցին ուրօք երկու դար<sup>3</sup>: Արշավող բանակը բաղկացած էր Եվրոպական քրիստոնյա զանազան պետությունների տրամադրած զորքով: Դրանց մեջ կային Ֆրանսիացիներ, գերմանացիներ, խոլացիներ և այլ ազգությունների պատկանող զորքեր: Այս արշավանքների դեկավանքներ հանդիսացան Եվրոպական զանազան երկրների իշխաններ և արքաներ: Այս զորաբանակները ցամաքային ճամփով գալիս էին Փոքր Ասիա, ժամանում Կիլիկիայի հայոց թագավորության երկրամասը, ուր որոշ ժամանակ հանգստանում և հյուրասիրվում Կիլիկիո հայերի, ինչպես նաև պետության կողմից: Կիլիկիա ժամանած Եվրոպական բանակների իշխանները, որոնք հյուրասիրվում էին հայոց թագավորների կողմից ամուսնացած մեր թագավորների բույրերի կամ արքայազն դուստրերի հետ, որոնք հետագայում դարձան Երուսաղեմում կազմված քրիստոնյա թագավորության թագումներ, պայպես օրինակի համար.

1. Մրտա (ԺԲ դար) Կիլիկիո Թորոս Ա. իշխանի դուստրը, Երուսաղեմի թագումի, Բեղդիայի Պաղտին (Բողոքնեան) Ա. թագավորի կինը<sup>4</sup>:

2. Մարֆիա (ԺԲ դար) Մալաթիայի հրամանատար Գարբիել իշխանի դուստրը, Երուսաղեմի թագումի, Եղեսիայի կոմս (1100—1118 թթ.) և Երուսաղեմի թագավոր (1118—1131 թթ.) Պաղտին Բ-ի կինը<sup>5</sup>:

3. Մեկսան (ԺԲ դար) Երուսաղեմի Պաղտին Բ. թագավորի և հայագագի Մարֆիա թագումու աղջկը, ինքը Երուսաղեմի թագումի, Ֆուլք թագավորի կինը<sup>6</sup>:

4. Ագնես (ԺԲ դար) Կիլիկիո Կոստանդին Ա-ի թոռը, Ժուլին Բ-ի աղջկը, Երուսաղեմի թագումի, Բողոքնեան Գ-ի եղբայր՝ Ամորի Ա. թագավորի կինը<sup>7</sup>:

5. Ռիթա (ԺԳ դար) հայոց Լևոն Ա. թագավորի դուստրը, Երուսաղեմի թագումի, Հովհանն Բրիեն թագավորի կինը<sup>8</sup>:

Սրանցից բացի կան նաև արքայազն ուրիշ հայումներ, որոնք այս ժամանակաշրջանում ամուսնացած են Կիպրոսի սենեկալի, Անտիոքի ժառանգի, Եղեսիո կոմսի, Սիղոնի տեր արքաներոր, Կիպրոսի թագավորի, Հովապետի իշխանի և օստարազգի արքաների հետ:

Ստույգ տեղեկություններ կան, որ նոյնիսկ թաթար-մոնղոլական և Խաչակրաց արշավանքների առաջ իսկ եղել են թագմաթիվ հայեր (վաճառականներ, դիմանագետներ, հոգևորականներ և այլն), որոնք այցելել, ապրել և գործել են Հեռավոր Արևելքից (Չինաստան) մինչև Եգիպտոս, Եվրոպա-

<sup>2</sup> Petit Larousse, Paris, 1961, p. 1298.

<sup>3</sup> Նոյն տեղում:

<sup>4</sup> Ղ. Ալիշան, Սիսվան, Վենետիկ, 1885, էջ 371:

<sup>5</sup> Հանդես ամսօրյա, Վիեննա, օգոստոս-հոկտեմբեր, 1934, էջ 445:

<sup>6</sup> Նոյն տեղում:

<sup>7</sup> Նոյն տեղում, էջ 446:

<sup>8</sup> Ղ. Ալիշան, նոյն տեղում: Հ. Ամարան, Հայոց անձնանունների բառարան, Բ. հատոր, Երևան, 1944, էջ 48:

կան զանազան երկրներից մինչև Երտասալեմ և այլն: Օրինակի համար ԺԱ—ԺԲ դարերում Եգիպտահայ գաղղրն ավելի աճեց ու բազմացավ, որ տարբեր քաղաքներում ունեցած հայկական վանքերի, եկեղեցիների և մատուռների քանակը հասավ երեսութիւն: Այսօր դեռ պահպանված են Վերին Եգիպտոսի Սոհակ քաղաքի մոտերք գտնվող Սպիտակ վանքի (Դեյր Էլ-Արիադ, այժմ պատկանում է Ղպտի եկեղեցուն) չորս որմնանկարներն ու հայերեն արձանագրությունները<sup>10</sup>:

Թաթար-մոնղոլների Հայաստան կատարած ավերիշ և դաժան ժամանակում աճեց մեր երկիր բնակչության արտահոսքը դեպի ավելի ապահով երկրները: Եվրոպացի խաչակիրների տուն վերադարձի ժամանակ բազում հայեր ևս նրանց հետ մեկնեցին Եվրոպա և մշտական բնակություն հաստատեցին այնտեղ: Այսպես օրինակի համար, թեմբետու կցկոտոր տեղեկություններ կան Միջին դարերի Բովդարահայ գաղղոթի մասին, սակայն, ինչպես գրում է պատմաբան Աշոտ Արքահամանը «9—13-րդ դարերում տասնյակ հազարամյոր հայ գաղթականություն է տեղափոխվել Բովդարիա, հայկական ստվար գաղթօջախներ են ստեղծվել այնտեղ և զգալի դեր կատարուել երկրի քաղաքական, հասարակական և կուլտուրական կյանքում»<sup>11</sup>:

Որոշ տեղեկություններ կան նաև եզրադրելու, որ Ֆրանսիան անձանոթ երկիր չի եղել հայերի համար միշնադարում: Աշոտ Արքահամանը գրունում է, որ «հայ առևտորականները ապրանքափոխանակություն են կատարել Գալիայում (Ֆրանսիայի համակիմ անունը (6—7-րդ դարերում»<sup>12</sup>: Ապա նա նշում է, որ 9—10-րդ դարերից մեզ հասել է «հայ-լատիններն մի զրոցատվորթյուն՝ կցված Հերմանիոսի համակիմ», որով գտնում է, որ հայոց լեզվի նկատմամբ մեծ հետաքրքրություն կար այդ ժամանակ Ֆրանսիայում, որովհետու հայ առևտորականներ, դիվանագետներ, ճարդարապետներ, արհեստավորներ և այլն, գալիս էին Ֆրանսիա, շփվում տեղացիների հետ և նույնիսկ ապրում այստեղ երկար ժամանակով:

Միջին դարերում մի շաբք հայ եպիսկոպոսներ այցելել, գործել և վախճանվել են եկլողական զանազան երկրներում: Այսպես, օրինակի համար, Անտիոքի հայ եպիսկոպոս Մակարը (պաշտպան Գանդ քաղաքի) 1011 թ. գմացել և հաստատվել է Բելգիայի Գանդ քաղաքի Սուրբ Բավոն վանքում: Հաջորդ տարի՝ 1012 թ. նա վախճանվել է ժամանակաշրջանում: 1067 թ. Հռոմի եկեղեցին սրբացրել է նրան և ամեն տարի ապրիլի 10-ին նշվում է նրա հիշտուակը<sup>13</sup>:

Գրիգոր արքեպիսկոպոս վախճանվել է Ներքին Բավարիայի Պասսան քաղաքի Նիդերներուգ վանքի (10-րդ դար) Ս. Խաչ տաճարում 1093 թ.<sup>14</sup>:

<sup>9</sup> Մրանց ամբողջական ցուցակը տեսնել Ն. Տեր-Միքայելյանի «Եգիպտահայ գաղութը 10—15-րդ դարերում» գրքում, Բեյրութ, 1980, էջ 260—261:


<sup>10</sup> Մրանց հաջող և գեղեցիկ լուսանկարները (որոնք Ալարկած են 1124—1125 թք.)՝ տեսնել թերևալ գրքում Angèle Karpelan-Kouyoumjian, L'Egypte vue par des Arméniens, Paris, 1988, թլ. I—IV, նաև գրքի շամփիկի վրայի Ս. Հովհաննեսի զարդանկարը:

<sup>11</sup> Պրոֆ. Ա. Գ. Արքահաման, Համասոտ ուրվագիծ հայ գաղթավարերի պատմության, Երևան, 1964, էջ 305:


<sup>12</sup> Սովոր տեղում, էջ 418:

<sup>13</sup> Պ. Ալիշան, Հուշիկը, Ա. 73: Ավիշան, Սիսական, Ա. Ղազար, 1893, էջ 461: Հ. Անապան, Հայոց անձնանունների բառարան, հաստո՞ք, Երևան, 1946, էջ 168: «Գրական թերթ» շաբաթաթիր, Երևան, 17 հուլիսի 1992, էջ 2:


<sup>14</sup> «Էջմիածն» ամսագիր, Էջմիածն, հուլիսի 1981, էջ 46: «Գրական թերթ» շաբաթաթիր, Երևան, 17 հուլիսի 1992, էջ 2: Histoire des Arméniens, Toulouse, 1986, p. 393.



1. Օվերնի պահանջման քաղաքները




2. Կլերմոն-Ֆերան լազարետոր  
եկեղեցի շատականիչը




3. Ասե-Սատարնինի եկեղեցն  
ՀԱՅԱԿԱԳԻ-ԾԵ


SAIN-T-SATURNIN




4. Խոնդրի եկեղեցն ՀԱՅԱԿԱԳԻ-ԾԵ




6. ՕՐԻՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՇՎԱԿԱԴՐՈՒՄ




11. ՍԵՎԻ-ՆԵԿԱՏԵՐ ԵԿԵՂԵՑԻ ՏԱՐԱԿԱԴՐՈՒՄ




12. ԼԻՎԻ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՇՎԱԿԱԴՐՈՒՄ




H.-D. DU PORT




SAINTE-VIVIENNE



SAINT-NICOLAS



SAINT-MARTIN



9. ՍԵՎԻ-ՆԵԿԱՏԵՐ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՇՎԱԿԱԴՐՈՒՄ

Գալով Ֆրանսիային, աղբյուրները հիշատակում են մի ուն Սիմոն Եպիսկոպոսին, որ հալածվելով սասանյան պարսիկների կողմից, 6-րդ դարի վերջերին՝ 591 թ. ժամանել և հորությալվել է Տուր քաղաքի Մայր եկեղեցում, Գրիգոր անոնով հոգևորականի կողմից<sup>15</sup>:

Հարավային Ֆրանսիայի Թալլար բնակավայրում ամեն տարի մի օր հատուկ հայածես հայերեն պատարագ է մատուցվում Գրիգոր Եպիսկոպոսի հիշատակին, երբ բազմաժիվ հայ և ֆրանսիացի հավատացյալներ ուխտի են գնում այդ օր և ներկա լինում այդ հանդիսավորացն: Գրիգոր Եպիսկոպոսը վախճանվել է 4-րդ դարում և նա սրբացված է Կաթոլիկ եկեղեցու կողմից<sup>16</sup>:

Կենտրոնական Ֆրանսիայի Օրլեան քաղաքի մոտ կա մի փոքր բնակավայր՝ Փիթիվին անոնով, որ բաղադր է նույնպես մի ուրիշ հայացքի սուրբ, որ Վախճանվել է 11-րդ դարում: Կրոնական տոմարներում միշտ հիշվում է նրա ազգային ծագումը<sup>17</sup>:

Ֆրանկո-հայկական դարավոր կապերը չեն սահմանափակվում միայն առևտրականների և հայ հոգևորականների Ֆրանսիա այցելության հարաբերություններով: Եկեղեցական ճարտարապետության պատմության ականավոր մասնագետներ գտնում են, որ ակնհայտ կերպով նմանություններ կան երկու երկրների պատմական հուշարձանների մեջ: Այսպես արվեստի ավատրիացի պատմաբան Յոզեֆ Ստրժիգովսկին «գտնում է, որ Ֆրանսիայի Օրլեան քաղաքի մոտ գտնվող Սեն-Ժերմեն-դե-Փրե (11-րդ դարի) եկեղեցին կառուցված է հայկական ոճով»<sup>18</sup>: Ֆրանսիական ճարտարապետության վրա հայկական ոճի ազդեցության մասին է գրում նաև ֆրանսիացի արվեստաբան Մարտել Դյուրլիաթը ևս իր գրքում, որ նվիրված է ոռմանական արվեստին<sup>19</sup>:

13-րդ դարի կեսերին Փարիզում կառուցված Սենոն Շապել գլուխ գործոց մատուի վերին կապելլայի շքամուտքը, ի թիվս այլ ճարտարաբնդակների, զարդարում է Զվարթնոցի տաճարը պատկերող մի ճարտարաբնդակ: Որով պարզվում է, որ 13-րդ դարում եղան է մի հայ ճարտարապետի ձեռքի գործի արդյունքը վարի վրա<sup>20</sup>:

Մինչև Խաչակրաց արշավանքները հայ-ֆրանսիական հարաբերությունները շեշտված բնույթ չունեին: Այդ արշավանքներից հետո արդեն շփումները բազմացան և ավելի սերտ բնույթ ստացան: Որովհետև այդ արշավանքների ընթացքում եկրոպացի բազմահազար գորքերը, սպաներն և իշխանական դեկապարները դեպի Երուսաղեմ արշավելու հանապարհին անցնում էին և վերադառնում հայկական անկախ Կիլիկիոն երկրամասով, որերով մը նում էին այսուհեղ և անձամբ շիվում հայերի հետ, ծանոթանում հայկական մշակույթին, ճարտարապետության, արվեստներին, արհեստներին և ի վերջո ստեղծում սերտ խմանիական կապեր:

<sup>15</sup> Հայկական ստեղծական հանրագիտարան, հատոր 12, 1986, էջ 724: Histoire des Arméniens, Toulouse, 1986, p. 392.

<sup>16</sup> Histoire des Arméniens, Toulouse, 1986, p. 392. «Արև» օրաթերթ, Կամիրն, 24 նոյեմբերի 1987, էջ 3:

<sup>17</sup> «Արև» օրաթերթ, նոյն տեղում:

<sup>18</sup> Աշոռ Արքանական, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 418:

<sup>19</sup> Marcel Duriau, L'Art Roman, Paris, 1982, p. 134.

<sup>20</sup> Անդրե Մորոս, Փարիզ, Երևան, 1976, էջ 72:

Այստեղ պետք է հասուն կերպով նշել նաև, որ Կիլիկիո հայոց վերջին արքաները՝ այսինքն Լուսինյաններն ունեին ֆրանչական ազնվական ծագում: Որով այսպիսով քրիստոնյա այս երկու ժողովորդները իրար ճամաշելով ավելի մոտեցան իրարու, մի բան, որ հայ գաղթականության առջև Ֆրանչան մոտքը ավելի նեշտացավ: Խակ 1375 թ. Կիլիկիո անկախության կործանումից հետո, հայերի գաղթի հոսանքն ավելի աճեց դեպի Ֆրանչան<sup>21</sup>:

Փարիզի «Աշխարհ» թերթում կարդում ենք այս միտքը, որ պատմական Հայաստանում մասունքեր և տաճարներ կառուցողները (ակնարկելով հայ ճարտարապետներին—Ն. Տ. Ա.) հանդիսացան նախակարապետները ողմանական և գործական արվեստների<sup>22</sup>:

Խակ Լոնդրֆին հշմանձին ժամանած անգլիացի մի հոգևորական՝ Օլիվեր Զ. Մակթերնանը ուշադրությամբ դիտելով հայկական հանրահայտ խաչքարերն և Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսից նվեր ստացած մեր խաչքարերին նվիրված գեղեցիկ ալբոմը, տուն վերադարձից հետո նախ շնորհակալություն է հայունում այդ «հիսարքանց նվերի» համար և իր 11 օգոստոսի 1989 թ. նամակում գրում է Վեհափառ Հայրապետին հետևյալ տողերը. «... Ես վստահ եմ, որ ուժեղ հայկական մի ազդեցություն կա Կելտական նախնական եկեղեցուն: Ես փառուելու եմ հարմար մի գիրք Կելտական խաչքարերի մասին և Դուք տեսնելու եք արտասալոր նմանությունը»:

Հայկական խաչքարերը կարելի է գտնել միայն Հայաստանում և Ալյուրի միակական գաղթօջախներում: Դրանց նմանը ոչ մի այլ երկրում չկա աշխարհում: Հայկական քաշքարերը որպես պատկերաքանդակներով քարե կոթողներ ծագում են առել, տարածվել 4—7-րդ դարերում և դեռ շարունակվում են մինչև այսօր: Որոշ նմանությամբ դրանց նման քարե խաչեր ծագում են առել նաև այսօրվա Խոյանիայի սահմանում և դրանք ծանոթ են որպես նախկին կելտական պատշաճունքային քարե հուշարձաններ: Դրանցից պահպանվել են շորջ 150 հատ, որոնք կառուցվել են 8—12-րդ դարերում: Եվբրագի մի շարք ուսումնասիրողներ ու գիտնականներ գտնում են, որ որոշ կազ կա հայկական և կելտական խաչքարերի միջև մինմույն ժամանակ նշելով, որ հայկական ոճի ազդեցությունն առկա է կելտական այս հուշարձանների վրա:

Վերածնունդ (որնեսան) հասկացողությունը կապված է Արևմտյան և Կենտրոնական եվրոպական երկրների գաղափարական և մշակութային զարգացման ժամանակաշրջանի հետ, երբ միջնադարյան մշակությից անցում է կատարվել նոր ժամանակի մշակույթին՝ Խոտպիայում 14—16-րդ, իսկ եվրոպական մյուս երկրներում 15-րդ դարի վերջից մինչև 16-րդ դարը: Խակ որոշ մտավորականներ գտնում են, որ վերածնունդն Ասիայում տեղի է ունեցել Զինաստանում 8—12-րդ և Հնդկաստանում 9—13-րդ դարերում: Նկատի առնելով միջնադարում հայ մշակույթի բուն զարգացումը հայ և օտարագծի գիտնականներ և մտավորականներ գտնում են, որ հայկական վերածնունդը տեղի է ունեցել 01—14-րդ դարերում, որով այն սկսած է եվբրագիանց շորջ 4—5 դար առաջ: Այն վերաբերում է անշուշտ ճարտարապետության, գրականության, համալսարանական կրթության, գիտական կենտրոնների և այլ հյուրեր ու հանգամանքներ նկատի առնելով<sup>23</sup>:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 419:

<sup>22</sup> «Աշխարհ» շարաբարերթ, Փարիզ, 24 սեպտեմբերի 1988, էջ 3:

<sup>23</sup> Հայկական սովետական Հանրագիտարան, հատոր 11, 1985, էջ 385—391:

\* \* \*

Սույն տողերի հեղինակին մտիկ ազգական և անվանակից Ռոբեր Տեր-Միքայելյանից<sup>24</sup> 8 Հունվարի 1987 թվակից համակ ստացվեց, որտեղ նա գրուել է հետևյալը ֆրանսերեն լեզվով հետևյալ բովանդակությամբ.

«Կարծում եմ, որ Քրիստիանը<sup>25</sup> ձեզ նկարագրել է այն վայրերի և ձևի մասին, որ մենք ապրում ենք, փոխարենն ես նարիխակում եմ լուսանկար-ները մեր եկեղեցու, որ կառուցված է ոռոման-բլուզանդական բանով: Մի շարք հայ պրոֆեսորներ, որոնք բնակվում են Ֆրանսիայում, հաստատում են, որ Խաչակրաց իրենց առաջին արշավանքից վերադառնալով (պետք է լինի՝ ժամանելով Ֆրանսիա—Ն. Տ. Մ.) (10-րդ դարում), հայերը, որոնց ճարտարապետները փախչելով թուրքերից (արդեն) միացած խաչակիրներին իրենց ընտանիքների հետ և հրապուրված Օվերնյի<sup>26</sup> գավառով, որ նրանց հիշեցնում էր իրենց ծննդավայր երկիրը (Հայաստան—Ն. Տ. Մ.), նրանք հաստատվեցին այսուեղ և ծրագրավորեցին Ֆրանսիայում նինդ հանման եկեղեցներ իրենց ոնով, Կլերմոն-Ֆերանում, Սեն-Սաւոյորեննում, Օրիշվալում, Բուուրում և Սեն-Նեկտերում: Օվերնյում մի գյուղ և մի շարք ընտանիքներ կոչվում են ՀԱՅԵՐ, մի բան, որ հուզիչ է և սրտահովզ: Հայրու<sup>27</sup>, որ բնիկ արարեկերցի է, հայաց այս երկրամասով, որ նա ապրեց իր վերջին տարիները: Նա այժմ հանգչում է (թաղված է—Ն. Տ. Մ.) «Սեն-Նեկտերի գեղագմանցում»:

Օվերնյում գտնվող ՀԱՅԵՐ (Désarménien) կոչվող գյուղի մասին, որ նշվեց վերևում, մի հիշատակություն կա ֆրանսերեն «Հայոց Պատմություն» հաստափոր գրքում, որտեղ բառացի գրված է հետևյալը. «Ֆրանսիակին վերաբերյալ» Օվերնյում մենք գտնում ենք (Փոխ-դը-Դոմում) «Désarménien» (ՀԱՅԵՐ) անունով կոչված մի գյուղ: Ծրագալաքրում բազմաթիվ ընտանիքներ 1930 թ. դեռ կրում են (Désarménien) անունը և կամ մի մոտիկ անուն: Այս անվանումները պետք է կապվեն հայկական մի ներկայության, դա արդեն հավանական է, փոխարենը կարելի է ճշտել ժամանակաշրջանը, որ կարող է լինել ոչ Սիօնադարը որպես ավելի արդի մի ժամանակաշրջան: Բացառված չէ նաև, որ հայերը հետևած լինեն Ֆրանսիա, Լոն թ-րին (հայոց թագավորին—Ն. Տ. Մ.) Կիլիկյան թագավորության անկումից հետո»<sup>28</sup>:

<sup>24</sup> Ռոբեր Տեր-Միքայելյան—Ծնվել է Փարիզում 1921 թ.: Ավեսանոր և Ֆրանսուսի Մարի Տեր-Միքայելյանների ընտանիքում: 18 ու կես տարիքում նա զինվորագրվել է Ֆրանսիական բանակում 1929 թ. սպառեմբերին, կովկան համար Փաշիստական Գերմանիայի դեմ: Որոշ ժամանակ հետո գերի է մնացել թշնամու ձեռքը և տարվել Կոլոնց (Cologne) քաղաքի ճամբարը, որ մնացել է մինչև 1945 թ. մարտ ամիսը, որտեղից փախել է Ֆրանսիա: Հոկտեմբերին նա ամսանացել է Սեն-Նեկտեր գյուղի բնակիչ Աննեթ Վիժնիներին մեռ այս գյուղի եկեղեցուն: Ռոբերն ու Աննեթը այս գյուղում ունեն մի հյուրանոց, որի եկամուսում նրանք ապրում են այսօր Օվերնյի գեղատեսիկ գավառում:

<sup>25</sup> Քրիստիան Լրգրան—Քույրն է Միշել Լրգրանի: Սրանք բայտնի են Ֆրանսիայում: 1986 թ. նոյեմբեր ամսին մի շարք համերգներում հանդսու եկան Երևանում, Լենինգրադում և Մոսկվայում, ինչպես նաև տարբեր տարբերում բազմաթիվ երկրներում: Սրանց մոր՝ Մարի Լրգրանի հայրը համբիսացել է բնիկ արարեկերցի դեղագործ Սարգսի Տեր-Միքայելյանը, երացրց վերոհիշյալ Ավեսանոր Տեր-Միքայելյանի:

<sup>26</sup> Օվերն (Auvergne)—Հարստավային Ֆրանսիայի կենտրոնական մասում գտնվում է Փոխ-դը-Դոմ (Puy-de-Dôme) համամակի Օվերն գավառը, որի կենտրոնական քաղաքը է Փոյթի-դը-Դոմ (Puy-de-Dôme):

<sup>27</sup> Հայոց թաղվածի Անվանումը Տեր-Միքայելյան—Ծնվել է Սրբակիրում 1885 թ., մասացել ու թաղված Անն-Նեկտեր գյուղի գեղագմանցում 1950-ական թվականներին:

<sup>28</sup> Histoire des Arméniens (Sous la direction de Gérard Dédéyan), Toulouse, 1986, p. 397.

Օվերնյ գավառում կամ շուրջ 250 հին և նոր սրբատեղիներ՝ վանքեր, եկեղեցիներ և մատուռներ: Հնարի մեջ կամ քանդված և այժմ գործող եկեղեցիներ: Օվերնյ գավառը բաժանված է երկու մասի՝ հյուսիսային և հարավային: 12-րդ դարից սկսած կառուցված եկեղեցիներում կամ հինգը, որոնք ենթադրվում են շինված լինել եկուոպացի խաչակիթների հետ Կիլիկիայից գաղթած հայերի և կամ բուն Հայաստանից ժամանած հայ փախառականների ձեռամբ, որոնք հայրենիքից ակամա հեռացել են Յուրք-մոնղոլների արշավանքներից և Անիի թագավորության ու մայրաքաղաքի անկումից հետո, խոսափելու համար այդ վայրի ցեղերի սարսափից ու կոտորածից:

Ծինարար հայերը շատ դարեր առաջ ունեցել են սրբատեղիներ կառուցելու տեսակետից բազում փորձ և հմտություն: Այժմ հայի հայրենիքում կանգուն կամ բազմաթիվ եկեղեցիներ, որոնք կառուցված են 10-րդ դարից առաջ, որով Հայաստանից և ապա ավելի ուշ Կիլիկիայից գաղթած հայ ճարտարապետներն անհասկած տեսած, ուստինասիրած և նոյնիսկ կառուցած պետք է լինեն եկեղեցիներ իրենց հայրենիքում: Որով Ֆրանսիա գաղթելոց առաջ նրանք ունեին մեծ փորձ ու վաստակ:

Կա նաև երկրորդ կարևոր մի հանգանակ ևս: Դա այն է, որ Ֆրանսիա ներգաղյած այն հայերը, որոնք 10—14-րդ դարերում հաստատվեցին Օվերնյ գավառում, այն էլ բնիկ ֆրանսիացիների շրջանակներում, անձամբ տեսան այդ վայրերում ֆրանսիացիների կողմից ոռմանական ոճով նախօրոր կառուցված եկեղեցիները, որով երբ նրանք հաստատվեցին այդ գավառում, պարզ է, որ նրանց կերտած եկեղեցիները պետք է լինեն հայկական ավանդական և ոռմանական ճարտարապետական ոճերի համատել մի կառուցած պետքեցիներ:

Հայկական հնագույն եկեղեցիներն սկզբում ունեցած են հավասար թևերով խաչածն կամ բոլորական հատակագիծ և եկեղեցու կենտրոնից վերև է բարձրանում սրածայր գմբեթը, հայկական վեղարի հմանողությամբ: Այսպես, օրինակի համար, 4—10-րդ դարերում կառուցված Ս. Էջմիածնի (4-րդ դար), Ս. Գոյանեի (7-րդ դար), Ս. Հոփիսիմեի (7-րդ դար), Անիի Մայր Տաճարի (10-րդ դար) և Անիի Հռովի (10-րդ դար) եկեղեցիները: Հետագայում է, որ մի շարք եկեղեցիներ ուղղանկյուն (բազիլիկաձև) բնույթ են ստանում, ինչպես Օսմանի (7-րդ դար) և Սանահի (10—14-րդ դարեր) եկեղեցիները:

Մինչեւ ոռմանական, ապա գոյթական վաղ շրջանի և հետագայի եկեղեցիները բոլորովին տարբեր ոճի են: Ս.յանե, օրինակի համար, Խոալիայի Քրիստոնություն (10—11-րդ դ.դ.), Վենետիկի Ս. Մարկոսի (11-րդ դար), Պուաթիեի Նոտր Դամ լա Գրանդի (10-րդ դար) եկեղեցիները, Շարթը (12-րդ դար) և Սիենայի տաճարների գմբեթները կամ կիսագնդան են և կամ բարուկ և երկար սրածայր աշտարակներ, բոլորովին տարբեր հայկական եկեղեցիներից:

Այժմ անդրադանանք Օվերնյ գավառում գտնվող հայկական ծագում ունեցող հինգ տարբեր եկեղեցիների մասին:

Սեղանի վրա գտնվում է ֆրանսիացի հոգևորական՝ Կանոնիկոս Բնան Կրապլենի նկարազարդ գիրքը՝ «Ոռմանական Օվերնյ» վերնագրով<sup>29</sup>,

<sup>29</sup> Chanoine Bernard Craplet, Auvergne Romane, 5e édition, pp. 50—51.

որից օգտվում ենք, առնելով բոլոր շափագրումները, լուսանկարներն և տեղեկությունները:

**1. Կլեմոն-Ֆերան (Clermont-Ferran)**—Կենտրոնական քաղաքն է Պու-  
-դե-Դոմե նահանգի և գտնվում է Փարիզից դեպի հարավ, 382 կմ հեռու:  
Այստեղ կան համալսարան, եպիսկոպոսարան, գործական ոճի տաճար, ինչ-  
պես նաև 12-րդ դարում կառուցված մի եկեղեցի Փոքր Սատվածամոր (Notre  
Dame du Port), որի նախագծողը հավանաբար մի հայ ճարտարապետ պետք  
է լինի, եկած Հայաստանից: Այս վայրում ծնված է ֆրանսիացի հայոնի մա-  
թեմատիկոս, Փիգիկոս, փիլիսոփա և գրող Բլեգ Փակալլը<sup>30</sup>:

Փոքր Սատվածամոր եկեղեցին գործական ոճի փառավոր մի շինու-  
թյուն է, կառուցված մոտք գույնի քարով: Եկեղեցին ոռմանական հաշարվոր  
մի հուշարձան է<sup>31</sup>: Այն կառուցված է 1185 թ. և մեծապես սուժած 1478 թ.  
մեծ երկրաշարժի ընթացքին: Նորոգված է 1841-ին: Վերջերս՝ 1974-ին  
ավարտվեցին եկեղեցու արևմտյան ճակատի վերանորոգությունները<sup>32</sup>:

**2. Սեն-Սատյուրնին (Saint Saturnin)**—Պու-դե-Դոմե նահանգի մի  
գյուղ, որ ունի շուրջ հազար բնակիչ: Այն գտնվում է Լիմանն դաշտավայ-  
րի եզրին, Վերմոն-Ֆերան կենտրոնից դեպի հարավ: Այստեղ կա 12-րդ  
դարի գեղեցիկ մի եկեղեցի, միջնադարյան հոյակապ մի դղյակ (15-րդ դա-  
րի) և 16-րդ դարի պաշտպանական պատմեշները<sup>33</sup>:

Կառուցման ճգնիությանը հայտնի չէ, բայց ստույգ ապացույցներ  
կան, որ այն գոյություն ուներ 1157 թ.: 1789 թ. հեղափոխության ժամանակ  
այն փրկվեց ավերածությունից, որովհետև շնորհիվ մի տիկնոց, որ գնեց  
եկեղեցին, ինչպես նաև մոտակայքում գտնվող Սենտ-Մարզենի մատուռը,  
վերազարդեց խորվությունից հետո: Միայն անդամանակավեց զանգա-  
կատան նետի ծայրը: Մարզան այն նորոգեց 1852 թ., իսկ 1880—1898 թթ.  
եկեղեցին հիմնովին վերանորոգվեց<sup>34</sup>:

**3. Օրսիվալ (Orcival)**—Պու-դե-Դոմե նահանգի լեռնային շրջանում  
գտնվող մի փոքր գյուղ է, որ ունի շուրջ 500 բնակիչ: Այն գտնվում է Ուշ-  
ֆոր-Մոնտանը բնակավայրի արևելյան կողմում: Եկեղեցին ունի Օվերնի  
ոռմանական ոճ (1125—1175 թթ., կամարները 15-րդ դարի), որ ունի ութ-  
անկյուն մի գմբեթ սյուների վրա, ընդարձակ մի դամբարան և զարդարված  
խոյակներ<sup>35</sup>:

Այս եկեղեցին Օվերնի ոռմանական արվեստի գլուխ գործոց կառուց-  
ներից մեկն է՝ Օրսիվալի Սատվածամոր բազիլիկան: Եկեղեցին տիրում է  
փոքրիկ գյուղի շենքերի վրա: Եկեղեցին կառուցված է որպես ոխտավայր:  
Սրբաւելի տոնը կատարվում է Համբարձման օրը, երբ բազմաթիվ ոխ-  
տավորներ են գալիս այստեղ: Հավատացյալներից բացի այցելուն են նաև  
զբոսաշրջիկներ, հնագետներ, ինչպես նաև ոռմանական արվեստի մասնա-  
գետներ<sup>36</sup>:

Սուաշին անգամ այս եկեղեցին հիշում է Ալեքսանդր Գ պատի 1178 թ.  
կողմանում: Եկեղեցին գոյություն չուներ 1146 թ.: Ենթադրվում է, որ այն

<sup>30</sup> Grand Larousse Encyclopédique, Tome 3e, Paris, 1964, p. 196.

<sup>31</sup> Նոյն տեղում:

<sup>32</sup> Bernard Craplet, Auvergne Romane, pp. 50—57.

<sup>33</sup> Grand Larousse Encyclopédique, Tome 9e, p. 536.

<sup>34</sup> Auvergne Romane, p. 117.

<sup>35</sup> Grande Larousse Encyclopédique, Tome 7e, p. 983.

<sup>36</sup> Auvergne Romane, p. 43.

Կառուցված կլինի 1169 թ.: 1789-ի ֆրանշական հեղափոխության ժամանակ հոգևորականներին տրամադրված ատյանը վերացավ: Եկեղեցու կահուքը վառվեց: Զանգակատան նետի մեկ մասն անդամահատվեց: 19-րդ դարում վերանորոգվեց վճարված եկեղեցին<sup>37</sup>:

**4. Խոտար (Issoire)**—Քաղաք Puy-de-Dôme նահանգում, Ավիեյի մոտ, որ ունի շորջ 15 հազար բնակչություն: Սիշնադարյան եկեղեցին Օվերնի ողմանական կատարյալ ոճն ունի (12-րդ դար): Ավագ խորանի ետևի մասում կամ հարթաքանդակներ, քանդակված խոյակներ (Վերշին Ընթրիքը, Սուրբ կանայք)<sup>38</sup>:

Խոտարի եկեղեցին նվիրված է Սուրբ Օստրըմոնի (Saint-Austremoine) հիշատակին՝ Օվերնի առաջին առաքյալին, որ ըստ Գրեգորի դը Տուրի, 250 թ. հետո քրիստոնեություն քարոզեց այս գավառում: Եկեղեցու շինության ճշգրիտ թվականը հայտնի չէ, բայց ենթադրվում է, որ այն կառուցված պետք է լինի 12-րդ դարի կեսերին: 1575 թ. կրոնական պատերազմների ժամանակ հարյուրավետ Մերլը (Merle) գրավեց Խոտարը, սպանվեցին եկեղեցու հոգևորականներն և թալանվեց եկեղեցին: Մեծ ավեր պատճառվեց աշտարակներին, որոնք փլվեցին: 1789 թ. հեղափոխության ժամանակ բոլորովին թալանվեց եկեղեցին, բայց այն դեռ կանգուն մնաց: 19-րդ դարում այն կրկին վերանորոգվեց<sup>39</sup>:

**5. Սեն-Նեկտեր (Saint-Nectaire)**—Գյուղ գտնվում է Պույ-դ-Դոմ-ի նահանգում, Դոր լեռների թափուտքում: Ունի շորջ հազար բնակչություն: Եկեղեցին 12-րդ դարի շինություն է, Օվերնի ողմանական ոճի գովագրոց, որ ունի խոյակներ և հարուստ գանձարան: Խճախեն հաստատում են գալլո-ռոմանական հետքերը, Սեն-Նեկտերի հանքային ջրերն օգտագործված են երկար ժամանակներից ի վեր, որոնք ունեն սոդայի բիկարբոնատի և խորի աղեր: Այս ջրերը հաջողությամբ օգտագործված են հատկապես երիկամային հիվանդությունների ժամանակ<sup>40</sup>:

Բնության կանաչության մեջ գտնվող այս գյուղի եկեղեցին թեպետն փոքր է իր չափերով (մոտավոր երկայնքը՝ 37, լայնքը՝ 11 և բարձրությունը՝ 15 մետր), սակայն հոյակապ մի կառույց է այն, բայց խկական իմաստով: Գրքի հեղինակը (Բերնար Կրավլե) գրում է, որ «ճարտարապետին հաջողվել է այն ցուց տալ մեծ, մի բան, որ այսինքն չէ, այլ իր արվեստի կատարելապես վարպետությամբ միայն»: Եկեղեցու երկարության կտրվածքի նկարը ցուց է տալիս դրա բազմազանությունը: Սեն-Նեկտերի սրբաւելին Օվերնի (Basse-Auvergne) ամենահրապուրիչ կառուցմերից մեկն է: Դրա համար է, որ զրուաշրջիկները հիմնում են այս եկեղեցին դիտելով<sup>41</sup>:

Սուրբ Նեկտերը շորջ 250-մետր հաստիսցած է Սուրբ Օստրըմոնեցի ընկերակիցներից մեկը, քրիստոնեության քարոզության ժամանակամիջոցում: Սուրբ Նեկտերի հիշատակին նվիրված այս եկեղեցին ենթադրվում է կառուցված լինել 1178 թ.<sup>42</sup>:

Վերջացնելով հարավային Ֆրանշայի Օվերնի շրջանում գտնվող վերթիշայլ միշնադարն հինգ եկեղեցիների մասին այս տարրնախրությունը,

<sup>37</sup> Նոյն տեղում:

<sup>38</sup> Grand Larousse Encyclopédique, Tome 6e, p. 257.

<sup>39</sup> Auvergne Romane, p. 96.

<sup>40</sup> Grand Larousse Encyclopédique, p. 529.

<sup>41</sup> Auvergne Romane, p. 105.

<sup>42</sup> Ditto, p. 107.

այստեղ ներկայացվում են դրանց չափերը<sup>43</sup>, ինչպես նաև դրանց յուրաքանչյուրի փոքր հատակագիծը<sup>44</sup>, այսունորի նմանության<sup>45</sup>, Սեն-Նեկտեր եկեղեցու բարձրության երկու կտրվածքների<sup>46</sup> նկարները:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ֆրանսերեն լեզվով հրատարակված «Հայոց Պատմություն» գրքում նշված և Սեն-Նեկտեր գյուղի եկեղեցում 1945 թվականին ամուսնացած և մինչև այսօր այս գյուղու բնակվող ու աշխատող Ռոբեր Տեր-Միքայելյանն կարծիքով սույն տողերի նեղինակը կարծում է, որ որոշ շեշտված կապակցություն կա հայկական և ոռմանական մի շարք եկեղեցիների ճարտարապետական արվեստի ու ոճի մեջ: Հայկական անկախ Կիլիկիի թագավորության և հետագայում Անիի թագավորության թուրք-թաթար-մոնղոլների կողմից կատարված կործանումից հետո, դեպի Ֆրանսիա արտագաղթած հայ ճարտարապետներն և շինարար բանվորները պարզ են, որ պետք է զբաղվեին իրենց իմացած պաշտոնով և արհեստով (ճարտարապետություն և եկեղեցաշինության՝ քարգործ վարպետների միջոցով): Ֆրանկ խաչակիրների Երուսաղեմից դեպի Եվրոպա վերադարձն էլ Կիլիկիան հավատակից երկրի սահմանով, նաև ֆրանկո-հայկական սերտ հարաբերությունները, պատճառ դարձան, որ հայ ճարտարապետներ ու շինարար բանվորներ, գնային ու հաստատվեին Ֆրանսիայում, որ զբաղվեցին եկեղեցիներ կառուցելով, տեղի բնակչության պատվերով:

Երկու լուրջ ազդակներ գալիս են շեշտելու այս կարծիքի հավանականությունը: Ա. Նախ վերոհիշյալ հինգ եկեղեցիների խաչարն կառուցը և ապա նաև Բ. եկեղեցու գմբեթի հայկական վեղարի ակնհայտ ձևը:

Ա. Հայաստանում կառուցված առաջին եկեղեցիները հավասար թևերով խաչի ձև ունեին (օրինակ՝ Էջմիածինը), ապա նաև բազիլիկի ոռով (Եղվարդ, Ծիծեռնավանք): Օվերնի վերոհիշյալ հինգ եկեղեցիները թեև բազիլիկի ոճի են, սակայն ունեն նաև խաչաձև հատակագիծ, ըստ որում հուսաչյն և հարավաչյն թևերն ավելի կարճ են և գունդում ավելի դեպի արևելք՝ պատարագի Մեղանի մոտիկ: Մինչդեռ նոյն ժամանակներում կառուցված ֆրանսիական այլ եկեղեցիներ (Chanteuges, Brageac և այլն), որոնք գտնվում են Բրիվալդուայում և Վերին-Օվերնյում, միայն բազիլիկի ոճի են և կողմանակի թևեր չունեն:

Բ. Վերոհիշյալ հինգ եկեղեցիներն ունեն հայկական վեղարի ձևով կարճ գմբեթ, մինչդեռ Օվերնի ոռմանական ոճի մյուս եկեղեցիներն ունեն սրածայր մի գմբեթ (ébreuil), կամ տափակ մի կարճ աշտարակ (veauce): Որով հայկական վեղարածն գմբեթ ունեցող եկեղեցիները հստակ կերպով զանազնվում են մյուսներից:

Վերոհիշյալ հինգ եկեղեցիները կառուցված են գմբեթ նոյն ժամանակաշրջանում 12-րդ դարում: Երեքը կառուցված են 12-րդ դարի կեսերին, իսկ մնացածն էլ նոյն դարի երկրորդ կեսին: Պետք է նշանի առնել նաև,

<sup>43</sup> Ditto, p. 40.

<sup>44</sup> Ditto, pp. 28—29.

<sup>45</sup> Ditto, pp. 32—33.

<sup>46</sup> Ditto, pp. 34 & 112.

որ կառուցմանից դարեր հետո, վերանորոգման ժամանակ, առոր հավելում-ներ են կատարված այդ եկեղեցիներում:

Վերոհիշյալ հինգ եկեղեցիները հայկական և ուսմանական-գոյթական ուների մի խառնուրդ է, որտեղ, մեր կարծիքով, զգալի վերպով երևում է հայ ճարտարապետների (հավանաբար նաև հայ որմնադիրների) մտահղացման և ձեռքի աշխատանքը:


Սնում է միայն ապավիճել հետագա հայ ճարտարապետների, պատմաբանների և մասնագետների պրատող մտքին ու աշխատանքին, որպեսզի ձեռք բերելով նոր ճշգրիտ փաստեր կամ փաստաթղթեր, կարելի լինի ցույց տալու շինարար և հմուտ հայ ճարտարապետների աշխատանքի բաժինը վերոհիշյալ վարկածի բարեհաջող լուծման համար:

ԿԱՐԵՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՏԱՓԵՐԸ (ՄԵՏՇՈՎ)

| Կըրմոն-<br>ֆերան<br>1185 թ.         | Սեն-<br>Սատյուրեն<br>1157 թ. | Օրիվալ<br>1169 թ. | Խոսար<br>12րդ դ. կեսերը | Սեն-<br>Նեկտեր<br>11րդ դար |
|-------------------------------------|------------------------------|-------------------|-------------------------|----------------------------|
| Երկարություն                        | 45                           | 32                | 41.35                   | 57.10                      |
| Միջին լայնություն                   | 13.30                        | 11.50             | 14.15                   | 16.78                      |
| Աստյանի լայնություն<br>(առնեց պուն) | 6.14                         | 5.42              | 6.62                    | 7.80                       |
| Բարձրություն                        |                              |                   |                         |                            |
| Անձ ասլանի                          | 18.                          | 14.80             | 17.40                   | 18.80                      |
| Ցածր կողմերի                        | 8.94                         | 7.15              | 8.94                    | 9.55                       |
| Գմբեթի                              | 22.                          | 18.85             | 21.40                   | 23.30                      |
| Կիսագմենի կամարներ                  | 7.41                         | 5.85              | 7.45                    | 7.82                       |
|                                     |                              |                   |                         | (47)                       |

<sup>47</sup> Chanoine Bernard Craplet, Auvergne Romane, p. 40.





## ՀՐԱՀ ԱՂՎԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐՆ ԸՆԴԴԵՄ ԹԱԹԱՐ-ՄՈՆԴՈՒ ԲՈՒՆԿԱԼՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ

13-րդ դարի 30—40-ական թվականներին Հայաստանը հպանվեց թաթար-մոնղոլների կողմից: Օտարերկրյա լծի հաստատման հենց սկզբից հայ ժողովուրդը ենթարկվեց սոցիալ-տնտեսական դաժան շահագործման: Մասք վիճակը չփոխվեց նաև 50-ական թվականների կեսերից՝ մոնղոլա-իրանական պետության՝ Իլխանության (Իլխան—ժողովրդի տեր), կազմավորումից հետո, որի տիրապետության տակ էր նաև Հայաստանը:

XIII դարի վերջերից քրիստոնյա ժողովուրդների առանց այդ էլ անմիջար վիճակն առավել վատթարացավ՝ կապված կրոնական հալածանքների հետ, որոնք սկսեցին Ղազան խանի (1295—1304 թթ.) օրոք, եթե վերջինս իլխանական իշխանությունը պահպանելու և ամրապնելու հպատակով մերձեցավ տեղական (պարսկական) ֆեոդալական վերնախավին և ընդունեց մահմեդականություն<sup>1</sup>: Ժամանակակիցների ձեռագրերի հիշատակարաններում, ժամանակագրություններում քաջմաթիլ վկայությունների ենք հանդիպում մոնղոլների կրոնական հալածանքների, եկեղեցիների պահպան և հոգևոր գործիչների պահպանամբ ծավալված հալածանքների մասին<sup>2</sup>:

Սակայն, որոշ ժամանակ անց Ղազան խանը քաղաքական որոշակի նկատառումներով, հատկապես՝ հայ-վրացական զինվորական ուժն օգտագործելու, ինչպես նաև Անդրկովկաստու ծառալված ապատամբական շարժումներն ու դժոխությունները կանխելու համար, մեղմացրեց իր հալածանքները<sup>3</sup>:

<sup>1</sup> راشيد ад-Дин. Сборник летописей. Т. III, пер. с персидского А. К. Арендса. М.—Л., 1946, с. 164.

<sup>2</sup> Հայերն ձեռագրերի հիշատակարաններ (ԺԳ դար), կազմաց Ա. Մաթևոսյան (այս սեռն՝ ԺԳ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ). Երևան, 1984, էջ 784, 787, 810: Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դր., հ. Ա. Երևան, 1951, էջ, 106: Սամուելի քանանայի Անեցոյ «Հայաքոններ ի գործ պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 164:

<sup>3</sup> Դա էր պատճառը, որ մի շաբաթ գրիշներ սկսեցին դրվագանքով խոսել հրա մասին Աղևլով, որ, իբր, հրա օրոր դրսություն այնքան էր բարեկավել, որ հրա մահը սգացին

Քրիստոնյա ժողովուրդների համեստ կրօնական հալածանքները սաստ-կացան Ղազանի հաջորդ՝ Ուչեյթու (1304—1316 թթ.), կամ ինչպես նաև ան-վանվում էր Ասել՝ Մուհամմեդ Խույարանդա (=«ծառա Աստծու») խա-նի օրոք: Պարսիկ պատմագիր Խոնդիմիրի տեղեկության համաձայն Զին-գիր խանի բոլոր հետևորդների մեջ նաև առանձնանում էր մահմեդական կը-րոնի հաստատման շանթերով<sup>4</sup>:

Վրաց ժամանակագրի վկայությամբ՝ կործանվում էին եկեղեցիները: Նոյնիսկ զորքեր էին ուղարկվում երկրամաս, որպեսզի ստիպեին քրիստոն-յաներին հրաժարվելու իրենց հավատից և մահմեդականություն ընդունելու<sup>5</sup>: Կրօնական հալածանքները շարունակվել են Ուչեյթուի հաջորդ Արու Սահիդի (1316—1335 թթ.) և վերջինիս հաջորդած մյուս իլխանների կառավարման օրոք, ընդհուպ մինչև մոնղոլ-իրանական պետության կործանում՝ XIV դարի կեսը<sup>6</sup>:

Հայոց հավատի, ուրեմն և ազգային ինքնուրույնության դեմ թաթար-մոնղոլ բռնակվելու ձեռնարկած այս դամանությունները, հալածանքներն ու ալլազան կամայականությունները չեն կարող անհետուանք մնալ: Եվ բնական է, որ նախորդ տասնամյակներին ծայր առած նդգոհություններն ու ընդլայնումները առավել բորբոքվեցին, ընդունեցին ավելի մեծ ծավալ:

Ստեփանոս Օքրելյանը վկայում է, որ դեռևս Ղազան խանի իշխանության գլուխ անցնելուց հետո քրիստոնեության և քրիստոնյաների դեմ ծա-վալված կատաղի պայքարի ժամանակաշրջանում Նախիջևանում բռնավոր-վերը, վախենալով Վրաց (Վրաց-հայկական) զորքներից, չհամարձակվեցին քարութանդ անել եկեղեցիները<sup>7</sup>: Ապա պատմիչը վկայում է, որ Սյունիքում էլ տեղացիները կաշառքի և նույնիսկ բռնի ուժի միջոցով թույլ չեն տվել եկեղեցիներին վճառ հասցենի<sup>8</sup>: Սյուն ժամանակ անվճառ մնացին նաև Երասի գետի մյուս կողմում գտնվող եկեղեցիները<sup>9</sup>: Ժամանակի ձեռագիր հիշատա-կարաների տեղեկության համաձայն քրիստոնյաների մեծ մասը սկսած հա-լածանքների պայմաններում իրենց հույսը շարունակել է կապել իր հավա-տի հետ<sup>10</sup>: Վրաց ժամանակադիրն էլ վկայում է, որ քրիստոնյաների դեմ ծավալված պայքարի պայմաններում, եթե Արանց դեմ նույնիսկ զինական մեծ ուժեր էին ուղարկվում, քրիստոնյաները շարունակում էին հավատարիմ մը-նալ իրենց հավատին և դիմադրում էին ուղարկված զինական ուժերին<sup>11</sup>:

Բայց և այնպես, չդիմանալով ստեղծված ծանր պայմաններին, բնակ-չության մի մասը ստիպված հավատափոխ էր լինում: Ուսանը էլ, վաճառելով իրենց կալքը հեռանում էին իրենց բնակավայրից<sup>12</sup>: Սակայն հայրենի վայ-

անգամ քրիստոնյաները (տե՛ս ժԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազ-մաց I. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 23, 24, 26):

<sup>4</sup> Խոնդեմիր. История монголов. От древнейших времен до Тамерлана / Пер. с персидского В. Григорьева. СПб. 1834, с. 75.

<sup>5</sup> Վրաց ժամանակադրություն. քարգմանությունը մին վրացերենից, առաջարանը և ծա-նոթագրությունները Պարսկա Մուրադյանի. Երևան, 1974, էջ 184—185:

<sup>6</sup> Տե՛ս ժԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 41, 51, 154, 249, 255, 268, 325, 368 և այլն:

<sup>7</sup> Ստեփանոս Օքրելյան. Պատմութիւն նախանդին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 473:

<sup>8</sup> Նոյն տեղում:

<sup>9</sup> Նոյն տեղում:

<sup>10</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 882:

<sup>11</sup> Վրաց ժամանակադրություն, էջ 184—186:

<sup>12</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 102:

րերից տեղական բնակչության հեռանալու փաստը հենց ինքնին տիրապետողների դեմ պայքարի յուրատեսակ արտահայտություն էր, պասիվ մի բողոք, որը լայն տարածում էր գույք մոնղոլական տիրապետության շրջանում: Անշուշտ, ժողովրդի՝ հայրենի բնակավայրերից հեռանալու փաստը կապված էր ոչ միայն կրոնական հալածանքների, այլև դաժան հարկային քաղաքականության հետ<sup>13</sup>:

Դեռևս XIII դարի վերջերից քրիստոնյաների վրա ջիզյա (այլադպանության հարկ) էր սահմանվել<sup>14</sup>, որը գործություն ուներ նաև Ղազանին հաշորդած Ուշեյսու իլխանի օրոք<sup>15</sup>:

Հայած կիրավող հալածանքներին, ժողովորդն իր մեծամասնությամբ գերադասել է վճարել հարկը, հաճախ նաև դիմադրել, քան հավատափոխ լինել: XIV դարի հիշատակարաններից մեկում կարդում ենք. «...Ըմբռնեալ զքրիստոնեացան դառն տանջանօք նեղէին որանալ զքրիստոնական հաւատն՝ որ ի Հայր և յՄրդի և յամենասուրք Հոգի: Դարձեալ տեղի ետուն և եղին հարկս ի վերայ քրիստոնէից և յամենայն գիշոյ առնուին եօթն ոյժ դահնեկան՝ յամենայն ամի, կամ որանալ զՔրիստոս, կամ տալ զդափեկանն՝ որ է խարաճ. զոր ոչ հնազանդեցան քաջահաւատքն և արիքն խարերայ աղանդից նոցա, այլ յանձն առին տալ զիարկն յամենայն ամի: Եր մերային սեռու ի քրիստոնեակը մտանէին ի լուծ հարկացն և գոհութեամբ տային զինչու և զատացուած վաճառքին և տային յամենայն ամի և յերկուտասանամեայ մանկանէ առնուին զիարկն. և բազումք տարագիրք եղեալ վասն հարլիճ: Թսկ քրիստոնէիցն տալով զայս ամենայն՝ անվորով կացին ի հաւատսու որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս»<sup>16</sup>:

Հավատափոխության քաղաքականությունը չէր սահմանափակվում միայն դավանանքի համար հարկ սահմանելով: Այն գնում էր ավելի հեռուն: Մարդիկ, որոնք հավատարիմ էին մնում քրիստոնեությանը և վճարում դրա համար սահմանված հարկը, հաճախ ենթարկվում էին մարմնական դաժան տանջանքների, ծաղրուծանակի, ընդհուպ մինչև մահապատժի: Ասորական աղբյուրների համաձայն՝ քրիստոնեաները սպանվում էին փողոցներում, հրթապարակներում և այլուր: Երիտասարդ աղջիկներին մերկացնում էին և տանում փողոցներով: Սպանում էին նաև նոյն կանանց<sup>17</sup>: Սակայն, այդուհանդերձ, շատերը դիմադրում էին և հավատարիմ մնում իրենց դավանաբին: Հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Խսկ անօրէն և անբարիչու Խարբանտապ խանն, իբրև ետև եթէ ազնու ոչ կարաց յաղթել քրիստոնէիցն, յաւել այլ եւս հարուածս ի վերայ քրիստոնէից. կամ յամենեսեան

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 66, 92: Հ. Մանանդյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1977, էջ 327:

<sup>14</sup> История Мар Ябалахи III и Рабан Саумы / Исследование, пер. с сирийского и примеч. Н. В. Пигуловской. М., 1958, с. 114.

Համաձայն նոյն աղբյուրի դա պարզապես ոչ թե հարկ էր, այլ խկական կողոպուտ (նոյն տեղում):

<sup>15</sup> Ժամանակագրություն (XII—XVIII դդ.). տպագրության պատրաստեց Ն. Պողոյանը, տես՝ «Բամբեր Մատոնապարանի», 1969, № 9, էջ 263: Խաչատոր Զուլյայից, Պատմությին պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 84: ԺԴ դարի համերեն ձեռագիրի հիշատակարաններ, էջ 46:

<sup>16</sup> Հայոց նոր վկաները. Լրամենից Հ. Աճառյանը, Հ. Մանանդյանը, Վաղարշապատ, 1903, էջ 121—122: (Ընդգծումները մերն է—Հ. Ա.):

<sup>17</sup> История Мар Ябалахи III и Рабан Саумы, с. 127—128.

Աերքինիս առնել, կամ զի՞ ակն հանել, կամ դառնալ ի ... կրօնն Մահմէտի, որոյ վասն բազումք մեռան, վասն անուանն Քրիստոսի»<sup>18</sup>:

Երբեմն պայքարի վերոհիշյալ պասիվ մերոդից ժողովորդը անցել է ակտիվի՛ ընդվզել է օտարների դեմ, հրամարվել պահանջվող հարկերը վը-ձարելոց: Հարկահանությունը նման դեսպերում վեր է ածվել փոքր ծավալի ուազմական գործողության, որին մասնակցել են մեծաքանակ զինվորներ: 1318 թ. Հակոբ գրիչը Կարագա վանքից (Վասպորական) վկացում է, որ հարկահանության նպատակով եկել էին «... ոմն անոն Սոլլադու, Սինթամուր և Հասան-թամուր ԽՃԳ. (1800) մարդով»<sup>19</sup>: Նրանք, ովքեր ընդվզել են, հրամարվել պահանջվող հարկը վճարելոց, բարձրացել են լեռնային անառիկ վայրերը, ամրացել այնտեղ, պատրաստվել դիմադրության: Իսկ դա նշանակում է, որ որոշակի կապ գոյություն ունի տվյալ ժամանակաշրջանում քաթար-մոնղոլների կրօնական հալածանքների քաղաքականության և հայ ժողովրդի պարտիզանական բնոյթի պայքարի միջև այն առումով, որ վերոհիշյալ հալածանքների հետևանքով հայրենի եզերքները լքած-հեռացածների մի մասը լրացրել է իխանական տիրապետության դեմ պայքարող ժողովրդական վրիժառութերի շարքերը: Հակադրվելով բռնի մահմէտականացմանը՝ լըրուսները ոչ միայն հեռացել են լեռները ու գինված պայքար մը-դել, այլև հենց իրենք են ձերբակալել մահմէտականներին և, հսկանարար, որպես պատասխներ տարել իրենց հետ: Այսպէս, Երզնկայից մալիք Մուհին Էդ-Դին Փարլանէի՛ Ռաշիդ Էդ-Դինին հասցեագրած համակից պարզվում է, որ մոնղոլ Տուկի նոյն զորավարը հսկայական բանակով գալով Երզնկա, այսուհետու շարժվել է լեռնային շրջաններում գտնվող պատամրական մեծաքանակ ջոկատների դեմ, անհավատներին (ինա՞ քրիստոնյաններին—Հ. Ս.) շահծախելու, մահմէտական գերիներին ազատելու և ջիզիան հավաքելու նպատակով: Հայ նամակագրի՝ Տուկի նոյնն իր խնդիրը հաջողությամբ է կատարել, տեղի ունեցած մարտերում հաղթել ապատամրական ուժեղ ջոկատներին: Դրանից հետո միայն ույատը (այսուեղ՝ մահմէտական ազգա-բնակչությունը) համարձակվել է վերադարձնալ իր բնակավայրը և գրավել աղոթքով<sup>20</sup>:

Երկրի հայրենասեր հոգևոր առաջնորդները, կանխատեսելով մահմէ-դականացման քաղաքականության կործանիչ հետևանքները, հավասի և ազգային ավանդների պաշտպանության նպատակով, իրենց ստեղծագործություններով, փաստորեն, պայքարել, ժողովրդին մղել են համար դիմադրության ընդեմ եկվոր բռնակալների, Արաց կրօնական անհանդուրդողականության ու ազգային հապածանքների: Այդպիսին է Ստեփանոս Օքբելյանի «Ողբը»<sup>21</sup>, որը գրվել է մոնղոլների հալամին հարելու և քրիստոնյանների հանդեպ հալածանքներ սկսելու ժամանակ: Այն կարևոր հշանակություն ու-

<sup>18</sup> Տե՛ս Ժամանակագրություն (XII—XVIII դդ.), էջ 263, Խաչատոր Զուղալեցի, էջ 84: (Ընդգծումները մերն է—Հ. Ս.):

<sup>19</sup> ԺՊ դարի հայերն ձեռագրերի նիշատակարամներ, էջ 138: (Ընդգծումը մերն է—Հ. Ս.):

<sup>20</sup> Տե՛ս Ռաшиդ ադ-Դին. Պերոպիսկա / Պեր., առաջ. և կոմմ. Ա. Ի. Փալիոյ. Մ., 1971, ս. 307—308.

<sup>21</sup> Տե՛ս Ստեփանոս Օքբելյանի Ողբ ի և Կաթողիկէն. բնագիրը առաջարանով և ծանոթագրություններով հրատարակեց Կարապետ Կոստանդնացը, Թիֆլիս, 1885:

նի խնդրո առարկա ժամանակահատվածում հայ ժողովրդի հոգեսր որոնումների ու հայրենասիրական բաղձանքների ուսումնասիրության համար<sup>22</sup>:

Օրբելյանը և ի դեմք նրա՝ ժամանակի հայրենասեր հայ հոգեորականությունը, երազում էին երկրի անցած փառքի ու ազատության, նրա թագավորությունը վերականգնելու մասին: Հայրենասիրական գաղափարներով տոգորված «Ողբը», Արշակունյաց և Բագրատունյաց հարատությունների հիշատակումը հրանում<sup>23</sup>, ավածի վկայությունն է: Եվ պատահական չէ, որ այն ավարտվում է լավատեսորեն, ապագայի հանդեպ հույսի գցացումով:

«Նա նորոգումն մեզ կրկին,  
Որ բնաւ չիշեմք զիառան առաջին.  
Կանգնէ զաթոռ թագաւորին  
Եւ զգաւազն պատրիարքին,  
Սմենեցունց ըստ իր կարգին,  
Ուղիւ զգահոյս տիրականին.  
Նոր զարդարէ փառօքն հին  
Եւս առաւել քան զոր էին.  
Տայ մեզ գոչել ձայնի ուժգին.  
Վերջինս է մեծ քան զառաջին»<sup>24</sup>:

Թաթար-մոնղոլ բռնակալների կողմից վարվող բռնի մահմեղականացման քաղաքականության պայմաններում Օրբելյանը ու նրա համախոհներն իրենց հույսը կապում էին հայ ժողովրդի քրիստոնեական հավատին աներեր մնալու հետ:

«Եւ մեք ամէնս ի միասին  
Տամք գոհութիւն մեր փրկողին  
Հօր և Որդու և Սուրբ Հոգուն»<sup>25</sup>:

Հայ հոգեորականության մեծամասնությունը հայրենասիրության դասեր էր տալիս ժողովրդին: Եվ հենց նրա վաստակն էր նաև, որ իշխանության կողմից պարտադրվող մահմեղականացումը հանդիպում էր հայ ժողովրդի դիմադրությանը: Ա. Հովհաննիսյանի համաձայն՝ մոնղոլների բռնակալներ քաղաքականության դամանացումը բոլորդին էլ կապ չի ունեցել նրանց իշլամացման հետ: Նա գրում է: «Հաճախ XIV դարի սկզբներից նկատելի դարձող մոնղոլ քաղաքականության հողի... ընթացքը վերագրվել է իշլամի ազդեցությանը. իբր՝ ընդունելով մարդարեի կրոնը՝ էլիանները որդեգրեցին օտարադավանների դեմ ուղղված «իշլամի ուզմական ոգին» և կրոնական մոլեռանդրությունը:

22 Կ. Կոտորանցը գտնում էր, որ Օրբելյանի «Ողբը» պատմական հշամակությունունի և պատկերում է անցած ժամանակների ծանր ու անտանի դրությունը (տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Ողբ, էջ 21): Պ. Խաչատրյան իրավագիրն գրել է, որ պատմական ողբերը, պատմությունն ուսումնասիրելու համար կարևոր մեջբարբարություններ լինելով օժտված են վավերականությամբ և խառացնչ պատմականությամբ (տե՛ս Պ. Խաչատրյան, Հայ միջնադարական պատմական ողբը (ԺԴ—ԺԸ), Երևան, 1969, էջ 37):

23 Ստեփանոս Օրբելյան, Ողբ, էջ 35:

24 Նոյն տեղում, էջ 48:

25 Նոյն տեղում:

Մոնղոլների կրօնափոխությանը այսքան վճռական հշանակություն վերագրել, շարունակում է Ա. Հովհաննիսյանը, կնշանակեր անգիտանալ պատմական իրողությունները:

Ընդունելով Մահմետի կրօնը՝ էլիսանները և նրանց զորքերը շահարեցին իրենց թշնամներն ու պատերազմները մահմեդական հարևանների և սուսչին հերթին՝ մահմեդականության ամրոց հանդիսացող Եգիպտոսի դեմ»<sup>26</sup>:

Խոկապես մահմեդականություն ընդունելուց հետո իշխանները շարունակում էին իրենց վաղեմի պայքարը եգիպտացիների դեմ և դա, ինչպես ճիշտ եզրակացնում էր Ա. Հովհաննիսյանը, բոլորովին էլ չի կարելի բացարձել կրոնական պատճառներով։ Դա պետության արտաքին քաղաքականությանը վերաբերող հարց էր<sup>27</sup>, որը ոչ մի դեպքում չի բացառում այն հնարավորությունը, որ միևնույն դաշանանքին պատկանող պետությունները թշնամաքար տրամադրված լինեն միմյանց հանդեաւ:


Այդուհանդերձ, չպետք է թերագնահատել մոնղոլների կողմից մահմեդական կրոնի ընդունելու հշանակությունը վերոհիշյալ հարցում, քանի որ, ինչպես արդեն ցուց տրվեց, սկզբանդրութերը գգալի հյութ են տալիս այն մասին, որ հավանակ ընդունելոց հետո մոնղոլները դաժան հալածանքներ ըսկըսեցին քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայերի հանդեպ, որը հանդիպեց հայ ժողովրդի զանգվածային դիմադրությանը։

Իշխանության կողմից վարվող կրօնական հալածանքների ու բոնի դավանափոխման քաղաքականության դեմ հայ ժողովրդի պայքարը ուներ կարևոր հշանակություն։ Այն ոչ թե սովորական մի դիմադրություն էր՝ թելադրոված քրիստոնեական դպրանանքին հարելոց, կրօնական գգացումներից ու պատերացումներից, այլ բոն Հայաստանում, հայկական թագավորության բացակայության պայմաններում, դա փաստորեն հայ ժողովրդի պայքարն էր իր ազգային ինքնուրուցնության պահպանման համար։

<sup>26</sup> Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ պատագրական մտքի պատմության. գիրք առաջին, Երևան, 1957, էջ 405։

<sup>27</sup> А. А. Али-заде. Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв. Баку, 1956, с. 300.





## Զ. ՖԱՆՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու)

### ՄԻ ԷԶ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Թերթելով արխիվային նյութերը

Մոլովայի Հանրապետության Ազգային արխիվում տարբեր ֆոնդերի գործերում կուտակվել են ոչ քիչ թվով ժամանակից գունաթափած փաստաթղթեր, որոնք լուս են սփռում Դումայ-Դնեստրի միջագետքի հայերի պատմության վրա և վկայում են, մասնավորապես, հայ-մոլովական վաղեմի եղբայրական կապերի մասին: Ես թերթում ու կարդում եմ դրանք առանձնակի հուզմունքով, մեր նախնիների հանդեպ հպարտության և հարգանքի զգացումով: Ընթերցողի ուշադրությանն եմ ներկայացնում այդ բազմադարյան պատմության էջերից մեկը:

... Մոլովայի և Վալախիայի հողերում թնդում էր երրորդ ոսւ-թուրքական պատերազմը, որը, ինչպես վկայում են փաստաթղթերը, բռնկվել էր օսմանյան կայսրության նախաձեռնությամբ, քանի որ նա վճռել էր վրեժ լուծել 1787—1791 թթ. պատերազմում պարտության համար: Դումայի ոուսական բանակը գեներալ-ֆելդմարշալ Ա. Ա. Պրոզորովսկու գլխավոր հրամանատարությամբ (որը այդ պաշտոնում փոխարինել էր հ. ի. Միխելսոնին), վճռական հարձակում ծավալեց թորքերի դիրքերի վրա, նրանց դեպի հարավ-արևմուտք՝ դեպի Դումայ մղելով: Ռուսական զորքի հետ միասին օսմանյան զորքերի դեմ հերոսարար մարտնչում էին Մոլովայի և Վալախիայի կամավորները: Խակ նրանց հետ ոս-ոսի կովում էին և հայերը, որոնք հնուց այստեղ գտել էին իրենց ապաստանն ու երկրորդ հայրենիքը: Ենիշեր-ների դեմ մարտական գործողություններին մասնակցում էր նաև հայ-կամավորների առանձին ջոկատը, հարավային Բեսարաբիակում ծնված Գրիգոր արքափակուպու Զաքարյանի հրամանատարությամբ, որը դրա համար արժանացել էր ոուսաստանյան մարտական շքանշանի: Զոկատը կազմելու և այն սննդամթերքով ու ոազմական հանդերձանքով ապահովելու գործում մեծ ջանք ներդրեց Մանուկ-Բեկ Միհրզյանը, որն ընդհանրապես հշանավոր դեր խաղաց Մոլովան և Վալախիան օսմանյան զորքերի կողոպուտից ու ավերությունից պաշտպանելու գործում:

Պատերազմի բոցում ընկնում էին նաև խաղաղ մարդիկ ու նրանց ունեցվածքը: Գազանացած ենիշերները չին ինձայում ոչ որի և ոչինչ: Ես գլորվելով գորքերի և տեղի բնակչության կամավոր կազմավորումների հարվածներից, նրանք այրում ու ավերում էին եկեղեցիները, վանքերը, բնակելի տները, կողոպտում ողջ բանկարժեք ունեցվածքը, կոտորում քրիստոնյաներին, շատերին քշում ստրկական գերության: Պետք է, արդյոք, Եջել, որ այդ իրադրությունում ամենաանպաշտպանը հայերն էին: Նրանց վիճակը ասալկանում էր կառավարման համակարգի քայլայմամբ, երկրամասում հայրենակիցների կանքը ու շահերը ինչ-որ չափով պշտպանող կենտրոնացված եկեղեցական իշխանության բացակայությամբ:

Արդեն պատերազմի սկզբում Մոլդովայի և Վալախիայի հայկական համայնքի հեղինակավոր ներկայացուցիչները դիմեցին ուստական Դուռայի բանակի գլխավոր հրամանատարին՝ Գրիգոր արքեպիսկոպոս Զարարյանին՝ երկրամասի հայերի առաջնորդ հաստատելու խնդրանքով, սրբազնը հայտնի էր իրենց որպես պաշտպան դեռ 1787—1791 թթ. ուստի թուրքական պատերազմից ու վայելում էր մեծ հեղինակություն և, որ ամենակարևոր է ու ազմական, քաղաքացիական և հոգնոր իշխանությունների վատահությունը: Բայց ուազմական գործողությունների շրջապատճենում այդ հարցին անմիջապես ուշադրություն չդարձվեց:

Հարցի քննման արագացման խթան հանդիսացավ Քիշնի հայկական եկեղեցու սպասավորների Գրիգորիոպոլի վարդապետ Մանուելի միջև տեղի ունեցած միջադեմը: Վերջինս դիմեց գեներալ-ֆելդմարշալ Պրոգորովսկուն մի խնդրանքով, որում գրում էր, որ Հայկական եկեղեցու անձնականը իրեն որպես թեմի առաջնորդի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նվիրակի պատշաճ պատիվ շնատուցեց և իր իշխանությանը անհնազանդություն ցուցաբերեց: Ընդ որում միջադեմի հրահրողը եկեղեցու երեցիներն էր, որին նա դրա համար պաշտոնից հեռացրեց և նրա փոխարեն հշանակեց Գրիգորիոպոլից իրեն մոտ մի անձնավորության: Այնունետև Մանուելը գրում էր, որ իր կարգադրությունը հրաժարվել էն կատարել, այդ պատճառով նա խնդրում է գլխավոր հրամանատարին այդ գործում իր իշխանությունը գործադրել:

Պրոգորովսկին կարգադրեց Մանուելի խնդրագիրը եզրակացության հաճանել Մոլդով-Վալախյան եկադիս միտրոպոլիտ Գավորի Բենույեսկո-Բոդոնիին մարզի բարձր հեղինակություն ունեցող եկեղեցական և հասարակական գործիչին:

Միտրոպոլիտն ամենայն ուշադրությամբ քննության ենթարկեց խրնդագիրն ու մի ծավալուն պատասխան գրեց, թվագրած՝ 1809 թ. մարտի 6:

«Մոլդովայում, Վալախիայում և Բևարարիայում բնակվող հայերը, — ասված է Բենույեսկո-Բոդոնիի պատասխանում, — այս երկրների Թուրքիայի տիրապետության տակ գտնվելու ժամանակաշրջանում եկեղեցական գծով ենթարկվում էին Կոտուանդապոլսի հայոց պատրիարքին...»: 1787—1791 թթ. ուստի թուրքական պատերազմի ժամանակ և առաջ 1809 թ. մարտի 6: «Մոլդովայում, Վալախիայում և Բևարարիայում բնակվող հայերը, — ասված է Բենույեսկո-Բոդոնիի պատասխանում, — այս երկրների Թուրքիայի տիրապետության տակ գտնվելու ժամանակաշրջանում եկեղեցական գծով ենթարկվում էին Կոտուանդապոլսի հայոց պատրիարքին...»: 1787—1791 թթ. ուստի թուրքական պատերազմի ժամանակ և առաջ 1809 թ. մարտի 6: «Մոլդովայում, Վալախիայում և Բևարարիայում բնակվող Ամենայն Հայոց Հայրապետին»՝ Սատրախան քաղաքում գտնվող առաջնորդության: 1791 թ. Յասիի հաշտության պայմանագրի կնքումից հետո այստեղի հայկական հոտը նորից անցավ Կոստանդնապոլսի Պատրիարքի կառավարման ոլորտը:

«Խնքնըստիմբյան հասկանալի է,—ասվում է ապա փաստաթյուում,—որ Աերկա պարագաներում էլ հայկական նովզապետի, և մանավանդ եպիսկոպոսի ու նրա պատվիրակների իշխանությունը այստեղի հայկական եկեղեցու վրա կարող է տարածվել Նորին պայծառափայլություն բանակի գործադրության ժողովում՝ հրամանատար գեներալ-ֆելդմարշալ և կալվարդ, իշխան Ալեքսանդր Պրոգրովսկու առաջարություն կամ, ծայրահեղ դեպքում, Նորին պայծառափայլության թույլտվությամբ»:

Վերջում միտրոպոլիտ Գավրիիլն առաջարկում է արքեպիսկոպոս Մանուելի խնդրագիր-բողոքը թողնել անհետնանը, որպես սնանկ: Հետո նշնուվ, որ իրեն հայտնի են Սոլդովայի և Վալախիայի հայերի խնդրանքները Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանին իրենց առաջնորդ Եշանակելու մասին, գրում է. «Խմ կարծիքով, եթե Նորին պայծառափայլությանը ցանկալի լիներ Աերկապացնել նշված արքեպիսկոպոս Գրիգորին, որն ապրում է թոշակով առանց թեմի, և որը բավկանան ընդունակ է կառավարման և պետական շահերը պաշտպանելու, քանզի Ռուսաստանում դաստիարակություն ստանալով՝ հոսանքի է և ոռուսկան գիրն ու լեզուն գիտի, Սոլդովայում, Վալախիայում և Բեսարաբիայում գտնվող հայկական եկեղեցիների թեմի առաջնորդ նշանակելու, հայերն էլ իրենց առաջնորդին հաստատագեն իմանալով՝ հանգիստ կլինեին...»:

Իշխան Պրոգրովսկին համաձայնվեց միտրոպոլիտ Գավրիիլի կարծիքի հետ և կայսր Ալեքսանդր Առաջինի անունով համապատասխան Աերկապացում արեց:

Տվ շտուգ դրան հետևեց Յասի քաղաքում ամբիոնով Մոլդովայի, Վալախիայի և Բեսարաբիայի հաստոկ հայկական թեմի ստեղծման և արքեպիսկոպոս Գրիգորին առաջնորդ նշանակելու կարգադրությունը: Թեմի դեկանարման համար առանձնացվեց տարեկան 7,3 հազար մոլդովական լս, այդ թվում 4700 լս ապարատի՝ արքեպիսկոպոսի, ավագ երեցի, քահանայի, երկու սարկավագների, երկու երգիչների, գրագրի և տնտեսական սպասավորների ուժիկների ֆոնդին:

1809 թ. հունիսի 17-ին Գրիգոր արքեպիսկոպոսը ժամանեց Յասի քաղաք և ստանձնեց թեմի առաջնորդի պարտականությունները, ինչի մասին նա նույն թվականի հունիսի 20-ի համակով հայտնեց մարզի քաղաքացիական պետ սենատոր Ս. Ս. Կուչինիկովին: Յասի քաղաքում Գրիգորին ջերմորեն ընդունեց միտրոպոլիտ Գավրիիլը, այսպես էլ տեղի հայ հոգևորականությունը: Առաջ ընկնելով նշեաք, որ Գավրիիլ Բենուլեսկու-Բողոնին մինչև իր կյանքի վերջը (1821 թ.) սերտ ընկերակցական հարաբերություններ էր պահպանում Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանի հետ, ստեն տեսակ աշակեցնով հայկական թեմի կազմակերպման ու բարեկարգման ճիգերում:

Իսկ ի՞նչ էր իրենից Աերկապացում առ թեմի իր ծևավորման ամենասկզբում: Համաձայն 1809 թ. հոկտեմբերին կազմած հայկական եկեղեցիների ու նրանց ծխականների հաշվառման «Ցուցակի», Մոլդովայի, Վալախիայի և Բեսարաբիայի տերիտորիայում առ ժամանակաշրջանում գործում էին 15 հայկական եկեղեցիներ 107 հոգևոր սպասարքներով և հայ տասակուչական դավանությամբ ծխականների 1160 ընտանիքներով: Թվով ամենամեծ համայնքները գտնվում էին Բուտոշանի (328 ընտանիք), Ռոմանի (145 ընտանիք), Ֆոլշանի (121 ընտանիք), Ակերմանի (116 ընտանիք), Քիշնևի (113 ընտանիք), Յասի (103 ընտանիք), Բուխարեստի (90 ընտանիք) մեջ:

Եվ դա այն բանից հետո, երբ 1791 թ. Դեկտեմբերի ու Պրուտի աջ ափից տեղափոխվել ու Գրիգորիոպոլում գտղուց էին կազմել 820 ընտանիք:

Իր կատալարման առաջին խկ օրերից Գրիգոր արքեպիսկոպոս սերտ կապեր հաստատեց մարզի նոգուր իշխանությունների, քաղաքացիական ու ուսումնական հրամանատարության հետ և նրանց աշակցությամբ հայկական համայնքի պաշտպանության, թեմի կազմակերպման ու բարեկարգման հիրավի անձնվիրական գործունեություն ծավալեց:

Բազմակողմանի զարգացած, հիանալի կազմակերպիչ, նա ուզմանակատի թիկունքի բարդ պայմաններում արագ յուրացրեց գործերի վիճակը: Այդ կապակցությամբ ավելորդ չէ նշել, որ մարզի վերը հիշատակված ամենազոր քաղաքացիական պետի կարգադրությամբ, ոչ մի վարչական կամ դատական մարմին չէր կարող պատասխանատվության ենթարկել ազգությամբ հայ անձանց՝ առանց հայոց առաջնորդի գիտության և համաձայնության:

Պատերազմի ավարտից հետո, 1812 թ. ռուս-թուրքական խաղաղ պայմանագրի համաձայն, Ռուսաստանան կայսրության պետական սահմանն անցավ Պրոտ գետով, կազմակորվեց Բեսարաբիայի մարզը (1879 թվականից՝ Յանաչագք), Քիշն կենտրոնով. հայկական թեմի հատվածը Յասից տեղափոխվեց Քիշն, իսկ ինը թեմը սկսեց կոչվել Բեսարաբիայի (1828-ից՝ Նախիջևանի և Բեսարաբիայի): Սյստեղ Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանը նոր խանդավառությամբ շարունակեց հայկական թեմի կազմակերպումը և ամրապնեց ծիսականների ազգային-հայրենահիրական համերաշխությունը:

1814 թ. Բեսարաբիայի մարզային վարչության միջնորդությամբ ցարական կառավարությունը որոշում ընդունեց Բեսարաբիայի հայկական թեմի հետագա բարեկարգման միջոցների մասին: Քիշնում հողատարածություն հայկացվեց (Անդրկայտում՝ Ստեֆան զել Մարեկի պողոտայի և Բենդերի, Օգոստոսի 31-ի ու Արմյանսկայա փողոցների միջև ընկած թաղամասերը) հայոց առաջնորդարան կառուցելու համար. պետական գանձարանից տրամադրվեց 4000 լս: Քիշնի հին հայկական եկեղեցին, որ հիմա էլ գոյություն ունի, վերանորոգման ու վերակառուցման ենթարկվեց, դառնադր Մայր եկեղեցի, Ստարոարմյանսկայա փողոցի կողքին հայտնից նաև Նովայա Արմյանսկայա փողոցը (Երկուսն էլ այժմ գոյություն ունեն):

Զգալիորեն աճեցին թեմի կառավարման ծախսերի հատկացումները: Ակերմանի գալաքում առանձնացվեց 2000 դեստին վարեկանող և մի քանի խաղողի մրգատու այգիներ, ինչպես նաև Դեկտեմբերի գետի վրա մի հատված ձկնորսության համար:

Երիտասարդ Ս. Ս. Պոչկինի Քիշն գալու ժամանակ հայոց առաջնորդարանը արդեն մարզում բավականին լայն համբավ ուներ: Սյստեղ լայ կահավորված ընդարձակ շենքում կազմակերպվում էին ազգատամիտ ընտրախափի ներկայացուցիչների մտերմիկ հանդիպումներ: Հանդիպումներին տարբեր ժամանակ լինում էին Մանուկ-Բեկը, Հարություն Ալամդարյանը, գեներալ Խոզովը, միտրոպոլիտ Գավրիիլը, հովհանքագրական շարժման առաջնորդ Ակերսանի Խափիլանտին:

Հայոց առաջնորդարանում լինում էր նաև Ս. Ս. Պոչկինը, ինչի մասին վկայում է նրա օրագրում արված 1821 թ. նոյիսի 18-ի գրառումը: Պետքին ուղեցում էր Արտեմ Խուդարաչինը, որը նոյնքան սրամիտ էր, որքան տան տերը՝ Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանը: Հետո նրանցից է Պոչկինը լսե-

Գաբրիել նորեշտակապետի ու կոյս Մարիամի մասին հին ավանդությունը, որի պյուծեռվ ստեղծել է «Գավրիիլիադա» պոեմը:

Անընդգրկելիորեն լայն էին Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանի հնատաքքրությունները: Լինելով հայրենասեր, ևա անընդհատ մտածում էր իր ժողովրդի ճակատագրի մասին և ոչինչ չեր խնայում հրան օտարերկյա ստրկացնողների լծից ազատելու համար: Մշտական կապ էր պահպանում Եջմիածնի Կաթողիկոպատրիանի հետ, թեմի սույն միջոցներից գգալի գումարներ էր տրամադրում Մայր Աթոռի կարիքներին, նաև ակագրական կապի մեջ էր գրեթե բոլոր հայկական մշակույթի օջախների հետ:

Դժբախտաբար, Զաքարյանի նամակների բավական մեծ ժառանգությունից քիչ քան է լոյս տեսել: Հայկական պարերական մամուլում հրատարակվել են 1821—1822 թթ. մի քանի նամակներ Քիշնեից՝ ուղղված այն ժամանակի հշանավոր Եկեղեցական և հասարակական գործիչներ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Եփրեմին, Պետերբուրգի պալեցիկ պաշտոնյա Հովհանիմ Լազարիին, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցուն, Ռուսաստանի թեմակալ առաջնորդ Հովհաննես Գառնակերյանին և այլոց:

Քիշնեի արքեպիսկոպոս Գրիգորի նամակներում երևում է բարձր բարյականության տեր մարդ, բազմակողմանի քաղաքական ինտելեկտով ու խորաթափանց մտքով: Այդ նամակներում հեղինակը իմաստաթղթավիճ ստուգությամբ ու անկեղծ համակրանքով հկարագրում է հովհների, մոլովացիների, վալախցիների, սերերի և հարավ-արևելյան Եվրոպայի ու Բալկանների այլ ժողովորդների բացարի պայքարը օսմանյան սորոկության դեմ, զայրություն բացահայտում է թուրք պատժների բարբարության ու դաժանության աստիճանը այդ ժողովորդների նկատմամբ:

Ըստ որում, ևա հաստակորեն հասկանում է, որ Սև ծովի հյուսիս-արևմուտքի երկրներում հակաթուրքական շարժումը, որին մասնակցում էին նաև ոչ քիչ թվով հայեր, նպաստում էր սույնանական Թուրքիայի ու պահական հզորության փլուզմանը, մայր հայրենիքի վերածննդի արագացման հոյս ներշնչելով:

Զաքարյանի բուռն բազմակողմանի գործունեությունն իր մեջ քաշողական ուժ ուներ: Բնաւարարիայի մարզի կազմավորումից հետո առաջին տասնամյակի լնաթաքրում նոր տարածքում առաջացան հայկական նոր գալության մեջ առաջականացնելու համար առաջարկությունը կատարվել է Աշոտի արդեն եղածները, հատկապես հայկական համայնքը Քիշնեում: Աշոտի բարենպատս պայմաններ ստեղծվեցին ծխական դպրոց, համարայն գրադարան, անկելանոց բացելու, թեմի հնութական հիմքը գգալիորեն ամրապնդելու համար:


Հայկական թեմի դիմումով, որին օժանդակեց Գավրիիլ միտրոպոլիտը, Քիշնեի գեղատեսիլ ծայրամասերից մնելում, որը կոչվում էր «Վարդերի հովվիտ», հատկացվեց առանձին հոդատարածություն հայկական գերեզմանոցի համար, որ հիմա էլ կա (Ազովիկայա փող. 11): Հետագայում, արդեն խորհրդային շրջանում, այս միացվեց լեհական գերեզմանոցին:


20-ական թվականների կեսերին Զաքարյանի առողջությունը վաստացավ, անցած պատերազմում կրած վերը սկսեց անհանգստացնել: 1825 թ. ապրիլի 20-ին նա սեփական ձեռքով կազմեց հոգիոր կտուկը «Քիշնեից բարձրագուն հրամանագրով կովկասյան բոժիշ ջրերի մոտ մեկնելու կապակցությամբ»: Առաջին կետում գրված է, որ եթե ինքը մահանա Քիշնեում, իրեն թաղեն նոր հայկական գերեզմանոցում և գերեզմանի վրա մատու կառու-

ցես, «որտեղ կարելի լիներ երբեմն ժամերգություն կատարել»: Մյուս կետով կտակված է. «Եթե բոլոր ծախսերից հետո գումար մնա, խնդրում եմ խանթեներ կառուցել, որոնցից ստացած եկամուտը օգտագործել որքերին ու պրիմերին պահելու համար...»:

Կայսր Ալեքսանդր Առաջինի մահը որոշ չափով հետաձգեց Զաքարյանի բուժման մեջնելը, ևս հրավիրված էր նոր կայսրի՝ Նիկոլայ Առաջինի թագադրության արարողությանը: Թագադրության տոնակատարության ընթացքում Զաքարյանը բազմաթիվ հանդիպումներ ու գրուցներ ունեցավ, որոնց արդյունքում փոխեց իր որոշումը՝ Կովկասի փոխարեն մեկնեց «բարձրագույն բարեհաճ թույլտվությամբ ավատրիական տիրություն՝ Լեմբերգ քաղաքը» (Լվով՝ Զ. Ֆ.), որտեղ հիվանդության սրման հետևանքով 1827 թ. հուլիսի 23-ին մահացավ: Թաղված է հայկական Խաչինադար Վանքի բակում, Մոլդովայի միջնադարյան մայրաքաղաք Սուչավայից ոչ հեռու:

Բայց Գրիգոր աքեախկոպոս Զաքարյանի կտակած մասունքը հետագայում կառուցվեց հայկական գերեզմանոցի տարածքում: Այն ստացավ «Նովոարմյանսկայա ցերկով» պաշտոնական անվանումը:





Հ Ա Ն Գ Ի Ս  
ՀՈԳԵԾՆՈՐՀ Տ. ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՆՇԱՆՑԱՆԻ  
(1887—1992)

1992 թ. դեկտեմբերին, Երևանում, 106 տարեկան հասակում, վախճանվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Պողոս Վարդապետ Տեր-Նշանցանը:

Հանգույցալը ծնվել է 1887 թվականին Կիլիկիայի Չորք-Մարզպան (Դյորտ-Յոլ) գյուղաբանաքում: Մեծ Եղեռնին նահատակվում է հայրը՝ Տեր Նշան քահանան: 1922 թվականին Կիլիկիայից Սիրիա անցնելուց հետո, աշխարհիկ անունով Գարեգին Նշանի Կողմանոցանը, մտասելում է ունեցել գնալ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք՝ կուսակրոն քահանայության ուխտով կյանքն իր ժողովրդին նվիրաբերելու նպատակով: Նահատակ Տեր Նշան քահանայի որդին դաստիարակվել էր Հայ Եկեղեցու ծառայության ոգով, և 1926 թ. նա գնաց Երուսաղեմ՝ միաբանության շարքերն անցնելու բարի մտադրութայմբ:

Պատերազմից հետո, 1947-ին, նա մերժադրեց Մայր Հայրենիք: Նա այս տեղ գրադարձ հոգեոր ծառայությամբ Երևանի զանազան եկեղեցիներում: 1955 թ. նոյեմբերի 27-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում ձեռնադրվել է ասրկավագ՝ լուսարարապետ Տ. Սահակ Եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ձեռնամբ, ապա 1957 թ.՝ կուսակրոն քահանա: Նա ծառայել է Մայր տաճարում որպես լուսարարի օգնական, ապա նաև Ս. Գեղարդա վանքում, որ իր ծնող-Ըերի հիշատակին կառուցել է տվել աղյուր-հուշարձան:

1962 թ. հշանակվել է Դարավագյաղի Ս. Խաչ վանքի վանահայր, իսկ հետագայում, 1967—1972 թթ., Ս. Հոփիսիմե և Ս. Գայանե վանքերի վանահայր: Տ. Պողոս Վարդապետն որ որ ծառայել է, միշտ համեմատել է Մայր Աթոռի նվիրաբ միաբան՝ իր Եկեղեցանվեր գործունեությամբ, համեստ բնակչությամբ, ամենայն մաքրությամբ և ծառայողական նվիրումով: Առաջացած տարիքի թերուում 1972 թ. ապրիլ ամսին նա անցել է կենսաթոշակի և բնակվել Երևանում, իր հարազատների մոտ:


Նրա ծննդյան 100-ամյակի առթիվ Մայր Աթոռոյի պաշտոնաթերթում տպագրված 1987 թ. շնորհավորական գրության մեջ գրված է հետևյալը:

«Պողոս վարդապետ Տեր-Նշանյանը արդեն մեկ դարի ծանրություն ունի ուսերին, բայց շարունակում է ծեսեր կատարել և ներկա լինել Մայր Աթոռում կատարվող հանդիսություններին:

Այդ հարյուր տարիները լնցուն են ճակատագրի վերիվայրումներով՝ տեղահանություն հայրենի քնօրրանից, գաղթի ճանապարհին մահվան սարսափ, ապա Մայր Հայունիքում, Սուրբ Գեղարդում և այլուր հոգևոր ծառայություն և այսօր՝ Երշանիկ ծերություն»:

Հարգանք նրա պայծառ հիշատակին:






## • ЭЧМИАДЗИН •

### ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (ЯНВАРЬ—ФЕВРАЛЬ—МАРТ 1993 г.)

1. Рождественская проповедь Католикоса всех армян Вазгена I в Кафедральном соборе Св. Эчмиадзина, 6 января 1993 г. (стр. 3—4).
2. Приветственные телеграммы и послания между Католикосом всех армян Вазгена I и духовными предстоятелями церкви-сестер по поводу Светлого Рождества Христова и Нового Года (стр. 5—7).
3. Новогоднее и рождественское послание Католикоса всех армян Вазгена I, направленное трем преосвященным престолам Армянской Церкви, всем епархиальным предстоятелям и церковным общинам (стр. 8).
4. Обмен телеграммами между Католикосом всех армян Вазгеном I и государственными высокопоставленными лицами по случаю празднеств Светлого Рождества Христова и Нового Года (стр. 9—11).
5. Новогодние торжества в первопрестольном Эчмиадзине, 31 декабря 1992 г. Помещена также благословение и поздравительное слово Католикоса всех армян Вазгена I (стр. 12—18).
6. Поездка Католикоса всех армян Вазгена I в г. Москву, 20—23 января 1993 г. Помещены также совместное заявление Католикоса всех армян Вазгена I и Патриарха Московского и всея Руси Алексия II, 21 января 1993 г. высказывания по разным поводам двух Патриархов и мэра города Москвы Юрия Лужкова (стр. 19—32).
7. Сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата по случаю поездки Католикоса всех армян Вазгена I в г. Москву с 20—23 января, 28 января 1993 г. (стр. 33—34).
8. Встреча Католикоса всех армян Вазгена I и Шейха Азербайджана Шейх уль Ислама Пашазаде в гор. Монрео Швейцарии, 6—8 февраля 1993 г. Помещены также слово Католикоса всех армян Вазгена I, совместное коммюнике Католикоса всех армян Вазгена I и Шейха уль Ислама и сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата по случаю поездки в Швейцарию городе Монрео 6—8 февраля 1993 г. (стр. 35—40).
9. Исторический документ (Совместное обращение Католикоса всех армян Хримяна Айрика и Шейха уль Ислама гор. Баку к армянскому и азербайджанскому народам, 1905 г.)—(стр. 41).
10. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за январь—февраль—март месяцы (стр. 42—45).
11. Диакон Андраник Жамкочян—Праздник Светлого Рождества Христова в армянской престольной церкви Св. Георгия Грузии, 19 января 1993 г. (старый стиль)—(стр. 46).
12. Торжества престолонаследия в г. Кельне (Германия)—(стр. 47—48).
13. Профессор Вараздат Арутюнян—Алтарь света и веры (об обсуждении проектов и закладки церкви Св. Григория Просветителя в Ереване. Продолжение)—(стр. 49—52).

14. **Ованес Шираз**  
Церковь моя армянская (стихотворение)—(стр. 53—55).  
Верить надобно... (стихотворение)—(стр. 55).
15. Великая потеря духовной песни (по случаю смерти Лусинэ Закарян)—стр. 56—58).
16. **Сильва Капутикян—Панихида** (стихотворение памяти Лусинэ Закарян)—(стр. 59).
17. **Архимандрит Езник Петросян—Христология Армянской Церкви** (исследование)—(стр. 60—80).
18. **Иеромонах Абел—Диаконисы Армянской Церкви**, рассматриваемые с канонической точки зрения (исследование)—(стр. 81—96).
19. **Священник Сипан Мхсян—Апостол Любви—Иоанн** (исследование)—(стр. 97—101).
20. **А. А. Коосеян—Нововыявленная тирада о Святом Причастии** (исследование, оригинал)—(стр. 102—104).
21. **Арташес Матевосян—Таргманчац евангелие** (исследование. Продолжение)—(стр. 105—118).
22. **Карен Матевосян—Армянское патриаршество и стольный град Ани** (исследование. Продолжение)—(стр. 119—134).
23. **Г. Х. Степанян—Монастыри Ерзынкской местности** (исследование. Продолжение)—(стр. 135—143).
24. **Нубар Тер-Микаэлян—Армянские церкви Франции в средние века** (исследование)—(стр. 144—154).
25. **Г. А. Степанян—Борьба армянского народа против религиозных угнетений татаро-монгольских захватчиков** (исследование)—(стр. 155—160).
26. **Дж. Фанян—Одна из страниц нашей истории** (исследование)—(стр. 161—166).
27. Кончина архимандрита Погоса Тер-Ншаняна (стр. 167—168).



„ETCHMIADZIN“  
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHEMIADZIN  
(JANUARY—FEBRUARY—MARCH 1993)

1. The sermon of Holy Christmas of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, given in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 6-th January 1993 (pp. 3—4).
2. Congratulatory cables and letters exchanged between His Holiness Vasken I, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the spiritual heads of the sister churches, on the occasion of the New Year and Holy Christmas (pp. 5—7).
3. Congratulatory letter of His Holiness written to the three hierachial sees of the Armenian Church, all diocesan primates and church communities, on the occasion of the feasts of New Year and Holy Christmas (p. 8).
4. Congratulatory cables exchanged between His Holiness and the high personalities of State on the occasion of New Year and Christmas (pp. 9—11).
5. The New Year in the Holy See of St. Etchmiadzin. On this occasion the address of His Holiness of blessings and congratulation, 31-st December 1992 (pp. 12—18).
6. Visit of His Holiness to Moscow (20—23 January 1993). Text of the Declaration of His Holiness Vasken I and His Holiness Patriarch Alexy II of Moscow and of All Russia (21 January 1993). Texts of addresses given on different occasions of the two patriarchs and Mr. Yoory Lojkov, Mayor of Moscow (pp. 19—32).
7. Communiqué of the Mother See's Chancery on the occasion of the visit of His Holiness to Moscow (20—23 January 1993), 28-th January 1993 (pp. 33—34).
8. Meeting of His Holiness with Allahshukur Pashazadeh, Sheykh-ul-Islam of Baku in Montreux (6—8 February 1993). The address of His Holiness, the united communiqué of His Holiness and of Sheykh-ul-Islam and the communiqué of Mother See's chancery on the occasion of the visit of Montreux (Switzerland) during the days of 6—8-th February (pp. 35—40).
9. A historical document (The united appeal of His Holiness Catholicos Khrimian and of Baku's Sheykh-ul-Islam to the peoples of Armenia and Azerbaijan, 1905)—(p. 41).
10. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of January—February—March 1993 (pp. 42—45).
11. **Deacon Andranik Jamkotchian**—The feast of Holy Nativity in the Mother Church of Armenians in Georgia, 19 January 1993 (according the old calendar)—(p. 46).
12. Solemnities of enthronement in Köln (Germany)—(pp. 47—48).
13. **Prof. Varazdat Harootiunian**—Altar of light and faith (about the foundation in Yerevan of the Saint Gregory the Illuminator church and examination of projects of that church. (Continuation)—(pp. 49—52).

14. **Hovhannes Shiraz—**  
My church of Armenians (poetry)—(pp. 53—55).  
You will believe (poetry)—(p. 55).
15. A great loss of spiritual songs (on the occasion of Lossineh Zakarian's death)—(pp. 56—58).
16. **Sylva Kapoodikian—**Requiem (poetry consecrated to the memory of Loossineh Zakarian)—(p. 59).
17. **Father Yeznik Petrossian—**The christology of the Armenian Church (study)—(pp. 60—80).
18. **Father Abel Oghlookian—**The deaconesses of the Armenian Church seen in the point of canonical view (study)—(pp. 81—96).
19. **Father Sipan Mekhsian—**John: the apostle of love (study)—(pp. 97—101).
20. **H. H. Keusseyan—**A recently found oration about the Holy Sacrament (study and original text)—(pp. 102—104).
21. **Artashes Mathevossian—**The Bible of Translators (study, continuation)—(pp. 105—118).
22. **Karen Mathevossian—**The Catholicosate of All Armenians and the capital Ani (study, continuation)—(pp. 119—134).
23. **G. Kh. Stepanian—**The monasteries of Yerznka (study, continuation)—(pp. 135—143).
24. **Nubar Der-Mikaelian—**Armenian churches in France during the Middle Ages (study)—(pp. 144—154).
25. **Hratch Stepanian—**The struggle of the Armenian people against the religious persecutions of the tartar-mongol despots (study)—(pp. 155—160).
26. **Dj. Fanian—**A page from our history (study)—(pp. 161—166).
27. Necrology of Father Boghos Der-Neshenian (pp. 167—168).



## „ETCHMIADZINE“

### ORGANE OFFICIEL DU SAINT—SIEGE D'ETCHMIADZINE (JANVIER—FEVRIER—MARS 1993)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 janvier 1993 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la Sainte Nativité (pp. 3—4).

2. Echange de tégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion des fêtes de Noël et du Nouvel an (pp. 5—7).

3. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélates diocésains et aux communautés religieuses de l'Eglise arménienne à l'occasion des fêtes de Noël et du Nouvel an (p. 8).

4. Echange de tégrammes de félicitation entre Sa Sainteté et les hautes personnalités d'Etat à l'occasion de Noël et du Nouvel an (pp. 9—11).

5. Festivités au Saint-Siège d'Etchmiadzine consacrées à la fête du Nouvel an. Texte du message de bénédiction de Sa Sainteté prononcé à cette occasion (pp. 12—18).

6. Voyage de Sa Sainteté à Moscou (du 20 au 23 janvier 1993). Texte de la «Déclaration commune» de Sa Sainteté Vasken Ier et de Sa Sainteté le patriarche Alexie II de Moscou et de toute la Russie (21 janvier 1993). Textes des allocutions des deux patriarches et de Monsieur Youri Loujkov, maire de Moscou, prononcées à diverses occasions lors du voyage du catholicos de tous les Arméniens (pp. 19—32).

7. Communiqué de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant le voyage pastoral de Sa Sainteté à Moscou (28 janvier 1993)—(pp. 33—34).

8. Rencontre de Sa Sainteté Vasken Ier et d'Allahchukur Pachazadé, Cheikh-ul-Islam de la Transcaucasie, à Montreux (6—8 février 1993). Textes de l'allocution de Sa Sainteté prononcée à cette occasion, du Communiqué commun des deux cefs religieux et du Communiqué de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine (pp. 35—40).

9. Un document historique (Appel du catholicos Mekertitch Khrimian et du Cheikh-ul-Islam de Bakou adressé en 1905 aux peuples arménien et azerbaïdjanaïs)—(p. 41).

10. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois janvier—février—mars 1993 (pp. 42—45).

11. Diacre Andranik Jamkotchian—La fête de la sainte Nativité dans l'église arménienne St. Georges à Tbilissi (19 janvier 1993 selon l'ancien calendrier)—(p. 46).

12. Solennités d'intronisation à Cologne (pp. 47—48).

13. Prof. Varazdat Haroutounian—Autel de lumière et de foi (à propos de la cérémonie de la fondation de l'église St. Grégoire l'Illuminateur d'Erevan et de l'examen des projets de construction de la même église (pp. 49—52).

14. Hovhannes Chiraz.—

a) Ma chère Eglise arménienne (poème)—(pp. 53—55).

b) Tu dois croire... (poème)—(p. 55).

15. Une grande perte pour les chants religieux (à l'occasion du décès de la cantatrice Loussinée Zakarian)—(pp. 56—58).
16. **Sylva Kapoutikian**—Requim (poème consacré à la mémoire de Loussinée Zakarian)—(p. 59).
17. **Père Yeznik Pétrossian**—La christologie de l'Eglise arménienne (étude)—(pp. 60—80).
18. **Père Abel Oghloukian**—Les diaconesses de l'Eglise arménienne vue du point de vue canonique (étude)—(pp. 81—96).
19. **Père Stépan Mekhsian**—Jean, l'apôtre de l'amour (étude)—(pp. 97—101).
20. **H. H. Keusseyan**—Une homélie récemment découverte sur la Sainte Communion (étude et texte original)—(pp. 102—104).
21. **Artachès Matévosian**—L'Evangile des premiers traducteurs (suite)—(pp. 105—118).
22. **Karen Matévosian**—Le catholicossat de tous les Arméniens et la capitale Ani (suite)—(pp. 119—134).
23. **G. Kh. Stépanian**—Les monastères d'Erzincan (suite)—(pp. 135—143).
24. **Noubar Ter-Mikaëlian**—Eglises arméniennes en France au Moyen Age (étude)—(pp. 144—154).
25. **Hratch Stépanian**—La lutte du peuple arménien contre les persécutions de religion des tyrans tartares-mongols (étude)—(pp. 155—160).
26. **Dj. Fanian**—Une page de notre histoire (étude)—(pp. 161—166).
27. Nécrologie du Père Poghos Ter-Nechanian (pp. 167—168).

Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |     |
|---|-----|
| Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի Ս. Մանդեան քարոզը խօսուած  | 3   |
| Ս. Էջմիածնի Մայր տաճարում   |     |
| Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Մանդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և բոյր Եկեղեցիների հոգևոր պետերի միջն փոխանակված ողջոյնի հեռագրերն ու գրությունները | 5   |
| Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Մանդյան տոների առթիվ՝ ուղղված Հայատամյաց Եկեղեցու Ավիրապետական երեք Աշոտունուրին, թեմակալ բղոր առաջնորդներին և Եկեղեցական համայնքներին                             | 8   |
| Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական քարձասահման անձնավորությունների միջն փոխանակված հեռագրեր Ամանորի և Սուրբ Մանդյան տոների առթիվ   | 9   |
| Ամանորը Մայր Աթոռում  | 12  |
| Վեհափառ Հայրապետի ուղորությունը Մոռկավ  | 19  |
| Հաղորդագրութիւն   | 33  |
| Հոգևոր պետերը խաղաղության ավետարեր  | 35  |
| Պատմական փաստաթուրք   | 41  |
| ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բևմ. լորեր  | 42  |
| ԱՆԴՐԱԾԻԿ ՍՐԿ. ԺԱՄԿՈՅՑԱՆ—Ս. Մանդյան տոնը Վրաստաճի հայոց Ա. Գևորգ Մայր Եկեղեցն ան հայոց...  | 46  |
| Պիտի հաւատաս  | 53  |
| Հոգևոր երօի մեծ կորուստ   | 55  |
| ՄԻԼՎԱ. ԿԱՊՈՒԹՆԱՅԱՆ—Հոգեհանգիստ  | 56  |
| ԽԶՆԻԿ ՎԱՐԴԱՎԱՐԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Հայ Եկեղեցու քրիստոսաբանությունը   | 59  |
| ԽԲՃ. ԱԲԵՐՂԱԾ—Հայ Եկեղեցու սարկասագութիները կանոնական տևասելիութիւնից դիտուած  | 60  |
| ՄԻՓԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԽԽԵԱՆ—Սիրոյ Սուրբեալք՝ Յովհաննես   | 81  |
| Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ—Նորամաստ ճառ Սուրբ Հաղորդության մասին  | 97  |
| ԱՐՏԱԾԵՍ ՄՄ.ԹԵՎՈՍՅԱՆ—Թարգմանչաց ավետարանը  | 102 |
| ԿԱՐԵՆ ՄՄ.ԹԵՎՈՍՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և քաղաքամայր Ամին   | 105 |
| Գ. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ—Երգմակայի վաճերը  | 119 |
| ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ—Հայկական Եկեղեցիներ Ֆրանշայում միջին դարերում   | 135 |

|  |     |
|--|-----|
| ՀՐԱԶ ԱՂՎԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ—Հայ ժողովրդի պատրարք ընդդեմ թաթար-մոնղոլ | 155 |
| բռնակալների կրոնական հալածակրների                              |     |
| Զ. ՖԱՆՅԱՆ—Մի էջ մեր պատմությունից                              | 161 |
| Հանգիստ հոգեշնորհ Տ. Պողոս Կարդապետ Տեր-Նշանանի                | 167 |
| «Էջմիածն» официальный журнал Эջмиадзинского Католикосата       | 169 |
| «Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin             | 171 |
| «Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine   | 173 |

## ԽՄՔԱԳԻՐ՝ ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

### ԽՄՔԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷԶՄԻՍԻՑԻՆ

«ԷԶՄԻՍԻՑԻՆ» ԱՐՄԱԳՐԻ ԽՄՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эջмиадзин. Редакция журнала «Эջмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie.

Հանձնված է արտադրության 21.04.1993 թ.: Ստորագրված է տպագրության 11.06.1993 թ.:  
Տպագրական 11 մամուլ + 8 Անդիր, թուղթ 70×108<sup>1/16</sup>, պատվեր 98:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան



ISSN 0184-5949